Основную роль в руководстве экономикой в целом и мелким предпринимательством в частности, А. Тюркеш отводит государству с сильными «элитистскими кадрами» во главе. В свою очередь, помощь немущим и обиженным, привлекательная как популистский лозунг, ограничивается, по сути, мелкой благотворительностью, опять же контролируемой государством. «Национальный идеал» Тюркеша—это, создание якобы нового, но, фактически, капиталистического государства, вопреки применению им «социалистических» терминов и лозунгов, подобных социальным программам классических фашистских партий. Следующий принцип, принцип «нравственности», включает требование любить нацию, стремиться к её возвеличению⁴³. Принцип «научности»—опять же в целях возвеличения нации, провозглашает необходимость развивать науки, применять научные методы в развитии нации⁴⁴. Принцип «гарантии свобод»—это демагогическое декларирование буржуазно-демократических свобод со ссылкой на устав Организации Объединенных Наций⁴⁵.

⁴⁰ Türkiye A. Temel Gövü Şer. İstanbul, 1976. s. 45.

⁴¹ Ibid.

⁴² Türkiye A. Dokuz Işık, s. 5.

⁴³ Там же.

⁴⁴ Там же, 16.

⁴⁵ Там же, с. 17.

Такой же демагогический характер носит ещё один из девяти принципов—«забота о крестьянстве». Тюркеш сетует на отсталость турецкой деревни, справедливо отмечает недостаточное количество школ, больниц, специалистов сельского хозяйства, выступает, на словах, за проведение аграрной реформы, за модернизацию и механизацию сельского хозяйства, которая позволила бы освободить из сельскохозяйственного производства рабочую силу для использования её в промышленности⁴⁶. Идея развития сельского хозяйства, очевидная для любого в Турции, не учитывает того, что турецкая промышленность не испытывает недостатка в рабочей силе. Напротив, в Турции огромная безработица и сотни тысяч турецких рабочих покидают страну в поисках работы в странах Западной Европы. Хотя Тюркеш и пишет о необходимости индустриализации и технизации, провозглашает необходимость развития страны, декларирует «народность» как принцип деятельности партии—все эти «принципы» служат целям привлечения голосов на выборах, а в долговременном плане—претворению в жизнь упомянутого выше «национального идеала».

Таким образом, «национальная доктрина» Партии националистического движения представляет собой мелкобуржуазное, эклектическое, псевдонаучное «учение», рассчитанное на привлечение средних слоев города и деревни и части рабочего класса к неонацистскому движению, основной целью которого является, на первом этапе, захват политической власти в стране и далее—осуществление пантюркистского идеала—создания «Туранского государства».

Доктрина Партии националистического движения, несмотря на попытку списать поддержку во всех слоях общества, в основном, пользуется популярностью у средних слоев турецкого населения, и прежде всего мелкой буржуазии, которая в силу своего неустойчивого экономического положения и политических крайностей, характерных, по выражению В. И. Ленина, для «взбесившегося мелкобуржуа», всегда склонялась к поддержке наиболее крайних политических течений.

Панисламисты и пантюркисты не ограничиваются легальными способами политической борьбы. Именно правые партии создали подпольные боевые группы и организации, развязавшие массовый террор в стране. Наиболее активные из них—«Армия спасения порабощенных турок» и «Бригада отмщения турок-националистов», ещё до военного переворота провозглашавшая своей целью освобождение 4000 сторонников Тюркеша, арестованных за организацию террористических акций.

Деятельность Партии националистического движения вышла за рамки государственных границ. Активно действуют турецкие фашисты на территории ФРГ среди турецких рабочих-эмигрантов. По заявлению статс-секретаря боннского министерства внутренних дел Андреаса фон Шёлера: «Турецкие правые радикалы действуют через союзы культуры в Федеративной республике. Этот 171 союз—в Ахе-

⁴⁶ Там же, с. 620.

не, и в Альменау, в Мангейме и в Меммингеме—со своими 44500 постоянными членами, образует сильнейшую организацию иностранцев в ФРГ»⁴⁷.

В июне 1978 года правые объединились в головную организацию—так называемую «Федерацию демократических объединений турецких идеалистов в Европе», со штаб-квартирой во Франкфурте-на-Майне. Союзы идеалистов привлекают на свои мероприятия 1,2 млн. соотечественников, находящихся в ФРГ, устраивая каждую неделю по десятку вечеров турецкого фольклора. Приманкой для молодежи служат бесплатные курсы по обучению приемам борьбы карате⁴⁸.

Пантюркисты из Партии националистического движения установили связи также и с ливанскими правыми силами, оказав поддержку ливанским фалангистам и спровоцировав военные действия против армянской общины в Бейруте⁴⁹. При этом ливанские правые ссылаются на исторические прецеденты,—резню 1915 года, в ходе которой, по указке пантюркистского руководства младотурок, было уничтожено от 1,5 до 2-х млн. человек мирного армянского населения.

Союз Партии националистического движения с другими неонацистскими партиями Европы стал очевиден после покушения на римского папу Иоанна-Павла II, организованного турецкими неонацистами, членами организации «Серые волки».

Мехмет Али Агджа, член организации «Серые волки» ранее был судим в Турции за убийство редактора либеральной буржуазной газеты «Миллиет». После побега, организованного его единомышленниками, Агджа некоторое время скрывался за рубежом—в ФРГ, Греции, Испании, Италии, где по свидетельству западной прессы, видимо вступал в контакты с местными неонацистами. Это одно из свидетельств того, что турецкие неонацисты имеют широкие контакты и сотрудничают с другими партиями, так называемого «черного интернационала», с целью борьбы против прогрессивных сил капиталистических стран Европы, попытки дестабилизировать положение в социалистических странах, а внутри страны—захвата государственной власти и осуществления «национального идеала».

Для лидеров Партии националистического движения коммунизм всегда являлся «врагом номер I», т. е. начинающийся в общественном сознании процесс утверждения принципов классовой борьбы, пролетарского интернационализма и т. д. срывает попытки правых сплотить широкие массы трудящихся под лозунгами правого национализма внутри страны. Само существование мира социализма и прежде всего его авангарда—Советского Союза, сумевшего на практике решить национальный вопрос, делает несбыточным «национальный идеал» пантюркистов.

В борьбе против левых сил турецкая правая реакция использо-

вала методы массового террора, захлестнувшего всю страну. Левые силы пытались противодействовать неонацистским вылазкам. В стране намечалась тенденция к созданию единого антифашистского фронта, в пользу которого активно выступала находящаяся в глубоком подполье Коммунистическая партия Турции, в документах которой указывалось, что КПТ «решительно заявляет о готовности к единству действий и созданию фронта со всеми демократическими силами»⁵⁰.

Как показали события, последовавшие за военным переворотом 1980 года, правый террор не был основной причиной выстуления турецких военных. Военные руководители на первых порах подчеркивали свою приверженность борьбе против террора вообще. В числе других политических партий была запрещена деятельность правых—Партии националистического движения и Партии национального спасения. Лидеры неонацистов, партийные функционеры, ряд исполнителей террористических акций были отданы под суд, но процесс над 600 неонацистами в тюрьме Мамак продолжается более двух лет без видимого успеха. По свидетельству иностранной прессы, лидер неонацистов не падает духом: «Он написал несколько писем генералу Эврену, в которых просит снять обвинения и уверяет в том, что он и генерал разделяют одни и те же взгляды»⁵¹.

Сам процесс над турецкими неонацистами напоминает фарс. Большинство подсудимых отказываются от своих показаний и конца судебного процессу не видно. В то же время военные власти обрушили репрессии на левые организации и профсоюзы, пытались сфабриковать обвинения в терроризме. Сравнивая два судебных процесса, газета «Файнэншл Таймс» пишет: «Суд над ДИСК-ом⁵², который проводится на стадионе за стенами Стамбула, как представляется, организован для обеспечения оправдания переворота»⁵³.

Военные власти, конечно, предприняли определенные действия, ограничившие деятельность правых экстремистов, некоторые террористы понесли наказание за конкретные террористические акты. Однако суд идет над лидерами партий и конкретными исполнителями террористических акций, т. е. осуждается терроризм, как метод достижения политических целей. В то же время, сама идеология турецкого неонацизма и её важнейший элемент—пантюркизм не подвергаются опасности. Личина борьбы за национальные идеалы и интересы надежно защищает пантюркистскую доктрину от критики со стороны военных властей, что позволяет предполагать, что пантюркизм сможет вновь стать знаменем правой реакции, тем более, что основной враг неонацизма—левые партии, профсоюзы и орга-

⁵⁰ Билен И. К. Ситуация в Турции. «Проблемы мира и социализма», Прага, № 2, 1979.

⁵¹ „Financial Times Survey“. Turkey.—17. 5. 1982.

⁵² ДИСК (Disk)—Конференция революционных профсоюзов в Турции, запрещенная после военного переворота.

⁵³ „Financial Times Survey“. Turkey.—17. 5. 1982.

⁴⁷ „Stern“, № 12, 1979.

⁴⁸ Ibid.

⁴⁹ Балаян З. Между двух огней. Ереван, Советакан грох, 1979.

низации будут серьезно ослаблены в результате преследований со стороны военных властей.

* * *

Пантюркистская доктрина существует уже несколько десятилетий. Те поражения, которые терпели пантюркисты, казалось бы достаточны для того, чтобы понять раз и навсегда несбыточность попыток объединить самостоятельные народы, избравшие свой путь развития, соответствующий их истинным национальным интересам. Однако, во-первых, правая реакция в Турции постоянно стремится к реанимации пантюркизма и деятельность Партии националистического движения, её идеология, являются примером этих устремлений. Во-вторых, западные пропагандистские центры используют пантюркизм в националистической пропаганде на Советский Союз, Ленинская национальная политика, проводимая КПСС в нашей стране позволила решить национальный вопрос в СССР, что ставит непреодолимую преграду на пути восприятия населением страны идеалов буржуазного национализма.

Վ. ՆԱԳԵՆ ՌԱԵՎՍՊԻ

ՊԱՆԹՈՒՐԿԻՋՄԻ ԳՈՎՏՐԻՆԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՆՈՖԱՇԻՍՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՐԳՆԵՐԸ

Ամփոփում

Վերջին տարիներս համաշխարհային հասարակայնության ուշադրությունից չի վրիպում նեոֆաշիստական կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեության ակտիվացումը: Դրանց հովանավորներն իմպերիալիստական հետադիմական շրջաններն են: Ազդեցիվ իմպերիալիզմի հետ նեոֆաշիզմի ներքին կապի կոնկրետ օրինակ է թուրքական նեոֆաշիզմը: Այն իր մեջ ներառել է ինչպես դասական ֆաշիզմին բնորոշ գծեր, այնպես էլ ավանդական թուրքական նացիոնալիզմի առանձնահատկությունները: Հողվածը նվիրված է պանթյուրքիստական վարդապետության, ժամանակակից թուրքական նեոֆաշիստական գաղափարախոսության էվոլյուցիայի, նրա գաղափարական ակունքների վերլուծությանը, ներկայիս թուրքական քաղաքական կյանքի կարևոր կողմերի բացահայտմանը:

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտ

ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ

Ազգայնական գաղափարախոսության ձևավորման և թուրքիայի հասարակական կյանքում նրա ազդեցության պատմությունը գալիս է դարերի խորքից:

Կասկածից վեր է, որ այն դարձավ տիրող գաղափարախոսություն օսմանյան կայսրությունում բուրժուական հարաբերությունների մուտք գործելուց, այսինքն թանգիմաթի շրջանից հետո: Սակայն, մեր կարծիքով նրա առաջ գալու և վերջնականապես ձևավորվելու գործում վճռական դեր կատարեցին մինչ այդ գոյություն ունեցող մի շարք պատմական գործոններ:

Ուսումնասիրված նյութի վերլուծությունը և պատմության փաստերը պահանջում են, ամենից առաջ, ներկայացնել դեպի արևմուտք թուրքական ցեղերի հաղթարշավի թողած ազդեցությունը թուրքերի հասարակական կյանքի ու մտայնության վրա:

Երբ 6-րդ դարում թրքախոս վաչկատուն ցեղախմբերը Միջին Ասիայում հիմնեցին առաջին պետությունը՝ Կազանատը, նրանք այն դիտում էին որպես տեղական ժողովուրդներին ենթարկելու և նրանցից հարկ գանձելու կազմակերպություն: Այդ կարգը այնուհետև պահպանվեց սելջուկների, մոնղոլների և օսմանցի թուրքերի մոտ, որոնք 11—16-րդ դարերում հաջորդաբար գրավեցին Իրանի և Կովկասի մի մասը և Առաջավոր Ասիան:

Օսմանի թոռը, Մուրադ 1-ը (1359—1389 թթ.) արդեն իրեն հայտարարեց սուլթան ու մայրաքաղաքը տեղափոխեց Բուրսայից Ադրիանապոլիս: Այդ նշանակում էր, որ թուրքերը ավարտել էին Փոքր Ասիայի բռնագրավումը և անցել նվաճմանը: Թուրքական նավատորմը առաջին անգամ 1571 թ. ջախջախվեց Լեպանտոյի մոտ և ապա, 1683 թ. պարտվեց Թուրքիայի հզոր ցամաքային բանակը՝ Վիեննայի տակ: Թուրք պատմագրության բնորոշմամբ սկսվեց «կանգառի շրջանը», որին շուտով հաջորդեց նաև «նահանջի շրջանը»: Այդպիսով մոտ 10 դար տևեցին իրար

հաջորդող հաղթանակները, երբ թրքախոս ցեղերի ու ցեղախմբերի առաջընթացը անհնար եղավ կասեցնել:

4. Մարքսը իր «Ժամանակագրական բաղձածքներում» վերլուծելով պատմական իրողությունները, նշել է, որ դեռևս 13-րդ դարում «Թուրք-օսմանների հորդաները մուտք են գործում Փոքր Ասիա, որտեղ նրանք ամենից առաջ հիմնում են ավազակային պետություն՝ Կարանխար»¹: Այնուհետև նա ընդգծում է, որ այդ պետությունն ուժեղ էր իր կարգապահությամբ և կազմակերպված լինելով «գեոմոկրատական-բռնապետական հիմունքներով», հանդիսանում էր «միջնադարի միակ իսկական ռազմական պետությունը»²: Այդ պետության ուժի աղբյուրը սկզբնական շրջանում հանդիսանում էին քոչվորաավատական, բավական զարգացած հասարակական կառուցվածքը և նրա զինված ուժերը: Վերջիններս բաղկացած էին ֆեոդալ-հողատերերի աշխարհազորի հեծյալ զնդերից, անկանոն հեծելազորից (աբընջը-ասպատակ), որը մասնակցում էր պատերազմական գործողություններին՝ ավարի մի մասը ստանալու պայմանով և այդ պատճառով աբընջիները դարձել էին աճավոր թալանչիներ: Սակայն զինված ուժերի սարսափազդու մասը հնիչերիական զնդերն էին: Ենիչերիների (նոր զորք) ձևավորումը սկսվել էր 14-րդ դարի վերջերին և միայն հաջորդ դարում դրանք ստացան կանոնավոր զորքի, բարձր կարգապահությամբ ամրապնդված բանակի համարում:

Բացի զինված ուժերի նշված ստորաբաժանումներից, հատուկ ազդեցություն ձեռք բերեց կրոնազինվորական, այսպես կոչված «ախիններ» կազմակերպությունը, որը սերտորեն կապված էր զենք ու զինամթերք արտադրող արհեստավորական համքարությունների հետ: Այդ միավորումներում կային նույնիսկ մարտիկ-կանանց ստորաբաժանումներ, որոնք Փոքր Ասիայում մասնակցել են բազմաթիվ արշավանքների:

Ինչպես նշում է Փարիզի համալսարանի դասախոս, խոշոր իսլամագետ պրոֆ. Անրի Մասսեն, «սրբազան պատերազմը դարձավ իսլամ դավանող ամեն անձնավորության հիմնական պարտականություններից մեկը»³:

Մահմեդականների համար մտցվեց պարտադիր զինվորական ծառայություն: Տասնյակ տարիներ, եվրոպացի սպաների օգնությամբ, ձեռնարկվում էր այդ բանակը: Սակայն նա կանոնավոր, բարձր կարգապահությամբ ունեցող ռազմական միավորում չդարձավ: Անցյալ դարի կեսերին 4. Մարքսը թուրքական բանակը անվանում էր «հին մահմեդական բարբարոսության պատվար»⁴: 5. էնգելսը ռազմական ուժերի հզո-

րության անկումը կապում էր երկրում տիրող դրուժյան հետ: Մյուս կողմից օտարերկրյա հրահանգիչները լինելով քրիստոնյա «գլավուր», զինվորների համար մնում էին օտար և այս պատճառով էլ չէին կարող փոխել իրերի վիճակը, այն լավացնելու իմաստով: Հետևաբար, գրում է Յ. էնգելսը, «բանի թուրքերը կմնան երկրում ղեկավարող ազգ, նրանք չեն հնարավոր այն մարդկանց, որոնց հոգու մեջ արհամարհում են, համարելով նրանց իրենցից շատ ցածր»⁵:

Այդպիսով, թուրքերի պետականությունը և նրա հիմքը հանդիսացող զինված ուժերը ստեղծվեցին արշավանքների ու պատերազմների պայմաններում, իսկ նրա հիմնական նպատակներից մեկը դարձավ ռազմական գործողություններ նախապատրաստելն ու վարելը: Ռուս հայտնի արևելագետ Վ. Սմիռնովն Օսմանյան կայսրության ռազմական ուժերին տվել է հետևյալ գնահատականը. «Թուրք-օսմանները իրենց ամբողջ էներգիան տրամադրել էին բանակ ստեղծելուն և իրենք էլ ասում էին, որ իրենց պետությունը «սրով է ձեռք բերված և միայն սրով էլ կարող է պահպանվել»⁶: Մեկ ուրիշ մասնագետ՝ անգլիացի հեղինակ Ա. Լիբայերը, ամփոփելով կայսրության անցած ուղին, նրա անկման նախօրեին գրում էր, որ Օսմանյան պետությունը միշտ ղեկավարվել է ռազմական գործիչների միջոցով, նրանց կամքով ու թելադրանքով, որ այդ պետությունը «ծնվել էր պատերազմում և պատերազմի համար»⁷:

Թուրք հայտնի գրող Ք. Թահիրի «Դեվլեթ մայրիկ» վեպում հաջողությամբ ներկայացված են օսմանյան պետության ստեղծման ժամանակաշրջանի պայմաններն ու հոգեբանությունը: Վեպի բազմաթիվ հերոսներ լայնատարած ու հզոր պետություն ստեղծելու երազանքով պատերազմի գովքն են անում. «Այն սուրբ, որ չի կտրում, ժանգոտում է, իսկ սուրբ, որ կտրում է, փայլում է»: «Լավ կլինեք, եթե զինվորները հողին հրքեք չնստեին, քանի որ սուրբ գրքում ասված է՝ մահմեդականի տեղը ձիու վրա է»⁸: Այնուհետև ցեղի առաջավոր ներկայացուցիչներից մեկը շափազանց դիպուկ կերպով բնութագրում է իրերի վիճակը հետևյալ խոսքերով. «Օրհան բեյ, — դիմում է նա Օսմանի որդուն, — մենք մի փոքրիկ խումբ ենք: Եկել ենք հեռվից, նստել օտարի հողին: Մեր բերքը՝ ձիու մեջքն է, թուրք և վահանը: Երբ ուժը անբավարար է՝ թողնում գնում ենք նոր տեղ... Մեր նախահայրերը, թուրքմենները ասում էին՝ «քոչվոր ժողովրդի հայրենիքը այնտեղ է, որտեղ կանգ է առնում նրա ձիու

¹ К. Маркс, Архив, т. 5, с. 223.

² Նույն տեղում, հ. 6, էջ 177, 189:

³ А. Массэ, Ислам. М., 1961, с. 60.

⁴ К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 10, с. 28.

⁵ Նույն տեղում:

⁶ В. Д. Смирнов. Кочубей Гёмурджинский и другие османские писатели XVII века о причинах упадка Турции. СПб., 1873, с. 211.

⁷ «Народы Азии и Африки», 1978, № 3, с. 64.

⁸ Кемаль Тахир. Глубокое ущелье. М., 1971, с. 23.

ամբակը»⁹։ Այսպիսով, նրանք իրենց «հայրենիքը» հայտարարեցին Միջին ու Առաջավոր Ասիան, Աֆրիկայի և Եվրոպայի մի մասը։

Ինչպես տեսնում ենք, ռազմաշունչ թուրքական ցեղերի հաղթարշավները և իրար հաջորդող պետությունները եղան նրանց հաջողությունների ու հզորության աղբյուրը։ Հենց այս պատճառով էլ կայսրության բազմաթիվ գործիչներ, անկախ դասակարգային պատկանելիությունից, հատկապես նրա համար ձգնաժամային 19 և 20-րդ դարերում հետևողական պայքար էին մղում օսմանյան պետության պահպանման համար։

Թանգիմաթի հեղինակներից մեկը՝ Յուսուֆ փաշան, սուլթանին հասցեագրված իր մեծածավալ ու հայտնի «քաղաքական կտակում» ահազանգում էր, որ «Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է», որ «հին միջոցներով չենք կարող մեր անցյալ մեծությունը վերահաստատել»։ Նա լեղատոմսեր էր առաջարկում վերակենդանացնելու կայսրության մահացող օրգանիզմը, որոնց մեջ կարևորներից մեկը «հպատակ բոլոր ժողովուրդների» միասնությունը հասնելն էր, «կամավոր կամ բռնի ուժով նրանց «օսմանցիներ» հայտարարելը»¹⁰։

Երիտասարդ օսմանների լիդերներից գրող ու քաղաքական գործիչ Նամըկ Քեմալը գրել է. «Մեր մարգարեն աշխարհին ծառայություն է մատուցել իր սրով։ Մենք ևս ընթանալու ենք այդ ուղիով... կաշխատենք ապացուցել, որ մենք պատկանում ենք Օսմանյան ժողովրդին, որ ամբողջ աշխարհին ստիպում էր զողալ իր առջև... Յուլյց տանք գյավուրների մեր ուժը, տրամադրենք մարգարեին այդ հաճույքը»¹¹։

Ինչպես տեսնում ենք, դարեր տևող թուրքական տիրապետությունը, որը հենվում էր ռազմաֆեոդալական պետության ու նրա զինվորական ուժի վրա, ապահովեց ոչ միայն թուրքերի գերիշխանությունը, այլև ստեղծեց համապատասխան հասարակական մթնոլորտ և հոգեբանություն։ Բոլոր մահմեդականները և հատկապես թուրքերը օգտվում էին բազմաթիվ արտոնություններից, մինչդեռ իրավազուրկ էին բոլոր այլադավան ժողովուրդները։ Նման անհավասար իրավիճակը շարունակվեց իսլամական պետությունների, մասնավորապես Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ժամանակաշրջանում, ինքրեցիպով անցավ Թուրքիայի հանրապետությանը և արտահայտվում է նաև մեր օրերում։ Հետևաբար, թուրք պետականությունը հանդիսացավ առաջին հզոր գործոնը կամ սոցիալական ուժը, որը արգավանդ հող ստեղծեց թուրքական շովինիզմի ծլարձակման և հետագա սրբնիաց աճի համար։

Այդ ասպարեզում ոչ պակաս նշանակալից դեր կատարեց նաև իսլամը։

Օսմանյան կայսրության ամբողջ պատմության ընթացքում իսլամը ծառայել է ռեակցիային, ներկայացրել ու պաշտպանել է ռազմաֆեոդալական վերնախավի շահերը։ Բերենք միայն մի քանի փաստեր։

Հանրահայտ է, որ հատկապես 1517 թվականից, երբ սուլթանը հայտարարվեց ուղղափառ մահմեդականների խալիֆ, Օսմանյան ռազմաֆեոդալական պետությունը դարձավ նաև թևակառուցված։ Մահմեդական հոգևորականությունը, ստանալով ու ընդարձակելով հողատարածություններ, ձեռք բերեց բավական ազդեցիկ տնտեսական ուժ։ Նա իր ձեռքում կենտրոնացրեց դատական մարմինների ղեկավարությունը, երկրի օրենքների մեկնաբանությունը, կրթության գործը և քաղաքացիական կյանքի համարյա բոլոր բնագավառները։ Նույնիսկ սուլթանները գահընկեց չէին արվում ու նորերը գահին նստեցվում առանց շեյխուլ-իսլամի կամ այլ հոգևորական պարագլուխների համաձայնության։ Պետության ու կրոնի սերտաճումը Թուրքիայում թափանցել է հասարակական կյանքի բոլոր ծակոտիները և դարձել հպատակների համար մի պարտադիր և անփոխարինելի իրադարձություն։ Երկրի բարքերին քաջածանոթ և բազմաթիվ իրադարձությունների ակնատես Յր. Գրինը Օսմանյան պետական կարգը համարում է ձևով ու էությունով «քաղաքական ու կրոնական»։ «Իսլամը,— գրում է նա,— պետական օրգանիզմի միս ու արյունն է։ Բանակը՝ մահմեդական է, ազգային տոները՝ մահմեդական, պաշտենական օրացույցը՝ մահմեդական, օրենքները՝ հենվում են ղուրանին, դատավորները՝ մահմեդական կրոնի ներկայացուցիչներ են, դատարանում վկայություն տալը՝ կրոնական գործողություն է»¹²։

Իսլամը անմիջական ազդեցություն ուներ երկրի տնտեսական կյանքի վրա։ Համբարությունները դարեր շարունակ կազմակերպվում և գործում էին կրոնական սկզբունքով և ղեկավարվում շեյխերի կողմից։ Կային արտադրության և առևտրի բնագավառներ (զինեգործություն, ապրիստած մսի, երշիկի և խոզի մսից պատրաստող այլ արտադրություններ), որտեղ մահմեդականին արգելված էր մասնակցել։ Ղորանը և շարիաթը կարգավորում էին տնտեսական և նյութական փոխհարաբերությունները մահմեդականների միջև, ինչպես նաև նրանց ու այլադավանների միջև։ Նրանք օրինականացրել էին հասարակության մեջ կնոջ անհավասար լինելու հանգամանքը, փաստորեն արգելելով նրա մասնակցությունը արտադրության մեջ, որոշակի փոխհարաբերություններ սահմանել ընտանեկան կյանքում։

Իսլամը արգելքներ է հարուցել ժողովրդական լուսավորության, մշակութի, մասնավորապես կերպարվեստի և գիտության զարգացման կենսական կարևորություն ունեցող բնագավառներում։ Սակայն բոլոր

⁹ Նույն տեղում, էջ 295։

¹⁰ Տե՛ս «Արոր», 1910, № 6—7, էջ 177—178։

¹¹ Kaplan N., Namik Kemal, Hayati ve Eserleri, Istanbul, 1948, s. 42.

¹² Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., Сборник, изд. II. М., 1896, с. 295.

դեպքերում այն հանդես է եկել որպես իր հետևորդների տիրապետությանն ապահովող ճշգրտ միջոց: Իսլամը, Կ. Մարքսի արտահայտությանը «անհավատներին հայտարարում է օրենքից դուրս և ստեղծում է մահմեդականների ու անհավատների միջև անընդհատ թշնամության վիճակ»¹³: Դարեր շարունակվող անհավասար պայքարում, մանավանդ Օսմանյան կայսրության տարածքի վրա, մահմեդականները մշտապես ապրել են արտոնյալ պայմաններում: Այդ կարևոր հանգամանքը մի կողմից, մահմեդական կրոնից հրաժարվողների նկատմամբ կիրառվող խստազույն միջոցները մյուս կողմից, անընդհատ ամրապնդել են իսլամի տիրապետությունը:

Իհարկե, ձեռնարկում իմաստով մահմեդական կրոնը կամ դուրանը չեն պահանջում հետապնդել բրիտանյաններին: Բայց նրանք պարտադրում են վարվել այլազավանների հետ որպես իրենց հպատակների: Միաժամանակ դուրանը պարտադրում է, եթե որևէ այլազավան ժողովուրդ չի ուզում իսլամ ընդունել կամ չի համաձայնվում հպատակ դառնալ և վճարել համապատասխան տուրք (չեղիե), ապա պետք է նրան պատերազմ հայտարարել: Ընդհանրապես, ոչ մահմեդականների հետ մշտական պատերազմ մղելը, մինչև նրանք կենթարկվեն իսլամին, հանդիսանում է վերջինիս հիմնական դրույթներից մեկը¹⁴:

Իսլամի վարդապետության ազդեցությունը մեր ժամանակներում ևս ապահովվում է տարբեր ու այլազան միջոցներով, որոնք բոլորն էլ ուղղված են մի կարևոր նպատակի՝ ապացուցել, որ մահմեդական կրոնը և նրա հետևորդները ավելի բարձր են, քան մյուս դավանանքներն ու դրանց կրողները: Այդպիսով, քաղաքական, իրավական, հասարակական և փաստական արտոնյալ վիճակին համընթաց մահմեդականը պետք է հավատացած լինի, որ նա բարոյական ու հոգեկան առումով ևս ավելի արտոնյալ է, քան որևէ «գլխավոր»:

Դարերով տարվող այս դաստիարակությունն ու պրակտիկ քաղաքականությունն իրապես ստեղծել էին մահմեդականների մոտ առավելություն հոգեբանություն, որը շափազանց կարևոր նշանակություն ունեցավ ազգայնական գաղափարների հաղթանակի և երկարատև ազդեցության համար: Անդրադառնալով մահմեդական թուրքի արտոնություններին ու նրա իրավական դրությանը, Կ. Մարքսը նշում է. «Ինչպիսի սոցիալական վիճակ էլ նա ունենար, նա պատկանում էր արտոնյալ կրոնին ու ազգությանը, միայն նա իրավունք ուներ զենք կրելու, և ամենաբարձր դիրք ունեցող բրիտանյան պարտավոր էր հանդիպելիս ճանապարհը դիջել հասարակության ցածր խավին պատկանող մահմեդականին»¹⁵:

Այնուհետև, մահմեդականության ազդեցությունն ու նրա առավելությունները ապահովող վեճական գործոն է հանդիսացել շարիաթը: Ժամանակի ընթացքում լրացված մահմեդական օրենքների, կանոնների, սովորույթների համակարգ կամ որպես օրենսգիրք ընդունված շարիաթը («նախագծված ուղին») սահմանել է իսլամ դավանող բոլոր ժողովուրդների ներքին ու արտաքին փոխհարաբերությունները:

Իր բնույթով այն գտնվել է մարդկային իրավասությունից բարձր, անկախ է եղել նրանց կամքից ու ցանկությունից: Նույնիսկ սուլթանները իրավունք չեն ունեցել փոխել կամ շեղյալ համարել շարիաթի որևէ մասը: Նրանք հանդես էին գալիս սոսկ որպես սրբազան օրենքների պահպանող, մեկնաբանող և կատարող: Ա. Լիբայերը իրավաբանորեն շարիաթը անվանել է Օսմանյան կայսրության «սահմանադրություն»: Շարիաթին քաղաքականությունը ևս հենվում էր շարիաթի վրա: Այսպես իսլամի հետևորդները (ուսմու) ունեին արտոնյալ վիճակ, իսկ այլազավանները (զիմմի) զուրկ էին դրանից: «Ըստ շարիաթի,— գրում է հարցի վանանգետ Գ. Քերիմովը,— այլազավաններից գանձվում էին հետևյալ մասնագետ Գ. Քերիմովը,— այլազավաններից գանձվում էր հարկերը՝ շիզյա, խարաջ, խուսու և ուշր: Զարբաթ հարկը գանձվում էր միայն մահմեդականներից, իսկ շիզյան միայն այլազավաններից: Հարկերի մնացած տեսակները գանձվում էին ինչպես մահմեդականներից, այնպես էլ այլազավաններից, բայց տարբեր շափերով...»¹⁶: Կենսական նշանակություն ունեցող այս բնագավառում ևս օրենքը մահմեդականի կողմն էր և բոլորովին չէր պաշտպանում ոչ-մահմեդականի շահերը: Այնուհետ է, որ օրենքի նման կիրառումը վերջինիս ոչ միայն նյութական վնաս էր հասցնում այլև հանդիսանում էր հոգեկան ու բարոյական ճնշման միջոց:

Սելիմ առաջինի (1512—1520 թթ.) քաղաքացիական օրենսդրում կա հատուկ գլուխ «զիմմիներից տուգանք գանձելու» կարգի մասին: Տուգանքը պետք է գանձվեր կայսրության բոլոր հպատակներից գանազան խախտումների համար: Բայց եթե խախտումը կատարում է գլավուրը կամ բրիտանյա օտարականը, օրենքը պահանջում է «նրանից գանձել երկու անգամ ավելի, իսկ ստրուկից՝ տուգանքի կեսը»¹⁷:

Թանգիմաթից հետո ընդունվեցին բազմաթիվ օրենքներ, հաստատվեց քաղաքացիական նոր, ընդարձակ օրենսդրություն, որտեղ վերևում նշված անհավասարության վերաբերյալ հատուկ հոդվածներ ու գլուխներ չկան: Չեռնական իմաստով բոլորը հավասար են օրենքի առջև: Բայց շարիաթը մնաց և մինչև հիմա որոշ երկրներում գործում է:

Այսպիսով, մահմեդական պետականությունը, կրոնը և շարիաթը

¹³ Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 10, с. 167.

¹⁴ *Sh'as* U. *Ussah*, նշվ. աշխ., էջ 60:

¹⁵ Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 9, с. 6.

¹⁶ Керимов Г. М. Шарият и его социальная сущность. М., 1978, с. 187.

¹⁷ Книга законов султана Селима I, публикация текста А. С. Тверитиновой. М., 1965, с. 35.

իրականության մեջ միահյուսված պատմական ամբողջականություն էին ներկայացնում: Մեր կողմից դրանց անջատման միակ նպատակն էր ցույց տալ, որ Օսմանյան կայսրության դառավոր գոյության ընթացքում այդ միասնությունը և նրա առանձին բաղկացուցիչ մասերը եղել են մահմեդականների արտոնյալ վիճակը և գերազանցությունը ապահովող և պաշտպանող շափագանց կցոր ու կաբևոր գործոններ:

Ազգայնական գաղափարախոսության վերջնական ձևավորման շրջանը, ինչպես ամենուր, այստեղ ևս համընկավ բուրժուական հարաբերությունների ծագման և զարգացման փուլի հետ: Բնականաբար, այն ավելի շուտ ձևավորվեց տնտեսապես ու կուլտուրական մակարդակով ավելի բարձր զարգացման աստիճանի վրա գտնվող հույների, սլավոնների, հայերի ու հրեաների մոտ:

Հանրահայտ է, որ 19-րդ դարի վերջից մինչև առաջին համաշխարհային պատերազմը հունական կապիտալը հսկում էր Օսմանյան կայսրության արտադրության և առևտրի մոտ 50%-ը և ֆինանսական ներքին գործարքների 40%-ը: Հայ բուրժուազիայի ներկայացուցիչները իրենց ձեռքում կենտրոնացրել էին արտադրության և առևտրի մոտ 25%-ը, և ներքին առևտրի ավելի քան 60%-ը: Իրենց կատարած գերով երրորդը հրեաներն էին ու տեղայնացված եվրոպացիները: Թուրքական ազգային նորաստեղծ բուրժուազիան հսկում էր առևտրի (գլխավորապես մանրածախ) 15 տոկոսը և արտադրության 12 տոկոսը: Անհրաժեշտ է նշել նաև, որ անասունների վաճառքով զբաղվողների 80%-ը թուրքեր էին, որոնց պատկանում էր նաև գորգերի վաճառքի 40%-ը¹⁸: Պատմական զարգացման առանձնահատկությունը ստեղծել էր, այդպիսով, յուրահատուկ աշխատանքի բաժանում, երբ «արհեստներով ու առևտրով, այսինքն՝ էկոնոմիկայի այն ճյուղերով, որտեղ ամենից ավելի շուտ կարող է հասունանալ կապիտալիստական կացութաձևը, զբաղվում էին առավելապես ոչ թուրքերը և անգամ ոչ մուսուլմանները»¹⁹: Բնականաբար, արդեն տնտեսական հողի վրա առաջ էին եկել խիստ հակասություններ ու պայքար, որը ձեռք էր բերել ազգային երանգ: Տիրապետող ազգը չէր կարող հանդուրժել այլազգի ներկայացուցիչների որևէ առավելություն և անողոք կերպով ճնշում էր ու սահմանափակում նրանց հետագա զարգացումը: Նրա այդ քաղաքականությունը նպաստում էր մահմեդական կրոնը:

Ահա թե ինչու «կապիտալիստական հարաբերությունների ձևավորումը,—ինչպես գրում է Ն. Աշիրովը,—որը համընթանում է ազգերի գոյացման հետ, ժողովուրդների ձգտումը ազգային անկախության, մուսուլմանական կրոնական կազմակերպությունների և հոգևորականության

կողմից բացասաբար են գնահատվել»²⁰: Այդ դեպքում օսմանյան կայսրությունում թուրք վերնախավի՝ բոլոր հպատակ ժողովուրդներին միայն օսմանցի ճանաչելու քաղաքականությունը դառնում էր ոչ ոնալ: Եվ երբ թուրքական ճնշմանն ի պատասխան ուժեղանում էին ազգային ազատագրական շարժումները կայսրությունում, նրա կառավարիչները տենդորեն միջոցներ էին փնտրում դրանք խեղդելու: Իսկ թուրքական բուրժուական նացիոնալիզմը ձևավորվում էր որպես հակաքրիստոնեական, նշված շարժումների դեմ ուղղված՝ հակապալոնական, հակահունական, հակահայկական և այլն, շովինիստական գաղափարախոսություն:

Թանդիմաթի հեղինակներից մեկի՝ մեծ վեդիր Ֆուադ փաշայի քաղաքական կտակում, որը գրվել էր 1869 թ., այդ գաղափարախոսությունը հայհույանքի երանգ է ստանում: Այսպես, հույներին նա հայտարարում է «միշտ մեր դատի թշնամին», «ատելի ու անտանելի» ժողովուրդ: Նրա կարծիքով թուրքերի «քաղաքականության նպատակը պետք է լինի հնարավոր շափով անջատել հույներին մեր մյուս քրիստոնյաներից»: Ապա արհամարհական տոնով շարունակում է. «...մի Մոնթենեգրո, մի սերբիական իշխանապետություն, մի հայկական թագավորություն, շունենալով ամենափոքր օգուտ ոչ իրենց ոչ մարդկության կարող են առավել կամ նվազ ցնորական պետություններ լինել, մարդկային հին բաժանումների դժբախտ մնացորդներ»²¹: Թուրքական պետության առանձին գործիչներ տարբեր փուլերում աշխատում էին օգտագործել ազգային փոքրամասնություններին ու նրանց միջև եղած հակասությունները համապետական այս կամ այն նպատակների համար: Միդհատ փաշան 1876 թ. փորձում էր կազմակերպել մահմեդականների ու քրիստոնյաների (գլխավորապես հույների) միացյալ ջոկատներ, ուղարկել դրանք Սերբիա և Չեռնոգորիա՝ ժողովրդական շարժումները տեղում ճնշելու համար: Այդ և ուրիշ միջոցառումներով նա փորձում էր ցույց տալ հանուն «Օսմանյան ընդհանուր հայրենիքի» տարբեր ժողովուրդների միավորման հնարավորությունները: Բայց իրուր էին փորձերը: Կայսրության փլուզումը սկսվել էր դեռևս «թուրքերի ազգ դառնալուց շատ առաջ: Ուստի թուրքական տիրապետությունը ուրիշ ժողովուրդների նկատմամբ, որոնցից շատերը զարգանում էին թուրքերից ավելի արագ, դարձել էր ռեակցիոն վերապրուկ»²²: Սակայն թուրքերը, ներշնչված մեծապետական շովինիզմի ոգով և հաշվի չնստելով սոցիալ-քաղաքական տեղաշարժերի հետ, ամեն կերպ ձգտում էին ամրապնդել իրենց տիրապետությունը և դրա պատվարը հանդիսացող Օսմանյան կայսրությունը:

²⁰ Ашуров Н. Ислам и нация. М., 1975, с. 7.

²¹ «Արք», 1910, № 6-7, էջ 184-185:

²² Տե՛ս Վ. Երեմեև, նշվ. աշխ., էջ 213-214:

¹⁸ Պատմա-բանասիրական հանդես, 1975, № 1, էջ 181:

¹⁹ Վ. Շ. Երեմեև, Թուրքերի ծագումը, Ե., 1975, էջ 234:

Պայքարի հիմնական գեներելից մեկը դարերով հասունացող և վերջին 100—120 տարիների ընթացքում ձևավորված ազգայնական գաղափարախոսությունն էր:

Այս գաղափարախոսության զարգացման ֆեոդալական շրջանը թողել է որոշակիորեն ձևավորված և գրական արժեք ներկայացնող հուշարձաններ: Դրանցից առաջինը Պարսկաստանում 11-րդ դ. գրված «Քարունամեն» է: Ձևով այն բարոյական խրատներ պարունակող գիրք է, որի հեղինակը՝ տիրապետող վերնախավի ներկայացուցիչը, իր որդուն ուղղած 44 գլուխներում խորհուրդներ է տալիս, թե ինչպես պետք է տարբեր պայմաններում նա իրեն պահի, ճիշտ որոշի փոխհարաբերությունները շրջապատի հետ, արհեստներով ու առևտրով զբաղվի, ժամանցը կազմակերպի, ընտանիք կազմի և այլն: Դրանք բոլորը հասցեագրված են մահմեդական ազնվականներին և նրանցից միայն մեկում, 23-րդ գլխում է հեղինակը խոսում այլադավանների մասին: Գլխի վերնագիրն է՝ «Ստրուկ(կու) գնելու պայմանների մասին»: Արհամարհանքով են ներկայացված պատերազմներում գերի վերցված և շուկաներում վաճառվող գլավուրները, որոնց գնելիս հեղինակը խորհուրդ է տալիս հաշվի առնել ազգային բնավորությունը, առավելությունը տալով ձեռք բերվող ստրուկի կամ ստրկուհու արտաքին ձևերին²³:

Այս ստեղծագործությունը, սակայն, արտացոլում է դեպքերի զարգացման համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանը և այնքան ռազմաշունչ չէ, որքան միջնադարի մյուս հուշարձանը՝ «Իմ պապ Կորկուտի գիրքը»: Վերջինս 9—15-րդ դարերի օգուղ թուրքերի արշավանքների մասին եղած բանահյուսության ամփոփումն է: Գրքում ակադ. Վ. Բարտոլդի բնորոշմամբ՝ «կոպիտ կերպով ցուցադրվում է պատերազմի պաշտամունքը»²⁴:

Գրքի 12 պատմվածքներից միայն մեկում են ներկայացված միջցեղային կոնֆլիկտներ: Մնացած տասնմեկում արևելյան ճոխությունը նկարագրված են «գլավուրների» դեմ մղած պատերազմական գործողությունները: Գրքում կարելի է հանդիպել այսպիսի պատկերների. մարտիկը հաղթելով «գլավուրներին», նրանց դիակներին բլուր է կաղմում, գրաված բերդի եկեղեցին քանդվում է, և տեղում շինվում է մզկիթ, գերված ազնիվները սպասարկում են ռազմիկներին: Հերոսներից մեկի հովիվը իր հոտի վրա հարձակվող թշնամիներին դիմում է հետևյալ բաներով. «շուն-գլավուր, որ խմում ես իմ կեղտոտ ջուրը նույն ամանից, որից խմում է և իմ շունը, շար գլավուր»²⁵: Այնուհետև օղուղիների զո-

հերը ներկայացվում են որպես «հավատի համար տանջվածներ», որոնց հաղթանակները երբեմն ստիպում են թշնամիներին մահմեդականություն ընդունելու:

Իերված մանրամասնությունները անհրաժեշտ էին այդ աղբյուր-հուշարձանների ոգին ցույց տալու համար:

Բազմաթիվ են միջնադարի և նոր ժամանակաշրջանի արքունական պատմագիրների, առանձին հեղինակների ու ժամանակակից պատմաբանների հուշագրությունները, ուսումնասիրություններն ու մենագրությունները, որտեղ գովերգվում են իսլամի հաղթանակները, թուրքերի իշխող դիրքը և հպատակ ժողովուրդների հավատարմությունը:

Նացիոնալիզմի գաղափարական տարբերակները, ըստ զարգացման փուլերի, անասելի արագությունը հաջորդեցին մեկը մյուսին: Այսպես, օսմանիզմին հաջորդեց պանթուրքիզմը, նրան՝ պանթուրանիզմը, ապա՝ թուրքիզմը (թուրքոլոյալք), որոնք բոլորն էլ որպես ուղեկից ունեին և ունեն պանիսլամիզմը: Վերջինս իր ծնունդով և զարգացման փուլերով ֆեոդալական շրջանի մահմեդական պետությունների անկման պրոցեսի արդյունքն է: Այն փորձ է անկումից և քայքայումից փրկելու իսլամական աշխարհի միջնադարում ստեղծված պետական սիստեմը, բարբերն ու վարբերը, կրոնն ու շարիաթը, որոնք արդեն վաղուց չէին համապատասխանում ժամանակի պահանջներին և իրենց տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին պահում էին ճնշման ու կեղեքման պայմաններում: Այդ միտքը կարելի է հաստատել մեր ժամանակների բազմաթիվ փաստերով:

Առաջին համաշխարհային պատերազմը և նրան նախորդող շրջանը ցույց տվեցին, որ պանիսլամիզմը ամենայն հեշտությամբ գործակցում է և կամ ցանկանում է օգտագործել իմպերիալիստական երկրների ագրեսիվ պլանները:

Վ. Ի. Լենինը պահանջում էր «պայքարել պանիսլամիզմի և նման հոսանքների դեմ, որոնք փորձում են եվրոպական և ամերիկյան իմպերիալիզմի դեմ ուղղված ազատագրական շարժումը միացնել խաների, կալվածատերերի, մոլլաների և նմանների դիրքի ամրապնդման հետ»²⁶:

Բոլոր ոչ-թուրք ժողովուրդները իսկապես դուրս եկան ազգայնական գաղափարախոսության ու քաղաքականության դեմ: Սակայն թուրք վերնախավը դրանցից շնորհաբար Սկզբնական շրջանում դրանց պրոպագանդային զուգահեռ փորձում էին օգտագործել պանիսլամիզմը, թուրքերին, ապա նաև բրդերին ու արարներին հիշեցնելով մահմեդականների շահերի ընդհանրությունը: Պանթուրքիստների գլխավոր հոգսը «Չինաստանից մինչև Դանուբ» ընկած տարածություններում ապրող թուրքալիզու ժողովուրդների, միասնական ազգի» պատկանելությունը

²³ *Տե՛ս* Кабуе Наме, изд. II, перевод и подготовка к изданию Е. Э. Бертеля. М., 1958, с. 26—27.

²⁴ *Տե՛ս* Книга моего деда Коркута. М.-Л., 1962, с. 114.

²⁵ Նույն տեղում, էջ 23—24:

²⁶ Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովա՛տ, հ. 41, էջ 199:

ապացուցելն էր: Իսկ նրանց նպատակը՝ այդ տարածությունների վրա «թուրքական մեծ պետություն» ստեղծելը: Ահա այստեղ էլ խաշաձեվում էին պանթուրքիզմը և պանթուրանիզմը:

Իզուր չէր, երբ Մաքսիմ Գորկին 1920 թ. իր նամակներից մեկում լրջորեն անհանգստացած գրում էր. «Ես շարունակում եմ մեծ կասկածանքով վերաբերվել Թալեաթ-բեյերի ու էնվերներին նկատմամբ, որոնք, ինչպես տեսնում ենք, երազում են ստեղծել մասձեղական պետություն, ընդգրկելով անդրկասպյան մարզերը, Անդրկովկասը Դաղստանի հետ, Անատոլիան, Կիլիկիան և, կարծես թե Եգիպտոսը... Չեմ կարծում, որ Ռուսաստանը ինչ-որ բան շահեր պանթուրքական այդ խաղից»²⁷:

Թուրքական ազգային բուրժուազիայի ձևավորումը իր հետ բերեց թյուրքուլյուքի (թրքականության) գաղափարախոսությունը: Այն պետք է լիներ մինչև այդ տիրապետող «պան» գաղափարների ավանտյուրիզմից զերծ, իրապես ազգային գաղափարախոսություն: Բայց նա դեռևս իր գոյության արշալույսին ցույց տվեց, որ զգալի չափով ներծծել է «պան»-երի տարրերը, և ռասիզմի ու մասձեղական ֆանատիզմի սկզբունքները դարձել են նոր գաղափարախոսության հիմնական մասերը: Երիտթուրքերի 1911 թ. հոկտեմբերին գումարված համագումարի որոշումները հայտարարում էին Թուրքիան զուտ մասձեղական երկիր և առաջարկում թուրքացնել բոլոր ժողովուրդներին եթե ոչ համոզմունքով, ապա՝ «զինված ուժի» միջոցով:

Ուրիշ ազգություններու,—կարգում ենք համապատասխան որոշման մեջ,—պետք է զլացվի կազմակերպության իրավունքը, որովհետև ապակենտրոնացումը և ինքնավարությունը դավաճանություն է թուրք կայսրության հանդեպ: Ազգությունները (այսինքն ազգային փոքրամասնությունները—Չ. Ի.) զանցառելի քանակություն են: Անոնք կրնան պահել իրենց կրոնը, բայց ոչ լեզուն: Թուրք լեզվի տարածումը գերազանց միջոց է մասձեղական գերիշխանությունը հաստատելու և մյուս տարրերը ձուլելու»²⁸:

Երիտթուրքերի գաղափարախոսությունն ուսումնասիրող է. Հասանովան իր աշխատանքներում վերլուծելով թյուրքուլյուքը, գտնում է, որ այն «հենց սկզբից երևան է եկել ոչ թե մաքուր վիճակով, այլ պանթուրքիզմի մեծ խառնուրդով»: Իսկ այդ և մյուս «պաները» հիմնված են շովինիզմի ու ռասիզմի վրա և «վճռականորեն ճակատում են ազգային սկզբունքներին»²⁹:

Այս գնահատականը տրվել է ոչ միայն մտավորականների աշխա-

տություններում, այլև պետական, քաղաքական և կուսակցական գործիչների հայտարարություններում: Իսկ իրականում շովինիզմն ու ռասիզմը շարունակում էին իրենց գոյությունը որպես պրակտիկ քաղաքականության բաղկացուցիչ տարրեր: Դրանց ազդեցությունը իրենց վրա զգում էին ոչ միայն բրիտանյա, այլև մասձեղական ժողովուրդները:

«Հայրենասիրությանը տոգորված արաբ մտավորականները,—ասել է Իրաքի խոշոր հասարակական գործիչ Ազիզ Շերիֆը,—իրենց եղբայրակիցների հետ օսմանյան կայսրությունում մասնակցում էին քաղաքական գործունեությանը: Սակայն երբ երիտթուրքերի ղեկավարները սկսեցին ազգային խտրականության՝ պանթուրքիզմի և բռնի թուրքացնելու քաղաքականությունը, պատասխան արտահայտությունը եղավ թուրքական լծից լրիվ ազատագրվելու ձգտումը»³⁰:

Սակայն պատմական դասերը ուսանելի չեղան թուրք վերնախավի համար: Մեր օրերում էլ շարունակվում է առանձին ժողովուրդների ու ազգերի անգամ ֆիզիկական գոյության բացասումը: Այսպես, վերջին 1982 թ. հոկտեմբերի 18-ին ընդունված սահմանադրությունը անշուշտ շատ բանով նման չէ և հաճախ նահանջ է նրանից առաջ եղած երեք սահմանադրություններից: Սակայն զարմանալին այն է, որ անփոփոխ են մնացել 1876 թ. ընդունած առաջին սահմանադրության մի քանի հիմնական դրույթներ: Այսպես, բազմազգ Օսմանյան կայսրության հիմնական օրենքի 8-րդ հոդվածը պետության բոլոր բնակիչներին հայտարարում էր «Օսմանցիներ», որ հավասարազոր է «թուրք» հասկացությանը: Իսկ հանրապետության շրջանի երեք սահմանադրություններում էլ Թուրքիայում բնակվողները, անկախ ազգությունից, նույնպես հայտարարվում են «թուրքեր»: Օրինակ, վերջին սահմանադրության 66-րդ հոդվածը ձևակերպված է այսպես. «Թուրքական պետության բոլոր քաղաքացիները թուրքեր են»: Այնուհետև, նշված փաստաթղթերում պաշտոնական լեզուն համարվում է միայն թուրքերենը: Այլ լեզուների գոյության մասին չկա որևէ ակնարկ: Նման ճաշողականության ինչ-որ հիմնավորում կարելի է գտնել հենց սահմանադրության մեջ: Այստեղ թուրքական հանրապետությունը հռչակվում է «գեմոկրատական, աշխարհիկ, սոցիալ-իրավական պետություն, որտեղ մարդու իրավունքները հարգվում են հասարակական հանգստության, ազգային համերաշխության և արդարացիության սահմաններում»: Այս անորոշ ձևակերպումներից հետո ասված է, որ Թուրքիան «հավատարիմ է Աթաթուրքի նացիոնալիզմին»: Ուրեմն ավելի քան ճարտուր տարի է, ինչ ազգայնականության սկզբունքը ժառանգաբար անցնում է երկրի հիմնական օրենքի բոլոր տարրերակներում: Ներկայումս նացիոնալիզմի սուր ծայրը, ուղղված ազգային բու-

²⁷ М. Горький, Собр. соч., т. 29, с. 395.

²⁸ Հովհ. Հակոբյան, Թուրքիան գերման ճանկերուն մեջ, Քիֆլիս, 1918, էջ 26—29.

²⁹ Современная философская и социологическая мысль стран Востока, Сборник, с. 233—235.

³⁰ Азиз Шериф, Выступление на Международном симпозиуме в октябре 1969 г., в гор. Алма-Ате, с. 5.

լոր փոքրամասնությունների դեմ, հատկապես խիստ է հարվածում քուրդ ժողովրդին, որի անվանումը պաշտոնապես արգելված է և նրան պատկանողներին կոչում են «լեռնային թուրքեր»: Իսկ երկրի ոչ մահմեդական ժողովուրդներին համարելով թուրքեր, նրանց կոչում են այնուամենայնիվ «երկրորդ կարգի հայրենակիցներ»³¹:

Այնուհետև, հանրահայտ է, որ հանրապետական թուրքիայում իրավունք չի տրվում ոչ-թուրքերին հիմնել առանձին բնակավայրեր և պահանջվում է հասարակական վայրերում խոսել միայն թուրքերեն:

Թուրքիայի երրորդ և չորրորդ սահմանազրույթյան մեջ այդ գրույթը պահպանվել է: Երկրի ղեկը իր ձեռքը վերցրած զինված ուժերի հրամանատարությունը դեռևս քառորդ դար առաջ հայտարարեց. «Հանուն մեր բոլոր դժվարությունների հաղթահարման և մեր ազգային գոյության անվտանգության շահագրգռելի կարևոր է հիշել, որ մեր բոլոր հայրենակիցները պատկանում են մեկ ազգի և ռասայի...»³²: Նոր ղեկավարությունը կանգնած է նույն տեսակետի վրա:

Պետական քաղաքականությունն արտահայտող պատմության ձեռնարկի՝ «Թարիհի» չորրորդ հատորի սկզբում կարդում ենք. «Մարդկության պատմության մեջ երբեք գոյություն չի ունեցել թուրքերի նման բազմաթիվ ու մեծ պետություններ ստեղծող մի ցեղ: Թուրքերն են հիմնել Ասիայում և Եվրոպայում իշխանությունների և կայսրությունների մեծ մասը»³³:

Բազմաթիվ հեղինակներ հատորներ են նվիրել պանթուրքական տեսակետների պրոպագանդային: Այդ գաղափարախոսությունը աշխուժացավ Թուրքիայում հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Նշված ժամանակաշրջանում հատուկ գրականություն հրատարակելուն զուգահեռ լույս էին ընծայվում մի քանի պանթուրքիստական պարբերականներ: Դրանցից մեկում հայտնի պանթուրքիստ նիհալ Աթսըզը պատերազմի ավարտից 3—4 տարի անց գրում էր. «Ես կարծում եմ, որ Թուրքիայում տիրապետելու է թուրքական ռասան... բոլոր ոչ-թուրքերը պետք է Թուրքիայից դուրս շարժվեն... Ոչ մի այլազգի չպետք է լինի ոչ պետական վարչության և ոչ էլ բանակի հրամանատարական կազմի մեջ»³⁴: Հետպատերազմյան շրջանում առաջադեմ տարրերի վիճակը զգալիորեն բարելավվեց, և բանվորական ու ղեմնկրատական կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում հակադրվեցին ռասիստների ու շովինիստների գաղափարախոսությանն ու քաղաքականությանը: Սակայն այդ ուղղությունը դեռևս չափազանց թույլ էր և

երկրի գաղափարական կյանքի վրա նրա ազդեցությունը՝ աննշան: Մինչդեռ ազգայնական տրամադրությունները Թուրքիայում շարունակում են իշխել թե՛ հասարակական կյանքում և թե՛ քաղաքականության մեջ:

Սենատոր Սադի Քոչաշը հայ-թուրքական հարաբերությունները լուսաբանող գրքում այն միտքն է արտահայտում, որ չնայած իր հզորությունը և տիրապետելու անսահման ճնարավորություններին, Օսմանյան կայսրությունը «բոլոր ժողովուրդների կրոնին և խղճին» վերաբերվել է հարգանքով: Եվ անմիջապես ցույց է տալիս իր շովինիստական դիրքավորումը. «Եթե այդպես չլիներ, այսօր միջին և արևելյան Եվրոպայում, Բալկաններում, ամբողջ Անատոլիայում, Կովկասում, Իրանում, Արաբիայում և ամբողջ Հյուսիսային Աֆրիկայում թուրքից բացի այլ ազգ, մահմեդականությունից բացի այլ կրոն միջև կմնար»³⁵: Այս գրքի լույս տեսնելուց հազիվ տասը տարի անց, անգլերեն լեզվով, արտասահմանում լույս է տեսնում «Օսմանյան պետությունը և նրա տեղը համաշխարհային պատմության մեջ» ժողովածուն: Նրա հիմնական հեղինակներից մեկը՝ Ք. Կարպատը, փորձում է վերագնահատել պրոլեթմի մասին եղած գրականությունը: Քննադատական երանգ ունեցող բոլոր աշխատությունները, մասնավորապես երբեմնի հպատակ ժողովուրդներից սերած հեղինակների երկերը նա համարում է սուբյեկտիվ և փորձում է ապացուցել Օսմանյան կայսրության դրական դերը այդ ժողովուրդների պատմության մեջ³⁶:

Հնարավոր չէ ազգայնական ոգով գրված թուրք հեղինակների աշխատությունները թվարկել անգամ: Բայց այդ մտայնության ազդեցությունը այնքան ակնհեր է, որ ամեն մարդ, երբ այցելում է Թուրքիա կամ ծանոթանում թուրք հեղինակների հրատարակած երկերին, մի տհաճ նստվածք է մնում նրա հոգու մեջ: Այդ մտայնությունը պահպանում է իր բնական տեսքը մամուլի էջերում: Թուրքերի կիսաֆաշիստական կուսակցության օրգան «Հերգյուն» (Her gün) թերթը Թուրքիայում վերականգնելու կոչ էր անում. «Թուրքերը եկան արևելքից, — գրում էր նա, — որպես երկնային կարգ հաստատող դրոշակակիրներ: Պայքարեցին երկնային օրենքներն ու աստծո կանոնները երկրի վրա հաստատելու համար... Եկեք աստծո բանակը կազմենք: Կույր խեղճերի ջարդը տանք: Իսլամ արթնացի՛ր...»³⁷:

Պանթուրքիստները իրենց պլանների ձախողումը կապում են «գլավուրների» և կոմունիստների գործունեության հետ: Պետության ղեկավար գեներալ Ք. էվրենը 1981 թ. հոկտեմբերին Մալաթիա քաղաքում ար-

³¹ İktidat sınıf vatandaşlar.

³² Гасратян М. А., Турция в 1960—1963 годах. М., 1965, с. 62.

³³ „Tarih“, cilt 4, s. 1.

³⁴ Проблемы современной Турции. М., 1965, с. 137.

³⁵ Sadi Kocas, Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ilişkileri, İkinci baskı, Ankara, 1967, s. 63.

³⁶ Siyasal Hayatın Şerhleri, cilt 2, 1978, թուրք հեղինակների աշխատություններից, էջ 15—16:

³⁷ „Her gün“, 21. 02. 1980.

տասանած ճառի մեջ ընդգծել է, որ Թուրքիայում չկա և չի լինի «հայկական հարց»³⁸: Քուրդ հարյուրավոր առաջադեմ գործիչներ բանտարկվում և պատժվում են որպես ազատագրական պայքարի ղեկավարներ: Բայց մամուլը գրում է, որ նրանք պաշտոնական մարմինների կողմից դատապարտվում են որպես տեռորիստներ: Նման փաստերի թիվը շարժականց մեծ է:

Ամփոփենք: Թուրքերի երկարատև տիրապետությունը իր անջնջելի հետքերը թողեց պատմության ողբերգական իրադարձություններում և թուրք վերնախավի ու նրան սպասարկող բոլոր տարրերի ըմբռնումներում: Ժամանակակից քաղաքակրթության տարածմանը և ազգային բուրժուազիայի դիրքերի ամրապնդմանը ղուզահեռ ազգայնական գաղափարների աշխարհագրական բնույթին ավելացավ նաև պատմական անցյալի էջերը յուրացնելու, պատմությունը «թուրքացնելու» ձգտումը: Երիտթուրքերի փորձերը այդ ուղղությամբ «ուսմունք» դարձրին հանրապետական Թուրքիայի պանթուրքիզմով տառապող հեղինակները: Թուրքերին բնիկ (տեղական) ժողովուրդ հայտարարելու փորձերը, թուրքական նվաճումներից առաջ Փոքր Ասիայի բոլոր տեղաբնակներին թուրք համարելը այդ բանի արդյունքն էր: Զևալորվեց ոչ միայն թուրքիզմի, այլև պանթուրքիզմի ու պանթուրանիզմի ժամանակակից գաղափարախոսությունը, որն ընդգրկեց ինչպես հսկայածավալ աշխարհագրական տարածություններ, այնպես էլ պատմության խորքերից եկող ժողովուրդներին, նրանց քաղաքակրթությունն ու սերունդներին թողած նյութական կուլտուրան: Բայց այդ տեսակետները իրականում բացառում են զուտ թուրքական ցեղերի և թուրքական լեզվախմբերի առանձին գոյությունը և այդ վերջինները լուծում են տարբեր ծագում ունեցող ժողովուրդների, տարբեր կուլտուրաների ու լեզվային ընտանիքների մեջ: Այնուամենայնիվ, բուրժուական պատմագրությունը, ինչպես ցույց է տալիս իրականությունը, ի վիճակի չէ դուրս գալ նշված փակուղուց: Նա ամբողջությամբ վերցրել է ֆեոդալական շրջանում մշակված տեսակետներն ու աշխարհայացքը և շարունակում է հենվել դրանց վրա: Եվ դա հասկանալի է, քանի որ «պան» տեսակետները, ինչպես ասվեց, սնվել են ռազմաֆեոդալական պետականության իսլամի և շարիաթի ոգով: Հարաբերականորեն ինքնուրույն դարգացում ապրած ազգայնական գաղափարախոսությունը ևս ծնվել ու սնվել է վերևում նշված բաղիսային երևույթներից և դարգացել ֆեոդալական վերնաշերտի սահմանափակ շրջանակներում: Հեռակարգ, ազգայնական գաղափարների հիմք հանդիսացող և քվարկված բոլոր գործոններն էլ իրենց բնույթով ու հիմնական գծերով ֆեոդալական են՝ բուրժուական ներկով փայլեցրած:

Ավելացնենք սակայն, որ շովինիզմը Թուրքիայում միայն նշված

սոցիալական պայմանների արդյունք չէ: Կան նաև մի շարք պատմական ու հասարակական այլ հանգամանքներ: Նախ, հանրահայտ է, որ ազգային բուրժուազիան ձևավորման շրջանում հետզհետե իր շուրջն է համախմբում տվյալ ժողովրդի առանձին խավերը, ստեղծում է միասնական ազգի նախադրյալները: Հանուն ազգային շուկայի մղած իր պայքարում նա հաճախ է հանդես գալիս հոգուտ համազգային լեզվի, գրականության, դպրոցի, կուլտուրայի և այլն: Այդպիսով, տիրապետող ժողովրդի հոգեբանությունը գտնում է ավելի ազգային, վերջնականապես ձևավորվում է մեծապետական շովինիզմը:

Թուրքիայի պատմական ճակատագրում որոշակի դեր կատարեց նրա կիսագաղութ դառնալը: Վերնախավի առաջավոր ներկայացուցիչները, որոնք եվրոպայում էին ծանոթացել բուրժուա-դեմոկրատական կարգերին, օտարի ճնշման տակ դարձան «հայրենասերներ», շղաղարելով մնալ թունդ նացիոնալիստներ: Նրանց ազդեցությունը, սկսած «երիտասարդ օսմաններից», հետզհետե ուժեղանում էր երկրի հասարակական կյանքում: Պայքարը, որ նրանք մղում էին հանուն հայրենիքի անկախության, այնուամենայնիվ հետևողական բնույթ չունեցավ: Զարգացման դիալեկտիկական հանգեցրեց այն բանին, որ երկրի «եվրոպականացման» տեղեկները վերնախավի շրջանակներում ամրապնդեց արևմտամետ տարրերի դիրքերը: Երիտթուրքերի տիրապետության տարիներին կայսրությունն ընկավ ռազմական ու ֆինանսական լրիվ կախվածության մեջ: Անշուշտ, իմպերիալիստական երկրների տիրապետությունը հետագայում էլ նպաստեց հայրենասիրական ու ազգայնական հոսանքների ուժեղացմանը: Սակայն վերջիններս երբեք չկարողացան (կամ չուզեցին) ձեռքազատվել շովինիստական գաղափարների ազդեցությունից, որդեգրելով միաժամանակ իմպերիալիստական քաղաքականություն վարելու ձգտումը, որը անողոր կերպով արտահայտվեց կիպրոսի խնդրում:

ИНДЖИКЯН О. Г.

К ВОПРОСУ О ФОРМИРОВАНИИ НАЦИОНАЛИСТИЧЕСКОЙ ИДЕОЛОГИИ В ТУРЦИИ

Резюме

Господство националистической идеологии в политике правящих кругов и жизни республиканской Турции, а до этого и Османской империи характерно для этой страны на протяжении веков. Объясняется оно рядом социально-политических факторов, действовавших в течение длительного времени. Прежде всего—это победоносное, в то же время весьма разорительное и кровавое нашествие тюркских племен из Средней в Переднюю Азию и создание ряда

³⁸ „Hürriyet“, 20. 10. 1981.

государственных образований, обеспечивших длительное их господство над покоренными народами.

Все это на этапе формирования капиталистических отношений, т. е. в 19-ом веке способствовало созданию соответствующей психологии и политики, а также органов государства, обеспечивающих на деле превосходство турок и мусульман над другими народами. Контролирующее положение иновациональной буржуазии в экономике и рост национально-освободительных движений против турецкого ига в указанный период резко обострили национальный вопрос. На этой основе выросла идеология национализма и шовинизма, которые воплотились в политических доктринах панисламизма, османизма, пантюркизма, пантуранизма и тюркизма.

Р. А. САФРАСТЯН
Институт востоковедения АН Арм. ССР

КОНЦЕПЦИЯ «ОСМАНСКОЙ НАЦИИ» У «НОВЫХ ОСМАНОВ» (60—70 гг. XIX в.)

Понятие «османская нация (*millet-i osmani*)» занимало важное место в политической идеологии лидеров конституционного движения «новых османов». Оно употреблялось для обозначения совокупности всех народов империи как единого целого; причем в эту мифическую «нацию» включались как мусульмане, так и немусульмане. Зия-паша в комментариях к поэме «Зафер-намэ» дает такое определение этому понятию: «Выражение «османская нация» обозначает все народы, являющиеся подданными Османского государства, как мусульман, так и не мусульман»¹.

Քրդական ազատագրական շարժումների մակերեսային և միակողմանի գնահատականները, այդ շարժումների օբյեկտիվորեն առաջադիմական բնույթի բացառումը բացասաբար անդրադարձավ հանրապետական Թուրքիայում քրդական ազգային հարցի տեղի և դերի մարքսիստական լուսարանման վրա: Նման իրավիճակը բնականաբար խանգարում է նաև մերօրյա Թուրքիայում քրդական ազգային պրոբլեմի բազմակողմանի լուսաբանմանը:

Իսկ ինչպե՞ս է ներկայանում քրդական ազգային պրոբլեմը ժամանակակից Թուրքիայի պաշտոնական քաղաքականության մեջ:

Քրդական հարցի վերաբերյալ լայնորեն տարածված տեսակետներից մեկն այն է, որ թուրքական պետութթյան հետ հնարավոր հակամարտությունների մեջ «քրդերը հանդիսանալու են թուրքական դիմադրության արիլեսյան գարշապարը»¹⁷: Անդրադառնալով Սովետական Միու-

թյան հետ Թուրքիայի առձակատման հնարավորություններին և քրդերի ունեցած դիրքին՝ անգլիական «Էկոնոմիստ» հանդեսը գրում էր. «Միանգամայն հնարավոր է, որ քրդերը ավելի շուտ, քան նեղուցները հանդիսանան Թուրքիայի վրա ուսմաների ճնշման միջոցը»¹⁸: Բուն Թուրքիայում, նրա պաշտոնական շրջաններում և նրանց կարծիքը արտահայտող մամուլի օրգաններում շարունակ արժարծվում է այն գաղափարը, ըստ որի Թուրքիան ունի երկու հիմնական թշնամի. «Թուրքիայից դուրս ուսները, այսինքն՝ Սովետական Միությունը, իսկ երկրի ներսում՝ քրդերը»: Թուրք կառավարողների կարծիքով «կոմունիզմի վտանգի» դեմ պայքարում նրանց խանգարում է շարունակ ընդդիմադիր քրդական զանգվածը:

Հարկ է նշել, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում «քրդական ազգային պրոբլեմի» նկատմամբ Թուրքիայի կառավարող շրջանների և մամուլի դիրքորոշումը արտաքնապես փոքր-ինչ փոխվել է: Պաշտոնական քաղաքականությունը մնում է նույնը, ինչ Քեմալի կառավարման ժամանակաշրջանում էր. «Թուրքիայում քրդեր չկան, բուրդ կոշվող զանգվածը լեռնային թուրքն է»: Դիարբեքի շորս մուտքերից մեկի վրա խոշոր տառերով գրված են Մ. Քեմալի հետևյալ խոսքերը. «Դիարբեքից մինչև Ստամբուլ, Թուրքիայից մինչև Վանա լիճ ապրում են միայն թուրքեր»¹⁹: Սակայն ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, մերօրյա Թուրքիայում, ժամանակ առ ժամանակ մամուլում, պետական պաշտոնյաների ելույթներում և նույնիսկ պառլամենտի նիստերում խոսվում է քրդերի և քրդական հարցի մասին: Թուրքական «Ակչամ» թերթին, օրինակ, դառնությունը ընդգծում է, որ մերկապարանոց հայտարարությունները քրդական հարցի շոտություն մասին, ի դժբախտություն իրենց, չեն վերացնում այդ հարցը և այդ խնդրի վրա ուշադրություն դարձնելու և էլք փնտրելու մտայնությամբ գրում է հետևյալը. «Քրդական հարցը մի հարց է, որը մենք հայտարարում ենք, թե գոյություն չունի: Պաշտոնապես բուրդ չկա, որպեսզի քրդական հարց լինի: Բայց հակառակ դրան, կառավարության նիստերում այն բննարկվում է, մերթ ընդ մերթ մեր արևելյան վիլայեթներում մտավորականներ են ձերբակալվում և դատվում քրդական ազգայնականության գաղափարները կրելու մեղադրանքով»²⁰:

Թուրքիայի պաշտոնական շրջանները և բուրժուական կուսակցությունները քրդերի նկատմամբ կիրառվող քաղաքականությունն ավելի խստացնելու կոչ են անում: Այսպես, օրինակ, թուրք ազգայնական Աբդուլհադի Քոփլուն թեև խոսում է թուրքական Քրդստանի մտավորականության լոկ ինքնավարական տրամադրությունների մասին, այն մա-

¹⁴ Дж. Неру, Взгляд на всемирную историю, т. 3, М., 1981, стр. 93.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ „The Economist“, London, 11. 5. 1946.

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ „Le Monde“, 9. 12. 1983.

²⁰ „Akşam“, 27. 3. 1969.

սին, որ ինչպես ինքն է ասում՝ «Քրդերը չեն ուզում անջատվել թուրքական պետությունից, բայց ուզում են տեղ գրավել Ֆեդերատիվ մի միութան մեջ, ինչպես Շվեյցարիան», այնուհանդերձ հետևյալ եզրակացությունն է հանգում. «Այդ դեպքում պետք է ասեմ հետևյալը... հսկայական մի կայսրությունից ամփոփվեցինք հայրենիքի մի թղանոց կտորի վրա: էլ չենք հանդուրժի առավել ևս փոքրանալու»²¹:

Թուրքիայի կառավարող շրջաններն ավանդաբար հանդես են եկել որպես քրդական ազգային-ազատագրական շարժումների դեմ ջանքերը միավորելու գլխավոր ջատագույններ: Շահագրգռված երկրների կառավարող շրջանների ջանքերը միավորելու և քրդական ազգային-ազատագրական շարժումների դեմ համատեղ պայքար կազմակերպելու համար ժամանակակից Թուրքիայում կյանքի է կոչվել պատմական և քաղաքական տեսակետից մտացածին այնպիսի հասկացողություն, ինչպիսին է «պանբուրդիզմը»: Խոսելով իրաքյան Քրդստանում տեղի ունեցող ինքնավարական շարժման մասին, թուրք ազգայնական Իլհան Սելջուկը մատնացույց է անում քրդական շարժման զարգացման հետ կապված վտանգները, որը նրա կարծիքով աղետաբեր կարող է լինել այն երկրների համար, որտեղ ապրում են քրդերը: «Այստեղ ամենաուշագրավը, — գրում է նա, — պանբուրդիզմն է, այսինքն քրդալեզուներին մեկ պետության մեջ կենտրոնացնելու հոսանքը»²²: Թուրքական մի զորահրամանատար, անդրադառնալով նույն այս խնդրին, քրդական շարժումների դեմ ավելի արդյունավետ համատեղ պայքարի կոչ էր անում, քանի որ նրա կարծիքով, «երբ Բարզանին հասնի քրդական պետության կորիզի ստեղծմանը, այնուհետև օրակարգի հարց կդառնա նաև Թուրքիայի և Իրանի մի շարք շրջանների միացումը»²³:

Մասնատված Քրդստանի տարրեր հատվածներում տեղի ունեցող ազգային դեմոկրատական շարժումները, ներքին և միջազգային մի շարք գործոնների ազդեցությամբ նրանում տեղի ունեցող որակական աճն այժմ, ավելի քան երբևէ, քրդական պրոբլեմը վերածել են թուրք կառավարող շրջանների մտահոգության առարկայի: «Քրդական պրոբլեմը քաղցկեղ է, — գրում է Անկարայի թուրք լրագրողներից մեկը, — և այն էլ՝ փառակալված»²⁴: Թուրքական շովինիստները այժմ ստիպված են իրենց հաշիվ տալու այն բանում, որ Թուրքիայում քրդերի և քրդական հարցի գոյությունը մերժող մերկապարանոց հայտարարություններով հազիվ թե հնարավոր լինի ազատվել նրանից: Չհաշտվելով քրդերի՝ որպես առանձին էթնիկական միավորի փաստի հետ և բնականաբար

այդ հիման վրա վճռականորեն դատապարտելով քրդերի ազգային իրավունքների ճանաչման ամեն մի թեկուզ աննշան փորձ, թուրքական պաշտոնական շրջաններն իրենց նման դիրքորոշումը հիմնավորում են այն բանով, որ, ինչպես թուրք հրապարակախոս Կայհան Մաղլամերն է գրում. «Որևէ զիջում էլ ավելի պահանջկոտ կդարձնի քրդերին և նրանց քաջալերելու է իրենց պայքարի մեջ, որի նպատակն է անկախությունը»²⁵:

Նվ այսպես, քրդական ազգային հարցի ներքին, թեկուզ փոքր կարգավորման գաղափար Թուրքիայում չի ընդունվում: Դրա փոխարեն երբեմն հրապարակայնորեն քրդական պրոբլեմից ազատվելու ռասիստական մեթոդ կամ միջոց է առաջարկվում, շխորշելով նույնիսկ Թուրքիայում կիրառված ցեղասպանության քաղաքականության հիշատակումից՝ որպես քրդական հարցի լուծման հնարավոր միջոցի: Ահա թուրք շովինիստ Նիհալ Ադսըզի հրապարակային հայտարարությունը: Դիմելով քրդական ազգային դեմոկրատական շարժման մասնակիցներին՝ նա «Ակշամ» թերթում գրում է. «Իեռևս թուրք ազգի գլխին փորձանքներ չբերած, իրենք անհետ չկորած, թող հեռանան գնան: Կհարցնեք, թե ո՞ւր: Թող գնան, ուր որ կուզեն: Թող գնան Իրան, Պակիստան, Հնդկաստան կամ Բարզանու մոտ»²⁶: Շարունակելով իր խելացնոր միտքը, թուրք ռասիստը մասնավորապես գրում է. «Այն մասին, թե թուրք ցեղը որքան համբերող է, բայց շարանալու դեպքում չի կարելի կանգնել նրա՝ իրեն առյուծի առջև, քրդերը թող հարցնեն իրենց ցեղակից հայերին, իմանան և զգաստանան»²⁷:

Թուրքիայում քրդերի նկատմամբ կիրառվող զենոցիդի քաղաքականությունը հաստատվում է իրերի փաստական վիճակով: Նիհալ Ադսըզի այս խոսքերն ասված են 60-ական թվականների վերջին: Այն, որ քրդերի վիճակը Թուրքիայում ոչնչով չի փոխվում, այլ, ընդհակառակը, ավելի է սաստկանում նրանց դեմ կիրառվող հալածանքի և հետապնդման քաղաքականությունը, հաստատվում է մերօրյա բազմաթիվ փաստերով: Ահա դրանցից մի քանիսը: 1980 թ. սեպտեմբերին տեղի ունեցած հեղաշրջումից անմիջապես հետո տեղի ունեցավ Քրդստանի ռազմական օկուպացիան: «Այստեղ տեղափոխվեց թուրքական 700 հազարանոց բանակի մեծ մասը, որ զինված էր ուլտրաժամանակակից զենքով. նրա տանկերը և զրահամեքենաները անցան ամբողջ շրջանով մեկ, հասնելով մինչև ամենահեռավոր անկյունները, այնպես որ ոչ մի գլուզ ի վիճակի չեղավ խուսափելու ռեպրեսիաներից: Այս արշավներին զորքերի հետ միասին մասնակցում էին ոստիկանությունը և հատուկ ծառայու-

²¹ „Yeni Istanbul“, 7. 3. 1967.

²² İlhan Selçuk, Kürt meselesi, (Sê'û' „Cumhuriyet“, 25. 4. 1966).

²³ „Akşam“, 6. 10. 1967.

²⁴ „Le Monde“, 10. 12. 1983.

²⁵ „Yeni Istanbul“, 15. 5. 1969.

²⁶ „Akşam“, 12. 6. 1967.

²⁷ Նույն տեղում:

թյան ստորաբաժանումներ: Մարդկանց, անկախ տարիքից և սեռից, բշում էին գյուղերի հրապարակների և ճանապարհների վրա, նրանց մի մասին ենթարկելով ֆիզիկական և բարոյական տարբեր տանջանքների»²⁸:

Հնադանդեցման էությունը այն է, որ «գյուղացիներին ծեծի են ենթարկում երկաթե ձողերով կամ մահակներով, կանանց և ծեծերին մերկացնում են և պահանջում, որպեսզի նրանք վազբով անցնեն ամբոխի առջևով, մարդկանց ենթարկում են տանջանքների էլեկտրականության միջոցով, աղբիկներին և կանանց բռնաբարում են նրանց հայրերի և ամուսինների աչքի առջև, կոտորում են մարդկանց ձեռքերն ու ոտքերը, բերաններն աղ են լցնում, իսկ երբեմն գնդակահարում են տեղի ու տեղը»²⁹: «Եթե Ձեր անձնական վկայականում նշված է, որ դուք Դիարբեքի բնակիչ եք,—շարունակում է հոգվածագիրը,—ապա այժմյան Թուրքիայում այն հավասարազոր է խայտառակության պիտակի. համենայն դեպս այն հանդիսանում է բոլորովին անհիմն գլխացավանքների պատճառ... Քրդերեն լեզուն ենթարկվում է պատմության մեջ աննախադեպ հետապնդման. երեք բուրդ երիտասարդներ մեկ ամիս բանտ էին նետվել միայն նրահամար, որ ռեստորանում ճաշելիս խնդրել էին քրդական երաժշտության ձայնապնակներ...»³⁰:

Թուրքիայի կառավարող շրջանների հակաքրդական քաղաքականությունը, այդ հարցի վերաբերյալ Թուրք պաշտոնական շրջանների գաղափարախոսությունը չի բռնում նույնիսկ ձևական տրամաբանության քննությունը: Թուրքիայում ազգային պրոբլեմ գոյություն չունի, որովհետև բոլորը Թուրքեր են,—պնդում են Թուրք պաշտոնական շրջանները: Այդ դեպքում ինչի՞ց զրգված է տիրահոշակ Նիհալ Աղսըզը հայտարարում. «Ես գտնում եմ, որ Թուրքիայում պետք է տիրապետող լինի մի միայն Թուրքական ուսան... Բոլոր ոչ Թուրքերը պետք է դուրս շարտվեն Թուրքիայից»: Ավելի քիչ բնութագրական չէ Թուրքիայի պրեզիդենտ Զեմալ Գյուրսելի հայտարարություններից մեկը: Սուր ճոճելով Թուրքիայում իրենց իսկ կողմից մերժվող ազգային պրոբլեմի դեմ, նա Դիարբեքի կատարած իր այցելության ժամանակ հայտարարել է. «Քրդեր չկան, բոլորը Թուրքեր են: Նրանք, ովքեր ուզում են բզկտել մեզ, երկպառակության սերմեր են ցանում:—Այն հողը (այսինքն Դիարբեքի—Շ. Մ.), որ սնուցել և մեծացրել է Զեյա Գյոք Ալպին, չի կարող պատկանել քրդերին: Ոչ միայն այստեղ, այլև արևելյան բոլոր վիլայեթներում միայն Թուրքեր են ապրում»³¹: Իսկ ինչ անել այն փաստի հետ, երբ

այնուհանդերձ քրդական զանգվածը կա և չի հաշտվում իր ազգային ինքնատիպությունը, լեզուն, մշակույթը, պատմական անցյալը մերժող քաղաքականության և գաղափարախոսության հետ: Ահա Թուրք ծայրահեղականներից մեկի՝ Ա. Թյուրքեշի դեղատոմսը. «Հարկավոր է ոչնչացնել ազգային փոքրամասնություններին Թուրքիայում, որովհետև նրանք հանդիսանում են Թուրքիայի ներքին թշնամիները:—Մյուսների հետ մենք մեր հաշիվները մաքրեցինք կամ հեշտությամբ կկարողանանք մաքրել: Իսկ քրդերի հե՞տ... Անհրաժեշտ է նրանց ևս վերացնել»³²:

Թուրքիայում քրդական հարցում քաղաքական կուրսի փոփոխություն տեղի չի ունենում, բոլոր դեպքերում միայն մեկ կող է արվում՝ ավելի սաստկացնել քրդական ազգային ազատագրական շարժումն արմատախիլ անելու քաղաքականությունը: Որպես կանոն իշխանության գլուխ կանգնող յուրաքանչյուր նոր ռեժիմ նախորդին մեղադրում է քրդական շարժումն արմատախիլ անելու անվճռականության մեջ:

Ամփոփելով քրդական հարցում Թուրքիայի պաշտոնական շրջանների դիրքորոշման մասին մեր ասելիքը, կարելի է ընդգծել, որ այդ քաղաքականությունը հիմնականում շարունակում է խաբսխվել բռնի ձուլման և նույնիսկ չնչին զիջման ժխտման վրա: Իհարկե, նախորդ տարիների համեմատությամբ, վերջին երկու տասնամյակների ընթացքում փոքր-ինչ տեղաշարժ է նշմարվում դեպի քրդական հարցի ռեալ գնահատությունը և քաղաքական ինչ-որ կարգավորման մտայնությունը: Սակայն այս մտայնության կողմնակիցները սակավաթիվ են, իսկ ինքը՝ գաղափարը, դեռևս երերուն է և ի վիճակի չէ էպես ազդելու պաշտոնական քաղաքականության վրա:

* * *

Հանրապետական Թուրքիայում քրդական ազատագրական շարժումներն ունեցել են իրենց մակընթացությունն ու տեղատվությունը, սակայն երբեք չեն դադարել: Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում քրդական շարժումները ցնցեցին Թուրքիայի կառավարող ռեժիմը, սակայն պատմաքաղաքական, հատկապես միջազգային բարդ ու հակասական իրադրության պայմաններում նրանք հաջողությամբ չպսակվեցին: Զանգվածային կոտորածներ, տեղահանումներ, ռազմական իրար հաջորդող իրավիճակներ,—ահա Թուրքական Քրդստանի նորագույն պատմությունը բնութագրող հանգամանքները: Տեղին է այստեղ հիշատակել ֆրանսիացի արևելագետ Սերժ Գանտենի արտահայտած կարծիքը. «Միջազգային և տեղական

²⁸ «Монд дипломатик», декабрь, 1983.

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Մեջբերումն ըստ М. Гасратян, О политике турецких правящих кругов в

национальном вопросе, Ст'а «Проблемы современной Турции», М., 1963, стр. 134.

³² «Մարմար», 5. 3. 1962 թ.

պարագաները հնարավորություն չտվեցին քուրդ ժողովրդին իր տեղը գրավել ազատ ազգերի շարքում, ինչպես Մերձավոր Արևելքի մյուս ժողովուրդները: Սակայն 50 տարուց ի վեր քրդերը ոչ մի բուսական չեն դադարել պայքարել իրենց իրավունքների ճանաչման և ազգային իղձերի բավարարման համար: Քրդստանի ժամանակակից պատմությունը ապստամբությունների, ճնշումների, ուժեղացումների, դատավարությունների, գնդակահարումների, արքայազների, տանջանքների մի շարան է՝ արյունով, արցունքով, շարդարացված հույսերով լի մի պատմություն: Հիսուն տարիների ընթացքում քուրդ ժողովրդի տառապանքները հասկանալու համար հարկավոր է նրա պատմությունը համեմատել լեհ, հրեա և հայ ժողովուրդների կրած տառապանքների հետ...»³³:

Չնայած ռազմաոստիկանական դժնդակ պայմաններին, քրդական ժողովրդական զանգվածները շարունակում են պայքարը իրենց ազգային դեմոկրատական իրավունքների ճանաչման համար: 70-ական թվականների վերջին և 80-ական թ. սկզբներին Թուրքական Քրդստանում անլեզալ գործում էին քրդական ազգային դեմոկրատական շուրջ 10 կուսակցություններ և կազմակերպություններ: Դրանցից առավել ակտիվ քաղաքական գործունեություն են ծավալել Թուրքական Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը, Քրդստանի բանվորական կուսակցությունը, որի անդամներն իրենց անվանում են հեղափոխական դեմոկրատներ, Քրդստանի բանվորների կուսակցությունը (այսպես կոչված՝ «ապոլիներ»), Թուրքական Քրդստանի սոցիալիստական կուսակցությունը, «Իիզգարի» կազմակերպությունը, Քրդստանի ազգային ազատագրողները, «Քավա» խմբավորումը:

Քրդական ազգային դեմոկրատական բազմաթիվ կուսակցությունների գոյությունը ինքնին վկայում է քրդական ժողովրդական լայն զանգվածների՝ ազատագրական պայքարը շարունակելու պատրաստակամության մասին: Այդ կուսակցությունները որոշակի դրական քայլեր են ձեռնարկում քրդական զանգվածների պայքարին կազմակերպված բնույթ տալու, պայքարի առավել արդյունավետ և խոստումնալից ձևերի ու մեթոդների ընտրության, նրա մոտակա և ապագա նպատակների որոշման և մի շարք այլ հարցերում: Առանձնապես հիշատակության է արժանի այն հանգամանքը, որ թեև որոշ կուսակցությունների ծրագրային փաստաթղթերի մեջ առկա են և՛ շափավոր, և՛ ծայրահեղ էքստրեմիստական դրույթներ ու պահանջներ, մի շարք դեպքերում պայքարի ոչ ճիշտ մեթոդներ ու ձևեր են առաջադրվում, սակայն բոլորի համար բնութագրական է՝ ա) հակաիմպերիալիստական ուղղվածությունը, բ) որոշակի սոցիալիստական կողմնորոշումը, գ) Թուրքիայի և նրանից դուրս հեղափոխական

ուժերի հետ ջանքերի միավորման իրապաշտ դիրքորոշումը: Այս կուսակցություններից շատերը սերտ կապերի մեջ են եվրոպական մի շարք երկրներում քրդերեն լեզվով լույս տեսնող բազմաթիվ պարբերականների և լրագրերի հետ, որոնք կանգնած են վերը հիշատակված քաղաքական տեսակետի վրա: Ներկայումս եռանդագին ջանքեր են գործադրվում քրդական քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների ջանքերի միավորման համար:

Քրդական հարցն ունի բարդ և խճճված բնույթ: Մերձավոր և Միջին Արևելքում ընդհանրապես գոյություն ունի բաժանված ժողովուրդների, ազգերի պրոբլեմների շարք: Սակայն քրդական ազգային պրոբլեմն այն հազվագեպ պրոբլեմներից է, որ միաժամանակ վերաբերում է ոչ թե մեկ կամ երկու մի քանի, այլ մի շարք պետությունների ինչպես այս աշխարհագրական գոտում, այնպես էլ նրանից դուրս: Քրդական որևէ պետական միավորում իր աշխարհագրական բացառիկ կարևոր դիրքով և առավել ևս քաղաքական կողմնորոշմամբ ունի շատ մեծ նշանակություն Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական կլիմայի համար: Այդ նշանակում է, որ քրդական հարցի լուծմանն օժանդակող կամ խանգարող հարափոփոխ միջազգային ասպեկտների մասին վաղօրոք խոսելը արդարացված չէր լինի: Մյուս կողմից՝ այժմյան Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի զարգացման միտումները՝ քրդական հարցը «վերևից» կարգավորելու վերաբերյալ լավատես ենթադրություններ անելու որևէ հիմք չեն տալիս:

Ներկայումս Թուրք կառավարող շրջանները բոլոր միջոցներով պայքարում են քրդական ազգային-դեմոկրատական շարժումն արմատախիլ անելու համար: Այդ նպատակին հասնելու համար կիրառվում են ամենադաժան միջոցներ: 1983 թ. ընթացքում տեղի ունեցան մի քանի մեծ դատավարություններ: Մի քանի տասնյակ քուրդ ազգային գործիչներ մահապատժի են ենթարկվել կախաղանի միջոցով: Բազմաթիվ քուրդ դեմոկրատների հետ հաշվեհարդար են տեսնում առանց դատի ու քննության:

Թուրքական իշխանությունների հակաքրդական գործողությունների մեջ հատուկ տեղ ունի այսպես կոչված «զինվորական զորավարժությունների» անվան տակ զանգվածային ռեպրեսիվ միջոցառումների կիրառումը: Այդ տխրահռչակ գործողություններն առաջին անգամ տեղի ունեցան 1972 թ.: Այսպես, Բաթմանի շրջանում տեղի ունեցած «զինվորական զորավարժություններից» մեկի ժամանակ գործի դրվեցին Թուրքական զորքերի ցամաքային, ռազմաօդային ուժերը, ինչպես նաև ոստիկանական ստորաբաժանումներ: Օգտագործվեցին հրետանային արկեր ու նպալմային ռումբեր, որոնք ոչնչացնում էին ամեն ինչ: Թուրքական մամուլը հրապարակեց Թուրքիայի պրեզիդենտի և պրեմիեր մինիստրի լուսանկարները, որոնք հեռադիտակով հետևում էին «հակա-

³³ Serge Gantner, Le mouvement National Kurde, p. 31, (Տե՛ս՝ Orient*, № 32-33, 1964-1965, Paris).

ռակորդի ջախջախմանը»³⁴: Զորավարժություններից հետո Թուրքիայում «Թերջումեն» թերթը հրապարակեց մի հոդված հետևյալ բնորոշ վերնագրով «Պարտիզանները ոչնչացված են և զորավարժություններն էլ ավարտված»³⁵: Պարզ և որոշակի էր, որ այս ամենը նախապատրաստված էր հիշյալ շրջանում քուրդ պարտիզաններին ջախջախել հարված հասցնելու համար: Ուշագրավ է այս անշուքյամբ թուրքական մամուլի էջերում հայտնված հոդվածներից մեկը, որը եզրափակվում էր հետևյալ մտքով. «Այս զորավարժությունները պետք է խստիվ նախազգուշացում հանդիսանան նրանց համար, ովքեր նստելով սեղանի շուրջ, պնդում են. Թուրքիայում ապրում է ոչ մեկ ժողովուրդ, ոչ մեկ ազգ, այլ ապրում են տարբեր ժողովուրդներ, որոնց պետք է անկախություն տալ»³⁶:

Թուրքական ներկայիս ղեկավարական իշխանությունների հակաբողական, ինչպես նաև միջազգային հասարակական կարծիքի հետ հաշվի չնստելու արտառոց գործողություններից էր իրաքյան Քուրդիստան կատարած ներխուժումը: 1983 թ. մայիսի վերջին թուրքական մի քանի հազարանոց զորաբանակ, իրաքյան իշխանությունների թողտվությամբ, ներխուժեց իրաքյան Քրդստան և դաժան հաշվահարդար տեսավ ոչ միայն քրդական դեմոկրատական շարժման մասնակիցների, այլև խաղաղ բնակչության հետ: Քրդական ազգային-ազատագրական շարժման հեռանկարներով մեծապես անհանգստացած թուրքական իշխանությունների այս արտառոց քայլը խստորեն դատապարտվեց Իրաքի, Իրանի, Միբիայի առաջադիմական ուժերի, ինչպես նաև եվրոպական դեմոկրատական հասարակայնության կողմից: Թուրք շարժարարների հակաքրդական այդ լկտի ներխուժման կապակցությամբ, որի հետևանքով զոհվեցին հազարավոր խաղաղ բնակիչներ, այդ թվում՝ կանայք և երեխաներ, Քրդստանի ազգային դեմոկրատական կուսակցությունը հատուկ հայտարարությամբ դիմեց ՄԱԿ-ի զլխավոր քարտուղարին, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամներին, մեծ տերությունների ղեկավարներին: Հայտարարության մեջ նշված էր. «Թուրքական ֆաշիստական ղեկավարական ռեժիմի այս ագրեսիվ քայլը, մի երկրի, որ Ատլանտյան պակտի անդամ է, հանդիսանում է ՄԱԿ-ի կանոնադրության և հումանիզմի ամենատարրական նորմաների ոտնահարում»³⁷: Այսպիսով, ժամանակակից Թուրքիայում քրդական ազգային-ազատագրական պայքարը տեղի է ունենում բացառիկ ծանր պայմաններում:

Այնուհանդերձ կարելի է խոսել Թուրքիայում քրդական հարցի լուծման հեռանկարի մի քանի գործոնների մասին:

Նախ, շնայած բռնի ձուլման և զանգվածային տեղաբաշխմանը (նշենք, որ 30-ական թվականների սկզբներից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը Թուրքիայում 700 հազար քրդեր տեղահան են արվել, զոհ գնացել բռնի գործողությունների: Թուրքիայի խորքերը տեղափոխված քրդերը շարք է կազմեին այն դուռերի բնակչության 55 տոկոսից ավելին, որտեղ իրենք բնակեցվում էին), մանկական մահացության բարձր տոկոսին, քուրդ ազգաբնակչության դինամիկան ունի դրական ցուցիչ: Քուրդ ազգաբնակչության թիվը Թուրքիայում անընդհատ ավելանում է և այժմ մոտավոր տվյալներով կազմում է շուրջ 10 միլիոն: Բնակչության բացարձակ մեծամասնությունը խոսում է բացառապես մայրենի՝ քրդերեն լեզվով:

Երկրորդ, քուրդ ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը ապրում է համախմբված, որը ոչ միայն ազգապահպանման, այլև ազատագրական, դեմոկրատական պայքարի շատ կարևոր գործոն է:

Երրորդ, ինչպես Քրդստանի մյուս հատվածներում, թուրքական Քրդստանում ներկայումս գիտվում է ազգային-դեմոկրատական պայքարի աննախադեպ վերելք: Գնալով բնակչության ավելի լայն զանգվածներն են ներգրավվում ազգային պայքարի մեջ: Համազգային դիտակցությունը զարգացման նոր փուլ է մտել և առաջիկայում, անտարակույս, վճռական դեր կխաղա ազգային-դեմոկրատական պայքարում:

Թուրքիայի առաջիկա ներքաղաքական զարգացման մեջ, անտարակույս, քրդերը իրենց ազգային իրավունքների համար պայքարով խաղալու են կատալիզատորի դեր և, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, նրանք կլինեն այն «բարերար մանրէները», որոնք խթանում են ընդհանուր հեղափոխական-դեմոկրատական պայքարը:

МГОЯН Ш. Х.

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ КУРДСКОГО НАЦИОНАЛЬНОГО ВОПРОСА В СОВРЕМЕННОЙ ТУРЦИИ

Резюме

После крушения колониальной системы империализма национальный вопрос продолжает носить весьма острый характер. Турция относится к числу тех государств, где национальный вопрос заметно влияет на внутривосточную обстановку, а его нерешенность тормозит развитие страны.

В современной Турции политика жестокого подавления национальных прав 10-миллионного курдского народа имеет преимущество-

³⁴ „Milliyet“, 20. 10. 1972; „Tercumen“, 21. 10. 1972 մեջբերումն ըստ Մ. Հասարյան, նշվ. աշխ. էջ 91:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում: էջ 92:

³⁷ Տե՛ս «Քուրդիստանի ժողովրդական-դեմոկրատական կուսակցության հայտարարությունը», 28. 5. 1983 (արարներն):

ный характер. Она проводилась всеми без исключения правительствами республиканской Турции. Несмотря на это, курдские национально-демократические силы неустанно ведут борьбу против национального и социального угнетения. В статье рассматриваются три основных вопроса: 1. Краткая характеристика и разбор получивших распространение в литературе некоторых ошибочных концепций по курдскому вопросу в Турции; 2. Позиция официальных кругов Турции по курдскому вопросу на современном этапе; 3. Современное состояние курдского вопроса и перспективы его развития.

САРКИСЯН Е. К.
Ин-т востоковедения АН Арм. ССР

ОСОБЕННОСТИ АГРАРНЫХ ОТНОШЕНИЙ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

Интересующий нас вопрос сравнительно мало изучен как советскими, так и зарубежными туркологами. Разработка этой проблемы даст возможность раскрыть подлинную политику османских правящих кругов в подвластной им Западной Армении.

В этой небольшой статье мы пытаемся показать особенности аграрной политики султанских властей в восточной части Турции во второй половине XIX в. и преследуемые ими цели.

Различные формы землевладения в Османской империи объясняются различием исторических условий и путей социально-экономического развития разноплеменных и национальных частей Турции. В этом отношении Восточные вилайеты или Западная Армения и Курдистан были особенно характерными.

Пестрота национального состава населения Восточной Анатолии значительно осложнила аграрный вопрос и аграрные отношения в этой части империи. До сороковых годов XIX века султанская власть в ряде областей Западной Армении и Курдистана была лишь номинальной, в действительности она принадлежала разным бекам и ага, которые платили султанской казне определенный налог. Так, Баязет и Алашкерт принадлежали Бахлилу-паше, Битлис и Диарбекир—Бедерхан-бею и т. д.¹

До танзиматских реформ оставались полунезависимыми от султанской власти и подчиненными курдским ханствам также Джуламерек, Джебзире, Беркри, Дерсим, Хошаб, Хакяри, Балу и др. провинции. В Киликии упрочили свои позиции родоначальники Козаноглу подвластные им области—Ич-нахие, Антрын, Кекеюн, Албистан, Нарпуз и др.

Ликвидация военно-ленной системы землевладения в разных частях Османской империи происходила по-разному и не одновременно. Там, где владельцы леннов—зияметы и тимариоты были сильны, оказывалось упорное сопротивление и не случайно, в восточных вилайетах ликвидация военно-ленной системы тянулась до 50-х годов XIX в., хотя указ султана Махмуда II об отмене военно-ленной системы был издан в 1834 г.

¹ См.: „Der Kristliche Orient“, Berlin, 1904, XI.

С ликвидацией ленной системы землевладения земельные отношения оставались без изменения, так как тимариотские и знаметские земли были собственностью казны. В итоге ликвидации тимариотов и знаметов усилилась власть султана в империи.

Реформа охватила всю страну, однако в некоторых провинциях ленные землевладельцы, покупавшие у государственных чиновников земли, превратились в феодальных земельных собственников. Вообще реформа не коснулась частной феодальной земельной собственности. Но в восточных и юго-восточных вилайетах продолжали господствовать курдские дербеев, которые не подчинялись султанским властям.

После ликвидации янычарских войск (1826 г.) и сипайской армии и создания сухопутных и морских вооруженных сил, султан Махмуд II приступил к завоеванию курдских дербейств и подчинению своевольных феодалов. К дербеев относили: правителей курдских хюкюметликов, юртудуков, оджаклыков, которые приобрели политическую самостоятельность (Караосман-оглу, Кальюкджу-оглу, Тузджу-оглу, Терсиниали-оглу и т. д.)².

Несмотря на ожесточенное сопротивление курдских аширатов, успех оказался на стороне турецких войск. Усмирение и умиротворение курдских дербеев, крупных и мелких беков, причинивших немало горя и страданий трудящимся массам, особенно христианским народам, в целом имело положительное значение.

Вместо покоренных тимаров, знаматов и дербеев из Стамбула посылались верные правительству люди, которые назначались санджакбеями, каймакамами.

Безусловно, законы, обнародованные правительством, в некоторой степени отвечали интересам армянского крестьянства. В таких пашалыках, как Эрзерум, Сивас и Трапезунд, прежняя форма землевладения претерпела определенные изменения. Крестьянство частично приобрело землю путем выкупа. Население подвластных курдам армянских районов знало об этом и, естественно, стремилось избавиться от власти курдских беков. Спустя почти 10 лет после изда-

² Государственная форма землевладения, установленная в середине XVI века, в период танзимата вновь уступила свое место частнособственнической форме землевладения (M. Sencer, Osmanlı toplım yapısı devrim Stratejisi açısındān, İstanbul, 1969, s. 324) Согласно учению корана земля принадлежала богу. Следуя этому учению, мусульманский закон передал фактическое право владения землей султану как представителю аллаха. Турецкие султаны, пользуясь этой догмой корана, во время завоевания объявляли всю землю государственной, затем часть ее выделялась мечетям, образовав вакуфы, другая часть — победителям-знаметам и тимариотам, часть оставалась побежденным феодалам в качестве мюлька, юртудука, оджаклыка, хюкюметлика, и остальная земля поступала в непосредственное распоряжение Порты, образовав — мири (см. Dr. V. Totomjanz und E. Toptschjan, Die Sozial-Ekonomische Türkei, Berlin, 1901, s. 41—42).

ния аграрных актов крестьяне не получили там ни земли, ни права на нее. И понятно, когда турецкие войска вели в 1848—1849 гг. бои против курдских дербеев, им помогали армяне.

В конце 1840-х годов, после ликвидации дербейств, когда крупные курдские феодалы были лишены своих прав, частичные изменения в формах землевладения произошли в бывших курдских владениях Западной Армении. В результате большая часть имперских земель, представляющих собой государственную собственность, была передана в пользование новым землевладельцам.

«Эта форма земельной собственности, бывшая переходной в период разложения феодальных форм в сельском хозяйстве, носила в какой то степени черты капитализма. В этих хозяйствах уже применялся наемный труд. Они были важным фактором развития сельского хозяйства»³.

Земельный закон 1858 г. закрепив сложившиеся уже земельные отношения, узаконил частнособственнические права на землю. По оценке турецкого историка земельный закон 1858 г. был «формальной, аграрной реформой, поскольку этот закон, не изменив положения крестьянского населения, сохранил феодальное землевладение. Его значение заключалось в том, что он зафиксировал формы землевладения, сложившиеся в различных исторических условиях»⁴.

Нужно отметить, что хотя все пять основных форм землевладения были и в восточных вилайетах, однако здесь преобладали большей частью государственные и вакуфные земли⁵. По местным грамотам они были закреплены за турецкими, курдскими и частично армянскими землевладельцами. Основным феодальным сословием оставалась мусульманская верхушка, которая путем купли, насилий, удержания за собой прежних наделов, сохранила право на землевладение.

Таким образом в 30—60-х годах XIX в. как в Западной Армении, и в турецких губерниях, населенных армянами, так и во всей Турции подверглись серьезным изменениям формы землевладения. На смену прежней форме землевладения пришло помещичье землевладение, система чифтликов, образовалось сословие землевладельцев-помещиков.

Хотя Порте удалось покончить с политической самостоятельностью дербеев, но их экономическое положение сохранилось. Потому дербеев продолжают хозяйничать в Восточной, Юго-восточной Турции, где преобладало натуральное хозяйство и где родоплеменные отношения были еще довольно сильны.

³ Гасратян М. А., Орешкова С. Ф., Петросян Ю. А. Очерки истории Турции. М., 1983, с. 120.

⁴ İsmail Hüsrev, Türkiyede köy iktisadiyat. Bir millî iktisat tetkiki, Ankara, 1934, s. 173.

⁵ О земельном законе 1858 г. подробно см. ст.: Ö. L. Barkan, Türk toprak hukuku tarihinde ve 1274 (1858) tarihli araz Kanunnamesi. Tanzimat, I Ankara, 1940. Сборник выпущен в связи с 100-летием танзимата.

Прототином дербеев были аяны, которые в основном хозяйничали в европейских областях, Западной Анатолии и прибрежных городах Малой Азии, где товарно-денежные отношения были более или менее развиты. «Аянык» стал выражением становления новых форм землевладения. Он возник в процессе перехода от государственной собственности на землю к частной, и, ослабляя традиционные феодальные отношения в хозяйственно-экономической жизни страны, способствовал развитию более прогрессивных производственных отношений.

Одним из основных и спорных вопросов является вопрос крепостничества. Известно, что в Османской империи крепостное право не было узаконено, но в некоторых районах Западной Армении, где господствовали курдские ашпираты, армянское землевладельческое население находилось в самых тяжелых условиях. Часто сложившиеся здесь отношения не отличались от крепостного права. Но неправомерно делать подобное обобщение в отношении всей Западной Армении и Курдистана. Исследователь курдско-армянских отношений Аюп Шахбазян подчеркивает, что хафират-курдская власть сохраняет податную налоговую систему силой, а не на законном основании⁶. Иначе говоря, в налоговой и податной системе Османской империи хафират законом и предусматривался. «У агаларев — читаем в сообщении генконсула России в Ване, — нет никаких юридических прав над низшими классами населения, а если в отношениях их к землевладельцам, преимущественно армянского происхождения, и есть нечто похожее на крепостную зависимость, то это нельзя считать чем-либо иным, кроме громадного злоупотребления, поддерживаемого пристрастием и продажностью местной администрации?».

Курдские беки использовали хафират, чтобы держать в крепостной зависимости армянских и курдских крестьян равнинных районов Муша, Шатаха, Вуайте, Бриашена и Сасуна. В Вуайте и Бриашене курдские хафиры продавали друг другу армянские деревни с их общинами. Покупатели взыскивали с них налог в четыре раза больше, чем в турецкоподданных районах. Следовательно, хафираподданные крестьяне лишь формально являлись свободными, а на деле подвергались бесчеловечным насилиям и надругательствам. Им приходилось платить многочисленные налоги, выполнять различные повинности. Они не могли жениться и даже хоронить своих покойников, не заплатив за это и не получив разрешения. Хафират был ликвидирован османским парламентом в 1909 г. но этот налог курдские беки продолжали взимать с армян под другим названием — иджаре.

Все это говорит о том, что танзиматские реформы не затронули сложившиеся издавна аграрные отношения в юго-восточной части Западной Армении и в курдских районах. Танзиматские реформы не ввели существенных изменений в сторону упразднения феодальных

⁶ Шахбазян А. Курдско-армянская история. Константинополь, 1911, с. 173 (на арм. яз.).

⁷ ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3053, л. 353.

отношений в Восточной Анатолии, ибо реформы, проводимые султанами, в своей основе преследовали укрепление феодальных порядков и упрочения султанской власти в восточных вилайетах империи.

Вторая половина XIX в. для деревни Восточной Анатолии, куда уже проникли товарно-денежные отношения, является периодом почти поголовного превращения крестьян в постоянных должников ростовщиков, сыгравших, в отличие от западно-европейского ростовщичества, регрессивную роль в истории Османской империи.

Проникновение торгово-ростовщического капитала в сельское хозяйство не привело к ликвидации феодального способа производства, а, напротив, еще больше усилило экономический упадок и упрочило феодальные порядки. Крупные помещики сдавали свои земли в аренду крестьянам, как правило, на основе издольной аренды. Эта система оказывала сильное сдерживающее влияние на развитие сельского хозяйства. Ее суть состояла в том, что помещик, будучи хозяином земли, после уплаты налогов правительству делил урожай с крестьянином-арендатором, который сам, своими средствами обрабатывал землю. При дележе урожая помещик буквально грабил зависившего от него арендатора-издольщика. «В отдельных районах Османской империи, особенно в восточных, наряду с издольной сохранились еще и такие способы феодальной эксплуатации крестьянства, как барщина и оброк»⁸.

Особенность аграрных отношений в восточных вилайетах империи заключается также в том, что она была тесно связана с национальной политикой правящих кругов Турции. Последние постоянно применяли излюбленный метод разжигания вражды между населением восточных окраин (курдами, армянами, турками, черкезами, лазами).

Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX в. существенно изменилась в связи с усилением национально-освободительной борьбы находившихся под гнетом Османской империи народов против султанского военно-деспотического феодального господства.

В связи с обострением в 1870—1880 гг. армянского вопроса султанское правительство дало полную свободу действия турецким и курдским беям и ага в восточных вилайетах и таким образом добивалось экономического разорения армян. В результате беи и ага постепенно восстанавливали свои прежние права, потерянные в результате танзиматских реформ.

Современник событий 40—70-х гг. XIX века, известный русский путешественник-востоковед, прекрасный знаток восточного вопроса Чихачев П. А., исколесивший всю Османскую империю и на месте изучивший Малую Азию, в частности Восточную Анатолию, в своих письмах о Турции, говоря о танзиматских реформах писал, что «Почти ни одно из торжественных обещаний правительства факти-

⁸ Гасратян М. А., Арешкова С. Ф., Петросян Ю. А. Указ. работа, с. 115.

чески не выполнено. Приняв внешне новые формы, Османская империя осталась по существу такой же, какой была 22 года назад»⁹.

Массовое обезземеливание крестьян имело место в восточных вилайетах, что объясняется аграрной политикой османского правительства. Она являлась основой его общей политической программы, главной целью которой было всяческими способами очистить Армению от армян.

В целях осуществления этой программы османское правительство делало основной упор на свою аграрную политику, выражавшуюся, во-первых, в явно насильственных захватах (как частновладельческих земель и земель армянских церквей, так и общинных земель армян), в конфискации армянских земель через турецкие суды, в конфискации земель за просроченные государственные налоги, в передаче земель армян иммигрированным мусульманам и, во-вторых, в чрезвычайном усилении налогового гнета¹⁰.

Имеющиеся под рукой первоисточники свидетельствуют о том, что курдские бей и местные органы власти захватывали армянские земли и учиняли всякого рода злодеяния при поддержке и непосредственной помощи самого османского правительства. Британский консул в Эрзеруме сообщает, что курды «открыто заявляют, что им предписано подавить армян, и что им обеспечена безответственность перед судом за всевозможные насилия над христианами»¹¹. «Они (курды и черкесы—Е. С.),—читаем мы в консульских отчетах,—изгоняют владельцев с их собственных земель, захватывают жатву, тогда как собственники должны платить оброки правительству за землю, пользование которой им делается недоступным»¹².

Все это подтверждает и один из офицеров гамидие под именем Мостиго, который был известен своими злодеяниями в Армении. Мостиго, рассказывая о своих разбоях в Армении, заявил: «Когда же мы убиваем их, никто этим не возмущается... Нам нужны только деньги и добыча; турки же жаждут их крови»¹³.

Такие главаря разбойничьих шаяк как Мостиго, Гусейн-папа и др. за свой грабеж армянского населения вызывались в Константинополь и награждались султаном орденами и возвышались в чине. «Ни один губернатор провинции,—сообщает английский консул Клиффорд Ллойд,—не посмеет двинуть войска без специального разрешения султана... Это правило строго соблюдается в Армении»¹⁴. «Следовательно нет сомнения,—пишет Макколь,— что войска, пос-

ланные туда для того, чтобы произвести резню, получили соответствующие приказания от султана»¹⁵ и, наконец, сам факт организации в 1891 г. специальной курдской султанской кавалерии под именем самого султана Гаида, говорит о том, что турецкое правительство, во-первых, для осуществления своей программы очищения Армении от армян само организовало курдов и натравливало их против армян и, во-вторых, оно этим отвлекало внимание и самих курдов, которые, хотя и были покорены турецким правительством, но тем не менее в любой момент могли восстать против османского владычества.

Итак, в такой стране как входящая в Восточную Анатолию Западная Армения, где 90% населения была занята сельским хозяйством, массовые захваты земель во второй половине XIX века привели к обезземеливанию подавляющей части армянского крестьянства. По имеющимся подсчетам в шести армянских вилайетах Восточной Анатолии (Эрзерум, Харберт, Сивас, Ван, Диарбекир, Битлис—Муш) процент захваченных земель в среднем составлял 70—80%. Дошедшие до нас документы больше всего показывают массовые захваты именно в юго-восточных армянских вилайетах, где курды были более многочисленны, и султанское правительство, опираясь на курдских шейхов, легко осуществляло свою политику, что ему не так легко удавалось в северо-западных вилайетах Армении, где не было сильного курдского элемента.

По этому поводу русский посол в Константинополе Гирс пишет: «Большинство земель захвачено и продолжают захватывать курды, и правительство не только не препятствует этому, а даже оно покровительствует и само участвует в этих захватах»¹⁶. «Беспрепятственно,—как говорил известный в то время журналист Бюзанд Кечян,—вечно действующим законом насилия посредством обезземеливания, продолжалось вековое и систематическое разорение армянских деревень в Восточной Анатолии»¹⁷.

ՍԱՐԳՍՅԱՆ Ե. Դ.

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Ամփոփում

Քննական վերլուծության ենթարկելով ագրարային հարաբերությունները Արևելյան Անատոլիայում՝ Արևմտյան Հայաստանում և համե-

⁹ Там же, с. 157.

¹⁰ Сб. дипломатических документов. Реформы в Армении. Петроград, 1915, с. 3 (курсив—автора).

¹¹ См.: Саркисян Е. К. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX в. Ереван, 1972, с. 64.

⁹ Чихачев П. А. Великие державы и восточный вопрос. М., 1970, с. 130.

¹⁰ Об этом подробно см.: V. Totomjanz und Toptschjan, Die Sozial-Ökonomische Türkei. Berlin, 1901, s. 47—61. Хажак. Налоги в Турции. Баку, 1905, (на арм. яз.), Саркисян Е. К. Аграрная политика османского правительства в Западной Армении во второй пол. XIX века. Ереван, с. 75—100.

¹¹ F. Nansen, L'Arménie et le Proche Orient, Paris, 1928, p. 317.

¹² Сб.: Положение армян в Турции до вмешательства держав, с. 169.

¹³ Там же, с. 62.

¹⁴ Там же, с. 347.

մատելով Օսմանյան կայսրության մյուս շրջանների հետ, հողվածի հեղինակը ցույց է տալիս նրանց առանձնահատկությունները, լուսաբանում կայսրությունում գոյություն ունեցող հողատիրության տարբեր ձևերը, որոնք տարբեր ցեղերի և ազգությունների պատմական պայմանների ու սոցիալ-տնտեսական դարգացման արգասիքն էին:

Հողվածում բերված փաստական հարուստ նյութը ցույց է տալիս, որ Արևելյան Անատոլիայի բնակչության ազգային խայտաբղետ կազմը բավականին բարդացնում էր ազրարային հարցը և ազրարային հարաբերությունները: Սուլթանական կառավարությանը թեև հաջողվեց վերջ տալ դերեբեյիների քաղաքական ինքնուրույնությանը, սակայն արևելյան և հարավ-արևելյան Անատոլիայում նրանք շարունակում էին իշխել տնտեսությունում: Հեղինակը վերլուծում է Օսմանյան կառավարության ազրարային քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում և Քրդստանում, ընդգծելով նրա հետապնդած նպատակը, այն է՝ հայկական հողերի մասսայական բռնազրավումների և հարկային սիստեմի շտեմնված ճնշման միջոցով քայքայել Արևմտյան Հայաստանի տնտեսությունը, որը նպաստում էր Արևմտյան Հայաստանը հայերից մաքրելու նրա քաղաքական ծրագրերի իրագործմանը:

Վ. Գ. ՂԱԵՁԱՆ

և. Արովյանի անվան հայկ. պետ. մանկավարժական ինստիտուտ

ՍՏՐԿԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XIX ԳԱՐՈՒՄ

Ստրկությունը և ստրկավաճառությունը Օսմանյան կայսրության դրաղեցրած տարածքում հազարամյակների պատմություն ունեն: VII դարում նորաստեղծ արաբական պետությունը և մահմեդական կրոնը ստրկատիրությունն ամրապնդեցին նոր օրենքներով և սկզբունքներով: Օսմանյան թուրքերը արաբներից ամբողջովին ժառանգեցին ստրկատիրության համակարգը, և հենց սկզբից այն դարձավ կայսրության սոցիալ-քաղաքական կյանքի անբաժանելի մասը: Արդեն առաջին սուլթանների կառավարման ժամանակ ստեղծվում են օրենքներ, որոնք հասարակարգի իրավական համակարգում որոշում են ստրուկի և ստրկուհու հասարակական դիրքը, ընդհանուր կացությունը և այլն: Ստրուկների իրավիճակի վերաբերյալ բավականաչափ օրենքներ են մշակվել սուլթան Սելիմ I-ի օրոք: Վերջինս սահմանել էր կանոններ հպատակների բարոյական փոխհարաբերությունների մասին, ուր տեղ են գտել նաև օրենքներ ստրուկների և ստրկուհիների անառակությունների դեմ: Օրինակ, «շնանալու» դեպքում ստրուկից և ստրկուհուց տուգանք է դանձվում, նույն արարքի համար ազատ մարդուց գանձվող տուգանքի կեսի չափով¹: Մի այլ օրենքով խիստ պատիժ է սահմանվում, եթե տղամարդն անառակություն է անում իր կնոջ, մոր կամ մերձավորներից մեկի ստրկուհու հետ²: Օրենքը թույլատրում է որևէ մեկի տղային արտամոտնական կապեր ստեղծել հոր ստրկուհու հետ³: Մի այլ տեղ սուլթանն արգելում է ստրկավաճառներին վաճառքի ժամանակ սպիտակաշերկով և կարմրաներկով արհեստականորեն գեղեցկացնել, ստրկուհիներին նոր շորեր հագցնել և այլն⁴:

Հետագա դարերում ստրկությունն ավելի խոր արմատներ նետեց կայսրությունում: Ստրկավաճառներն ամենուր հետևում էին օսմանյան

¹ Книга законов султана Селима I. Публикация текста, перевод, терминологический комментарий и предисловие А. С. Тверитиновой, М., 1969, с. 32.

² Там же, с. 33.

³ Там же.

⁴ Там же, с. 70.

բանակի հաղթական արշավանքներին, որպեսզի էժան գնով ձեռք բերեն գերված տղամարդկանց, կանանց, երեխաների: Դ. Երեմեևը նշում է, որ «սուլթանական զանձարանի եկամտի մի մասը եղել է ստրկավաճառությունից ստացված հարկը»⁵:

XIX դարում ստրկությունը և ստրկավաճառությունն Օսմանյան կայսրությունում շարունակում էին գոյություն ունենալ: Անհրաժեշտ է ընդգծել, որ դրանք թեև փոխկապակցված, բայց տարբեր երևույթներ են: Ստրկությունը, ինչպես և միջնադարում, XIX դարում ևս հանդիսանում էր արևելյան ֆեոդալիզմի առանձնահատկությունը⁶: Ուշ միջնադարում ստրկների աշխատանքն օգտագործվել է արտադրության մեջ⁷, որը սակայն XIX դարի վրա տարածել չի կարելի: Անցյալ դարում ստրկները բավարարում էին ավատական դեռևս հզոր դասակարգի այնպիսի պահանջներին, որոնք, որպես կանոն, կապված չէին արտադրության հետ: Ըստ էության դա տնային ստրկություն էր և ուներ շատ ինքնատիպ կողմեր ու առանձնահատկություններ: Գլխավորն այն էր, որ ստրկը, վաճառվելուց հետո, որպես կանոն, իր տիրոջ մոտ քիչ ժամանակ էր մնում լրիվ ստրկության մեջ: Մեծ մասամբ ստրկները ձեռք էին բերում տերերից ստացված արտոնություններ, որոնց շնորհիվ հաճախ հասնում էին ազատության: Մահմեդական կրոնի առաջացման ժամանակներում մշակվել էին այդպիսի արտոնյալ ստրկների տարբեր կատեգորիաներ. «մահդուն», «մուզաբբար», «մուքաթար» և «ումմ վալադ»⁸:

Մահդունն այն ստրկն է, որը տիրոջից իրավունք է ստանում վարել նրա տնտեսական գործերը, հատկապես ղբաղվել առևտրով: Եթե տերը խոստանում է (այդ խոստումը կոչվում է թատբիր, բառացի՝ վճիռ) մի որևէ նշանավոր դեպքի կապակցությամբ ազատել ստրկին, ապա այդպիսիք կոչվում են մուզաբբար: Տերը դա կարող է անել նշանավոր ճանապարհորդությունից վերադառնալուց հետո, ծանր հիվանդությունից փրկվելու դեպքում և այլն: Դա կարող է կախված լինել և ապագա անխուսափելի իրադարձությունից, օրինակ. «Եթե ես մեռնեմ, դու կզառնաս ազատ»:

Ստրկների մյուս կատեգորիան մուքաթարն է: Այս դեպքում տերը գրավոր կամ բանավոր պայմանագիր է կնքում (քիթարա), համա-

ձայն որի նշանակված ժամկետում, որոշակի գումարով ստրկը փրկագին է մոծում և ձեռք բերում սեփականություն: Բայց քանի դեռ պայմանագրով նախատեսված գումարը չի մոծել, նա մնում է տիրոջ ստրկը, իսկ տերը փրկագինը մոծելուց անմիջապես հետո պարտավոր է անպայման ազատել նրան: Եթե մուքաթարը մահանում է և թողնում պայմանագրով նախատեսված գումարի շափով ժառանգություն, ապա այն անցնում է տիրոջը, իսկ նրա ժառանգները ստանում են ազատություն: Հետաքրքիր է, որ պայմանագրային գումարը չվճարած մուքաթարի մահվան դեպքում քիթարան չի քանդվում, այլ տարածվում է նրա ժառանգի վրա: Տերն իրավունք չունի վաճառել կամ նվիրել մուքաթարին, իսկ ստրկուհի մուքաթարին՝ ստիպել կենակցելու իր հետ:

Ստրկների մի հետաքրքիր կատեգորիա էլ ումմ վալադն էր (բառացի նշանակում է՝ երեսայի մայր): Դա այն ստրկուհին է, որն իր տիրոջից կամ նրա հորից երեսա է ունեցել, և նրանց կողմից հայրությունը ճանաչվել է: Ումմ վալադն օգտվում է մուզաբբարի իրավունքներից, տիրոջ մահից հետո լրիվ ազատություն է ստանում, տերը նրան չի կարող վաճառել կամ նվիրել, իսկ ծնված երեխաները ծնվելու պահից անմիջապես ճանաչվում են օրինական և ազատ:

Ստրկների վերաբերյալ մուսուլմանական իրավունքի այս համակարգը Օսմանյան կայսրությունում գործում էր նաև XIX դարում: Այս մասին կան շատ հետաքրքիր վկայություններ: Այսպես, օրինակ, խոսելով կայսրության ներքին դրության մասին, ժամանակակիցներից մեկը փորձում է վերլուծել նաև ստրկության մեր նկարագրած համակարգը⁹: Ստրկների տարբեր կատեգորիաները նա համարում է դեպի ազատություն տանող աստիճաններ: Ստրկների ընդհանուր վիճակը նա ներկայացնում է այսպես. «Լրիվ ստրկները կազմում են իրենց տիրոջ սեփականությունը, որն իր քմահաճությամբ կարող է նրանց վաճառել, նվիրել, տալ վարձակալության: Ստրկի ողջ սեփականությունը պատկանում է տիրոջը: Բայց Թուրքիայում տերն իր լրիվ ստրկի կյանքի և մահվան հարցը վճռելու իրավունք չունի, չի կարող նրան պատժել առանց հիմնավոր պատճանների: Ստրկատերը, ամուսնանալով իր ստրկուհու հետ, կարող է նրան անմիջապես ազատություն տալ կամ պահպանել իր իրավունքները մինչև մահ, բայց Թուրքիայում ... հազվադեպ է պատահում, որ ստրկը մինչև ծերություն մնա տիրոջ լիիրավ ստրկը»¹⁰:

Կարելի է հետևություն անել, որ ստրկն աստիճանաբար ներթաշվելով սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ, ի վերջո դառնում է շահագործող կամ շահագործվող:

⁵ Еремеев Д. Е. На стыке Азии и Европы. Очерки о Турции и турках. М., 1980, с. 37.

⁶ Петрушевский И. П. Ислам в Иране в VII—XV вв. (Курс лекций), с. 186.

⁷ Петрушевский И. П. Применение рабского труда в Иране и сопредельных странах в позднем средневековье. В серии: доклады делегации СССР на XXV Международном конгрессе востоковедов в Москве. М., 1960.

⁸ Петрушевский И. П. Ислам в Иране..., с. 189.

⁹ Взгляд на внутреннее состояние Турецкой империи, «Вестник Европы», 1829, № 12; «Хмыр. коллекция», «Турция», т. 2, № 23, с. 298—309.

¹⁰ Там же, с. 303.

XIX դարում ստրկավաճառությունն Օսմանյան կայսրությունում ավելի լայն շափեր է ունեցել, քան ստրկությունը: Ստրուկներ կարելի էր գնել ամենուրեք, իսկ խոշոր քաղաքներում գոյություն ունեին հատուկ շուկաներ, այսպես կոչված «esir pazari» (գերիների շուկա) կամ «avrat pazari» aurut pazari («avrat»—կին) բառից, քանի որ կանանց վաճառքն առաջնակարգ տեղ էր գրավում¹¹: Դա մի քառանկյունի շենք էր, որը կազմում էր շուրջ 30 քառակուսի սաժեն¹²: Առջևում կառուցված էր մի բարձրահարթակ, գետնից 4—5 ոտնաչափ բարձրության վրա, որն առջևից նմանվում էր սյունաշարքի, նրա հետևում գտնվում էին ցանցապատ պատուհաններ: Այդ բարձրահարթակի վրա վաճառքի համար տեղավորում էին նեգրուհիներ և այնպիսի ստրկուհիների, որոնք առանձնապես գեղեցիկ շէին, իսկ առավել գեղեցիկներին պահում էին ցանցապատ պատուհանների ներսում, այսինքն՝ շենքի մեջ, կողմնակի աշքերից հեռու¹³: Շուկայի կենտրոնում գտնվում էր հասարակական հսկողի՝ վերակացու ավագի տունը (kâhya)¹⁴: Քյահյան հարթում էր բոլոր վիճելի հարցերը, որոնք կարող էին առաջանալ ստրկավաճառների և գնորդների միջև, առհասարակ ղեկավարում էր շուկայի աշխատանքը: Ստրուկների վաճառքը կատարվում էր ամեն օր, բացառությամբ ուրբաթ օրվա, իսկ ամենից աշխույժ առևտուրը լինում էր շաբաթ օրերին: Շուկայի մուտքի մոտ սովորաբար վաճառում էին դանազան վաչրի թռչուններ: Թուրքերը սովորություն ունեին ստրուկներ գնելուց առաջ առնել և ազատ արձակել որևէ թռչուն¹⁵: Օսմանահպատակ քրիստոնյաներին, ինչպես նաև եվրոպացիներին, իրավական տեսակետից արգելված էր մտնել այդ շուկան և ստրուկներ գնել, սակայն ինչպես նշում է մի ժամանակակից, դրամի օգնությամբ դա հեշտ էր անել¹⁶:

Ստրուկների շուկայական գները երբեք կայուն չեն եղել: Մինչև XVIII դարը նրանց գինը համեմատաբար էժան էր: XVIII դարից սկսած և հատկապես XIX դարում, երբ աստիճանաբար վերջացան հաղթական պատերազմները և ստրուկներ սկսեցին ներմուծել միայն ստրկավաճառության շնորհիվ, գները (հատկապես սպիտակամորթների) խիստ բարձրացան: XIX դարում ստրկավաճառության դեմ աճող խոշրնդոտների հետ ավելանում էին նաև գները: Գոյություն ունեին գների տարբեր շափեր, որոնք կախված էին ստրուկի ֆիզիկական արժանիքներից, ներմուծող

երկրի համբավից և այլն¹⁷: Ռուս ճանապարհորդներից մեկը, որը եղել է Կ. Պոլսի ստրկավաճառային շուկայում, սևամորթ ստրուկների գների մասին բերում է այսպիսի տվյալներ. «Սևամորթ ստրուկի գինը տասից մինչև տասներկու տարեկան տղայի համար 300-ից մինչև 400 ուրլի է, տասներկուսից մինչև տասնյոթ տարեկան տղայի համար՝ 300-ից մինչև 600 ուրլի, տասներկուսից մինչև տասնյոթ տարեկան նեգրուհու համար՝ 300-ից մինչև 500 ուրլի: Սպիտակամորթ երկսեռ ստրուկները համարվում են ավելի թանկ»¹⁸:

Այն տեղերում, որոնք մոտ էին գտնվում ստրուկների ձեռք բերման վայրին, գներն ավելի էժան էին: Այսպես, օրինակ, 1861 թ. Ալեքսանդրիայից գրված մի նամակում նշվում է, որ Եգիպտոսի փոխարքա Սաիդ փաշան պատրաստ է գնելու երիտասարդ, առողջ նեգրերի՝ յուրաքանչյուրը 700 պիաստրով (շուրջ 45 ուրլի)¹⁹: Իսկ սպիտակամորթ ստրուկների գները (հատկապես գեղեցիկ) սովորականից շատ թանկ էին: Ն. Օվսյանին վկայում է, որ գեղեցիկ ստրուկուհու գինը հասնում է մինչև 25.000 ֆրանկ²⁰:

Մահմեդականության սրբազան քաղաքում՝ Մեքքայում ստրուկներ գները նույնպես ցածր էին: Տղաներին շուկայում վաճառում էին 50-ից մինչև 100 ուրլով, իսկ կանանց և տղամարդկանց՝ մինչև 200 ուրլով²¹:

XIX դարում որտեղից էին ձեռք բերում ստրուկներ և ինչպե՞ս է բնթացել նրանց առևտուրը:

Նախ նշենք, որ, որպես կանոն, ստրուկներ ձեռք էին բերվում կայսրության սահմաններից դուրս, հիմնականում Աֆրիկայից ու Կովկասից: Հավանաբար, Արևելյան Աֆրիկայից ստրուկների արտահանումն Արևելքի երկրներ գերակշռել է նոր աշխարհի գաղութներ ստրուկների արտահանմանը²²: Ստրկավաճառներն Աֆրիկայում և Կովկասում ստրուկներ ձեռք էին բերում գնման, հափշտակման, առևանգման և այլ միջոցներով: Կովկասում, հատկապես Չերքեզիայում, հաճախ ծնողներն իրենք էին ստրկավաճառներին վաճառում իրենց գեղեցիկ աղջիկներին և տղաներին: Դա համարվում էր շատ շահավետ առևտուր: Հարկ է նշել, որ այդպես վարվում էր Կովկասի մահմեդական բնակչությունը, իսկ քրիստոնյաների երեսնաներին հափշտակում էին: XIX դարի սկզբներին Օսմանյան կայսրության տարբեր մասերում դեռ կարելի էր հանդիպել վա-

¹¹ Константинополь и турки, т. I, СПб, 1841, с. 121.

¹² Մեկ սաժենը՝ 2,1 մ.: Այս նկարագրությունը վերաբերում է Կ. Պոլսի շուկային:

¹³ Константинополь и турки..., с. 121.

¹⁴ «Невольничий рынок в Константинополе», «Московский наблюдатель», 1935 г., «Хмыр. коллекция», т. 2, книга 2, март, № 33, с. 469.

¹⁵ Константинополь и турки..., с. 122.

¹⁶ Там же, с. 121, см. также «Невольничий рынок...», с. 469.

¹⁷ Там же.

¹⁸ Там же, с. 470.

¹⁹ «Вокруг света», 1861, т. I, СПб., с. 377—378.

²⁰ Овсяный И. Р., Современная Турция, СПб, 1877, с. 47.

²¹ Голобородько Н. Н., Турция, с. 14.

²² Абрамова С. Ю., Африка: четыре столетия работорговли. М., 1978, с. 33.

ճառքի հանած սպիտակամորթ տղաների և աղջիկների: Ու. Աուլլեյը վկայում էր, որ 1812 թ. ճանապարհորդության ժամանակ էր գրում մի աջակցությանն է դիմել մի վրացի, որի երկու տղաներին և աղջկան վաճառքի էին հանել շուկայում: Նրանց կարելի էր ազատել մեծ փրկագին տալով²³: Պատերազմների ժամանակ ձեռք բերված գերիներին իբրև ստրուկ վաճառելու սովորությունը հարատևում էր: Թուրքերը նմանօրինակ ձեռք վարվեցին նաև հունական ապստամբության ժամանակ՝ 1820-ական թվականներին, երբ շատ ցածր գներով համատարած ստրուկության էին վաճառում ոչ միայն հույն կանանց և երեխաներին, այլև ռազմագերիներին²⁴:

XIX դարի սկզբներին Ամերիկայում և Եվրոպայում սկիզբ առավ մի շարժում, որը հայտնի է արուլիցիոնիզմ անունով: Վերջինս ընդգրկել էր հասարակական ամենալայն խավերը և կոչված էր վերջ տալու ստրուկությանն ու ստրկավաճառությանը: Շուտով այն վերածվեց միջպետական սուր պայքարի, որի արդյունքը հանդիսացավ 1841 թ. դեկտեմբերի 8(20)-ին Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Պրուսիայի և Ֆրանսիայի միջև կնքված հատուկ պայմանագիրը: Ստրկավաճառությունը վերջ տալու համար ստեղծվում էր փոխվերահսկման մի ամբողջ համակարգ²⁵: Պայմանագրում անուղղակի կերպով նկատի էր առնվում նաև Օսմանյան կայսրությունում ստրկավաճառության վերացման հարցը: Թուրքերը հետաքրքրություն հանդես չբերեցին ստրկավաճառության դեմ մղվող պայքարի նկատմամբ, սակայն երբեմն օրենքներ էին ընդունում ստրուկների վիճակը թեթևացնելու համար: Օրինակ, 1841 թ. օրենքով ստրուկը, հանցանք գործելու դեպքում, պատժվում էր իշխանությունների և ոչ թե տիրոջ կողմից: Դա ստրուկության պահպանման իրավական հաստատումն էր: Եվ այդ ամենը հասկանալի է: Չէ՞ որ սուլթանների արքունիքները լիքն էին ստրուկներով. միայն Արդու Ազիզը 712 ստրուկ ուներ և 148 ներքինի, նրա մահից հետո հարեմում կար 3000 կին, որոնց մեծագույն մասը ձեռք էր բերվել ստրկավաճառության ուղիով²⁶:

Ստրկավաճառությունից մեծապես օգտվում էին նաև իշխանության տեղական ներկայացուցիչները, որոնք ստրկավաճառներից մեծ կաշառքներ էին ստանում, կամայական տուրքեր էին նշանակում, էժան գնով էին ստրուկներ գնում և այլն: Եգիպտոսի նշանավոր Մուհամեդ Ալի փաշան 1842 թ. ստրկավաճառներից հատուկ մաքսագին, զրամական տուրք

էր վերցնում: Այդ մասին «Արշալույս արարատեան» թերթը գրում է. «Փաշայի հրամանաւը կանոն դրուեցավ, որ այսուհետև, որ և իցէ սեւավ ասիրիկեցի, թէ այր և թէ կին, Եգիպտոսէն օտար երկիր տանելու որ ըլլան, մարդ զլուս 500 դուրուշ, տուրք առնելի անոնցմէ»²⁷:

Թուրքական հանդեսներից մեկը 1967 թ. հրատարակել է անցյալ դարի կեսերին վերաբերող հինգ փաստաթուղթ, որոնք հանվել են երկրի գլխավոր արխիվից²⁸: Առաջին փաստաթղթում սուլթանը, ընդառաջելով Անգլիայի «փաղիշահի» խնդրանքին, հրամայում է վերջ տալ Աֆրիկայի կողմերից բերվող ստրուկների վաճառքին²⁹: Այլ խոսքով՝ հրամայվում է վերջ տալ ստրկավաճառությանը: Սուլթանի այս պահանջի մասին տեղեկանում է նաև Եգիպտոսի փաշան, որն իր հերթին ծանուցում է հասարակությանը, թե հիսուն օր հետո ստրուկների առևտուրը լրիվ արգելվում է: Այդ առիթով շուկայում գերիների գները 60 տոկոսով էժանանում են, առևտուրը համարյա կանգ է առնում³⁰: Բայց ահա թե ինչ ենք կարդում նույն թվի նույն ամսին լույս տեսած օսմանյան պաշտոնաթերթում. «...առատագուրթ Արքայն իմանալով, որ գերի ծախված տեղը (էսիր պաղարին) կերպ կերպ ապօրինաւոր հարստահարութիւներ կըլլան գերիներուն, և այս կերպ հարստահարութիւնների եղած տեղը բոլորովին ջնջել իւր բարեսէր կամացը համաձայն ըլլալով, հրաման ըրաւ՝ որ էսիր պաղարի անունը բնաջինջ ըլլայ, և գերի առնելի ու ծախվի հարկաւորի նէ, այս առուտուրը տներուն մէջ ըլլայ և անկէ առըված տուրքը՝ բոլորովին վերնայ»³¹: Այսպիսով, այս հրամանով թեև վերացվում է ստրկավաճառային շուկան, առևտրից վերացվող տուրքը, բայց պահպանվում և թույլատրելի է համարվում ստրկավաճառությունը: Ահա թե ինչու ժամանակակիցներից մեկը դժգոհում է, որ թեև հրապարակորեն ստրկավաճառությունն արգելված է, բայց այն շարունակում է ծաղկում ապրել³²:

Հիշյալ փաստաթղթերից երկրորդը սաղրազամ Մուստաֆա Ռեշիդ փաշայի Սիրիա ուղարկած մի նամակի սևագրությունն է³³, որտեղ նա գրում է, թե սուլթանն իմանալով ներքին Աֆրիկայից բերված 1600 ստրուկների՝ ճանապարհին ծարավից մահանալը, խորը զգացվել է և պահանջել է այդ առևտուրը մահմեդական իրավունքին համապատաս-

²³ Զ. Հակոբյան, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, ուղեգրություններ, հ. 2, ԺՊ դարի առաջին քսանմյակ, Ե., 1934, էջ 484—485:

²⁴ Константинополь и турки..., с. 122.

²⁵ Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами, т. 12, трактаты с Англией 1832—1895, СПб., 1898, с. 172—203.

²⁶ Овсяный Н. Р., указ соч., с. 51, 95.

²⁷ «Արշալույս արարատեան», 1942 թ. ապրիլի 17, էջ 82:

²⁸ „Zenci ticaretinin yasaklanmasi“, Belgelerle Türk tarihi dergisi, Istanbul, 1967, aralik, № 3, s. 73—29.

²⁹ Նույն տեղում, Արդու Մեջիդի էմիրը Բաղդադի փաշային, 27.01.1847 թ.:

³⁰ «Արշալույս արարատեան», 1847 թ., մարտի 7, № 280:

³¹ «Ցայտարար դիր...», 1847 թ. հունվարի 21, № 15—16:

³² Гамазов М. А. От Босфора до Персидского залива..., СПб., 1858, с. 23.

³³ „Zenci ticaretinin...“ Մուստաֆա Ռեշիդ փաշայի Սիրիա ուղարկած հրամանը 1849 թ. նոյեմբերի 28-ին, էջ 24—25:

խան և ավելի մարդկայնորեն կատարելու համար վճռական միջոցներ ձեռնարկել:

Հաջորդ փաստաթուղթը սաղրազամ Մուստաֆա Նախլի փաշայի՝ Իրաքի ու Հիջազի բանակների հրամանատարներին և Բաղդադի վալիին գրած էմիրի սևագրությունն է: Այստեղ նա պահանջում է ուժեղացնել հսկողությունը ստրկավաճառության նկատմամբ, հատկապես ուշադիր լինել բեռներ տեղափոխող ինչպես օտարերկրյա, այնպես էլ օսմանյան զորշակով առևտուր անող նավերին: Հրամանագրում կայսրության տարածքով ընթացող օտարերկրյա ստրկավաճառության մասին անհանգստություն և մտահոգություն է հայտնվում: Գրեթե նույնանման բովանդակություն ունի նաև չորրորդ փաստաթուղթը³⁴:

4. Պոլսում անգլիական ղեսպան Սթրեթֆորդ Ռեդկլիֆը 1854 թ. նոյեմբերի 20-ին Օսմանյան կայսրությունում իր հյուպատոսներին ուղարկած շրջաբերականում նշում է, որ Բ. Դուռը շոքս ծանրակշիռ կարգադրություններ է արել, որոնցից չորրորդն արգելում է Վրաստանից և Չերքեզիայից բերված գերիների առևտուրը³⁵: Այս արգելումից մի որոշ ժամանակ անց, 4. Պոլսի «Ժուռնալ դը Քոնսթանդինոպոլ» լրագիրը վկայակոչելով Տրապիզոնից գրված մի նամակ (12—14.01.1855 թ.), տեղեկացնում է, որ սուլթանի կողմից գերեվաճառության արգելման լուրը շերքեզական գյուղերում առաջացրել են հուզումներ, ուղղված անգլիացիների և ֆրանսիացիների դեմ: Թերթի կարծիքով այդ հուզումները «ոսկու» միջոցով հրահրել են ուսաները³⁶:

Ղրիմի պատերազմի վերջում ցարի անունից Ա. Օլուվին արված հրահանգի մեջ, որը կազմել էր 4. Նեսեւրոդեն, նշված է, որ Փարիզում պահանջ պետք է ներկայացնել Սև ծովի ափին ռազմական ուժեր պահելու համար, քանի որ անհրաժեշտ է պայքարել ընդդեմ ծովահնություն և այն նավերի, որոնք ղբաղվում են ստրկավաճառությամբ: Ակադ. Ե. Վ. Տարլեն նշում է, որ «... հրահանգը նկատի ուներ Կովկասի լեռնականների և Թուրքիայի միջև աշխույժ ստրկավաճառության իրական փաստը»³⁷:

Եգիպտոսի փոխարքային ուղղված իր հրամանում³⁸ Աբդուլ Մեջիդը նշում է, որ շնայած ստրկավաճառության մասին եղած որոշումներին և

³⁴ „Zenci ticaretinin..“ Մուստաֆա Նախլի փաշայի հրամանագիրը Իրաքի և Հիջազի բանակների հրամանատարներին և Բաղդադի վալիին 1853 թ. փետրվարի 14-ին, նույն տեղում նաև մյուս հրամանը նույն մարդկանց, էջ 25—26:

³⁵ «Արշալույս արարատեան», 1854 թ., դեկտեմբերի 17, էջ 483:

³⁶ Նույն տեղում, 1855 թ., հունվարի 28, № 486:

³⁷ Тарле Е. В. Крымская война, т. 2, с. 556.

³⁸ „Zenci ticaretinin..“ Աբդուլ Մեջիդի հրամանը Եգիպտոսի փոխարքա Մեհմեդ Սաիդ փաշային, 1857 թ., փետրվարի 10, էջ 27, 29:

ձեռնարկված միջոցառումներին, իր հպատակության ենթակա երկրների որոշ մասերում գերեվաճառությունը դեռևս նկատելի է: Շարունակվում է գերիների մի մասի ոչնչացումը ճանապարհներին, կենդանի մնացածների մի մասն էլ շոգ երկրներից միանգամից ցուրտ երկներ ընկնելու հետևանքով մահանում է զանազան հիվանդություններից: Իրավիճակի մասին այսպիսի վկայություն տալուց հետո սուլթանը նշում է, որ անհրաժեշտ է արգելք լինել գերեվաճառությանը. «Այս հրամանը ստանալուց հետո ամեն կարգի նավահանգիստներ մուտք գործող տերության (Օսմանյան—Վ. Ղ.) հպատակ առևտրական նավերը, որոնց մեջ առկա են ստրուկ գերիներ, իմ տերության անունից բռնագրավել, նավապետներին բանտարկել և այդ մասին ծանուցել (Բ. Դուռը—Վ. Ղ.), գերեվաճառների կողմից բռնադատված գերիներին ազատել, բնակեցնել հարմար վայրերում, նրանց ապահովել սննդով»: Սակայն այդ բոլորը գործնական հետևանք չունեցավ: Դարի 60—70-ական թվականներին ստրկավաճառությունն Օսմանյան կայսրությունում շարունակվում էր:

Ուշագրավ է Ալեքսանդրիայի ռուսական հյուպատոսության մի աշխատակցի նամակը «Վոկրուգ սվետա» հանդեսի խմբագրությանը, որը պատկերացում է տալիս իրերի իսկական վիճակի մասին: Նամակի հեղինակը գրում է, որ մարդավաճառությունը շարունակվում է: Այդ առևտրին նպաստում է հենց ինքը՝ Սայիդ փաշան, որը շատ էր սիրում ունենալ նեգր զինվորներ: Փոխարքան խորթումում ապրող Շեյխ Ահմեդից պահանջել էր իր համար ձեռք բերել 500 գեղեցիկ, առողջ և ամուր նեգրեր: Այդ լուրն աշխուժացրել էր ստրկավաճառների գործունեությունը: Նեգրերին մեծ մասամբ ձեռք էին բերում բռնությամբ, որի ընթացքում նրանցից շատերը զոհվում էին: Ահա թե ինչու Սայիդ փաշայի պատվերը կատարելիս Սուդանում զոհվեց տասը հազար նեգր³⁹: Նամակում հետաքրքիր մանրամասներ են նշված մարդորսության ձևերի մասին: Այսպես, առևտրականներից ոմանք իրենց ապրանքները փոխանակում են միջցեղային կոիվների ժամանակ գերված զինվորների հետ: Գերեվառությունը հաճախ տեղի էր ունենում հատուկ այդ նպատակով կազմակերպված հյուրասիրությունների ժամանակ: Շատ տեղերում նեգրերը վախից եվրոպացիներին մոտ չէին գալիս: Այդպիսի դեպքերում գերեվաճառները բարեկամական շարժումներով իրենց բերած ապրանքը մատնացույց էին անում և հեռանում: Նեգրերը հետաքրքրությամբ մոտենում էին տեսնելու այն, և հենց այդ պահին էլ հետևում էր հարձակումը, դիմադրողներին ոչնչացնում էին, մնացածներին գերում: Սովորական երեվույթ էին դարձել գիշերային հարձակումները գյուղերի վրա:

Մերձավոր արևելքում և Արևելյան Աֆրիկայում ստրկավաճառությունը XIX դարում երկար ժամանակ խանգարել է առևտրի բնականոն

³⁹ «Вокруг света». СПб., 1861, т. 1, с. 377—378.

զարգացմանը: 1876 թ. դեկտեմբերի 1-ին անգլիական միջազգային «Ստրուկների ազատագրում» ընկերությունը մի խնդրագիր է ուղարկում ռուսական ցարին, որտեղ ասված է, որ Քուրբիայում «ստրկությունը և ստրկավաճառությունը դեռ շարունակում են ծաղկում ապրել»: «Լոնդոնի ընկերության հավաքած տվյալներով, թուրքական հպատակները միայն Աֆրիկայում իրենց հարձակումներով, երկպառակությունների հրահրումով տարեկան ոչնչացնում են 4000—5000 սևամորթների: Գերվածների մի զգալի մասը ստրկության են վաճառում եգիպտոսում, Փոքր Ասիայում, մի մասն էլ իսպանական գաղութներին՝ Կուբա կղզում»: «Կազմված հանձնաժողովը նշում է, որ ստրկավաճառությունը Քուրբիայում օրենքով ճանաչված է և խանգարում է այդ երկրի վերածննդին»⁴⁰: Ժամանակին այս փաստերը հայտնի են եղել ամբողջ աշխարհին: Ժյուլ Վեռնը իր նշանավոր վեպերից մեկում, որի գործողությունները կատարվում են XIX դարի 70-ական թվականներին, համանման շատ փաստեր է բերում Աֆրիկայում Օսմանյան (նա օգտագործում է արաբական տերմինը) ստրկավաճառության մասին⁴¹: «Ներկայումս,—գրում է հեղինակը,—գերեվաճառությունը շարունակվում է միայն իսպանական և պորտուգալական գաղութներում՝ բավարարելու համար Արևելքի բնակչությանը, ինչպես նաև թուրքերի և արաբների կարիքները»⁴²: Ժ. Վեռնը նշում է նաև, որ ստրուկների նախնական խմբերի միայն մի փոքրիկ մասն է հասնում Ասիայի արաբական կամ թուրքական նահանգները⁴³:

Ընդհանրապես սկզբնաղբյուրների տված ժլատ տեղեկությունների պատճառով դժվար է Աֆրիկայից Օսմանյան կայսրություն ներմուծված ստրուկների անգամ մոտավոր թիվը նշել: XIX դարի վերջին կարծիք կար, որ 400 տարվա ընթացքում միլիոնից ավելի ստրուկներ են բերվել Քուրբիա, որոնց մեծ մասը դաժան վերաբերմունքի, կլիմայի փոփոխությունների պատճառներով ոչնչացել են և նոր սերունդներ չեն տվել⁴⁴: Դժվար է այս մասին որոշակի կարծիք հայտնել, սակայն նեզր ստրուկները XIX դարի վերջին բավականին մեծ թիվ էին կազմում: Նրանք Կ. Պոլսում անգամ ստեղծել էին փոխադարձ օգնության մի ընկերություն⁴⁵:

XIX դարի 60—70-ական թվականներին Կովկասից, հատկապես Չերքեզիայից դեպի Օսմանյան կայսրություն կատարվող ստրկավաճառության մասին ևս պահպանվել են բավականին տվյալներ: Այստեղ կա-

⁴⁰ Архив внешней политики России (далее АВПР), «Главный архив V-A₂», 1876 г., д. 551, л.л. 94—95, там же, 1877, л.л. 534—539.

⁴¹ Ժյուլ Վեռն, *Տասնհինգամյա նավագետը*, Ե., 1958, էջ 233—244, 351—352, 356, 359—360 և այլն:

⁴² Նույն տեղում, էջ 237:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Овсяный Н. Р. указ соч., с. 49—50.

⁴⁵ Там же.

տարվող մարդավաճառությունն ուներ իր առանձնահատկությունները: 30—40-ական թվականներից սկսած, ի տարբերություն Աֆրիկայի, Կովկասում ստրուկները դաժան միջոցներով չէին ձեռք բերվում: Ստրուկ-ստրուկները համալրում էին մեծահարուստ ֆեոդալների հարեմները: Առհասարակ Օսմանյան կայսրությունում հաճախ էր պատահում, երբ նախկին ստրուկը, ծառայողական աստիճաններով բարձրանալով, դառնում էր խոշոր պետական գործիչ:

Երբ Կովկասի լեռնային շրջաններն անցան Ռուսաստանի տիրապետության տակ, մարդավաճառությամբ զբաղվողների գործը թեև դժվարացավ, բայց համառոտ են շարունակվեց, քանի որ լայն պահանջարկի պատճառով շահույթը հսկայական էր: Այդ պահանջարկն այնքան էր մեծ, որ նրանց երբեք շուկայում չէին ցուցադրում վաճառքի համար⁴⁶: Քանի որ ստրուկների գեղեցկությունից էր կախված նրանց գները, առևտրականները մեծ խնամք էին հանդես բերում իրենց «ապրանքի» նկատմամբ: «Նավելը, որոնցով նրանց տեղափոխում էին Կոստանդնուպոլիս, ունեին ամեն տեսակի հարմարություններ, գերուհիներին կերակրում էին առավել լավ, թարմ և առողջարար սննդով, անգամ աշխատում էին նրանց զվարճացնել, կատարում էին նրանց բոլոր բնահաճույքները»⁴⁷: Բերելով մայրաքաղաք, նրանց տեղավորում էին հատուկ պանդոկներում (խաներում), առավել գեղեցիկներին անմիջապես գնում էր սուլթանը, իսկ մնացածները բաժին էին հասնում ունևորներին⁴⁸: 60—70-ական թվականներին այդպիսի ստրկավաճառությունը, արգելված լինելու պատճառով, գաղտնի էր կատարվում: «Ստրկավաճառներն իրենց գործունեությունը քողարկելու համար բացել էին բազմաթիվ սրճարաններ, որտեղ որոշակի ժամերի գալիս են գնորդները վաճառվող կանանց տեսնելու համար»,—գրում է մի ժամանակակից: Այդ շահավետ գործով զբաղվում էին անգամ խոշոր պետական գործիչների և հարուստ փառաների կանայք, որոնք գնում էին բոլորովին մանկամարդ աղջիկների, դաստիարակում և վերավաճառում հսկայական շահույթով⁴⁹:

1845 թ. հունիսի 21-ին Կ. Պոլսի ռուսական դեսպան Վ. Տիտովը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Կ. Նեսելրոդին գրած գաղտնի նամակում պատմում է, որ Չերքեզիայից շատ ստրուկներ են արտահանում Օսմանյան կայսրություն և որ «ստրուկների հանցագործ առևտուրը շարունակվում է»: Նամակին կցված են Տրապիզոնի ռուսական և անգլիական հյուպատոսների զեկուցագրերը համանման բովանդակու-

⁴⁶ Константинополь и турки..., с. 112.

⁴⁷ Там же, նույն տեղում նաև նշվում է, որ ստրուկներին հազցնում են լավ շորեր, որպեսզի գեղեցիկ երևան: Հիշենք, որ Սելիմ I-ը դա արգելում էր:

⁴⁸ Там же, с. 112—113.

⁴⁹ Овсяный Н. Р., указ. соч., с. 47.

թյամբ⁵⁰; 1858 թ. մի փաստաթուղթ վկայում է, որ Չերքեզիայի հետ կատարվում է առևտուր, որն ունի մաքսանենդային բնույթ: Ընդ որում, նշվում է, որ այդ առևտրում ստրկավաճառությունը զգալի տեղ է գրավում և գտնվում է «ավելի ծաղկուն վիճակում, քան երբևէ եղել է»⁵¹:

Ավելի հետաքրքիր բովանդակություն ունի Տրապիզոնի ուսական հյուպատոս, արքունի խորհրդական Ա. Մոշինի 1863 թ. հոկտեմբերի 17-ի ղեկուցագիրը⁵²: Նա գրում է, որ Տրապիզոնի ֆրանսիական, անգլիական և իտալական հյուպատոսները շերքեզներին միացած, հակառուսական պայքար են տանում: Ինքը, հյուպատոսը, ստրկավաճառության հողի վրա ընդհարվել է ֆրանսիական հյուպատոսի հետ: Վերջինս չի ցանկացել արգելք լինել այն ստրկ-շերքեզուհիների փոխադրմանը Կ. Պոլիս, որոնք գտնվելիս են եղել ֆրանսիական շոգենավի վրա: Տրապիզոնի ստրկավաճառները հայտնել են հյուպատոսին, որ այդ կանայք Գուրխայից են, և վրացուհիների անվան տակ Տրապիզոնի մուշիքը ցանկանում էր նրանց նվեր ուղարկել Կ. Պոլիս: Ռուսական հյուպատոսի ջանքերով այդ գործը խափանվում է:

Հայտնի է, որ 1862 թ. և ապա 1864 թ. մի քանի հարյուր հազար շերքեզներ տեղափոխվեցին Փոքր Ասիա և Բուլղարիա: Չնայած քրիստոնյաներից խլված հողերով նրանց ապահովեցին, այնուամենայնիվ, բնակլիմայական պայմաններին շարմարվելով, նրանց մեկ երրորդը մահացան սովից, համաճարակներից և այլն⁵³: Գաղթածների երիտասարդ աղջիկներին ու տղաներին համատարած վաճառում էին ոչ միայն Կ. Պոլսում, այլև Սիրիայում և նգրպոսում⁵⁴: Այդ վաճառքի մասին տեղեկություններ է հաղորդում նաև Վառնայի ուսական հյուպատոս Վ. Նյագինը: 1870 թ. օգոստոսի 26-ի ղեկուցագրի մեջ նա գրում է, որ «Վառնայի բոլոր ունևոր աղաները և թուրքերը, ինչպես նաև մութեսարիֆ Արդուրահաման փաշան և Վառնայի ներկայիս նահանգապետ Հասան փաշան գնել են և հիմա էլ գնում են շերքեզուհիներ»: Ընդ որում, աղջկական տղայի համար թուրքերը վճարում էին 250—500 պիաստր: Հաճախ շերքեզները վաճառվում էին ամբողջ ընտանիքով⁵⁵:

Ստրկավաճառության մասին տվյալներ է հաղորդում նաև Ֆիլիպպոպոլի փոխհյուպատոսը 1871 թ. հոկտեմբերի 19-ի ղեկուցագրում⁵⁶: Նահանգապետ Քյամիլ փաշան բացահայտորեն ստրուկներ էր գնում:

Միայն մի ստրկուհու համար նա վճարել էր 35.000 պիաստր, և դա այն մարդն էր, որը հաճախ ճպարտանում էր եվրոպայում ստացած իր կրթությանը:

XIX դարի վերջին ստրկավաճառությունը սկսեց անկում ապրել: Դա հատկապես նկատելի էր 1889—1890 թթ. Բրյուսելի կոնֆերանսից հետո, երբ մեկընդմիջտ աշխարհում արգելվեց ստրկությունը⁵⁷: Տեղի տալով մեծ տերությունների ճնշմանը, 1889 թ. սուլթանն արգելեց ստրկավաճառությունը և ազատ հայտարարեց այն ստրուկներին, որոնց տերերը չէին կարող ապացուցել իրենց իրավունքները նրանց նկատմամբ⁵⁸: Բայց և՛ ստրկությունը, և՛ ստրկավաճառությունը շարունակեցին գոյություն ունենալ: Մեր դարի սկզբներին Մեքքայում պահպանվում էր ստրկավաճառական շուկան⁵⁹: Այդ երևույթի վերացման վերջին փորձը կատարվեց երիտթուրքական հեղափոխության ազդեցության տակ: 1909 թ. հոկտեմբերի 17-ին⁶⁰ հրապարակվեց սուլթանի հրամանագիրը, որն ունի հակասական բովանդակություն: Մի կողմից օրենքով, սահմանադրությամբ արգելված է համարվում ստրկությունը, իսկ մյուս կողմից թույլատրվում է «մի քանի բացառիկ պայմաններում»: Հատուկ շեշտվում է, որ այդ ճարցում պետք է առաջնորդվել շարիաթով: Օրենքի նման մշուշապատությունն դե անհստակությունը գալիս էր երիտթուրքերի ներքին հետադիմական քաղաքականության ոգուց, ինչպես նաև հոգևորականության դեռևս ուժեղ ազդեցությունից:

Ստրկության և ստրկավաճառության մասին փաստերի թվարկումը կարելի է շարունակել, սակայն նշվածների հիման վրա էլ կարելի է կատարել եզրակացություններ:

Առաջին, Օսմանյան կայսրությունում XIX դարում շարունակում էր գոյություն ունենալ ստրկության համակարգը, որը նախորդ դարերի համեմատությամբ ձեռք էր բերում նոր գծեր: Ի տարբերություն XVI—XVIII դարերի, անցյալ դարում ստրկությունը չի ազդել կայսրության սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Դա եղել է տնային ստրկություն, ֆեոդալների դեռևս հզոր դասակարգի արտադրական հարաբերություններից դուրս զանազան պահանջների բավարարման համակարգ: Այդ խնդիրը կարիք ունի հետագա հետազոտման:

Երկրորդ, կայսրությունում ստրկավաճառությունը շարունակեց ծաղկում ապրել մինչև XIX դարի 60—70-ական թվականները և ընթա-

⁵⁰ АВПР, «Главный архив V-A», д. 515, л.л. 173—176.

⁵¹ АВПР, там же, д. 927, 1858 г., л.л. 3—6.

⁵² АВПР, там же, д. 933, 1863 г., л. 27.

⁵³ Овсяный П. Р. Указ. соч., с. 31.

⁵⁴ Там же.

⁵⁵ АВПР, «Главный архив IV—2», д. 10, Варна, 1859—1871, л.л. 306, 308, 308.

⁵⁶ АВПР, там же, д. 12, 1860—1871, л.л. 312—313.

⁵⁷ Абрамова С. Ю. Указ. соч., с. 212.

⁵⁸ Ա. Ս. Համբարյան: Ազրբային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Եր., 1965, էջ 75—76:

⁵⁹ Голобородько Н. Н., указ. соч., с. 14.

⁶⁰ Тыркова А. Старая Турция и младотурки. Год в Константинополе, Пг., 1916 с. 138—139.

նում էր երկու ուղղությամբ՝ Աֆրիկա-արաբական երկրներ և այլուր, ինչպես նաև Կովկաս-Սև ծով-Փոքր Ասիա և այլուր:

Երրորդ, սուլթանը և Բ. Դուռը ստրկությունը, ստրկավաճառությունը արգելող օրենքներ ընդունում էին միջազգային քաղաքական պայքարի ճնշման տակ, սակայն այդ ուղղությամբ հետևողական գիծ չէին վարում:

Չորրորդ, քանի որ ստրկությունն այստեղ միահյուսված էր միայն ֆեոդալական հարաբերություններին, ստրկավաճառությունն էլ իր հերթին կազմում էր այդ հասարակարգի սոցիալական հարաբերությունների մի մասը, կար ստրկավաճառների մի փոքրաթիվ խավ:

Հինգերորդ, ստրկության և ստրկավաճառության վերաբերյալ մահմեդական կրոնի օրենքները և շարիաթը շարունակում էին գործել նաև XIX դարում:

ГЛЕЧЯН В. Г.

РАБОТОРГОВЛЯ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ В XIX В.

Резюме

В советской историографии почти отсутствуют работы, посвященные проблеме рабства и работорговли в Османской империи. Между тем, она имеет вековую историю. Автор попытался проанализировать ход работорговли в прошлом веке, выявить связанные с этим процессом социально-экономические и политические вопросы. В XIX веке рабство и работорговля уже не имели влияния на развитие социально-экономических отношений, как это в определенной степени наблюдалось в прошлом. В целом, это было домашнее рабство, вне производительных отношений, которое удовлетворяло разнообразные требования пока еще мощного феодального класса.

В Османской империи работорговля в широких масштабах сохранилась вплоть до 60—70 годов XIX века, после чего начался спад. Торговля невольниками шла по двум направлениям: Африка-арабские страны—Малая Азия, а также Кавказ—Черное море—Малая Азия и т. д. В эпоху танзимата эта торговля стала объектом политической борьбы европейских держав с целью вмешательства во внутренние дела империи. Следует отметить, что султан и В. Порты принимали законы против работорговли под политическим давлением внешних сил. Ввиду того, что рабство многочисленными видимыми и невидимыми узами было связано с феодальными отношениями, работорговля продолжала существовать в социальной структуре турецкого общества.

Несомненно, что проблема работорговли в Османской империи нуждается в дальнейшем всестороннем и глубоком исследовании.

Р. П. КОНДАКЧЯН
Ин-т востоковедения АН Арм. ССР

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ПРОВОЗГЛАШЕНИЯ РЕСПУБЛИКИ В ТУРЦИИ

Военно-феодалная Османская империя потерпела поражение в первой мировой войне. Страны Антанты после предварительного дележа приступили к оккупации Турции. Государственность Турции и её суверенитет оказались под реальной угрозой. Однако народные массы под непосредственным влиянием Великой Октябрьской Социалистической революции поднялись на борьбу за независимость страны.

Национальную войну, основной борющейся силой которой являлись трудящиеся массы города и деревни, а также части регулярной армии, расположенные в Анатолии, возглавило высшее офицерство во главе с Мустафой Кемалем (Ататюрк). Важное место в руководстве национальной войной занимало мусульманское духовенство Анатолии. В ней приняли участие также крупные помещики—феодалы.

Извечное враждебное отношение ислама к иноверцам—мусульманский национализм,—в данном случае к христианским странам Антанты, совместно с идеологией буржуазного национализма составили основные компоненты общей идеологии национальной войны.

Буржуазия как таковая в силу общей экономико-политической отсталости Османской империи, в своем большинстве была инациональной.

Только в период первой мировой войны недавно родившаяся турецкая национальная торговая буржуазия, в основном мелкая и средняя несколько упрочила свои позиции, как за счет высокой военной конъюнктуры, так и материального и физического подавления греческой и армянской торговой буржуазии. Таким образом, становление турецкой национальной торговой буржуазии происходило не только путем расширения объема торгового оборота и присвоения прибылей. Стамбульская и измирская турецкая компрадорская буржуазия, на некоторое время занявшая место инациональной, не желала успеха национальной войне и поэтому не приняла участия в ней. Что касается мелкой и средней торговой буржуазии Анатолии, то она приняла активное участие в ней, однако её влияние уступало роли высшего офицерства и духовенства в руководстве войной.

Различные классы и прослойки турецкого общества, участвовавшие в этой войне, преследовали свои собственные цели. Более того, так как руководство войной осуществлялось различными группировками, то разногласия между ними должны были наложить определенный отпечаток на всё последующее внутривосточное развитие страны.

В самом военно-политическом руководстве оказались лица, вышедшие из разных кругов эксплуататорских классов Османской империи. Многие из них еще вчера были активными членами младотурецкой партии «Единение и прогресс», вовлекшей страну в войну, преследовавшей пантюркистскую цель создания «Великой Турции». Как известно, провозглашение республики никогда не входило в программу этой партии и не было её политической целью.

Однако в ходе национальной войны султан Мехмед VI Вахитеддин принял сторону стран Антанты и, более того, выступил против национальных сил. Тем самым он лишил себя верховной власти над Анатолией. Еще в ходе войны в Анкаре был создан Представительный комитет, впоследствии замененный Великим национальным собранием Турции (ВНСТ), которому принадлежала вся верховная законодательная и исполнительная власть в Анатолии. Таким образом, перед упразднением султаната в стране существовали две власти — одна в Константинополе во главе с султаном-халифом, а другая в Анкаре, во главе с ВНСТ, возглавляемым М. Кемалем. Эти власти не только не признавали друг друга, но и воевали между собой. К тому времени, когда национальные силы одержали победу над войсками оккупантов, вся власть в Анатолии безраздельно принадлежала ВНСТ, а под властью султана осталась только столица и европейская часть страны. Отношения между султанским двором и ВНСТ принимают все более враждебные формы. С этого времени между различными группировками руководства национальной войной усиливается борьба по вопросу государственного устройства будущей Турции. Противники султанской власти группируются вокруг М. Кемала и организованной им первой группы Общества защиты прав Анатолии и Фракии.

Накануне упразднения султаната Османская династия переживала полное политическое банкротство. Власть султанов прежде представляла ничем и никем не ограниченное самодержавие — теократическую военно-феодалную деспотию. Османская династия, присвоив себе титул халифа — верховного духовного главы мусульман, всячески культивировала предание, что султаны — халифы являются заместителями аллаха, его тенью на земле. Ислам как идеология правящих кругов господствовал в общественно-политической жизни.

Провозглашение конституции в 1876 г. не ликвидировало и даже не сумело ограничить самодержавную власть монарха. Более того, конституция юридически закрепила за Османской династией право на верховную законодательную и исполнительную власть. Конституция гласила, что верховная власть принадлежит «старшему из членов династии Османа, согласно правилам, исстари установлен-

ным»¹. Даже младотурки, совершив переворот в 1908 г., не рискнули свергнуть власть династии, а ограничились тем, притом вопреки своему желанию и волею обстоятельств, не зависящих от них, что заменили слишком одиозную фигуру Абдул-Хамида II другим султаном — Мехмедом V Решадом (1909—1918). Своей капитуляцией перед Антантой следующий султан Мехмед VI Вахитеддин и дворцовая камарилья, вконец скомпрометировали и себя, и свою власть, и династию.

Измена национальным интересам облегчила свержение власти султана и династии. Султан и его правительство были теперь ни что иное, как «султан без подданных, министры без правительства, государство без территории»².

Оставить у власти Османскую династию — политического противника национальных сил — было чревато многими осложнениями для руководства национальной войной, так как М. Кемаль и некоторые другие заочно были приговорены султанским правительством к смерти за «измену султану-халифу и родине»³. Не было никакой гарантии, что султан не стал бы преследовать М. Кемала и его ближайшее окружение. Заменить Османскую династию другой и тем самым ограничиться продолжением конституционной монархии и теоретически, и практически не представлялось возможным, и вот почему. Во-первых, замена династии другой правящей фамилией, видимо, не была бы понята и признана и духовенством, и религиозно настроенными массами; во-вторых, в Турции не только к тому времени, но и в прошлом, в силу неограниченного деспотизма султанской власти, не было такой фамилии, кроме Османской, которая могла претендовать на престол.

Как мы отметили выше, ко времени упразднения султана Анатолия фактически не подчинялась султану-халифу. Но что важно, и в самой столице власть султана являлась призрачной, т. к. фактически принадлежала оккупационным войскам стран Антанты. Из вышеизложенного явствует, что султанская власть и вообще власть Османской династии была обречена на гибель. Упразднение султаната было предопределено всем ходом внутривосточного развития Турции после победы в войне за независимость.

Что касается основной части страны — Анатолии, то уже в ходе национальной войны здесь стали устанавливаться элементы новой власти. Так, например, согласно конституционному акту 1921 г., султан более не являлся верховным светским главой нации. Акт этот утверждал суверенитет нации, единственным представителем которой провозглашалось ВНСТ, имеющее прерогативы верховной законодательной и исполнительной власти⁴. Однако, следует отметить, что этот акт не предусматривал прямого упразднения султаната и, таким образом, не устанавливал новую форму власти и новое государ-

¹ См.: Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I. М., 1929, с. 365.

² М. Кемаль, там же, т. 3. М., 1934, с. 277.

³ М. Кемаль, там же, т. 4. М., 1934, с. 300.

⁴ М. Кемаль, там же, т. 4, с. 313.

ственное устройство, несмотря на то, что в основе деятельности ВНСТ лежала ответственность министров и самого правительства перед ВНСТ.

Несмотря на победу в национальной войне внутриполитическая обстановка в Турции оставалась очень сложной и острой из-за неопределенности будущего устройства государства. Вопрос стоял так: либо сохранение султаната, либо его упразднение и установление в стране новой формы власти и государственного устройства. Упразднение халифата пока совсем не стояло на повестке дня политической жизни страны. Внутренняя неустойчивость могла немного ослабить и внешнеполитические позиции анкарского правительства. И М. Кемаль, используя весь свой авторитет и власть как председателя ВНСТ, главнокомандующего армией и руководителя Народной партии, решил разрядить внутриполитическую обстановку.

Упразднение султаната было значительно ускорено следующим обстоятельством внешнеполитического характера. 28 октября 1922 г. державы Антанты пригласили Турцию на Лозаннскую конференцию для выработки условий мирного договора. Но на конференцию приглашались делегации двух правительств одновременно — стамбульского (султана) и анкарского (ВНСТ). Великий визирь стамбульского правительства Тефик-паша предложил М. Кемалю составить «общую мирную делегацию»⁵. Если бы правительство ВНСТ приняло это предложение, то получилось бы почти так, как на лондонской конференции (февраль 1921 г.), когда оба правительства направили в Лондон свои отдельные делегации. И чтобы лишить султанское правительство возможности принять участие в работах Лозаннской конференции, М. Кемаль решил не откладывать упразднение султаната и лишить таким образом султанское правительство возможности выступить на международной арене. И М. Кемаль не скрывал этого, впоследствии он говорил, что «ликвидация султана была следствием того, что приглашение на Лозаннскую конференцию было одновременно послано нам и в Стамбул, а также, того, что Стамбул, т. е. султан Мехмед VI Вахитеддин, Тефик-паша и его коллеги согласились принять участие в конференции»⁶. Антанте ничего не оставалось, как иметь дело с правительством ВНСТ, чья делегация и приняла участие в работах Лозаннской конференции. Упразднение султаната натолкнулось, однако, на серьезное сопротивление его сторонников — части высокопоставленной военной и чалмоносной оппозиции. Чтобы оправдать упразднение султаната, М. Кемаль и его приближенные внесли в ВНСТ предложение о наказании членов султанского правительства во исполнение закона о преступлениях против родины⁷. М. Кемалю пришлось пойти даже на прямую угрозу противникам ликвидации султаната, заявив: «В противном случае действительность все равно проявит себя, но,

возможно, что тогда полетит несколько голов»⁸. После этой угрозы, притом весьма явной, приверженцы султаната притихли и 1 ноября 1922 г. ВНСТ приняло решение об упразднении султаната.

Султан Вахитеддин и его правительство не сумели оказать никакого сопротивления решению ВНСТ, что явилось, кстати, еще одним свидетельством того, что власть Османской династии не имела никакой реальной опоры.

Однако ВНСТ, упразднив султанат, сохранил халифат, назначив халифом преставителя низложенной династии Абдул Меджита. М. Кемаль и его приверженцы сохранили халифат из-за сильных позиций религии и духовенства в общественно-политической жизни турецкого общества, влияния последних на религиозно настроенные массы.

Религиозные деятели занимали сильные позиции в самом руководстве национальной войной и кемалисты сделали им временную уступку. Халифат был сохранен также из внешнеполитических соображений, чтобы не лишиться в данное трудное время поддержки мусульманских государств, столь важной для новой власти.

Упразднив султанат, кемалисты пока не предлагали взамен ничего конкретного в вопросе формы правления и государственного устройства. Этот вопрос пока оставался открытым. Вплоть до провозглашения республики не было ясно, какая система государственного устройства существует в Турции. Но, без сомнения, вопрос будущего государственного устройства не мог долго оставаться неопределенным, тем более, что неясность в этом вопросе могла активизировать деятельность оппозиции в ВНСТ и сторонников султаната по всей стране.

В силу сложившихся обстоятельств единственной альтернативой султаната могла явиться республиканская форма правления. За период, прошедший после упразднения султаната, позиции М. Кемалья и его сторонников достаточно стабилизировались. Что касается лично М. Кемалья, то он к этому времени, являясь верховным главнокомандующим и маршалом, получившим за заслуги в войне титул «гази», безусловно пользовался наибольшим авторитетом среди всех других политических и военных деятелей. В этот период первая группа Общества защиты прав Анатолии и Фракии была преобразована в Народную партию во главе опять-таки с М. Кемалем. Вскоре, в результате выборов в ВНСТ второго созыва, Народная партия взяла власть в свои руки, получив подавляющее большинство депутатских мест (263 из 286). Это позволило М. Кемалю вновь занять пост первого председателя ВНСТ (13 августа 1923 г.)⁹.

Упрочению позиций М. Кемалья и правящей Народной партии способствовало также подписание Лозаннского договора, завершившего войну Турции против стран Антанты. И М. Кемаль, воспользо-

⁵ М. Кемаль, там же, т. 4, с. 104.

⁶ М. Кемаль, там же, т. 4, с. 406. В «Новейшей истории Турции» неверно утверждается, что М. Кемаль был избран главой государства. См.: Новейшая история Турции. М., 1968, с. 82.

⁵ М. Кемаль, там же, т. 3, с. 278.

⁶ М. Кемаль, там же, т. 4, с. 100—101.

⁷ М. Кемаль, там же, т. 4 с. 192.

вавшись успехом на внешнеполитической арене, решает окончательно взять верх над всеми приверженцами султанской формы правления и провозгласить республику. Провозглашение республики было проведено весьма поспешно. Даже для многих сторонников М. Кемали оно оказалось внезапным. 28 октября 1923 г. М. Кемаль пригласил к себе в резиденцию группу депутатов АНСТ от Народной партии и объявил им: «Завтра мы провозгласим республику»¹⁰. На следующий день, 29 октября 1923 года, по предложению М. Кемали, ВНСТ провозгласило Турцию республикой, а самого М. Кемали избрало президентом республики—главой государства.

Следует отметить, что провозглашение республики осуществилось законодательным порядком, посредством внесения следующей поправки в статью конституционного акта 1921 г., касавшейся формы правления—«форма правления турецкого государства—республика»¹¹, а не путем всенародного или общенационального референдума по вопросу конституции, провозглашающей республику, или же по вопросу провозглашения республиканской формы правления. И если учесть, что накануне Турция переживала затяжной правительственный кризис, то отчасти станет ясным поспешность М. Кемали в деле провозглашения республики, т. к. он посредством этого намеревался разрешить также кризис в правящих верхах. Противники М. Кемали, чтобы лишить его возможности быть избранным в президенты и заодно опорочить идею республики, внесли на обсуждение меджлиса законопроект о том, что президентом может быть избран только уроженец Анатолии, т. е. пределов Турции¹². Но законопроект был отвергнут меджлисом.

Небезынтересно отметить, что когда на заседании парламентской фракции Народной партии обсуждался вопрос провозглашения республики, И. Инёню¹³ заявил следующее: «Всякий знает, что мы обсуждаем вопрос о форме правления. Если мы не закончим обсуждения и не достигнем результата, мы только продлим кризис и хаос. Европейские дипломаты обратили мое внимание на следующее: «Ваше государство не имеет главы,—говорили они,—по нынешней форме правления главой является председатель собрания. Это означает, что вы ожидаете другого главу государства. Вот такова точка зрения Европы»¹⁴.

Анатолия приветствовала провозглашение республики, несмотря на то, что широкие массы или совсем не имели, или имели самое смутное представление о сущности республиканской формы правления. Поддержка республики была усилена тем, что вскоре, по случаю провозглашения республики, ВНСТ приняло закон об амнис-

тии¹⁵. Стамбул и европейская часть страны, где еще было сильно влияние бывшей правящей династии, духовенства и компрадорской буржуазии, выступили против провозглашения республики, доказывая ее вредность как во внутриполитическом, так и во внешнеполитическом плане.

Хотя республиканская форма правления являлась единственной альтернативой султаната, к этому времени в Турции имелись весьма слабые предпосылки для республиканского строя. Свержение султанского деспотизма и провозглашение республики произошли не путем победы «третьего сословия» в борьбе за власть. Следует отметить также, что республика сама по себе еще не предопределяла власть буржуазии. Пока в стране была установлена военно-бюрократическая диктатура нарождавшейся турецкой национальной буржуазии, крупных помещиков и военщины. Только лишь после провозглашения республики новая власть начала сама содействовать утверждению капиталистического способа производства, как базиса буржуазной республики. И поэтому период после провозглашения республики ещё долгое время был периодом утверждения власти буржуазии как в экономике, так и в политике. Этому процессу сопутствовал и процесс приспособления политических институтов конституционной монархии к буржуазно-республиканскому строю.

Провозглашение республики открыло относительно широкий, по сравнению с военно-феодальной теократической монархией, простор для утверждения нового, сравнительно прогрессивного экономического и политического устройства турецкого общества. Поэтому провозглашение республики явилось актом большого политического значения для будущего Турции.

Логическим продолжением упразднения султаната явилась ликвидация халифата. Сторонники последнего ради его сохранения пошли даже на такой шаг, как предложение М. Кемалю поста халифа¹⁶. Однако М. Кемаль даже при этом условии не пошел на сохранение халифата, чтобы лишить религию и духовенство верховного главы в лице халифа, ослабить их позиции во всех сферах общественно-политической жизни. Ликвидация халифата являлась необходимостью также потому, что после упразднения султаната нельзя было не искоренить последние остатки бывшей правящей династии.

Несмотря на республиканскую форму правления, новая власть, в силу недоразвитости буржуазно-демократических традиций и институтов, представляла из себя военно-бюрократическую диктатуру во главе с авторитарной властью М. Кемали. Гражданская власть, оказавшаяся в руках бывших военных, осуществлялась теми нормами, к которым последние привыкли и которые им казались крите-

¹⁰ М. Кемаль, там же, т. 4, с. 181.

¹¹ М. Кемаль, там же, т. 4, с. 182.

¹² М. Кемаль родился в Салониках, тогда в европейской части Османской империи.

¹³ И. Инёню в то время занимал пост премьер-министра.

¹⁴ См.: М. Кемаль, там же, т. 4, с. 188.

¹⁵ М. Кемаль, там же, т. 4, с. 415.

¹⁶ М. Кемаль, там же, т. 4, с. 221.

ՄԱՀՄԵԳԱԿԱՆ ԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՍԱԿԱՆ ԴԵՐԸ
ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ

Հայաստանը որպես պետականություն կազմավորվել է շատ վաղ ժամանակներում և Արտաշեսյանների ու Արշակունիների Մեծ Հայքի թագավորության ժամանակաշրջանում (189 մ. թ. ա.—387) իր հզորության շրջանն է ապրել: Սակայն Արշակունյաց թագավորության անկումից հետո՝ V—XIV դարերում հայ պետականությունն աստիճանաբար քայքայվեց ու թուլացավ, այն աստիճանի, որ այլևս երկար ժամանակ նույնիսկ անկարելի դարձավ հայոց թագավորության վերականգնումը:

Բնականաբար միշտ էլ հարց է ծագել, ի՞նչ պատճառներով երկար դարեր հզոր պետականություն ունենալուց հետո Հայաստանը XIV դարի երկրորդ կեսին հուսահատական դրության հասավ: Ահա այս քայքայման հարցում վճռական նշանակություն ունեցան (բացի Հայաստանի աշխարհագրական խիստ աննպաստ դիրքից, որին կանգրադառնանք ստորև)՝ երկու բացասական ազդակներ՝ հայության աղետալի արտագաղթը և մահմեդական ամիրությունների հաստատումը Հայաստանում: Սրանք նույն մեղալի երկու երեսներն են, քանզի թե արտագաղթը, թե մահմեդական ամիրությունների հաստատումը միշտ էլ կատարվել են հայկական պետականության բացակայության պայմաններում: Ուստի, նախ երկու խոսքով պետք է անդրադառնանք հայոց գաղթի ընթացքին՝ ըմբռնելու համար թե ինչպե՞ս օտար տարրերը հնարավորություն ունեցան հաստատվելու Հայաստանի ճողի վրա:

428 թվականին Արշակունյաց թագավորության վերջնական անկումից հետո Արշակունիներն իրենց տիրույթները (հատկապես Այրարատում) լքեցին ու անցան արևմուտք: Հայոց արքաների շառավիղները չէին կարող հանդուրժել ինչ որ պարսիկ մարզպանի գերադասությունն իրենց հանդեպ: Հայ նախարարները (Բագրատունիներ, Մամիկոնյաններ, Կամսարականներ և այլն) ստացան Արշակունիների տիրույթներն

Այրարատում², թեև այդ երևույթն ավելի շուտ է սկսվել: Հավանաբար տիրույթներ ստացավ նաև պարսից արքունիքը:

Հինգերորդ դարում (թե՛ վարդանանց ապստամբությունից առաջ, թե՛ նրանից հետո) հայ շատ նախարարներ, դժգոհ լինելով Մասանյան Իրանի հալածանքներից, գաղթում էին Բյուզանդիա³ և ծառայության մտնում զորքի մեջ և արքունիքում: Այսպիսով հայկական պետականության անկմանն անմիջապես հաջորդեց արտագաղթը:

Հենց հինգերորդ դարում հայերի թիվն ու կշիռը մեծ էր բյուզանդական զորքի շարքերում: Պրոկոպիոս Կեսարացին նկարագրում է, թե ինչպիսի դեր ունեին հայ ռազմիկները դեռ նախքան Զենոն կայսեր օրերը (474—491 թթ.): «Սկզբում պալատի պահպանության համար առանձնացվել էին երեք հազար հինգ հարյուրից ոչ պակաս ստրատիոտներ, որոնց սրոյարիոս էին անվանում: Ի սկզբանե անտի պետությունը սրանց վճարում էր շատ ավելի բարձր ռոճիկ, քան մնացած բոլոր (ստրատիոտներին): Անցյալում կայսրերը սրանց ընտրության ժամանակ նկատի ունեին մարդկանց արժանիքները, և հայերին էին տալիս նախապատվությունը: Բայց սկսած Զենոն կայսրից (ստրատիոտ) անունը սկսեց տրվել վախկոտ և պատերազմի մասին բոլորովին գաղափար չունեցող մարդկանց»⁴: Ուրեմն, նախքան Զենոն կայսրը այնքան շատ հայ ընտիր ռազմիկներ էին հեռացել Հայաստանից, որ պալատական պահակազորքը նրանցից էր բաղկացած:

Վեցերորդ դարում արտագաղթը հասավ ավելի մեծ չափերի, երբ Հուստինիանոս կայսրն իր մի քանի որոշումներով, հատկապես՝ 536-ի հրովարտակով, խախտեց Հայաստանի բյուզանդական մասի նախարարների դարավոր հողատիրական իրավակարգը: Բարձր Հայքի և Մոփքի հայկական ինքնավար նախարարությունները և սատրապությունները վերածվեցին սովորական կայսերական նահանգների, իսկ հայկական դինաված ուժերը տարվեցին հեռավոր երկրներ՝ պաշտպանելու կայսրության շահերը⁵: Պրոկոպիոս Կեսարացին հիշում է մոտավորապես 17 հայ անվանի զորավարների, որոնցից են Նարսես (Ներսես) պատրիկը, Արտավան Արշակունին և Կամսարական տոհմին պատկանող զորավարները:

Հայ զինվորականության գաղթը կատարվում էր նաև բռնի միջոցներով: Հայտնի է Մավրիկիոս կայսեր նամակը պարսից իտորով արքային. «Հայերը ըմբոստ և անհնազանդ ազգ են և պղտորում են մեր հարաբերությունները, ուստի եկ ես իմ բաժնի հայկական զնդերը հավաքեմ տանեմ Թրակիա, իսկ դու էլ քո բաժնի հայկական զնդերը տար Արևելք:

¹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Ա, Կահիրե, 1941, էջ 80—89:

² Адонц Н. Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 303.

³ Կ. Տեր Սահակյան, Հայ կայսեր Բյուզանդիոնի, Ա, Վենետիկ, 1905, էջ 9—11:

⁴ Պրոկոպիոս Կեսարացի, Թարգ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 296:

⁵ Նույն տեղում, էջ VII—VIII:

Եթե մեռնեն, թշնամիներ մեռած կլինեն, իսկ եթե սպանեն, թշնամիներ սպանած կլինեն, քանզի եթե նրանք իրենց երկրում մնան, մենք չենք կարող ճանգիստ լինել»⁶:

Սակայն յոթերորդ դարում և հատկապես նրա երկրորդ կեսում գրեթե դադարեց հայ նախարարների ու զինվորականության գաղթը Բյուզանդիա: 628 թվականից Հայաստանի երկու մասերը կառավարվում էին հայ իշխանավորների կողմից (Բյուզանդական մասում՝ Մեծ Գնունին և ապա Դավիթ Սահառունին, պարսկական մասում՝ Վարազտիրոց Բագրատունին և Թեոդորոս Ռշտունին)⁷, իսկ 639—693 թվականներին Հայաստանի երկու մասերը միավորվելով, դարձել էին մի կիսանկախ և որոշ ժամանակ նաև անկախ իշխանապետություն⁸: Սակայն հենց որ Հայաստանը զրկվեց այս քաղաքական ինքնուրույնությունից, և հաստատվեց արաբական տիրապետությունը, նորից ծայր առավ արտագաղթը:

Սրա հետևանքով շուտով բյուզանդական գահին նստեց ազգությամբ հայ Վարդան Փրիլպպիկոսը (711—713 թթ.), իսկ Կոստանդին Ե կայսեր օրոք (741—775 թթ.) գահին հավակնորդ էր Արտավազդ զորավարը:

Թեպետ V դարից սկիզբ էր առել հայ նախարարների արտագաղթը, այսուհանդերձ VII դարում և նույնիսկ VIII դարում Հայաստանի բոլոր նահանգներում ու գավառներում իշխում էր միայն հայ հողատեր ազնվականությունը: Այսպես Հայաստանի խոշորագույն նախարարական տունը՝ Մամիկոնյաններն իշխում էին Տարոնում, Բագրևանդում, Հարբում և Այրարատի որոշ մասերում (Արագածոտն), Վասպուրականում իշխում էին Արծրունիները, Ռշտունիները, նրանցից հյուսիս՝ Ամատունիները: Կամսարականները տիրում էին Արշարունիք, Շիրակ և այլ գավառների, Բագրատունիները՝ Կոգովիա գավառին և այլուր: Սյունիքում և Արցախում իշխում էին հինավուրց նախարարական տները: Մեծ Հայքի տարբեր մասերում կային փոքր նախարարական տոհմերի (Գնունիներ, Գնթունիներ, Անձևացիներ, Ապահունիներ) տիրույթներ, իսկ Բարձր Հայքում դեռ մնում էին Արշակունիների մնացորդները (Կարնեցի) և այլն⁹:

Հայաստանի համար խիստ ճակատագրական եղավ խալիֆայության ղեմ հայերի 774—775 թվականների հուժկու ապստամբության ճնշումը, որից հետո սկիզբ առավ մեծագույն աղետը՝ օտար (արաբ) տարրի հաստատումը հայկական հողի վրա, որը տեղի ունեցավ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786—809 թթ.): Ապստամբության ճնշման հետևանքով քայքայվել էին Մամիկոնյան, Կամսարական և այլ նախարարական

տոհմեր: Թուլացած հայ նախարարական տներից բռնագրավված հողերի վրա խալիֆայությունը ձգտեց տեղավորել արաբական ցեղերի¹⁰:

Արաբական Շախրանի ցեղը դեռ վաղ ժամանակներից տեղավորվել էր Հայաստանի Աղձնիք նահանգի նփրկերտ և այլ քաղաքներում: Սակայն Տավրոսյան լեռնաշղթայից այս կողմ արաբները հաստատվեցին միայն Հարուն ալ-Ռաշիդի օրոք: Վերջինս արաբական ցեղեր տեղավորելով Հայաստանի որոշ գավառներում, նպատակ ուներ հուսալի տարր ունենալ խոտվահույզ Հայաստանում և ստեղծել մի ռազմական հենակետ Բյուզանդիայի ղեմ հաջող արշավանքներ կազմակերպելու համար:

Արաբ պատմիչ Յակուբին գրում է. «Ապա Ռաշիդը (կառավարիչ) նշանակեց Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամիին՝ խուզայմ իբն խալիֆի փոխարեն: Սա նիզարի (ցեղախմբի) մարդկանց տեղափոխեց այս երկիրը: Նախապես Հայաստանում գերիշխող էին Եմենի (ցեղախմբի) արաբները, իսկ Յուսուֆի օրոք բաղմացան նիզարիները: Հետո նշանակեց Յազիդ իբն Մազիադ ալ-Շախրանին, որն ամեն կողմից այստեղ փոխադրեց Ռաբիա (ցեղախմբի) մարդկանց, այնքան որ այսօր նրանք գերակշիռ թիվ ունեն: Նա ամենախիստ կերպով զսպեց այդ երկիրը, այն աստիճանի, որ ոչ ոք չէր կարող շարժվել»¹¹: Դրանից հետո նույնպես շարունակվեց արաբական ցեղերի գաղթեցումը Հայաստան:

Հայաստանի հարավ—արևմտյան կողմերում հաստատվեցին հետևյալ արաբական ցեղերը. Զուրարիկները՝ Արզնում, Սուլայմ ցեղի արաբները, որոնց հայ պատմիչները Կայսիկ են կոչում, Վանա լճից հյուսիս՝ Ապահունիք, Հարթ, Վարաժնունիք, Բղնունիք, Խորխոտունիք գավառներում և Ռեթմանիկները՝ Առբերանի գավառում, Բերկրի քաղաքի շուրջը: Բանն այն է, որ այդ գավառների հայ նախարարները (Ապահունիներ, Գնունիներ) թուլացել ու դուրս էին մղվել 774—775 թվականների ապստամբության ճնշումից որոշ ժամանակ անց: Բացի այդ արաբներ էին հաստատվել նաև Դվինում ու Կարնո քաղաքում (Թեոդոսիոպոլիս)¹²:

Սակայն Հարուն ալ-Ռաշիդի օրոք Հայաստան բերված արաբական ցեղերից ամենավտանգավորը Ջահահյանների տոհմն էր, որը կատաղի պայքար մղեց Հայաստանում գերիշխող դիրք ձեռք բերելու համար: Այս տոհմի առաջին ներկայացուցիչ Ջահահֆը (հայերեն՝ Ջահասպ) ամուսնացել էր Մամիկոնյանների տոհմից Մուշեղի դստեր հետ, որի շնորհիվ հավակնություններ ուներ Տարոնում և ընդհանրապես Հայաստանում դիրք գրավելու¹³: Նրա ղեմ դուրս եկավ Բագրևանդի (Արձնիի) ճակատա-

⁶ Պատմություն Սերբուսի, աշխ. Գ. Արգարյանի, Երևան, 1979, էջ 86:

⁷ Նույն տեղում, էջ 128—134:

⁸ Тер-Гевондян А. Армения и арабский халифат, Ереван, 1977, с. 45.

⁹ Там же, с. 57—60.

¹⁰ Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 58—59:

¹¹ Yaqubi, Tari kh, Beyrouth, 11, 1960, p. 426.

¹² Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները, էջ 58—65:

¹³ Մեծիկ Վաղդանայ Բարձրեբրգայ Պատմություն տիեզերական, ի լույս ընծ. Մ. էմին, Մոսկվա, 1861, էջ 105:

մարտում (775 թ.) զոհված Մմբատ սպարապետի որդին՝ Աշոտը, որը Մսակեր էր կոչվում: Մա ընդարձակել էր իր տիրույթները, յուրացնելով նախկինում Մամիկոնյաններին պատկանող Տարոն գավառը (քանի որ մոր կողմից Մամիկոնյան էր) և Կամսարականների Արշարունիքը, որը գնեց այդ տոհմի մնացորդներից¹⁴: Աշոտը կատաղի պալքար մղեց Ջահ-ճաֆի դեմ, թույլ չտալով նրան ձեռք բերել Մամիկոնյանների կամ Կամսարականների տիրույթները:

Պարտություն կրելով Աշոտ Մսակերից և շկարողանալով Հայաստանի որևէ գավառում հաստատվել, Ջահճաֆը արկածախնդրության դիմեց, իր որդու Աբդ ալ-Մալիքի հետ հարձակվելով Դվին մայրաքաղաքի վրա ու գրավելով այն: Մամուն խալիֆան ընդունեց Աբդ ալ-Մալիքին, որպես Արմինիայի ոստիկան, սակայն շուտով նոր ոստիկան նշանակեց, որի դեմ թեև Աբդ ալ-Մալիքն ապստամբեց, բայց շուտով հպատակվեց: Մինչ այդ վերջինս 5000 հոգուց բաղկացած զորք էր ուղարկել Տարոն՝ Աշոտ Մսակերի դեմ, որը պարտության մատնեց արաբներին, և Շապուհ սպարապետը հետապնդելով նրանց՝ հասավ մինչև Դվինի շրջակայքը: Դվինի բնակիչները քաղաքից դուրս բերեցին Աբդ ալ-Մալիքին և սպանեցին նրան¹⁵:

Աշոտի որդի Բագարատ Բագրատունու օրոք, որը խալիֆայից ստացել էր պատրիկների պատրիկ (Բաթրիկ ալ-բաթարիկա, իշխանաց իշխան) տիտղոսը, հանդես եկավ Ջահճաֆի ընտանիքից՝ Սևադան: Նա ամուսնացել էր Արուսյակ Բագրատունու հետ և փորձեց¹⁶, դաշնակցելով Մմբատ Բագրատունի սպարապետի հետ, ապստամբել ու տիրանալ իշխանությանը: Ապստամբներին միացավ նաև Սյունյաց Սահակ իշխանը: Խալիֆը իրն Յազիդ ի բն Մազիադ ոստիկանը Դավիթ կաթողիկոսի միջնորդությամբ փորձեց ապստամբներին համոզել, որ հրաժարվեն այդ քայլից, սակայն վերջիններս անդդվելի մնացին: Կավակերտի (Հրազդանի ավիին) ճակատամարտում Սահակ Սյունին սպանվեց, իսկ Մմբատ Բագրատունին ու Սևադան փախան: Սևադան հաստատվեց Սյունիքում և զբաղվեց ավազակությամբ, իսկ Սյունյաց իշխանները մեծ դժվարությամբ հեռացրին նրան¹⁷:

Այդ տարիներին Սյունիքում հայտնվեց ևս մի Ջահճաֆյան բախտախնդիր՝ Աբլ հերթ անունով (Աբու-լ-Հարիս), որին Բաբկեն Սյունին հաղթեց ու հեռացրեց¹⁸:

850—852 թվականների հայկական ապստամբությունից հետո կա-

տարված Բուղայի արշավանքը (852—855 թթ.) արար գաղթականներին նոր ալիք բերեց իր հետ¹⁹, սակայն Բուղան թեև մեծ վնաս հասցրեց, այնուամենայնիվ հեռացավ՝ շկարողանալով ընկճել Արցախը և ճանաչելով ապստամբած Վասպուրականի իշխան Գուրգեն Ապուպելճին:

860-ական թվականներին հանդես եկավ մի նոր ջահճաֆյան՝ Սևադայի որդի Ջահճաֆը (Շահապ), որը մեծ զորք էր հավաքել, սակայն նրան ջախջախեց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու եղբայր՝ սպարապետ Աբասը Արշարունիք գավառում և վերջին ջահճաֆյանը մազապուրծ փախավ մի քանի հոգով²⁰:

Ջահճաֆյաններն ընդմիջտ անհետացան, և միայն նրանց ջախջախումից հետո Բագրատունիները հնարավորություն ունեցան վերականգնելու հայկական անկախ պետականությունը՝ Բագրատունյաց թագավորությունը:

Նախարարական տների արտագաղթի և արար ցեղերի հաստատման հետևանքով Բագրատունյաց թագավորությունն ավելի թույլ պետական միավոր էր, քան նրան նախորդող Արշակունյաց թագավորությունը, որն ավելի մեծ տարածք էր ընդգրկում (ամբողջ Մեծ Հայքը, 15 նահանգներով ու 300 հազար բառ. կիլ. տարածությամբ) և ավելի կենտրոնացած էր:

Համենայն դեպս Բագրատունյաց թագավորության գոյության ընթացքում (IX—XI դարեր), շնորհիվ անկախ պետականության առկայության, դադարեց հայ նախարարական ուժերի արտագաղթը Բյուզանդիա: Սակայն արարական տիրապետության շրջանում (VIII դարի երկրորդ կես) խոց էր առաջացել (արար ամիրությունները) Հայաստանի սրտի վրա, որն էլ խիստ բացասաբար անդրադարձավ հայոց թագավորության ճակատագրի վրա:

Բագրատունյաց պետականության իրական սկիզբը 862 թվականն է²¹, երբ Աբրասյան Մուտավաքքիլ խալիֆայի սպանությունից (861 թ.) անմիջապես հետո խալիֆայությունը միանգամից քայքայման նշաններ ցույց տվեց, և 862 թվականին իշխանաց իշխան (պատրիկների պատրիկ) տիտղոսն ստացած Աշոտ Բագրատունին երկիրը կառավարում էր որպես անկախ տիրակալ: Բագրատունյաց պետությունը (885 թ.-ից՝ թագավորություն) 862 թ.-ից մինչև Աշոտ առաջինի մահը (890 թ.) միաձուլ էր, սակայն նրա հաջորդ Մմբատ առաջինի օրոք (890—913 թթ.) երևացին հայոց թագավորությունը ներսից թուլացնող բացասական երեվույթները:

Բագրատունյաց թագավորության միասնականությունը և կենտրո-

¹⁴ Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 106:

¹⁵ Ա. Տեր-Ղևոնդյան, Արարական ամիրայությունները, էջ 64—70:

¹⁶ Պատմութիւն Յովնանու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 144—146:

¹⁷ Ա. Տեր-Ղևոնդյան, Արարական ամիրայությունները, էջ 77:

¹⁸ Վարդան, էջ 109:

¹⁹ Թովմայի Արծրունայ Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887, էջ 131:

²⁰ Ասողիկ, էջ 110:

²¹ Ասողիկ, էջ 136:

նացմանը խանգարող գլխավոր ազդակներն էին նախ՝ արաբական ամիրությունների թշնամական գործունեությունը և ապա՝ հայ ավատատերեր իշխանների կենտրոնախույս ձգտումները:

Բագրատունյաց թագավորության ներսում գտնվող արաբական ամիրությունները (Մանազկերտի Կայսիկները, Բերկրիի Ութմանիկները, Արզնի և Բաղեշի Զուրարիկները, Դվինի և Կարնո քաղաքի ամիրությունները) սերտորեն կապված էին Հայոց թագավորության թշնամի, դրացի մահմեդական պետություններին, ուստի նրանց անջատողական ձգտումները խիստ ծանր էին անդրադառնում հայ պետականության ճակատագրի վրա:

Խիստ բացասական դեր խաղաց Դվինի ամիրությունը, որը երկար ժամանակ հենարան էր Բագրատունյաց Հայաստանի դեմքում թշնամի Ատրպատականի Սաջյան կառավարիչների և այլոց համար: Սաջյանների բոլոր արշավանքների ժամանակ Դվինը նրանց ռազմական ավերիչ գործողությունների հենարանն էր: Իրենց ձեռքում պահելով հանգուցային նշանակություն ունեցող քաղաքները, ամիրությունները նպաստեցին Հայոց թագավորության մասնատման խորացմանը: Քանի դեռ Դվինը անջատված էր և թշնամի՝ Հայոց թագավորությանը, Սյունիքն ու Արցախը հնարավորություն ունեին մեկուսանալու Բագրատունյաց թագավորությունից: Մանազկերտի Կայսիկների ամիրությունը ուղղակի կտրել էր կապը Բագրատունի թագավորների և Տարնի Բագրատունիների միջև, միաժամանակ նպաստելով Վասպուրականի մեկուսացմանը Հայոց թագավորությունից²²:

Իր երկդարյան գոյության ընթացքում Բագրատունյաց թագավորությունը պայքար էր մղել շեղբացնելու ամիրությունների բացասական գործունեությունը: Աշոտ Ա թագավորին ենթակա էին Բերկրիի Ութմանիկների և Մանազկերտի Կայսիկների, ինչպես նաև՝ մասամբ Կարնո քաղաքի և Բաղեշի ու Արզնի Զուրարիկների ամիրությունները: Ըստ Կոստանդին Միրանաձեի, նրան ենթակա էին նաև Հերի ու Սալմաստի ամիրությունները²³:

Այսպես Աշոտ Ա-ի օրոք Հայաստանում հաստատված ամիրները (Մանազկերտի Կայսիկները և Պարտավում իշխող Յամանիկը) Արմինիայի ոստիկան նշանակված Մուհամմադ իբն Խալիդի (Աղձնիքում իշխող Շախբանի ցեղից) հետ մի ղավազրություն կազմակերպեցին Հայոց իշխանաց իշխան Աշոտի դեմ: 878-ին հենց որ ոստիկանը մտավ Հայաստան, Աշոտն արդեն բացահայտել էր նրա ղավաճանական նկրտումները և Դվինում հայոց սպարապետ Աբասը հայկական զորքով շրջապատելով նրա վրանը, ստիպեց հեռանալ Հայաստանից²⁴:

²² Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրությունները, էջ 248—250:

²³ Կոստանդին Միրանաձեի, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 10:

²⁴ Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրությունները, էջ 106—109:

Սմբատ Ա-ի օրոք (890—913 թթ.) առավել ևս սրվեց հայոց արքունիքի պայքարը ամիրությունների դեմ: Ատրպատականի ամիր Աֆշինի ղրղումով Դվինի քաղաքապետները՝ Մուհամմադը և Ումայան ապստամբեցին թագավորի դեմ, որը հարձակվեց, գրավեց քաղաքը և ձերբակալեց նրանց²⁵: 893—894 թվականների երկրաշարժից անմիջապես հետո Աֆշինը հարձակվեց Հայաստանի վրա ու գրավեց նախճավանն ու Դվինը: Սակայն Դոդախ ճակատամարտում պարտվեց Սմբատ թագավորից ու նահանջեց²⁶:

Դրանից քիչ անց, 895 թվականին, ոտնձգություններ սկսեց անել Աղձնիքի Շախբանի ցեղից՝ Ահմադ իբն Իսա իբն ալ-Շախրը: Նա վերացրեց Արզնի Զուրարիկ ամիրների իշխանությունը, որոնք սերտ հարաբերություններ ունեին հայ նախարարների հետ: Բանն այն է, որ Մուսա իբն Զուրարան ամուսնացել էր Բագրատ Բագրատունու քրոջ հետ, իսկ նրա որդին Աբու-լ-Մադրան ոչ միայն ամուսնացել էր Արծրունի իշխանուհու հետ, այլև ծածուկ ընդունել էր քրիստոնեությունը: Սմբատ թագավորը մի հսկայական բանակով շարժվեց դեպի Աղձնիք, սակայն Վասպուրականի Գագիկ Ապուրուանի երկդիմի վարմունքի պատճառով, որը իբր առաջնորդում էր նրան Վանա լճի ափերով, հայոց զորքը պարտություն կրեց²⁷: 898-ին Տարնը ազատվեց Շախբանիներից:

Այս բարդ իրադրության մեջ 902 թվականին ապստամբեցին Մանազկերտի կայսիկ ամիրները (Աբու-լ-Վարդի երեք որդիները), սակայն Սմբատ թագավորը ճնշեց նրանց ապստամբությունը²⁸:

Ատրպատականի նոր ամիր Յուսուֆը (901—919 թթ.) ի վիճակի չէինելով բաց ճակատով պայքարել հայոց թագավորության դեմ, օգտագործեց Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունու փառասիրական, կենտրոնախույս նկրտումները և 908 թվականին խալիֆայության անունից նրան ճանաչեց թագավոր, երկփեղկելով հայոց միացյալ պետությունը, և կարողացավ հաղթել Սմբատ Ա-ին:

Ատրպատականի Սաջյան Յուսուֆի աջակցությամբ Գողթն գավառը խլվեց Սյունյաց իշխաններից և տրվեց մի արաբ (հագարացի) ամիրի²⁹, որին Յուսուֆը հանձնեց նաև Երնջակ ամրոցը: Ժամանակի ընթացքում այս ամիրությունը տիրացավ նաև նախճավանին: Դվինը թեպետ մնաց Սաջյանների ձեռքում, այսուհանդերձ հետագայում Աշոտ Բ Բագրատունին ժամանակավորապես գրավեց այն³⁰:

²⁵ Պատմութիւն Յովհաննու, էջ 202:

²⁶ Անդ, էջ 210—215:

²⁷ Անդ, էջ 215—235, Գ. Գրիգորյան, Տարնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը Թ-Ժ դարերում, Երևան, 1983, էջ 124—125:

²⁸ Քովմա, էջ 245:

²⁹ Պատմութիւն Յովհաննու, էջ 384:

³⁰ Անդ, էջ 385:

Մմբատ Ա-ի մահվանից հետո Մանազկերտի Կայսրիկ ամիրները, ըստ Կոնստանդին Միրանաժնի, դարձան Բյուզանդիային ենթակա և այն հարկը, որ տալիս էին հայոց թագավորին, սկսեցին վճարել Բյուզանդիային³¹:

Աշոտ Բ-ի (914—929 թթ.) և Աբասի (929—953 թթ.) օրոք Հայոց թագավորությունը չկարողացավ անհրաժեշտ պայքար կազմակերպել՝ ճնշելու և վերացնելու արաբական ամիրությունները Հայաստանում: Այս պայքարը վերսկսեց Աշոտ Գ Ողորմած թագավորը (953—977 թթ.), որը կոչվում էր Շահանշահ Հայոց և Վրաց³²: Նախքան Անին մայրաքաղաք դարձնելը նա մի վերջին փորձ կատարեց՝ ազատագրելու հայոց հինավուրց մայրաքաղաք Դվինը: 953-ին նա 30 հազար զորքով հարձակվեց Դվինի վրա, սակայն հզոր պարսպներով պաշտպանված քաղաքը չկարողացավ գրավել³³: Համենայն դեպս, 957—966 թվականներին Դվինն ընկավ նրա ազդեցության տակ: Բացի այդ, Աշոտ թագավորը 969 թվականին հաղթելով Համդանյան (ոմն Համտուն) մի զորավարի, կարողացավ իրեն ենթարկել Կայսրիկների տիրույթները և հասնել մինչև Հարբ գավառը³⁴:

Բագրատունի թագավորներից արաբական ամիրություններին վերջին հակահարվածը տվեց Գագիկ Ա-ն (990—1020 թթ.), նվաճելով Դվինն ու Նախճավանը:

Թեկուզ Բագրատունի թագավորները հայկական պետության միասնականությանը խանգարող ամիրությունների դեմ մղած պայքարում քիչ հաջողություններ ունեցան, այսուհանդերձ Բագրատունյաց թագավորության օրոք որոշ շահով կրճատվեցին արաբ ամիրությունների հողերը: Թովմա Արծրունին վկայում է, որ Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին իր շինարարական գործունեության համար շինանյութ հայթայթելու նպատակով հարձակվեց Աղձնիքի կողմերում գտնվող Կոտոմ գյուղի վրա, ուր իշխում էին Զուրարիկների մնացորդները և նրանց բուրբին կոտորելուց հետո հիմնահատակ կործանեց ամրոցը և քարերը փոխադրեց Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու կառուցման համար³⁵: Նա գրավեց նաև Ամյուկ բերդը և կոտորեց այնտեղ ապրող ութմանիկներին³⁶: Ըստ որոշ տվյալների, XI դարի սկզբին Վասպուրականի թագավոր Սենեբերիմ Արծրունու օրոք Նյաթ, Մանազկերտ, Արծկե, Արճեշ և Բերկրի քաղաքները

ենթակա էին Արծրունիներին, քանզի Սենեբերիմի Բյուզանդիային հանձնած քաղաքների ցուցակում դրանք հիշվում են³⁷:

1045-ին վերացավ Բագրատունյաց թագավորությունը, որը խիստ ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար: Կրկին սկսվեց արտագաղթը³⁸ (արդեն զանգվածային), որին սկզբում նպաստում էր Բյուզանդիայի գաղթեցման քաղաքականությունը և ապա հատկապես սելջուկ-թուրքերի բարրարտասկան արշավանքների հետևանքով ստեղծված տրնտեսական ու քաղաքական խիստ անմխիթար վիճակը:

Բագրատունյաց թագավորության անկումը վճռական ու շրջադարձային կետ է հայոց պատմության մեջ: Մինչ այդ, հնագույն դարերից Հայաստանն ունեցել է ամբողջ Մեծ Հայքը կամ նրա մի մասն ընդգրկող պետություններ (Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների թագավորությունները), սակայն XI դարից հետո այլևս չգոյացան «համահայաստանյան» պետություններ:

Հինգերորդ դարում սկսված արտագաղթի և VIII դարի վերջում առաջացած ամիրությունների հաստատման հետևանքով էլ ավելի ուժեղացավ Հայաստանի աննպաստ աշխարհագրական դիրքի բացասական ազդեցությունը, որից միշտ էլ անցյալում տուժել էին հայկական բոլոր թագավորությունները: XI դարից այդ աննպաստ դիրքն արդեն դարձավ մի շատ վճռական բացասական գործոն, որը խանգարում էր ամբողջ Հայկական լեռաշխարհն ընդգրկող հայկական պետության կազմավորմանը: Այս երեք բացասական ազդակները (արտագաղթ, օտար տարրի հաստատում և աշխարհագրական աննպաստ դիրք) հետագայում (XV դարից) ընդհանրապես անհնարին դարձրին հայկական որևէ պետական միավորի կազմավորումը միջին դարերում:

Բագրատունյաց թագավորության անկումից հետո և նրանից առաջ Բյուզանդիան հատուկ քաղաքականությամբ դեպի Փոքր Ասիայի արևելյան կողմերն էր քաշում Հայաստանի նախարարական ուղղակ ուժերը, լցնելու այն դատարկությունը, որը գոյացել էր արաբ-բյուզանդական երկբճարյուրամյա պատերազմների հետևանքով: 968 թվականին Տարոնը խլելով տեղական Բագրատունիների ձեռքից, Բյուզանդիան նրանց փոխարենը տվեց կալվածներ Փոքր Ասիայում: 1021-ին բյուզանդական կայսրությունը Սենեբերիմ Արծրունուց վերցնելով Վասպուրականը, նրան ու նրա մերձավորներից շատերին տեղավորեց Սեբաստիայում: 1045-ին Անին ու հայոց թագավորությունը խլելով Գագիկ Բ թագավորից, կայսրը նրան ու մերձավորներին տեղ տվեց Կեսարիայի մոտ, Պիզու վայրում: Բագրատունյաց թագավորության անկումից հետո Գրիգոր

³¹ Կոստանդին Միրանաժնի, էջ 11—13:

³² Մունաշչիմ Բաշի ԺԱ—ԺԲ դդ. Անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շաղաղայանների մասին, Բանբեր Մատենադարանի, № 6, 1962, էջ 477:

³³ Անդ, էջ 477:

³⁴ Ասողիկ, էջ 179:

³⁵ Թովմա, էջ 297:

³⁶ Անդ, էջ 280—281:

³⁷ Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 100:

³⁸ Ա. Ալպոյանյան, Պատմություն հայ գաղթականության, Գահիրե Բ, 1955, էջ 230—239:

³⁹ Անդ, Ա, էջ 244, Բ, էջ 51:

Մագիստրոս Պահլավունին հանձնելով Բջնի ամրոցը, ստացավ Վերին Միջագետքի կուսակալի պաշտոնը: 1064-ին Կարսի Գագիկ արքան իր թագավորությունը հանձնելով կայսրությանը, մերձավորներով փոխադրվեց Ծամնդավ:

Նման դրություն մեջ տեղի ունեցավ մի իրադարձություն, որն ամբողջովին հեղաշրջեց հայ ժողովրդի պատմությունը: Վրա հասան սելջուկյան ավերիչ արշավանքները (1048, 1054, 1064 թվականներին) և Մանազկերտի ճակատամարտը (1071-ին), որոնք հայոց պատմության մեծագույն դժբախտությունն էին: Պատմության մեջ ոչ մի աղետ այնքան սոսկալի հարված չի հասցրել Հայաստանին ու հայ ժողովրդին, ինչքան սելջուկ թուրքերի ասպատակությունները և հատկապես այդ բարբարոս ցեղերի վերջնական հաստատումը Հայաստանի շրջակա երկրներում՝ Ատրպատականում, Շիրվանում, Աղվանքում և Փոքր Ասիայում:

Այդ ցեղերը դարերի ընթացքում վերջնականապես արմատավորվեցին Հայաստանի արևելքում ու արևմուտքում, և նրանց հետնորդները մինչև վերջ մաշեցին հայ ժողովրդին՝ նրան հասցնելով բնաջնջման եզրին:

Եթե V—XI դարերում Հայաստանից գաղթում էին միայն նախարարներն ու զինված ուժերը, ապա XI դարից սկսած առաջին անգամ հայրենի հողից հեռացավ հասարակ ժողովուրդը՝ շինականը, քաղաքային ռամիկը, արհեստավորն ու վաճառականը: Բազրատունյաց թագավորության անկմանը հաջորդող սելջուկյան ավերիչ արշավանքներն այնպիսի տնտեսական անկում ու անապահովություն առաջացրին, որ զանգվածային գաղթ սկսվեց տարբեր ուղղություններով:

Մեծ Հայքի տարբեր մասերում արդեն XII դարի սկզբին իշխում էին սելջուկ թուրք ամիրներ, զուրս մղելով հայ հողատեր ազնվականությանը, թեև ազգաբնակչությունը զուտ հայկական էր մնում: Արիստակես Լաստիվերտցին նկարագրեց Վրացի հայկական գավառների, բերդերի, ամրոցների ու հողերի բռնազրավումը, նշում է, որ դրա հետևանքով «եկին իշխանքն ի հայրենի ժառանգութենէ իւրեանց և եղեն պանդուխտ յօտար երկիր»⁴⁰: Ապա ավելացնում է «եկեալ ի տանէ, օտարացեալ ի ծանօթից, հեռացեալ յնտանեաց և յաղականաց, գերի և կալանաւոր ամենայն ազգաց»⁴¹: Թուրքմեն (օղուզ) հրոսակները բռնազրավել էին նաև Սյունյաց հայ իշխանների տիրույթները. «Եւ յայնմ ժամանակի էր բարձրացեալ և զօրացեալ տէրութիւնն Տաճկաց և յամենայն աշխարհ ի ներքոյ հարկի

նոցա նուաճեալ կայր. վասն որոյ և յուով գաւառս շորթեալ հանին ի Սիսական աշխարհէս ի ձեռաց բնիկ տէրանցն»⁴²:

Եթե VIII դարի վերջում Հայաստանում հաստատված արաբական ամիրությունները տիրել էին սոսկ մի փոքր մասին և Հայաստանի հողային տիրույթների մեծագույն մասը դեռ գտնվում էր բնիկ հայ նախարարների ձեռքում, որի շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել հայկական անկախ (Բազրատունյաց) պետականությունը, ապա սելջուկ-թուրքական բարբարոսական արշավանքներից հետո այնպիսի մի դատարկություն ստեղծվեց բաղմամբով հայկական նահանգներում, որ Հայաստանի ավատական տիրույթների պատկերը մեծ փոփոխությունների ենթարկվեց՝ ի վնաս հայ հողատեր ազնվականության:

Սելջուկյան մեծ պետությունը հազիվ երկու տասնամյակ իշխեց Հայաստանում՝ Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) մինչև Մելիքշահ առվթանի մահը⁴³ (1092 թ.), որից հետո պետությունը լրիվ քայքայվեց: XII դարում ամբողջ Հայաստանն անկախ վիճակում էր, սակայն միայն նրա կեսում էին իշխում հայկական քաղաքական միավորները: Դարի սկզբին նախկին Բազրատունյաց Հայաստանի գրեթե կեսն արդեն գտնվում էր սելջուկյան և այլ ամիրությունների ձեռքում:

Հայկական միավորներն էին հյուսիսային Հայաստանում՝ Տաշիր-Չորագետի Կյուրիկյան ու Սյունյաց թագավորությունները, Խաչենի իշխանությունը, իսկ հարավում՝ Սասունի Քոռնիկյանների և Վասպուրականի Խեղենեկյան Արծրունիների իշխանությունները: Հայաստանի միջին և արևմտյան մասերն զբաղեցնում էին Խլաթի Շահ Արմենների, Կարսի ու Կարինի ամիրությունները և Դվինի ու Անիի Շաղաղայանները: Ամիրությունների այս զանգվածը լրիվ իրարից անջատում էր հայկական քաղաքական միավորները՝ անկարելի դարձնելով հայկական ամբողջական պետության վերականգնումը Հայկական լեռնաշխարհում: Ընդհանրապես Բազրատունյաց թագավորությունը վերջին «համահայաստանյան» պետությունն էր հայոց պատմության մեջ, որից հետո ընդմիշտ անհնարին դարձավ պետության ստեղծումը սելջուկ թուրքերի և նրանց հետնորդների՝ հայկական հողի վրա և հարևան երկրներում (Փոքր Ասիայում և արևելյան Անդրկովկասում) հաստատված լինելու պատճառով: Կային նաև սելջուկյան այլ ամիրություններ, որոնք հաստատվել էին Մեծ Հայքի ծայրամասերում (Գանձակի և Աղձնիքի ամիրությունները և հատկապես Ատրպատականի Ելտկուզյանների պետությունը): Սրանք մեծ վտանգ էին ներկայացնում հայկական քաղաքական միավորների համար:

Ծանր դրություն մեջ էին հյուսիսային Հայաստանի քաղաքական միավորները XII դարում: Տաշիր-Չորագետի թագավորությանը ամեն

⁴⁰ Ս. Բառնազյան, Հայաստանը և սելջուկները, Երևան, 1980, էջ 228:

⁴¹ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ, աշխ. 4. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 68:

⁴² Պատմութիւնն նահանգին Սիսական, արաբեալ Ստեփանոսի Օրբիվան արքայիսկոպոսի, Տփղիս, 1910, էջ 319:

⁴³ Ս. Բառնազյան, Հայաստանը և սելջուկները, էջ 218:

կողմից նեղում էին ամիրուժյունները: Դեռևս նախորդ դարի 70-ական թվականներին Գանձակի ամիրուժյունը նվաճել էր Կյուրիկյանների որոշ բերդեր: 1105-ին Լոռին ապաստակեց Արզնի և Սղերդի ամիր Ղզըլ Արսլանը, որն այնուհետև տիրեց Դվինին: 1110 թվականին սելջուկ թուրքերը նորից են ապաստակում Լոռին և աստիճանաբար Տաշիր-Չորագետի մեծ մասն անցնում է նրանց ձեռքը, իսկ Կյուրիկյան վերջին տիրակալներ Դավիթն ու Աբասը զրկվելով թագավորությունից, ապաստանում են Մածնաբերդ, Տավուշ, Նոր բերդ ամրոցներում⁴⁴:

Սյունյաց թագավորության և Խաչենի իշխանության համար շափազանց վտանգավոր էր Գանձակի ամիրուժյունը, որը XII դարի առաջին տասնամյակներում մի քանի ավերիչ արշավանքներ կատարեց դեպի Սյունիք ու Խաչեն: Սակայն Սյունյաց թագավորության համար ամենավտանգավոր թշնամին Ատրպատականի Ելտկուդյաններն (Իլդիզիլյաններ) էին, որոնք այդ երկրում իշխում էին 1136 թվականից: Սրանք իրար ետևից նվաճեցին Սյունյաց թագավորության քաղաքներն ու բերդերը: 1151—1152-ին՝ Շյուրուտը, 1157-ին՝ Մեղրին, 1166—1169-ին՝ Գրհամը, Գեղին ու Կաթավաբերդը, իսկ 1170-ին՝ Բաղաբերդը, որով վերացավ Սյունյաց թագավորությունը⁴⁵:

Խաչենում Հաթերքի իշխաններ Վախթանգ Սակաուր, Հասան Ա-ն (1142—1182 թթ.) և Վախթանգը (1182—1214 թթ.), ինչպես նաև ներքին Խաչենի իշխաններ Վախթանգ Մեծը (XII դ. առաջին կես), Հասան Մեծը և Վախթանգ Տանգիլը համառ պայքարով կարողացան պահպանել իրենց անկախությունը⁴⁶:

Հարավային Հայաստանում XI—XII դարերում խիստ բացասական դեր կատարեցին Աղծնիքի Մրվանյանները և Արտուխյանները, բայց հատկապես Խաչի Շահ Արմենները՝ Սասունի Թոռնիկյանների (Տալքի Մամիկոնյանների շառավիղներ) և Վասպուրականի Խեղենեկյան Արծրունիների նկատմամբ: Սասունի իշխան Թոռնիկը, որի օրոք Սասունը հզոր իշխանություն էր, դեռևս 1056 թվականին ջախջախել էր սելջուկ թուրքերի հրոսակներին, որոնք հասել էին Տավրոսի լեռները⁴⁷: Սասունի իշխանությունը Տարոնի Բագրատունիների իշխանության վերացումից (968 թ.) և Բագրատունյաց թագավորության անկումից (1045 թ.) հետո միշտ էլ մնաց անկախ, շենթարկվելով ո՛չ Բյուզանդիային և ո՛չ էլ սելջուկներին:

⁴⁴ Ղ. Մովսիսյան, Լոռիի Կիրիկյան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1923, էջ 58—59, Բ. Մաքեևսյան, Տաշիր-Չորագետ, Երևան, 1932, էջ 105—108:

⁴⁵ Բ. Հառնոյանյան, Սյունիքը Թ—ժԱ դարերում, Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, Երևան, 1976, էջ 477—478:

⁴⁶ Բ. Ուրաբյան, Խաչենի իշխանությունը Թ—ժԶ դարերում, Երևան, 1975, էջ 114—123:

⁴⁷ Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 130—131:

1075-ին Թոռնիկը ջախջախեց Աղծնիքի Մրվանյան ամիրին⁴⁸: 1096-ին, երբ վերացավ Աղծնիքի Մրվանյանների իշխանությունը, Թոռնիկի որդի Չորդվանիլը ստացավ նրա տիրույթներից 30 դյուղ, շրջակա ընկուզենու անտառներով⁴⁹: Սասունի Վիգեն իշխանի օրոք նրա վրա հարձակվեց Խաչի Սուրման ամիրան, որին Վիգենը գերի վերցրեց և ապա արձակեց⁵⁰: Նրա հաջորդ Շահանշահը նույնպես բախվեց Խաչի ամիր Բեկ Թեմուրի հետ և թեպետ սկզբում հաղթեց նրան, բայց հետո պարտվեց (1185 թ.) և ստիպված եղավ 1189-ին գաղթել Կիրիկիա: Այսուհանդերձ Սասունի իշխանությունն իր անկախ վիճակը պահպանեց մինչև XV դարը և ավելի ուշ:

Առավել մեծ վնաս հասցրեցին ամիրուժյունները Վասպուրականի Խեղենեկյան Արծրունիներին: 1921 թվականին Սենեքերիմի գաղթից հետո հայտնի դարձած մեծ իշխան Խեղենեկը և նրա հաջորդները (Թոռնիկ, Թաղեոս) հաջողությամբ ետ մղեցին հարևան ամիրուժյունների ոտընձգությունները: Սակայն XII դարում իշխան Աբղլմեսհի մահվանից (1121 թ.) հետո որդին՝ Ալուզը⁵¹ և ապա Խեղենեկ Բ-ն մեծ զժվարությունների հանդիպեցին, բախվելով թշնամիների հետ: XIII դարում այս իշխանությունն արդեն ամփոփվել էր Աղթամար կղզու շուրջը, ուր մինչև XVI դարը ժառանգաբար իշխում էին արդեն Սեֆեդիյանները, իրենց ձեռքում պահելով նաև Աղթամարի կաթողիկոսական աթոռը (հիմնադրված՝ 1113-ին):

Սակայն թուլացող իշխանությունների փոխարեն հայկական քաղաքական կյանքում բյուրեղացան երկու նոր, կարևոր քաղաքական միավորներ՝ Կիրիկիայի հայկական իշխանապետությունը 1080 թվականին (1198-ից՝ թագավորություն) և XII դարի վերջից՝ Զաքարյան իշխանապետությունը:

Կիրիկիայի հայկական թագավորությունը, ուր ապաստան էին գտել Մեծ Հայքի բազում նախարարական տներ, դարձել էր մի հզոր և զարգացած պետություն (հատկապես Լևոն Բ Մեծագործի օրոք), որը նույնպես շրջապատված էր Իկոնիայի սելջուկյան սուլթանությամբ և Միրիայի ու Եգիպտոսի մահմեդական պետություններով: Իր գրեթե երեքհարյուրամյա (1080—1375 թթ.) գոյության ընթացքում այն հաջողությամբ դիմագրավեց Իկոնիայի սուլթանության ոտնձգությունները, սակայն Եգիպտոսի մամլուքյան սուլթանության դեմ մղված երկարատև գոտեմարտը ի վերջո հանգեցրեց նրա վերացմանը:

Բուն Հայաստանում (Մեծ Հայք) բացառիկ դեր էր վերապահված Զաքարյաններին: Այն պայքարը որ IX—XI դարերում մղում էին Բագ-

⁴⁸ Մատթեոս Ուռնայեցի, էջ 209:

⁴⁹ Tartkh al-Fariqi, Cairo, 1959, p. 284.

⁵⁰ Վարդան, էջ 124:

⁵¹ Թովմա, էջ 314:

րատունի թագավորները արաբական ամիրությունների դեմ, XII—XIII դարերում շարունակեցին Զաքարյանները, մարտնչելով սելջուկյան ամիրությունների դեմ:

Զաքարյանները XI դարում Տաշիր-Չորագետում ավատատեր իշխաններ են եղել Կյուրիկյան (Բագրատունի) թագավորների գերիշխանության տակ⁵²: Զաքարյան Սարգիս Մեծը 1161-ին դարձավ Շաղղաղյաններից ազատագրված Անի մայրաքաղաքի կառավարիչ⁵³, սակայն վերջիններս նորից նվաճեցին Անին: Դարի վերջերին Սարգիս Մեծը դարձավ վրաց Բագրատունիների թագավորության ամիրսպասալար և Լոռին ստացավ որպես տիրույթ⁵⁴:

Սարգիս իշխանի որդիները՝ Զաքարե ամիրսպասալարը և Իվանե աթաբեկը կազմակերպեցին հայկական զինված ուժերը և հայ-վրացական զորքերով մոտավորապես 30 տարի պայքար մղեցին սելջուկյան ամիրությունների դեմ: 1196-ին ազատագրվեց Ամբերդը, 1199-ին՝ Անին, 1201-ին՝ Բջնին, 1203-ին՝ Դվինը, 1206-ին՝ Կարսը: 1205—1206-ին ջախջախելով Խլաթի (Շահ Արմեն) ամիրությունը, պաշարեցին Խլաթը, սակայն պատահական դիպվածի պատճառով չկարողացան այն զրավել: Վերջապես 1211 թվականին հայ-վրացական զորքերն ասպատակեցին Ատրպատականը: Այնուհետև Զաքարե (Զաքարիա) ամիրսպասալարի մահը (1212 թ.) ընդհատեց Հայաստանի ազատագրման համար մղվող պայքարը:

Ազատագրելով ամբողջ Հյուսիսային Հայաստանը, Զաքարյանները վերացրին բոլոր ամիրությունները: Նրանք կազմեցին մի քաղաքականապես ինքնուրույն հայկական իշխանապետություն (պետություն), որը դաշնակցային հարաբերությունների մեջ էր հայ Բագրատունիների մի ճյուղը հանդիսացող վրաց Բագրատունիների հետ: Այս իշխանապետության մեջ էին մտնում Զաքարյանների (երեք ճյուղերով), Հասան Զալայանների, Օրբելյանների, Պոռշյանների, Դոփյանների, Վաչուտյանների տիրույթները և մանր իշխանական տների (Արծրունիների, Մամիկոնյանների, Բագրատունիների, Պահլավունիների, Սյունյաց մնացորդներ) կալվածները: Զաքարյաններն իրենց համարելով Բագրատունի թագավորների ժառանգորդներ, կրում էին Շահանշահ, արքա, թագավոր տիտղոսները: Սակայն Զաքարյան իշխանապետությունը համեմատաբար ավելի փոքր և աննշան քաղաքական միավոր էր, քան Բագրատունյաց թագավորությունը:

Դժբախտաբար ամիրություններն ընդհանրապես վերացնելու պայքարը Զաքարյանների օրոք ևս կիսատ մնաց, և այդ էլ որոշեց հայկական պետականության հետագա տխուր ճակատագիրը:

Մի նոր ազնու էին Հայաստանի համար նաև մոնղոլական արշավանքները: 1236 թվականին նվաճվեց Զաքարյան իշխանապետությունը, իսկ 1242-ին՝ Հարավային Հայաստանը, ուր դեռևս 1207—1208 թվականին սելջուկյան (Սուլթանյան) տոհմի ձեռքից Խլաթի ամիրությունը (Շահ Արմեն) խլել էին Այյուբյան Ադիլի որդի Մելիք Աուհադը և ապա եղբայրը՝ Մելիք Աշրաֆը, որոնք նույնպես կրում էին Շահ Արմեն տիտղոսը:

Նվաճելով Հայաստանը՝ մոնղոլներն այն բաժանեցին զինվորականառաջնորդների ռազմաքոչվորական վերնախավի միջև, որոնք մշակվող տարածություններ վեր էին ածում արոտավայրերի: Նույնիսկ Արարատյան դաշտավայրը, որը գտնվում էր Զաքարյան իշխանապետության մեջ, վերածվեց ձմեռային արոտավայրի, և արգավանդ դաշտերն ամայացան⁵⁵:

Զաքարյան իշխանապետությունն ընկնելով մոնղոլական տիրապետության տակ, դարձավ Գյուրջիստան վիլայեթի մի մասը: Համենայն դեպս գոյություն ունեցող իշխանական տները (Զաքարյաններ, Օրբելյաններ, Հասան Զալայաններ, Պոռշյաններ, Դոփյաններ, Վաչուտյաններ) մնացին մինչև Հուլավյան պետության անկումը (1335), որից հետո աստիճանաբար քայքայվեցին: Դրանից հետո Հայաստանում իշխեցին Չոբանյան ու Զելալիբյան մոնղոլական տոհմերը, որոնց իշխանության օրոք և հատկապես դարի կեսերին սկսվում է քաղաքային բնակչության (արհեստավորներ, վաճառականներ) արտագաղթը Ղրիմ⁵⁶: Քայքայվում են հայ իշխանական տները: Վերջին Զաքարյան Զաղա ամիրսպասալարից (1345—1380) հետո այդ տոհմն այլևս չի ճիշտվում:

XIV դարի երկրորդ կեսում և XV դարում Հայաստանի հարավում իշխում էին քրդական ամիրություններ: XIV դարի երկրորդ կեսում գոյություն ունեին Բաղեշի և Վանի ու Ոստանի ամիրությունները: Վանում ու Ոստանում իշխող Շամրոյան ցեղը, ըստ Թովմա Մեծոփեցու, սերում էր «յազգէն Սենեքերիմեանց», այսինքն՝ Արծրունիներից⁵⁷:

Թուրքմենական Կարա Կոյունլու և Ակ Կոյունլու ցեղերը XV դարում իշխեցին Հայաստանում և հարևան երկրներում (1410—1502): Այս շրջանում Հյուսիսային Հայաստանում որոշ հայկական իշխանություններ

⁵² Վարդան, էջ 187:

⁵³ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, հ. 9, էջ 120:

⁵⁴ Անդ, էջ 136:

⁵⁵ Մանանդյան, հ. 9, էջ 142—147:

⁵⁶ Իրն ալ-Ասիր, Երևան, 1981, էջ 286—287, 325:

⁵⁷ Հ. Մանանդյան, հ. 9, էջ 156—171:

⁵⁸ Իրն ալ-Ասիր, էջ 291—292:

⁵⁹ Հ. Մանանդյան, հ. 9, էջ 283—304:

⁶⁰ Լ. Խաչիկյան, Հայաստանի քաղաքական վիճակը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները ԺԳ—ԺԵ դդ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 9, Երևան, 1972, էջ 18—19:

⁶¹ Անդ, էջ 57—58:

իրենց գոյությունը դեռ պահպանել էին. Հասան Ջալալյանները՝ Խաչենում, Օրբելյանները՝ Սյունիքում, Գոփյանները՝ Մարի կողմերում, իսկ Պոռոջյանները՝ Վայոց Ձորում ու Կոտայքում: Կային նաև փոքր իշխանական տներ Մակվում, Համշենում ու Եղվարդում (Ազիզբեկենք): Սակայն հայ հողատեր ազնվականությունը XIV—XV դարերում իր դիրքերը (քաղաքական ու տնտեսական) զիջեց Հայաստանում հաստատված վաչկատուն ցեղերի հարատև ճնշման տակ:

Հարավային Հայաստանում և Կիլիկիայում իրենց գոյությունը պահպանել էին Աղթամարի Սեֆեդինյանների և Սասունի ու Զեյթունի իշխանությունները: Հիշատակության արժանի է այն, որ 1465-ին Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսը Սեֆեդինյան տոհմից Սմբատին օժել էր թագավոր⁶², հավանաբար Արծրունյաց թագավորությունը վերականգնելու հույսով: Զեյթունի իշխանները մեկուսացել էին իրենց անմատչելի լեռներում և անկախացել⁶³:

Հայ իշխանական տների որոշ ներկայացուցիչներ XV դարի ծանր պայմաններում հարկադրանքի տակ հավատափոխ էին եղել՝ իրենց հողատիրական իրավունքները պահպանելու նպատակով: Դարի երկրորդ կեսում Ա. Կոլունլու Յազուրի օրոք քրիստոնյա հպատակների նկատմամբ հալածանքներ կիրառվեցին, որի հետևանքով ոմանք հավատափոխ եղան, իսկ ովքեր մերժում էին հավատափոխությունը, նրանց ունեցվածքը բռնագրավվում էր պետական գանձարանի (բայտ ալ-մալ) կողմից⁶⁴:

Հայ իշխանական տների ներկայացուցիչների մի այլ մաս էլ եկեղեցականի սրբմ ընդունելով, ժառանգաբար իր տոհմի տիրապետության տակ էր պահում հայրենի տիրույթները: Հայ պետականության բացակայության պայմաններում եկեղեցին իր վրա էր վերցրել հայ ազգի ներքին և նույնիսկ արտաքին գործերի տնօրինման պարտականությունները: 1441 թվականին Կիլիկիայի Սիս մայրաքաղաքից ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը փոխադրվեց Էջմիածին (Վաղարշապատ), որը մի քանի հարյուրամյակ հանդիսացավ հայության քաղաքական, հասարակական և մշակութային կենտրոնը:

XIV—XV դարերում Հայաստանի ավատական տիրույթների մեծ մասը մահմեդական ամիրների ձեռքն անցնելու հետևանքով (թեև Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին) անհնարին դարձավ ոչ միայն ամբողջ Հայաստանն ընդգրկող պետականության

վերականգնումը, այլև ընդհանրապես՝ հայկական հողերի թեկուզ որոշ մասեր պարունակող որևէ քաղաքական միավորի առաջացումը:

XVII—XVIII դարերում, Իրանի և Թուրքիայի տիրապետության պայմաններում հայ հողատեր իշխանների վերջին ներկայացուցիչները Սյունիքում (Զանգեզուր) և Խաչենում (Խամսայի մելիքությունները) Գալիթ բեկի, Եսայի Հասան Ջալալյանի և Ավան Յուզբաշու գլխավորությամբ 1722—1730 թվականներին վերջին հուսահատ, բայց հերոսական ճիգը կատարեցին՝ վերականգնելու երկու պատմական նահանգների ինքնավարությունը և կիսանկախ վիճակը: Թեպետև նաղիր շահի զորքը հայ մելիքական զորքի մասնակցությամբ 1735-ին ջախջախեց ներխուժած օսմանյան զորքերին, և նաղիրը վերահաստատեց հայ մելիքների ժառանգական հողատիրական իրավունքները, այսուհանդերձ դարի երկրորդ կեսին հայկական հողերը հափշտակած սելջուկ թուրքերի ժառանգորդներ (Փանահ և Իբրահիմ) խեղդեցին խամսայի մելիքությունների լայն ինքնավարությունը 1786-ին:

Այսպիսով, V—XIV դարերի ընթացքում հայկական պետականությունն անընդհատ թուլացնող, իսկ XV դարից նրա վերականգնումն անհնարին դարձնող գլխավոր ազդակները հետևյալներն են.

1. Հայկական պետականության բացակայության և տնտեսական անկման ու կեղեքումների կրոնական հալածանքների պայմաններում առաջացած գաղթականությունը, որը զանգվածային դարձավ սելջուկյան աղետալի արշավանքներից հետո:

2. Գարձյալ պետականության բացակայության պայմաններում մահմեդական ամիրությունների հաստատումը Հայաստանի տարբեր գավառներում, որն սկսվեց VIII դարի վերջին, սակայն խիստ լուրջ վտանգ դարձավ XI դարից, երբ հաստատվեցին սելջուկյան վայրագ ամիրությունները:

3. Հայաստանի խիստ աննպաստ աշխարհագրական դիրքը, որի բացասական ազդեցությունն առավել մեծ չափով զգացվեց XI դարից հետո, նախորդ երկու ազդակների առկայության պայմաններում:

Սակայն այս երեքից ամենավտանգավորը մահմեդական ամիրությունների հայկական հողի վրա հաստատվելն էր, որը խիստ բացասաբար անդրադարձավ Հայաստանի ճակատագրի վրա ընդհանրապես:

ТЕР-ГЕВОНДЯН А. Н.

ОТРИЦАТЕЛЬНАЯ РОЛЬ МУСУЛЬМАНСКИХ ЭМИРАТОВ В СУДЬБЕ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Резюме

На территории всей Великой Армении с древнейших времен до конца VIII в. существовали только владения армянских князей

⁶² Ն. Ալիևյան, Գառազնագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 111—113:

⁶³ Զեյթունի պատմագիրք, Պուենոս Այրես 1960, էջ 175—176:

⁶⁴ Զ. Փափազյան, Բեյտ ուլ-մալի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումը ԺՅ դարում, ՊԲԷ, 1953, էջ 193—203:

(феодалов). Однако с конца VIII в. (при Харун ал-Рашиде) арабские племена были переселены в некоторые гавары (округи) Армении.

В результате переселения этих племен в стратегические пункты и вследствие начавшегося, после падения царства Аршакуни (Аршакидов) в 428 г., переселения армянских феодалов и воинов в Византию, Армянское царство Багратуни (862—1045) было сравнительно слабее, чем царство Аршакуни.

Величайшим бедствием на протяжении всей многовековой истории Армении являлись разрушительные нашествия диких сельджукских тюрок (огузов) и особенно их окончательное утверждение в Малой Азии и в восточном Закавказье.

Несмотря на злодеяния тюркских племен, к концу XII века образовалось великое княжество Закаридов (Захаридов), в результате чего были освобождены все области Северной Армении. Образовалось Армянское государство (1080—1375) в Киликии (с 1080 г. княжество, а с 1198 г. царство) которое процветало в XII—XIII вв.

Армянские феодальные княжества существовали до падения государства Хулагуидов, но в XV и во второй половине XVI вв., армянские феодальные княжества занимали меньше половины земель Армении, вследствие чего в середине века стало невозможным восстановить армянскую государственность.

Ռ. Ա. ԱՐԲՈՂԱՄՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՀԱՅԵՐՆ ԱՅՂԱՆՍՏԱՆՈՒԿ

Աֆղանստանի հայկական գաղթօջախներն ունեցել են զարգացման երեք շրջաններ:

Աֆղանահայ գաղութների հնագույն շրջանը վերաբերում է Արշակունյաց ժամանակաշրջանին: Խոսելով այս մասին, ակադ. Հր. Աճառյանը գրում է. «Արշակունյաց շրջանում շատ հայեր տարան և բնակեցվեցին Խուժաստանում, Սազաստանում և մասնավորապես Նիշապուրում և նրա հարևան գյուղերում: Հետագայում այդ հայերի մի մասը շարժվեց դեպի այսօրվա Աֆղանստանի գավառները և բնակություն հաստատեց այնտեղ»¹:

Դեպի Աֆղանստան հայերի բռնի գաղթեցման երկրորդ շրջանը վերաբերում է XIV դարին: Գաղթականները հիմնականում եղել են Հայաստանի արևելյան շրջաններից: Հայ տարագիրները հիմնականում բնակեցվել են Ղանդահար և Քաբուլ քաղաքներում, նրանց շրջակա գյուղերում ու երկրի հյուսիսային շրջաններում²:

Թե ինչքան կարողացան պահպանել իրենց գոյությունը և հետագայում ի՞նչ եղան այս հայերը, կոնկրետ փաստեր չունենք: Ելնելով հայ պատմիչների մոտ պահված այն ոչ ընդարձակ տեղեկություններից, որոնք ընդհանրապես վերաբերում են Կենտրոնական Ասիայի հայ գաղթականներին, կարելի է ենթադրել, որ թեև նրանց մի մասը հայրենի հողից, բառ ու բանից կտրված օտարության մեջ կորցրեց ազգային լեզուն և ձուլվեց, սակայն մյուս մասը կարողացավ բավականին երկար տոկար: Գեոևս վեցերորդ գրում այս շրջաններում կային հայ քրիստոնյաներ, որոնք «կհնազանդեին հայոց կաթողիկոսին»³: Հավանաբար նեստորական քարոզիչներն աշխատել են դավանափոխ անել այս հայերին: Հայտնի է նաև, որ իմանալով այդ մասին, Քրիստափոր կաթողիկոսը (539—545 թթ.) հատուկ շրջաբերականով զգուշացրել է տեղի հայերին՝ հեռու

¹ ՀՄԹՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 63, Հ. Աճառյան, Աֆղանըստան, էջ 1—2:

² Ալ. Երիցյան, Հնից և նորից (նյութեր ազգային պատմության համար), տե՛ս «Արձագանք», Քիֆլիս, 1886, № 86:

³ Ա. Ալպոյանեան, Պատմութիւն հայ գաղթականութեանց (հայերի ցրումը աշխար-

մնալ նեստորական վտանգից: Անհավանական չէ, որ նույն Քրիստոսոսի կաթողիկոսը, որը շրջագայել է Պարսկաստանի և նրա հարևան երկրների հայաշատ վայրերում, այցելած լինի նաև այստեղ դեռևս պահպանված հայերին⁴: Դարձյալ այս շրջաններում «զլեզու իրենանց մոռացած և զգրութիւն նուազեալք եւ կարգ քահանայութեան պահպանելք»⁵, հայկական գաղութ է տեսել Սմբատ Բագրատունին (599—600 թթ.):

Սերեոսը վկայում է, իսկ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին⁶, Ստեփանոս Ասողիկի⁷ և Կիրակոս Գանձակեցին⁸ որպես հավաստի իրողություն կրկնում են, որ ժամանակներ անց, «ի վերոյ թրիստոնէիցն ծագէր լոյս մեծ, հաստատէին ի հաւատս եւ ուսանէին զպրութիւն և լեզու, եւ հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երեց ոմն ի նոցանի, որ անուանեալ կոչէ Աբել»: Ըստ Ասողիկի վկայության այս հայերը «ուսեալ զգրութիւն հայերեն՝ կան մինչև ցայսօր վիճակ սրբոյն Գրիգորի»⁹, այսինքն, ենթարկվում են Հայոց կաթողիկոսին¹⁰:

Խոսելով այս հայերի մասին, Սիմեոն կաթողիկոսն իր «Հիշատակարանում» գրում է. «Որպես իմանամք ի գրոց և լրոց բնիկ աղուանք վարեցեալ են Ղանդաճար ի պղծոյն կենկթեմորայ, որք այժմ անդ կան տաճկական հավատով զորոց բազում վկայեն թե ունեն տակաւին դարարողութիւնս նշանս թրիստոնեական, զի առնեն ի վերայ խմորոյ զխաչ և զայլ այսպիսի ունիլ ասեն»¹¹:

XIX դ. 30—40-ական թվականներին եվրոպական մամուլում տարածվեց մի տեղեկություն, որը գալիս է լրացնելու Սիմեոն կաթողիկոսի՝ Աֆղանստանի հայ գաղթականության մասին հաղորդածը: Այդ տեղեկությունը հետևյալն է. աֆղանական ֆեոդալական վերնախավի մեջ գահի համար մղվող անվերջանալի պատերազմները շարունակվում էին նաև XIX դ. 30—40-ական թվականներին: Հայտնի է աֆղանական ռազմատենչ զրզլայի ցեղի ապստամբությունը էմիր Արզուլ Ռահման խանի դեմ: Ղրզլայիները պաշտպանում էին Ռահմանի հակառակորդ էլուր խանին: Եվրոպական թղթակիցները միաբերան պնդում են, որը 1000 ընտանիքից բաղկացած ռազմատենչ զրզլայիները բուն հայկական ծագում ունեն: Որպես ասվածի հավաստի ապացույց թղթակիցներից մեկը նկարագրում է զրզլայիների ազգագրական-կենցաղային բազմաթիվ սովորություններ:

որոնք կրում են հայ թրիստոնեության կնիքը (հիվանդների և խմորի վրա խաչակնքելու սովորությունը, ուխտատեղիներում և բնակարաններում խաչով նշաններ դնելը և այլն)¹²: Լրագրողների պնդմամբ հենց իրենք՝ զրզլայիներն ընդունում էին, որ իրենց նախնիները հայեր են եղել¹³:

Մեզ է հասել մի ավանդություն, համաձայն որի կենկթեմորի տարած հայ գերիների մի մասն ապրում էր Աֆղանստանի լեռնային շրջաններում և զբաղվում խաշնարածությամբ՝ հիմնական սնունդ ունենալով մսեղենն ու կաթնեղենը: Մի տարի, երբ նրանց հոգևոր հովիվը մեծ պասին արգելում է մսեղեն ու կաթնեղեն ուտել, ժողովուրդը խոռվություն է բարձրացնում, հեռանում թրիստոնեությունից, ընդունում է մուսուլմանական կրոնը, կազմում առանձին ցեղ և կոչվում զրզլայի¹⁴:

Մեզ հասած ավանդախառն այս տեղեկությունները կամ եվրոպական թղթակիցների հաղորդած լուրերը հիմք ընդունել և հաստատել, որ իրոք զրզլայիները անվիճելիորեն նախկին հայ գաղթականների իսլամացած ժառանգներն են, իհարկե դժվար է, բայց մեզ հասած այդ ավանդախառն տեղեկությունները պետք է, որ ճշմարտության հատիկ ունենան: Ինչևէ, XIV—XV դդ. Աֆղանստանի տարածքում հայկական գաղթօջախների գոյության փաստը կասկածից վեր է:

Հաջորդ՝ երրորդ շրջանում հայ գաղթականության հոսքը դեպի Աֆղանստան տեղի է ունեցել XVII դարի երկրորդ կեսին: Բռնագաղթից բացի, որի մասին առանձին կիսովի, այս նոր ժամանակներում հայ գաղթականությունը հաստատվում էր տարանցիկ առևտրի ուղիների վրա գտնվող քաղաքներում, հատկապես՝ Ղանդաճարում, Քարբուլում, Ղաշխայում և այլուր: Արևելքի առևտրական ուղիներին քաջատեղյակ հայ վաճառականները չէին կարող աչքաթող անել Չինաստանից և Հնդկաստանից եկող առևտրի խոշոր «զարկերակներից» մեկը:

Դեռևս Կոստանդ վարժապետ Ջուղայեցին իր նշանավոր «Դավթարում», որի մեջ խոսք է գնում աշխարհի այն քաղաքների ու երկրների մասին, որտեղ XIV—XV դդ. առևտրական նպատակներով հաստատվել էին հայերը, ի թիվս այլոց հիշում է նաև Ղանդաճարն ու Քարբուլը¹⁵:

Երբ Շահ-Արասի բռնագաղթից հետո հիմնվեց Նոր Ջուղան, որն անհամեմատ մոտ էր Աֆղանստանին, դեպի այդ երկիրը տանող և նրա առևտրաշահ քաղաքներին քաջածանոթ հայերն ավելի հաճախ սկսեցին

⁴ Տե՛ս հանազան մասեր), Գահիրե, 1941, հ. 1, էջ 202:

⁵ Մաղափա Օրմանյան, Ազգապատում, հ. 1, էջ 532:

⁶ Սերեոս եպիսկոպոսի պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 82:

⁷ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն, էջ 90—91:

⁸ Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՄՊԲ, 1855, Բ, բ. 1:

⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն, 1858, էջ 28:

¹⁰ Ստեփանոս Ասողիկ, նույն տեղում:

¹¹ Ա. Ալպոյանեան, նշվ. աշխ., հ. 1, էջ 202:

¹² Սիմեոն կաթողիկոս, Գամբո, էջ 46:

¹² «Արձագանք», 1887, № 17, էջ 253:

¹³ ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 63, շ. Անառյան, Աֆղանստան, էջ 1:

¹⁴ Ալ. Երիցյան, Հնից ու նորից (նյութեր ազգային պատմության համար), «Արձագանք», 1881, № 86, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 63 (Աֆղանստան), էջ 1—2: Ո՞վքեր են զրզլայիները», «Հայաստանի կոչնակ», 1929, Ը, էջ 210 և այլն:

¹⁵ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձևագիր 5994, էջ 1ա-բ:

հայանվել նրա քաղաքներում: Ինչպես վկայում են եվրոպական ուղեգիր-ները, Քաբուլը XVII դարում հայերի և հավանաբար ոչ միայն հայերի համար որպես յուրօրինակ մի կենտրոն էր ծառայում, ուր առևտրական քարավաններ էին կազմվում գեպի Չինաստան, Տիրեթ, Նեպալ, Հնդկաստան գնալու համար¹⁶: Իսկ որոշ փաստեր վկայում են, որ Աֆղանստանի հայերը, որպես այդ ուղիներին քաջածանոթ մարդիկ, ուղեկցում էին այդ քարավաններին: Հայերը Քաբուլում «առևտրական տուն» ունեին, որտեղ կանգ էին առնում այս քաղաքն առաջին անգամ այցելող, լեզուներ չիմացող հայերը: Վերջիններս իրենց հայրենակիցներից խորհուրդներ, երբեմն նաև բարոյական ու տնտեսական օգնություն ու աջակցություն էին ստանում¹⁷: Ի դեպ, Քաբուլի հայերը օգնել և աջակցել են նաև եվրոպացի կաթոլիկ քարոզիչներին ու վաճառականներին¹⁸:

Ղանդահարում և Քաբուլում հիշյալ ժամանակ հաստատված և ակնառու զեր խաղացող հայկական գաղթօջախների մասին խոսում են մի շարք այլ փաստեր ևս: Դրանք վկայում են, որ հայ վաճառականների կողքին կային մեծածախ հայ արհեստավորներ, հատկապես զինագործներ: Աֆղանական բանակի կազմում եղել են նաև երկրի շահերին հավատարմորեն ծառայող հայ զինվորականներ¹⁹:

Ընդհանրապես հայերի վիճակն Աֆղանստանում մխիթարական չի եղել: Զուրկ լինելով եկեղեցուց, մայրենի լեզվով ուսանելու հնարավորությունից, նրանք այստեղ էլ արագ ձուլվեցին կամ կաթոլիկություն ընդունելով զավանափոխ եղանակ:

XVIII դ. շատ թե քիչ բարվոք է եղել Քաբուլի հայ գաղթականների վիճակը: Տեղի հայերը կառավարության թույլտվությամբ, իրենց հավաքած միջոցներով Բալահիսար թաղում, Զելալբաղ ամրոցի մոտքի մոտ, 1737 թ. կառուցել են հայկական եկեղեցի: Այստեղ եղած և արարողություն կատարած անգլիացի զինվորական քահանա Զոգեֆ Վոլֆը հետևյալն է գրում. «Այդ եկեղեցին մի փոքրիկ շենք է 36 ոտք երկարությամբ և 15 ոտք լայնությամբ. կողքից լուսամուտ չունի, միայն ներքեվում ունի մի նեղ լուսամուտ: Շենքի ծայրում է սեղանը... սեղանի վրա դրված էին մետաքսյա պատառակների մեջ խնամքով փաթած երեք փառակազմ ավետարաններ»²⁰:

Քանի որ Քաբուլի հայերը հիմնականում գաղթել էին Իրանից, ու-

սի երբեմն Փեշավարից եկած քահանաները տեղի հայերի համար օտար լեզուներից պարսկերեն թարգմանված հոգևոր գրականություն էին կարգում²¹:

Քաբուլի հայոց փոքր եկեղեցին կամ, ինչպես երբեմն այն անվանում են եվրոպացիները, մատուռը, շնայած անապահովությանը, ունեցել է արծաթյա սպասքներ, որոնք օգտագործվել են արարողությունների ժամանակ: «Հաղորդութեան նվիրական անոթները, որ զուտ արծաթեա էին,—վկայում է եկեղեցին այցելած մեկ այլ անգլիացի քահանա,—միշտ հիւսված պահում էին մատուռի պատի մեջ գողերից զերծ պահելու նպատակով»²²:

1722 թ. Սպահանը գրաված և ավերած աֆղան Միր Մահմուդը կողոպտեց նաև Նոր-Ջուղան և իր հետ բռնի տարավ 60 տուն հայ արհեստավոր ընտանիքներ²³: Այս գերիների հետ կային նաև ավելի քան 150 հայ այլ ընտանիքներ: Աֆղանստան բռնագաղթեցված հայերի թիվը հաշվվում էր ավելի քան 600 հոգի²⁴:

Կարճ ժամանակ անց, այս անգամ էլ Նադիր Շահը Նոր Ջուղայից 200 տուն հայ արհեստավորներ (ավելի քան 500 շունչ) բռնի տեղափոխեց և բնակեցրեց երկրի խոշոր քաղաքներում²⁵:

Մի քանի տարի հետո նույն Նադիր Շահը հազարավոր հայերի ու վրացիների բռնի տեղափոխեց Թուրքեստան և Աֆղանստան, ուր նրանք հիմնականում բնակություն հաստատեցին գյուղական շրջաններում: Հայտնի է, որ XVIII դ. 60-ական թվականներին այդ հայերի մի զգալի մասը թեև զեռես կար, բայց, կտրված հայրենիքից, հայոց բառ ու բանից, արդեն կանգնած էր ձուլման եզրին²⁶:

Մուսուլմանական հավատքը դավանող օվկիանոսում հայ քրիստոնյա այս փոքրիկ կղզյակի համար բարդ հարց է եղել գերեզմանատան հարցը: Սկզբում հայերը իրենց ննջեցյալներին թաղել են, ուր պատահել է: Միայն 1754 թ. նրանք էմիրի թողտվությամբ իրավունք ստացան Քաբուլից հեռու մի վայրում ունենալ ազգային գերեզմանատուն: Մի ավանդույթի համաձայն այդ վայրում իբր թաղված է եղել մարտիրոսացված մի հայ, որի գերեզմանը հայերը վեր էին ածել պաշտամունքի տեղի: Այստեղ հանդիպող հնագույն թվականություն ունեցող գերեզմանաքարերը ունեն 1754, 1757, 1760 և 1769 թթ. արձանագրություններ²⁷:

Հետագայում հայկական գերեզմանոցում են թաղվել նաև անգլո-աֆ-

¹⁶ John Rikerton, „Portuguese Jesuite Benedict's Travel from Mongol's Empire to 1602.
¹⁷ The Chronicles of the East India Company Trading to China 1635—1834, London, 1891, vol. II, p. 19—20.
¹⁸ Նույն տեղում, էջ 21:
¹⁹ M. J. Seth, Armenians in India from the earliest times to the present day, Calcutta, 1937, p. 196.
²⁰ Նույն տեղում, էջ 199:

²¹ Նույն տեղում, էջ 199—200:
²² «Արձագանք», 1882, № 12, էջ 256:
²³ ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 63, Աղանյան, էջ 2:
²⁴ M. S. Seth, նշվ. աշխ., էջ 198:
²⁵ Մ. Թաղիադյանց, Պատմություն հին Հնդկաստանի, Կալկաթա, էջ 174:
²⁶ ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 63, էջ 3:
²⁷ M. S. Seth, նշվ. աշխ., էջ 199:

դանական պատերազմում սպանված անգլիական բարձրաստիճան սպաներ, որոնց գերեզմանները կարճ ժամանակ անց դանձ որոնողները ավերել են: Հայերը վախենալով, որ կարող են պղծվել նաև իրենց նախնիների գերեզմանները, մեզ անհայտ ճանապարհով իրենց նշնջեցյալներին հասցնում էին Հնդկաստանի Ագրա քաղաքը և թաղում տեղի հայկական գերեզմանոցում: Նման թաղումներ են կատարվել 1833, 1834, 1848 թվականներին²⁸:

1763 թվականին Ղուկաս կաթողիկոսի անունով ստացվել է Աֆղանստանում եղած թիֆլիսեցի վաճառական խոշա Մկրտումի մի նամակը, որտեղ հեղինակը տազնապով է գրում Քաբուլում, Ղանդահարում և Բուխարայում ձուլման վտանգի առաջ կանգնած հայության մասին: Այս ահազանգից հետո Սիմեոն Երևանցին հանձնարարել է տեղեկություններ հավաքել Քաբուլ տանող ճանապարհների վերաբերյալ և այնտեղ վարդապետ կամ եպիսկոպոս ուղարկել:

1763 թ. փետրվարի 3-ի կոնդակից իմանում ենք, որ Սիմեոն կաթողիկոսը «մխիթարության և հուսադրության թղթով» Աֆղանստան է ուղարկել Անանիա վարդապետին, որի հիմնական առաջադրանքն է եղել այս հեռավոր երկրում հավաքել և համախմբել հայրենիքից հեռացած ու հավաքական կյանքից զրկված հայերին, տեղի հայերի համար քահանաներ ձեռնադրել, հայ մանուկներին մայրենի լեզվով գրագիտություն ուսուցանել, երկու եկեղեցի կառուցել և այլն²⁹:

Թե կոնկրետ ինչ աշխատանք է կատարել Անանիա վարդապետը Աֆղանստանում՝ մեզ հայտնի չէ: Գիտենք միայն, որ Քաբուլից Բուխարա վերադառնալու ճանապարհին էջմիածնի նվիրակը կողոպտվել և սպանվել է:

Տեղեկանալով Անանիա վարդապետի մահվան մասին, Սիմեոն կաթողիկոսը Ղանդահար մեկնող ուժն Մարկոսի հետ, կաթողիկոսական «բաղամազան օրհնութեամբ և մխիթարութեամբ» Քաբուլ և Ղանդահար է ուղարկել Գրիգոր Սանահնեցի վարդապետին: Կաթողիկոսի կոնդակը Աֆղանստանի հայերին հորդորում էր հնազանդվել նոր առաջնորդին և «անշեղ մնալ ի սուրբ հաւատս և կրոնս մեր»: Գր. Սանահնեցին կարգադրություն է ունեցել նաև «ուսուցանիցի դմանուկս, ձեռնադրելցէ զքանոյս և հաստատեսցէ զեկեղեցիս»³⁰:

Մի քանի տարի Ղանդահարում և Քաբուլում հովվելուց հետո՝ լկարողանալով հաղթահարել դժվարությունները, Գրիգոր Սանահնեցին ևս վճռում է վերադառնալ էջմիածին՝ Աֆղանստանի հայերին դարձյալ թող-

նելով անտերունչ վիճակում: Ստույգ տեղեկությունների բացակայությունը պատճառով դժվար է ներկայացնել նրա գործունեությունը Աֆղանստանում, սակայն տեսակետ կա, որ նա հայկական երկու եկեղեցի է կառուցել այստեղ: Գրիգոր Սանահնեցին բռնում է վերադարձի ճանապարհը, սակայն էջմիածին չի հասնում: Ճանապարհին հիվանդանում է և Բուխարայում կնքում իր մահկանացուն³¹:

Թեև այս շրջանում Աֆղանստանում բնակվող հայության թիվը մաթին ոչ մի կոնկրետ տեղեկություն չունենք, սակայն դատելով կաթողիկոսի կողմից այնտեղ ուղարկված վարդապետներին, երկու եկեղեցիներ կառուցելու և հոգևորականներ ձեռնադրելու հանձնարարականներից պետք է ենթադրել, որ հայերի թիվը բավականին մեծ պետք է եղած լիներ: Հայտնի են էջմիածնի գահակալների մի քանի նամակները և կոնդակները, որոնք Աֆղանստանի հայերին հորդորել են տոկալ և հավատարիմ մնալ ազգային սովորություններին ու կրոնին³²: Սա էջմիածնի կողմից Աֆղանստանի հայկական համայնքները հայրենիքի հետ կապելու թերևս վերջին չհաջողված փորձն էր: Հետագայում նրանցով փորձել են հետաքրքրվել նաև հայ կաթողիկոսները. Քաբուլ են ուղարկել Պետրոս և հետաքրքրվել նաև հայ կաթողիկոսները. Քաբուլի ճանապարհին³³, վարդապետ Ախալցխեցուն, որը վախճանվել է Քաբուլի ճանապարհին³³:

Իրար հաջորդող աննպաստ քաղաքական դեպքերը, խռովությունները և միջֆեոդալական կռիվները փակեցին Իրանի վրայով Աֆղանստան տանող ճանապարհները, դրանով իսկ կտրվեց աֆղանահայերի հետ պահպանվող վերջին թույլ կապը: Որոշ ժամանակ թվում է, նրանց գոյությունն անգամ մոռացվեց: Միայն տարիներ անց, երբ Միջին Ասիան դարձավ Աֆղանստան տանող միակ հուսալի ճանապարհը, հայերը նորից սկսեցին երևալ Աֆղանստանի շուկաներում: Գարձյալ նրանք էին, որ նամակներով կամ անձամբ սկսեցին տեղեկություններ հաղորդել գրեթե մոռացության տրված հայկական այս գաղթօջախի մասին: Ստացված առաջին տեղեկությունները ավելի քան անմխիթար էին: Ինչպես Քաբուլում ապրող (150 տուն), այնպես էլ մյուս քաղաքներում և գյուղերում անապահով կյանքով գոյատևող հայությունը կանգնած էր ձուլման վտանգի առաջ: Հայրենիքի հետ ունեցած կապի բացակայության պայմաններում նրանք մոսուլմանություն ընդունելուց բացի այլ ճանապարհ չունեին: Հիշենք, որ քնած չէին նաև կաթողիկոսները, որոնք օգտվելով հայ հոգևորականների բացակայությունից, «հայ հոգիներ էին որսում»³⁴, Շատ հայեր նման պայմաններում կաթողիկոսությունը գերադասում էին մահամեղականությունից, դրանով հեռանալով ազգային ակունքներից:

²⁸ Գ. Եպ. Փայլալյան, Հայերն Ագրայում, Բեյրութ, 1963, էջ 46—48:

²⁹ Գ. Բան. Աղանյանց, Գիւան հայոց պատմութեան, թիֆլիս, 1919, հ. Գ., էջ 553—554:

³⁰ Նույն տեղում, էջ 533:

³¹ Գ. Ք. Աղանյան, Գիւան հայոց պատմութեան, հ. Բ., էջ 57:

³² Գ. Ք. Աղանյան, Գիւան հայոց պատմութեան, հ. Գ., էջ 598:

³³ Ն. Մ. Վ. Սպիլյան, Բարձրիյան Տէր-Յովհաննեսի որդի աղա Միքայելի գերդաստանի մասին (պատմական փշրանքներ)—«Ավետիք», է տարի, Բեյրութ, 1938, էջ 17—18:

³⁴ «Ավետիք», է տարի, Բեյրութ 1938, էջ 229:

XVIII դ. վերջին Աֆղանստանի հայ գաղթօջախի ծանր կացությունը հայտնի դարձավ Հովսեփ արքեպ. Արղուսթյանին: Օգտվելով Բուխարայում վախճանված մեծահարուստ հայ վաճառական Բեժանյանի կտակից, Հովսեփ Արղուսթյանը օգնության ձեռք մեկնեց Միջին Ասիայի և Աֆղանստանի հայերին³⁵: Նա ջանք ու եռանդ չէր խնայում Քարուլի հայկական գաղթօջախի հետ կապերը վերականգնելու համար: Էջմիածին ուղարկած նամակներում խնդրում է կաթողիկոսին մտահոգվել Աֆղանստանի հայերի վիճակով և միջոցներ ձեռնարկել՝ փրկելու նրանց ձուլումից: Չսպասելով էջմիածնի միջոցառումներին, Արղուսթյանն անձամբ անմիջական փոխհարաբերությունների մեջ է մտնում Բուխարաբնակ խոջա Սաֆարի հետ, որը կապող օղակ էր Աֆղանստանի հայերի և ուսաստանյոց հոգևոր առաջնորդի միջև:

Աֆղանստանի հայերի վերաբերյալ Հովսեփ Արղուսթյանի ստացած լուրերը շատ էին անմխիթար: Նրանք նամակներում հայտնում էին իրենց անտերունչ, անապահով, հալածական կյանքի մասին, խնդրում էին հոգևոր հովիվներ և ուսուցիչներ ուղարկել³⁶: Արղուսթյանը նամակներն իր հերթին ուղարկում է էջմիածին: Էջմիածինը փորձում է բավարարել աֆղանահայերի խնդրանքը, բայց ապարդյուն: Երկրի հեռավորությունը, ճանապարհների անապահովությունը և կյանքի դժվարությունները անհնար էին դարձնում էջմիածնի պլանների իրականացումը:

Ձեռներեց Զ. Արղուսթյանը շատով նոր նամակ է ուղարկում էջմիածին, որով հայտնում է, որ կատարել է կաթողիկոսի կարգադրությունը և երկու քահանա է ուղարկել Քարուլ³⁷: 1788 թ. հունիսի 21-ին Հակոբ վարդապետին ուղղված մի նամակում Արղուսթյանը տեղեկացնում է, որ ինքը Աֆղանստան ուղարկված հոգևորականներին հանձնարարել է նաև մայրենի լեզու, գիր ու գրականություն սովորեցնել հայ մանուկներին³⁸:

Զ. Արղուսթյանը պահանջել է նրանցից մանրամասն տեղեկություններ հաղորդել «լամենայն որպիսութիւն նոցա», նշելով «թէ որպէս են, ինչ արհեստ ունեն, զի՞նչ են անունք երեւոցն, որդիք նոցա կարգացող են, թե չէ, Դովլաթու շահն ողորմութիւն ունէ զոցա վերայ չէ...»³⁹:

Դժբախտաբար, հայտնի չէ, թե Արղուսթյանի ուղարկած պատվիրակները ի՞նչ աշխատանք են կատարել Աֆղանստանում: Զ. Արղուսթյանին ուղղված նրանց պատասխան նամակները և գրությունները մեզ չեն հասել՝ զրկելով միակ հնարավոր առիթից կոնկրետ տեղեկություններ ունե-

նալ Աֆղանստանի XVIII դ. 70—80-ական թվականների պատմության մասին:

Հայտնի է, որ 1775—1780 թթ. Սուրաթից և Դելիից բավականին մեծ թվով հայ զինագործ, հատկապես հրազեն պատրաստող հայ արհեստավորներ են բերվել Քարուլ՝ աֆղանական բանակի համար զենքի արտադրությունը կազմակերպելու նպատակով: Թեև նրանք սկզբում ունեցել են բավականին մեծ արտոնություններ և իրավունքներ, ապրել են հարուստ կյանքով, բայց կարճ ժամանակ անց նրանց վիճակն էլ նմանվել է իրենց հայրենակիցների վիճակին⁴⁰:

XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին Քարուլի հայկական գաղթօջախը նվազել, հասել է 30—40 տան: Ղանդահարի հայության թիվը ավելի քիչ էր, իսկ մնացած վայրերի հայությունը գրեթե լրիվ ձուլվել էր, բացի առանձին անհատներից:

XIX դարի հատկապես 30—40-ական թվականներին Աֆղանստանի հայկական համայնքների, ավելի շուտ՝ նրանց մնացորդների մասին տեղեկությունները համեմատաբար շատանում են: Դրանք հիմնականում հաղորդում են անգլո-աֆղանական պատերազմի ժամանակ Քարուլ մտած անգլիական բանակի սպաները և նրանց ուղեկցող զինվորական հոգևորականները:

XIX դ. 40—70-ական թվականների հայ գաղթականության մասին հետաքրքիր որոշ տեղեկություններ են հաղորդվում կաթողիկ (հատկապես Փեշեվարի) միսիոներների մի քանի զեկուցագրերում: Այդ փաստերի ղզալի մասը քաղվածաբար իր երկու գրքերում բերել է Մեսրոպ Սեթը: Այդ փաստերի մի մասը հրատարակել են նաև Կ. Պոլսի, Անգրկովկասի հայկական թերթերն ու պարբերականները:

1842 թ. քարոզիչ Զոն Ն. Ալլենի և կապիտան Բալվելի Քարուլից ուղարկած «Հայ քրիստոնեա համայնքի մասին» զեկուցագրից երևում է, որ հայերը շարունակում են կղզիացած կյանք վարել Քարուլի Բալահիսար ամրոցին կից մի նեղ փողոցում: Նրանց հիմնական զբաղմունքը Շիրազի գինի պատրաստելն էր: Հայերի կյանքը շարունակում էր մնալ անապահով: «Նրանք (հայերը—Ռ. Ա.) ասում էին,—գրում է Ալլենը,— որ բազմապիսի հալածանքներ են կրում աֆղաններից և հաճախակի ենթարկվում ծանր հարստահարությունների և բռնությունների»⁴¹:

Աֆղանստանի հայության մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել անգլիացի զինվորական քահանա Զոդեֆ Վոլֆը, որը եղել է Քարուլի հայերի մոտ, հոգացել նրանց հոգևոր պետքերը և այդ մասին բավականին մանրամասն զեկուցագիր ուղարկել Լոնդոն, որը պահվում

³⁵ «Արձագանք», Թիֆլիս, 1898, № 86:

³⁶ Գ. Բ. Աղանյան, Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ, էջ 73:

³⁷ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 133 ա:

³⁸ Նույն տեղում, էջ 135 բ:

³⁹ Գ. Բ. Աղանյան, Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ, էջ 73:

⁴⁰ Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Կ. ք., էջ 250:

⁴¹ M. J. Seth, Armenians in India..., p. 209.

է Բրիտանական Թանգարանի արխիվում: Այս զեկուցագրերի մի մասը հրատարակվել է տեղական մամուլում: Գրանցից մեկում կարդում ենք. «Այս փոքրիկ հայկական համայնքը շատ տարիների ընթացքում Քարուլի կառավարողների թուլությունները պաշտպամունքը կատարում էր իր սեփական փոքրիկ եկեղեցում: Հայերը մեծապես վնասվում էին այս երկրում հաճախակի տեղի ունեցող քաղաքական փոփոխություններից, անօրինականություններից ու արյունահեղություններից: Հենց միայն անցյալ տարի հայերից շատերը էմիրի կողմից բանտերն էին նետվել և միայն փեշեվարի միսիայի միջնորդության շնորհիվ է, որ նրանք բանտից ազատվեցին»⁴²: «Այս հայերը հարուստ են, թե ոչ չգիտեմ,— գրել է Ժ. Վոլֆը,— միայն նրանց ապրած թաղը աղքատիկ և խեղճ տեսք ունեն: Բայց ինձ ողջունելու եկած այրերը և կանայք լավ էին հագնված: Եթե հարստություն ունենային էլ, որքան ինձ թվաց, հայտնելը մեծ անխոհեմություն կլիներ»⁴³:

Փեշեվարի անգլիական կաթոլիկ միսիայի նման «հետաքրքրությունը» հայերի նկատմամբ, իհարկե, պատահական չէր: Սկսած 1832 թ. Փեշեվարի միսիոներները աչքաթող չէին անում Քարուլի հայ համայնքը: Նրանք գրեթե ամբողջությամբ հայերին առել էին իրենց ձեռքը: Անգամ Փեշեվարի միսիոներական դպրոցում տեղ էին տալիս ոչ միայն հայ պատանիներին, այլ նույնիսկ աղջիկներին: Այս «հոգատարություն» միակ նպատակը հայերի կաթոլիկացումն էր:

Քարուլի հայերի այս անմխիթար վիճակին ժամանակին անդրադարձել է նաև Մ. Թաղիադյանը: Նա զայրույթով է դատապարտում հայ հոգևորականությանը, «օտարոտի և տգետ եպիսկոպոսներին» և Ն. Զուղայի աթոռակալներին. «Չնայած նրան,— նշում է Մ. Թաղիադյանը,— որ հայ երեխաները մնում են անկնունք, հանգուցյալները անհաղորդ և այլն, կղզիացած վիճակում էլ այդ մի բուռ հայերը պահում են իրենց մայրենի լեզուն և հավատը»: Այնուհետև Մ. Թաղիադյանը կշտամբանքով գրում է, որ հայերը իրենց հոգևոր պետքերը հոգալու համար ստիպված դիմում են անգլիական և օտար քրիստոնյա հոգևորականներին, որը ոչ մի լավ բան հայերի համար չի խոստանում»⁴⁴:

Մ. Թաղիադյանը մեկ այլ անգամ անդրադառնալով հնդկական մամուլում հրատարակված մի հոդվածի, որտեղ պատմվում է Քարուլում, էմիրի որդիներից մեկի կողմից այնտեղ ապրող մի հայ աղջկա հետ բռնի ամուսնանալու փորձի մասին, նորից է խոսում «մերձ երեսուն տունք հայոց մասին, որոնք անբահանալ, անպաշտոն և անպատարագեալ կացեալ զամս բազումս եւ ի հայրենի հաւատոյ ոչ բնաւ խախտեալը»⁴⁵: Նո-

⁴² Նույն տեղում:
⁴³ Նույն տեղում, էջ 210:
⁴⁴ Մ. Թաղիադյան, Պատմութիւն հին Հնդկաստանի, Կալկաթա, 1848, էջ 204:
⁴⁵ «Ազգասեր», Կալկաթա, 1847, հ. 9., թիվ 108, էջ 184:

րից անդրադառնալով «Մերձ քսանաւոր մեծ ու փոքր երեխայք անգլիական քահանայի կողմից մկրտելու» փաստին՝ քննադատում է հայ հոգևորականությունը Քարուլի հայկական համայնքի նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար. «Աշալուրջ Առաջնորդին հոգուց անկ և արժան էր, օր աւուր հոգ տանել ցրուեալոյ հօտին իւրոյ, եւ ի հաւատն հայրենեաց հաւտոտել զնոսա: Բայց ցարդ եւս անխնամ մնացեալ է՝ որ ցրուեցան, եւ է որ ուրացեալ խառնեցան յայլազգիս...»⁴⁶:

1851 թ. Մ. Թաղիադյանը իր «Ազգասեր Արարատյանում» հրատարակելով հնդկահայությանն ուղղված կաթոլիկոսի կոնդակներից մեկը, նրան կցել է տեղանունների ճշտումները՝ ավելացնելով, որ կաթոլիկոսը Ազրայի, Սինգապուրի, Զապարայի, Զավայի, Ռանգունի, Բաթավիայի, Մուրաբայայի, Գվալիորի և մյուսների կողքին պետք է որ հիշեր նաև մոռացության տված Քարուլի երեսուն տուն հայերին և նրանց ևս կոնդակ ուղարկեր»⁴⁷:

Քարուլի հայերին անդրադարձել է նաև Բաֆֆին՝ «Հայերը Քարուլի մեջ» հոդվածում⁴⁸: Բաֆֆին իր հոդվածի առանցքը դարձրել է անգլիական միսիոներների հաղորդած փաստերը: Սակայն հոդվածի արժանիքը ոչ թե փաստերի կրկնության մեջ է, այլ այն բանում, որ հոդվածում նա քննադատել է էջմիածնի հոգևորականության անտարբերությունը և անհոգ վերաբերմունքը հեռավոր հայ գաղթավայրերում ապրող հայության նկատմամբ:

«Մեկ ու կես դար առաջ,— գրում է Բաֆֆին,— նադիր Շահը հայերից 200 ընտանիք տարել է Ավղանստանի մայրաքաղաքի մեջ, այդ մեկ և կես դարի ընթացքում մեր եկեղեցականները նրանց մասին ոչինչ տեղեկություն չեն ունեցել, նրանք մոռացված են եղել որպես ազգի ընդհանրությունից, նույնպես և ժողովրդի ճովիվներից: Բայց հավատարիմ իր հայրենի կրոնին, հայը շինել է իր համար եկեղեցի և պատերազմելով բոլոր հալածանքների դեմ, սկսել է պաշտել իր կրոնը: Անցել են հարյուրավոր տարիներ, տարանջատյալ ժողովրդի հետ եղած քահանաները վախճանվել են և մնացել է զուրկ բոլոր հոգևոր մխիթարություններից»⁴⁹:

Քարուլի հայերի օրինակով քննադատելով էջմիածնին, Բաֆֆին առաջ է քաշում հայերի ազգային միավորման խնդիրը, պահանջելով, որ «կրոնական համոզմունքները պետք է խոնարհվեն այդ գաղափարի առջև...»: «Ամեն մի ազգի միություն գործը անհնար կլիներ,— եզրակացրել է Բաֆֆին,— եթե նույն ազգի գոյությունը պայմանավորվում է միայն

⁴⁵ Նույն տեղում:
⁴⁷ «Ազգասեր Արարատեան», Կալկաթա, 1851, հ. 9, թիւ 72, էջ 561:
⁴⁸ Բաֆֆի, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1959, հ. X, էջ 24:
⁴⁹ Բաֆֆի, հ. X, էջ 25:

եկեղեցու մեջ, և եթե այդ եկեղեցուց դուրս գտնված ցեղակիցները համարվում են ազգային մարմնի ամբողջությունից կտրված անդամներ⁵⁰;

Աֆղանստանի հայերի մասին Քարուլից Լոնդոն ուղարկած զեկուցագրերից մեկը թարգմանաբար հրատարակել է «Արձագանքը»՝ տալով հետևյալ մեկնարանությունը. «...կարգալով յիշեալ տեղեկագիրը, հայ մարդու սիրտը լցվում է կարեկցութեամբ և սիրով դեպի այդ մի բուն հայ գաղթականությունը, որը դարեր ի վեր մայրենի հողից բաժանուած, դարեր է ի վեր հայի երես շտեսած, հայ բահանայի զուրկ, հայ ծիսականութիւն շլսած, այնուամենայնիւ, բուն և անշեջ սիրով կապուած է մնացել հայութեան յիշատակի հետ: Որ հայը չի յուզվի, լսելով այս կորած հայ ճասարակութիւնը, ի նշան իր մեծագոյն սիրոյն դեպի հայ եկեղեցին ամեն տարի ծնունդի և Զատիկի օրերը՝ ճաշակում է Հայաստանեաց եկեղեցու նշխարները, մասնատրապէս բերել տալով իր համար հեռուոր Պարսկաստանի և Հնդկաստանի հայաբնակ քաղաքներից»⁵¹:

Թարգմանիչ հրապարակախոսը այս ամենից հետո իրավամբ հարց է տալիս. «Բողոքական միսիոներները սքանչանում են նոցա վրա... սքանչանում են և կարեկցում նոցա վիճակին, ենթարկելով իրենց անձը վտանգի, որպէսզի գնան նոցա հոգևորապէս մխիթարելու: Իսկ ուր է մեր հոգևորականութիւնը...»⁵²:

1888 թ. նշանավոր դրամատուրգ Զոն Ռոջերսը «Բենգալյան թագավորական ընկերության ամսագրում» հրատարակեց ընդարձակ մի հոդված՝ նվիրված աֆղանական դրամների ինչ-որ հավաքածուի: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Շահ Շուշայի՝ 1839 թ. գահին վերականգնվելու առիթով կտրած դրամներից մի քանիսի վրա հանդիպող հետևյալ բեյթին. «Ազգութեամբ հայ Շահ Շուշան, լորդ Բորնասախի⁵³ աչքի լույսը, ընկերության ոտքի մոխիրը, իր կնիքը դրեց ոսկու և արծաթի վրա (այսինքն ոսկեա և արծաթեա դրամներ կտրեց)»⁵⁴: Ընթացողում է, որ այս հորելյանական դրամը կտրվել է Քարուլում: Տեսակետ կա, թե նման արձանագրութեամբ դրամներ անհնար է, որ կտրված լինեն մայրաքաղաքում, այն էլ Շահ Շուշայի հրամանով, հետևաբար այդ դրամները կեղծ են:

Ճիշտ է Մ. Սեթը: Ո՞վ և ինչո՞ւ պետք է ոսկուց և արծաթից կեղծ դրամներ հատեր և Աֆղանստանի շահին «հայազգի» կամ «ազգութեամբ

հայ» անվաներ⁵⁵: Այստեղ կարող է տեղի ունեցած լինել հետևյալը. չի բացավում, որ հայուհի եղած լինի Շուշայի մայրը (ինչպես անառարկելի հայուհիներ էին նրա հաջորդներ էմիր Ազիմ խանի և Սարգսրիշան խանի մայրերը) և օգտվելով առիթից իրեն հայ (քրիստոնյա) ներկայացնի, դրանով մեկ անգամ ևս ցույց տալու համար իր հավատարմությունը գահը վերադարձնող քրիստոնյաներին:

Տեղեկություն վերցնելով մեզ անհայտ աղբյուրից, Ա. Ալպոյաճյանը գրում է. «Կհավաստուի, թէ 1839-ին Աֆղանստանի Շահ Շուշա էմիրին մայրը հայ էր»⁵⁶:

Զնայած հալածանքներին, կողոպուտներին և անապահով կյանքին, այնուամենայնիվ, առանձին հայերի Աֆղանստանի կառավարության մեջ նույնպես բավականին բարձր պաշտոններ էին վստահվում: Անգլո-աֆղանական պատերազմների ժամանակ Աֆղանստանում եղած անգլիական բարձրաստիճան զինվորականները հատկապես նշում են իրենց դեմ կռվող աֆղանական բանակի բարձրաստիճան հայ սպաների, շեշտելով, որ «Աքբար խանը մեծապես երախտագետ էր դեպի հավատարիմ այդ հայ սպաները»⁵⁷:

Քարուլում մեծ ճանաչում է ունեցել Վարդան անունով մի բժիշկ: Կային այլ բժիշկներ ևս, որոնց մասին, դժբախտաբար, նրանց հայ լինելուց բացի ոչինչ չգիտենք: Պալատում դիվանագիտական ծառայության մեջ գտնվող Սարգիս խանից բացի, որին հիշում են նաև անգլիացիները, կային նաև օտար լեզուների տիրապետող այլ հայ թարգմանիչներ: Առանց անունը տալու եվրոպացիները խոսում են նաև էմիրի ընտանիքի անգլերենի ուսուցիչ հայ մարդու մասին⁵⁸: Սակայն այս առանձին հայանհատները չէին, որ ներկայացնում էին գաղթօջախի դեմքը, այլ աշխատավոր ժողովուրդը, որի մասին քիչ բան էր հայտնի:

1876 թվականին էմիրի հատուկ հրամանով հայերը իրանցիների հետ միասին, որոնք մինչև այդ ազատ էին ամեն տեսակ հարկերից և զինվորական ծառայություններից, հարկադրվեցին և ենթակա դարձան զինվորական ծառայության:

1890-ական թվականների սկզբին քիչ թվով հայեր էին մնացել Աֆղանստանում: Արհեստավոր և գործիմաց հայերի թիվը երկրում ավելացնելու նպատակով Աֆղանստանի էմիր Արդուլ Ռահման խանը հատուկ ֆարմանով դիմեց Կալկաթայի հայերին և տաս-տասնեկու տուն հայերի հրավիրեց Աֆղանստան՝ մշտապես բնակություն: Այս ֆարմանը հասել է մեզ և բավականին հետաքրքրություն է ներկայացնում, ուստի

⁵⁵ M. S. Seth, նշվ. աշխ., էջ 213:

⁵⁶ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականութեան, Կ. Գ., Գահիրե, 1961, էջ 286—287:

⁵⁷ M. S. Seth, նշվ. աշխ., էջ 214:

⁵⁸ Ա. Ալպոյաճյան, Շար հայ կենսագրութեանց, Կ. Գ., էջ 64:

⁵⁰ Նույն տեղում, էջ 27:

⁵¹ «Արձագանք», 1878, № 17:

⁵² Նույն տեղում, էջ 253—254:

⁵³ Այստեղ խոսքը նշանավոր իրանագետ, հնդկագետ լորդ Ալիքսանդր Բորժենի մասին է, որ Շահ Շուշային գահ վերադարձնելու գործում վճռական դեր է խաղացել: Ա. Բորժեն 1839 թ. նշանակվել էր որդես Արևելա-հնդկական ընկերության քաղաքական ներկայացուցիչ Քարուլում: 1841 թ. սպանվեց աֆղանների կողմից:

⁵⁴ M. J. Seth, նշվ. աշխ., էջ 213:

նպատակահարմար ենք գտնում այն որոշ կրճատումներով ծանոթացնելը ընթերցողներին:

«Շատ բարեններից և երախտիքներից հետո, թող հայտնի լինի Կալկաթայի հայոց հասարակությանը, որ նազիր շահի գահակալության տարիներին (թող աստված նրան հանգիստ շնորհի) ոչ մեծ թվով ընտանիքներ, որոնց մեջ հաշվվում էին մոտ հինգ հարյուր հայազգի ընտանիքներ, եկան այս երկիրը և իրենց կյանքը ապրեցին բարեկեցության մեջ: Նրանց թիվը այսօր կրճատվել է...: Չնայած այն բանին, որ ինչպես մեր նախորդներին, այնպես էլ այժմ՝ մեր գահակալության տարիներին, նրանք չեն զգացել և այժմ էլ չեն զգում որևէ անհանգստություն և վնաս: Ընդհակառակը, նրանք բոլորը՝ մեծ ու փոքր զբաղեցրել և զբաղեցնում են նշանակալից պաշտոններ և աֆղանական կառավարությունից ստանում են աշխատավարձ, այնպես, որ նրանք դեղեցիկ բարեհաջողությունների են հասել կյանքում, չնայած այս բոլորին նրանք իրենց զժբախտ են զգում սեփական ազգի մենակության պատճառով»⁵⁹:

Այս նախաբանից հետո էմիրն անցել է իր ֆարմանի բուն նպատակին. «Յանկալի է, որ դուք՝ ելնելով ձեր ազգային և կրոնական զգացմունքներից և համակրանքից, տաս-տասներկու կրթված հայ ընտանիքներ տեղափոխեք Աֆղանստան տերության սահմանները և այսպիսով մխիթարենք տեղի իրենց հայրենակիցներին՝ իրենց մենակության մեջ և հենց իրենք էլ իրենց կյանքն անցկացնեն բարեկեցության մեջ»:

Աֆղանստանի էմիրը իր այս նամակում հայերին խոստացել է, որ Հնդկաստանից Աֆղանստան տեղափոխվել ցանկացող հայերին՝ մինչև տեղ հասնելը բոլոր պահակակետերում կապահովեն սննդամթերքով և գիշերելու տեղով: Տեղ հասնելիս նրանցից յուրաքանչյուրը կաշխատի իր մասնագիտությամբ: էմիրը հավատացնում էր, որ հայերն իր երկրում կապրեն «ապահով և խաղաղ կյանքով»⁵⁹:

Աբդու Ռահման խանը իր հրավերն ավելի հեղինակավոր դարձնելու նպատակով հայերին հղած իր ֆարմանը ուղարկել է Փնշեվարի վառող արտագրող գործարանների ղեկավար, վառողապետ Մերվուրդան խանի (ազգությամբ հայ Ղուկաս Հովսեփյանի) միջոցով, որը հայերին Աֆղանստան տեղափոխելու համար էմիրի կողմից ստացել է 10000 ռուպիի դրամ⁶⁰:

1896 թ. մայիսի 25-ին Կալկաթայի հայերը տեղի եկեղեցու վերակացու Խաչիկ Շիրխորի միջոցով էմիրին են ուղարկել իրենց պատասխան նամակը: Վերջինս, որն իր բովանդակությամբ ամենաճարպիկ և խորամանկ դիվանագետի նախանձը կարող է շարժել, հասել է մեզ:

⁵⁹ Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1967, էջ 253:

⁶⁰ Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 255:

Մի ամբողջ էջ բարեմաղթություններ հղելուց հետո հայերը գրում են, որ իրենք խորապես զգում են Քարուլում մեկուսացված հայրենակիցների բարոյական ծանր վիճակը և անկեղծորեն ցավում են դրա համար: Նրանց վիճակը թեթևացնելու համար կաշխատեն ամեն ինչ անել, որ նոր հայ ընտանիքներ գնան Քարուլ և ընդունեն էմիրի բարեխնամ հովանավորությունը: «Մենք խորապես համոզված ենք,—գրել են հայերը,—որ ոչ միայն Կալկաթայում, այլ նաև Հայաստանում, Իրանում և Թուրքիայում ապրող և «համառորեն աշխատող և հավատարմորեն ծառայող շատ հայեր, անշուշտ, կհավաքվին Ձերդ Բարձրության գահի շուրջը, որին թող աստված անփորձ պահի: Բայց մենք շատ ենք ցավում, որ հենց հիմա, որևէ հայ ընտանիք հաղիվ թե ցանկություն հայտնի անմիջապես հեռանալ իր բնակավայրից, քանի որ նրանք բարեհաջող գործում են զանազան ասպարեզներում և գրեթե բոլորը իրար հետ կապված են բարեկամական և ազգակցական կապերով, որը հաղիվ թե ցանկանան խզել...»⁶¹:

Հայերն այնուհետև խորհուրդ են տվել էմիրին՝ ավելի բարելավել տեղի հայերի վիճակը, հնարավորություն տալ նրանց՝ ազատ հետևելու իրենց նախնիների կրոնին, որը ոգևորող օրինակ կարող է հանդիսանալ Աֆղանստան գալու տրամադրություն ունեցող հայերի համար: Նույն պատասխանում հայերը գրում են. «Մենք թույլտվություն ենք խնդրում ներկայացնելու Ձերդ Բարձրության ուշադրությունը հետևյալ հարցի վրա, որ Ձերդ Բարձրությունը համաձայնվի Աֆղանստանի հայ մանուկներին կրթության ուղարկել Հնդկաստան, զույցե Կալկաթա, ընդհանուր կրթության և մասնագիտական ուսուցման համար: Ավարտելուց հետո նրանք կվերադառնան Աֆղանստան, որպեսզի ճատուցեն հարազատ կառավարությանը իրենց ազնիվ և հավատարիմ ծառայությամբ»⁶²:

Թե ինչ ընթացք ստացավ փոխադարձ սիրալիրությամբ առատ այս նամակագրությունը՝ գաղտնիք չէ: Միայն երկու բախտախնդիր հայեր գնացին Աֆղանստան, որոնք կարճ ժամանակ անց կառավարության կողմից արտաքսվեցին:

Աֆղանստանի էմիրի վերաբերմունքը դեպի իր հպատակ հայերը 1897 թվականին կտրուկ փոխվեց: Աբդու Ռահմանը, որը շահագրգռված էր հայերի Աֆղանստան գալով և ջանքեր չէր խնայում նրանց վիճակը բարելավելու ու ապահով դարձնելու համար, անսպասելի կերպով, հատուկ հրամանով, երկրից բռնի ուժով վտարեց բոլոր հայերին: Խոսելով այդ մասին, Մ. Սեթը գրում է. «Իր սրտալի հրավերից ուղիղ մեկ տարի անց էմիրը Քարուլից և իր տիրապետության բոլոր շրջաններից վտարել տվեց զժբախտ հայերին, մի ժամանակ Աֆղանստանում ծաղկող հայ-

⁶¹ M. S. Seth, նշվ. աշխ., էջ 116—117:

⁶² Նույն տեղում:

կական գաղթօջախի շնչին մնացորդներին: Նրանք ստիպված եղան թողնելու իրենց եկեղեցին, նախնիների տները և գերեզմանները, անցնել Փեշեվար, տանելով իրենց սրբազան գրքերը, որոնք հիմնականում ձեռագիր էին»⁶³:

Որոշ ժամանակ անց միայն հայտնի դարձավ, որ էմիրը կատարել է իր հավատակից բարեկամ, արյունոտըտ սուլթան Համիդի ցանկությունը, որը հատուկ նամակով առաջարկել է վտարել Աֆղանստանից հայերին՝ որպես անհավատարիմ հպատակների: Ի դեպ նույն ժամանակ մեծ մարդասպանը նման նամակով դիմել է նաև պարսից Նասրեդդին շահին⁶⁴, որը բարեբախտաբար, ավելի լրջմիտ գտնվեց, քան նրա աֆղան հավատակիցը:

Դժբախտաբար Փեշեվար արտաքսված հայ գաղթականներով շրջադրվեցին ոչ էջմիածինը և ոչ էլ Նոր Զուղան: Նրանց բախտին և ճակատագրին անտարբեր գտնվեցին նաև Կալկաթայի ու Հնդկաստանի մյուս քաղաքների հայկական եկեղեցիները և հարուստ համայնքները: Նրանք բացարձակ ոչինչ չարեցին դժբախտության մեջ ընկած իրենց հայրենակիցներին օգնելու, անհետացումից փրկելու համար:

1907 թ. փետրվարի 11-ի համարում Փեշեվարում հաստատված հայկական այս փոքրիկ համայնքի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել տեղի թերթերից մեկը, որն ամբողջությամբ իր վերոհիշյալ հոդվածում բերել է Մ. Անթր: Այստեղ ամենից հետաքրքիրն այն է, որ հայերը Քարուլից իրենց հետ Փեշեվար են բերել պատկառելի հնություն ունեցող ձեռագրերի ժողովածու⁶⁵:

Այս հոդվածի հրապարակումից հետո միայն, երբ օտար շրջանները սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել «հարյուրավոր տարիներ մուսուլմանական խավարում քրիստոնեական օջախը վառ պահած» մի խումբ հայերի նկատմամբ, նրանցով հետաքրքրվել սկսեցին նաև հայերը: 1907 թ. Կալկաթայում գտնվող Նոր-Զուղայի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Ավատյանը լսելով Փեշեվարում ապաստան գտած հայերի մասին, հովվական այցի դեպք նրանց: Դժբախտաբար այս այցի մասին մանրամասներ չգիտենք: Հայտնի է միայն, որ հայերը դեռևս պահպանվել էին, նրանք իրենց հոգևոր պետքերը հոգում էին անգլիական հոգևորականների մոտ, ապրում էին համախմբված: Հավանաբար համայնքը ղեկավարել է Աստվածատուր Հայրապետ Վարդանյանը:

Ս. Ավատյանը վերականգնել է բոլոր հայերին, կազմել նրանց շնչագրությունը, հորդորել, հուսադրել է նրանց և վերադարձել Կալկաթա-Հավանաբար Նոր Զուղայի առաջնորդին հաջողվել է կապ ստեղծել Փեշե-

վարի և Կալկաթայի հայության միջև: Հայտնի են անգամ դեպքեր, երբ Աֆղանստանից Փեշեվար արտաքսված հայերից առանձին երեխաներ են եկել Կալկաթայի հայկական մարդասիրական ճեմարան՝ սովորելու համար:

Սահակ Ավատյանը վերադարձին իր հետ բերել և Կալկաթայի հայոց եկեղեցու գրադարանին է հանձնել Քարուլից Փեշեվար հասցված մի քանի «շատ մեծարժեք ձեռագրեր»:

Աֆղանստանի մյուս հայկական համայնքների մասին եղած տեղեկությունները կցկտուր են: Ղ. Ալիշանը հավանաբար տվյալներ վերցնելով եվրոպական ճանապարհորդների կամ կաթոլիկ քարոզիչների վկայություններից, գրում է, որ Աֆղանստանի Չինաստանին սահմանամերձ Ղաշխար քաղաքում 18—19-րդ դարերում կային 525 հայեր⁶⁶: Ղ. Ալիշանի բերած այս հետաքրքիր փաստի մասին խոսում է նաև Աֆղանստանի անգլիական գաղութային զորքերի գեներալ Հենրի Ռավիլսոնը իր «Անգլիացիները և ուսանելը Արևելքում» գրքում: Խոսելով Ղաշխայի բնակչության մասին, Ռավիլսոնը գրում է, որ քաղաքի առևտրում զգալի դեր էին խաղում այնտեղ ապրող 300 հայերը⁶⁷: Հ. Ռավիլսոնը ձեռքի տակ ունեցել է անգլիական ղինվորական իշխանությունների տվյալները, ինքն էլ անձամբ եղել է Ղաշխայում և հազիվ թե բերված թվի կամ այդ քաղաքում հայերի գոյության հարցում նա սխալված լինի:

Ղաշխան աֆղանա-չինական սահմանի վրա առևտրական խոշոր հենակետ էր: Նրա վրայով էին անցնում Չինաստանից եկող մետաքսի առևտրի հիմնական ուղիները: Հայերը նման քաղաքը աչքաթող անել չէին կարող, մի հանգամանք, որը հաստատվում է նաև այլ փաստերով⁶⁸:

Դժբախտաբար այլ տեղեկություններ Աֆղանստանում ապրող հայերի հետագա ճակատագրի մասին ոչինչ չգիտենք: Հավանական էր երևի այն է, որ նրանց մի մասը ձուլվեց, մյուսը անցավ Պարսկաստան:

АБРАМЯН Р. А.

АРМЯНЕ В АФГАНИСТАНЕ

Резюме

История армянских переселенческих очагов в Афганистане делится на три периода. Первый относится к эпохе Аршакидов, когда

⁶³ Նույն տեղում, էջ 117:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Նշվ. աշխ., էջ 116:

⁶⁶ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 470:

⁶⁷ Major-General Sir Henri Ravilson, England and Russia in the East Asia, London, 1886, p. 241.

⁶⁸ «Ուղեգրություն Ք Տեր-հովհաննեսին», «Նոր ազգարար», Կալկաթա, 1955, էջ 20:

персидское правительство насильственно переселило тысячи армян на теперешнюю территорию Афганистана.

Второй период относится к XIV веку, когда десятки тысяч армян насильственно были переселены монголами в Афганистан.

Третий период относится к XVII—XIX вв. Армяне в основном жили в городах Кабуле, Кандагаре и окрестных селениях.

Проживавшие в городах армяне являлись в основном ремесленниками. Особенно славились оружейники. Кабулские армяне имели свою церковь. Немало армян находилось на службе у эмира.

Армянские переселенцы проживали в Афганистане до конца XIX века. По просьбе кровавого султана Абдул Гамида его единоведец Эмир всех армян насильственно изгнал из Афганистана в Индию.

Շ. Լ. ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՄՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտ

ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Արարական աշխարհի միավորման խնդիրը օրակարգի հրատապ հարց էր դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Սակայն արարական միության գաղափարի իրազորման համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: 1945 թ. գարնանը ստեղծված Արարական երկրների լիգան փաստորեն առաջացավ արարական միությանն ուղղված շարժման շնորհիվ¹: Սակայն արարական միության գաղափարի իրականացումը կախված էր նաև մի շարք այլ գործոններից: Մասնավորապես կարևոր էին ինչպես արարական, այնպես էլ արևմտյան առանձին երկրների դիրքորոշումը: Այս, ինչպես նաև Լիգայի ծրագրային փաստաթղթերի ընդունման հետ կապված մի շարք հարցեր լուսարանվել են սովետական և արաբ առաջադեմ պատմաբանների կողմից: Բացի Վ. Բ. Լուցկուց, խնդրո առարկա հարցերին անդրադարձել և դրանց շուրջ կարևոր դիտողություններ են արել Ա. Գ. Ջիրինյան², Է. Քուսման³, Ն. Հ. Հովհաննիսյանը⁴: Ան այսօր, սակայն, մեզանում Արարական լիգայի ծրագրային փաստաթղթերն առանձին ուսումնասիրության չեն արժանացել: Իսկ այդ բանի անհրաժեշտությունը կա, քանի որ 1940—50-ական թթ. հաստատված այդ փաստաթղթերը շարունակում են ուժի մեջ մնալ և կանխորոշել միջպետական այդ կազմակերպության գործունեությունը:

1941 թ. մայիսի 29-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստր Ա. Իդենը հայտարարեց, որ անգլիական կառավարությունը դեմ չէ արարական ժողովուրդների համար ավելի բարձր աստիճանի մի միություն

¹ В. Б. Луцкий. Лига арабских государств. М., 1946, с. 4

² Зыбина А. Г. Планы создания «Великой Сирии» и «Благодатное полумесяца» в годы второй мировой войны—Арабские страны, М., 1963.

³ Э. Тума. Национально-освободительное движение и проблема Арабского единства. М., 1977

⁴ Н. О. Оганесян. Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны, Ереван, 1980.

ստեղծելուն, քան այն, «որից նրանք այժմ օգտվում են»⁵: Արաբական միութեան հարցում Լոնդոնի նման դիրքորոշումը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ, այդ քայլով Անգլիան հույս ուներ թուլացնել 1940 թ. հոկտեմբերի 23-ին Առանցքի երկրների կատարած հայտարարության ազդեցությունը, որում նրանք արաբական ժողովուրդներին սիրաշահելու նպատակով խոսում էին արաբական ազգային-ազատագրական շարժումը պաշտպանելու և արաբական երկրների անկախությունը ճանաչելու իրենց պատրաստակամության մասին: Այդ քայլը միաժամանակ կոչված էր հարթելու 1941 թ. գարնանը Իրաքում «անգլիական ներխուժման տհաճ տպավորությունը»⁶: Բացի այդ, արաբական միութեան գաղափարը պաշտպանելու միջոցով Լոնդոնը հույս ուներ Պաղեստինում «հրեական մի միավոր» հաստատելու վերաբերյալ արաբական երկրների եթե ոչ զրական, ապա շեղոք վերաբերմունքն ապահովել: Արաբական միութեան գաղափարի իրագործումը Լոնդոնին թույլ կտար նաև ստեղծվելիք միութեանն ազդեցության տակ պահել իր դրածոների միջոցով և Սիրիան ու Լիբանանն ընդգրկելով այդ միութեան մեջ, ճասնել ռեզիդենտ իր դիրքերի էլ ավելի ամրապնդմանը:

Արաբական համագործակցություն հաստատելու ուղղությամբ կոնկրետ քայլեր ձեռնարկելու համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին միայն 1943 թ. սկզբին, երբ երկրորդ համաշխարհային պատերազմում սկսված արմատական բեկման հետևանքով բարելավվեց Արաբական արևելքի ռազմաքաղաքական ընդհանուր իրավիճակը. արաբական միութեան հարցում ակտիվ դիրքորոշում որդեգրեց 1942 թ. փետրվարին Եգիպտոսում իշխանության գլուխ անցած վաֆլական կառավարությունը, և Սիրիայի ու Լիբանանի ժողովուրդների ձեռք բերած հաջողությունները ազգային-ազատագրական պայքարում ռեալ դարձրեցին այդ երկրների ակտիվ մասնակցությունը արաբական միութեան գործին: 1943 թ. կեսերից մինչև 1944 թ. փետրվարը Եգիպտոսի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի, Լիբանանի, Անդրհորդանանի և Եմենի միջև ինտենսիվ բանակցություններ վարվեցին: Դրանց ընթացքում պարզվեց, որ բանակցությունների մասնակից երկրները տարբեր դիրքորոշումներ ունեն արաբական միութեան հարցում: Իրաքն ու Անդրհորդանանը հակված էին արաբական միութեան գաղափարն օգտագործել պատմաաշխարհագրական Սիրիան (Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Անդրհորդանանը) կամ առնվազն Սիրիական Հանրապետությունը իրենց միացնելու համար և զրա միջոցով էլ գլխավորող դեր կատարելու ստեղծվելիք

արաբական կազմակերպությունում: Թե՛ բանակցությունների այս փուլում և թե՛ հետագայում Բաղդադի և Ամմանի կողմից «Մեծ Սիրիայի» և «Բարեբեր մահիկի» ծրագրերի առաջ քաշումը, որոնցից առաջինը նախատեսում էր պատմաաշխարհագրական Սիրիայի մաս կազմող երկրների միավորումը մեկ պետության մեջ, իսկ երկրորդը՝ պատմաաշխարհագրական Սիրիայի և Իրաքի միաձուլումը, այդ մասին են վկայում: Ընդ որում այդ երկրներում իշխող հաշիմյան դինաստիայի երկու ճյուղերի միջև սիրիական հողերի համար գաղտնի պայքար էր մղվում: Արաբական բոլոր երկրներն ընդգրկող սերտ միութեան՝ ընդհուպ մինչև միացյալ արաբական պետության ստեղծման օգտին հանդես էր գալիս Սիրիան: Արաբական ապագա միութեան ապակենտրոնացված լինելուն կողմ էին Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Լիբանանը և Եմենը: Բանակցությունները ցույց տվեցին, որ արաբական միութեան գաղափարը հնարավոր է իրագործել ռեզիդենտ միջպետական մի կազմակերպության ձևով միայն: Արաբական երկրները որոշեցին միութեան հիմքում դրվող սկզբունքները ճշտորոշելու համար ստեղծել հատուկ նախապատրաստական կոմիտե: Բանակցությունների ժամանակ պարզվեց, որ Եգիպտոսը, Սիրիան և Լիբանանը ցանկանում են արաբական համագործակցությունն օգտագործել՝ լուծելու համար իրենց առջև ծառայած քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ բնույթի հարցերը: Նրանք առաջ քաշեցին նաև պաղեստինյան խնդրում միասնական արաբական քաղաքականություն վարելու և նախապատրաստական կոմիտեի նստաշրջանին պաղեստինյան ներկայացուցիչների մասնակցության հարցը: Այս բոլորն արգեն դուրս էր գալիս այն շրջանակներից, որոնցով Լոնդոնը մտադիր էր սահմանափակել արաբական ապագա միութեան գործունեությունը: Ելնելով դրանից, Անգլիան 1944 թ. սկզբներից ձգտում էր հետաձգել նախապատրաստական կոմիտեի նստաշրջանի հրավիրումը⁸:

Չնայած դրան, 1944 թ. սեպտեմբերի 25-ին Ալեքսանդրիայում բացվեց նախապատրաստական կոմիտեի նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցում էին արաբական յոթ երկրների՝ Եգիպտոսի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի, Լիբանանի, Անդրհորդանանի և Եմենի ներկայացուցիչները: Լոնդոնի դիմադրության հակառակ, հոկտեմբերի 1-ից նրա աշխատանքներին սկսեց մասնակցել նաև պաղեստինյան արաբների ներկայացուցիչ Մուսա ալ-Ալամին:

Նախապատրաստական կոմիտեի նստաշրջանը, որն ավելի շատ ընդունված է Ալեքսանդրիայի խորհրդածողով անվանել, քննարկեց արաբական միութեան մի քանի տարբերակներ: Բացարձակ միութեան գաղափարը, որը ենթադրվում էր իրականացնել կա՛մ կենտրոնաձույլ մի պետության, կամ էլ դաշնակցային հանրապետության ձևով, բացի Սիրիայի

⁵ Laissy M., Du Panarabisme à La Ligue arabe, Paris, 1948, pp. 100—101.

⁶ А. Г. Зыбина, указ. соч., с. 125.

⁷ Gomaa A., The Foundation of the League of Arab States, London—New-York, 1977, pp. 100—102.

⁸ Gomaa A., op. cit., p. 191, 200—201.

պատվիրակությունից ոչ մեկի կողմից չպաշտպանվեց⁹։ Հարցը չլուծվեց նաև միությունը միջարաբական մի կազմակերպության միջոցով իրականացնելու գաղափարը բոլոր երկրների կողմից ընդունվելուց հետո։ Բանն այն էր, որ խորհրդաժողովի մասնակիցների մի մասը (Իրաք, Սիրիա, Անգրհորդանան) ցանկանում էր, որ ստեղծվելիք կազմակերպությունն ունենա գործադիր իշխանություն, իսկ մյուսները դրան համաձայն չէին¹⁰։ Տարակարծություններ կային նաև կազմակերպությունում անդամ երկրների ներկայացուցչության և ընդունված որոշումների պարտադիր լինելու կամ չլինելու հարցերի շուրջ։ Ոմանք կողմնակից էին հավասար հիմունքներով անդամ երկրների ներկայացուցչությունը հաստատելուն, իսկ մյուսներն ուզում էին այն սահմանել ըստ յուրաքանչյուր երկրի բնակչության և բյուջեի։ Մի դեպքում առաջարկվում էր ձայների մեծամասնությամբ ընդունված որոշումները պարտադիր համարել անխտիր բոլոր երկրների համար, մյուսում՝ դրանք պարտադիր համարել միայն այն երկրների համար, որոնք կողմ են քվեարկել այդ որոշումներին։ Վերջիվերջո խորհրդաժողովը հաստատեց այս հարցնրի վերաբերյալ Նդիպտոսի վարչապետ Նահհասի ձեռնարկումը, որն առանց որևէ փոփոխության մտցվեց նախապատրաստական կոմիտեի նիստերի արդյունքներն ամփոփող Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագրաֆում¹¹։ Դրանում ասվում էր, որ «Արաբական երկրների լիզան բաղկացած է լինելու արաբական անկախ երկրներից, որոնք կցանկանան անդամակցել դրան»։ Արաբական լիզան ունենալու էր խորհուրդ, որում «Լիզայի անդամ երկրները ներկայացվում են հավասար հիմունքներով»։ Խորհրդի որոշումները պարտադիր էին լինելու միայն դրանց կողմ քվեարկած երկրների համար։ Սակայն եթե Լիզայի անդամ երկու երկրների միջև որևէ անհամաձայնություն ծագեր և այդ երկրները այն կարգավորելու համար դիմեին Լիզայի խորհրդին, ապա վերջինիս այդ կապակցությամբ ընդունված որոշումը կողմերի համար լինելու էր պարտադիր։ Այսպիսով, Ալեքսանդրիայի խորհրդաժողովը որոշեց երկրների միջև համագործակցությունը հաստատել միջպետական, ռեգիոնալ, համահասարակական մի կազմակերպության միջոցով։ Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագրաֆը կանխորոշում էր նաև Արաբական լիզայի խորհրդի գործունեության շրջանակները։ Նշվում էր, որ խորհուրդը կոչված է իրագործել արաբական երկրների միջև կնքված պայմանագրերը, պարբերաբար հանդիպումներ կազմակերպել նրանց միջև հարաբերություններն ամրապնդելու, քաղաքական քայլերը համադրելու,

բոլոր միջոցներով նրանց անկախությունն ու սուվերենությունը որևէ նախահարձակումից պաշտպանելու և ընդհանրապես արաբական երկրների գործերը քննարկելու համար։ Նախատեսվում էր նաև մի ճյուղային կոմիտե ստեղծել, որը կորոշեր խորհրդի ստատուսը և «կրճարակեր այն քաղաքական հարցերը, որոնց շուրջ կարելի է արաբական երկրների միջև պայմանագրեր կնքել»։ Խորհրդին իրավունք էր վերապահվելու միջնորդություն կատարել Լիզայի անդամների, ինչպես նաև նրանցից մեկի և մի օտար երկրի միջև պատերազմի վտանգ ծագելու դեպքում։ Լիզայի անդամներին արգելվում էր միմյանց միջև առաջացած տարաձայնությունները լուծել ուժի գործադրումով, ինչպես նաև այնպիսի արտաքին քաղաքականություն վարել, որը կվնասեր Լիզային կամ նրա անդամներից մեկին։ Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագրաֆի այս դրույթները վկայում էին, որ Արաբական լիզան առաջին հերթին քաղաքական դեր կատարող մի մարմին էր լինելու։ Այդ արձանագրության երկրորդ պարագրաֆի համաձայն արաբական համագործակցությունը տարածվելու էր նաև տնտեսության, ֆինանսների, կոմունիկացիաների, մշակույթի, քաղաքացիական, առողջապահության և սոցիալական ասպարեզներում։

Համաձայնելով արաբական ապագա միությունը միջպետական մի կազմակերպության միջոցով իրականացնելու գաղափարին, տարբեր շարժառիթներով արաբական ավելի սերտ միության կողմնակիցները՝ Սիրիան, Անգրհորդանանը և Իրաքը չէին հրաժարվում իրենց նախնական տեսակետները ապագայում իրականացնելու հույսից։ Իրաքի նախկին վարչապետ Նուրի Սաիդը Ալեքսանդրիայի խորհրդաժողովում էլ բարձրացրեց «Մեծ Սիրիայի» հարցը։ Այս նախագիծը օրակարգում մտցնելիս Հաշիմյանների ներկայացուցիչները կարծում էին, որ Սիրիայի կառավարությունը իրենց հետ հանդես կգա միացյալ ճակատով։ Դրա պատճառն այն էր, որ Սիրիայի, թեև ուղ վերապահումով, ճանդես գալը «Մեծ Սիրիայի» օգտին, ինչպես նաև նրա կողմնակից լինելը ավելի սերտ արաբական միությանը, նրանք մեկնաբանում էին որպես սիրիական կառավարության պրոհաշիմյան դիրքորոշման արտահայտություն։ Սակայն իրաքա-անգրհորդանանյան այս հույսերը շարդարացան։ Ալեքսանդրիայի խորհրդաժողովում սիրիական պատվիրակությունը «Մեծ Սիրիայի» նկատմամբ իր դրական վերաբերմունքը Սիրիայում հանրապետական վարչակարգի պահպանումով պայմանավորվելուց բացի, նշեց, որ այդ նախագիծը քննարկումը Անգրհորդանանի և Պաղեստինի անգլիական մանդատային տիրապետության տակ գտնվելու պայմաններում անժամանակ է¹²։ Այսպիսով սիրիական կողմը դեմ էր արտահայտվում «Մեծ Սիրիայի» նախագիծը հաշիմյան տարբերակով իրականացնելուն։

⁹ Laissy M., op. cit., pp. 120—121.

¹⁰ Տարբին Ալ-ուսհուս ալ-արաբիյա բայնա, 1916—1945, էջ 322:

¹¹ Տե՛ս, Տարբին, նշվ. աշխ., էջ 328—329 և «Պրոտոկոլ ալ-Իսկանդարիյա» — Քամալ ալ-Ղալի, միսակ ջամիթթ ադ-դուալ ալ-արաբիյա, ալ-Կահիրա, 1948, էջ 228—229:

¹² Տարբին, նշվ. աշխ., էջ 334:

Փորձելով հարցը դուրս բերել փակուղուց, նուրի Սաիդը առաջարկեց, որ նախապատրաստական կոմիտեի նստաշրջանը գտնե արտահայտի իր տեսակետը ընդհանրապես արաբական ավելի սերտ մի միության հարցի վերաբերյալ: Վերջիվերջո որոշվեց Ալեքսանդրիայի արձանագրությունում մտցնել երրորդ պարագրաֆը, որում նշվում էր. «գոհունակությամբ ընդունելով այս առաջին քայլը, կոմիտեն հույս ունի, որ ապագայում արաբական երկրները այն կամրապնդեն այլ քայլերով ևս...»¹³:

Ալեքսանդրիայի արձանագրության շորորդ պարագրաֆը վերաբերում էր Լիբանանին: Սիրիայի առաջարկով մտցված այդ պարագրաֆում խորհրդաժողովի մասնակից երկրները հայտարարում էին, որ իրենք ճանաչում են Լիբանանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Խորհրդաժողովի մասնակիցները շեշտում էին, որ իրենք դա անում են՝ հենվելով Լիբանանի խորհրդարանի կողմից միաձայնորեն հաստատված 1943 թ. հոկտեմբերի 7-ի կառավարական հայտարարության վրա, որով վերջինս հայտարարել էր անկախ քաղաքական գիծ անցկացնելու իր մտադրության վերաբերյալ¹⁴: Մրանով Արաբական լիգայի ապագա անդամները ցույց էին տալիս, որ իրենք Լիբանանի անկախությունը դիտում են որպես լիբանանցիների ձեռք բերած նվաճում և այն չեն կապում այդ հարցում Ֆրանսիայի դիրքորոշման հետ: Բացի այդ, այս պարագրաֆով Լիբանանի սահմանները ստանում էին համարաբական ճանաչում: Եվ վերջապես, այս պարագրաֆը մի անգամ ևս ընդգծում էր հիմնադրվելիք Արաբական լիգայի միջպետական, ռեգիոնալ լինելը, որով և ցրում էր ապագա միությունում Լիբանանի ինքնուրույնության վերացման վերաբերյալ լիբանանյան հասարակական որոշ շերտ-ջանակների ունեցած մտավախությունները:

Հակառակ Լոնդոնի դիմադրությանը, Ալեքսանդրիայի խորհրդաժողովը քննարկեց նաև Պաղեստինում տիրող իրադրության հարցը: Խորհրդաժողովի ավարտից հետո հրապարակված կոմյունիկեում նախապատրաստական կոմիտեի նստաշրջանի մասնակիցները ողջունում էին պաղեստինյան արաբների ներկայացուցիչ Մուսա ալ-Ալամիի ներկայությունը խորհրդաժողովում և նշում, որ արաբական երկրները հատուկ նշանակություն են տալիս «եղբայր երկրի գործին»¹⁵: Ալեքսանդրիայի արձանագրությունում Պաղեստինին էր վերաբերում հինգերորդ պարագրաֆը: Այնտեղ ասվում էր, որ «Պաղեստինը արաբական երկրների կարևոր մասն է և արաբների իրավունքներն այնտեղ չեն կարող ոտնակոխվել առանց արաբական երկրների խաղաղությունը վտանգելու»: Նշվում էր նաև, որ «Մեծ Բրիտանիայի ստանձնած պարտավորություն-

ները՝ հրեական ներգաղթը դադարեցնելու, արաբներին պատկանող հողերը պաշտպանելու և Պաղեստինին անկախություն տալու վերաբերյալ, իրականացվելու դեպքում կնպաստեն խաղաղության և անվտանգության ամրապնդմանը»: Ալեքսանդրիայի խորհրդաժողովի մասնակիցները գտնում էին, որ եվրոպական հրեաների հարցը չպետք է շփոթել սիոնիզմի հետ և դեմ էին արտահայտվում նրանց հարցը «մի նոր անարդարացիությամբ լուծելուն, որի զոհերը կդառնան Պաղեստինի արաբները...»¹⁶:

Ալեքսանդրիայի խորհրդաժողովի հրավիրման փաստն ու նրա ընթացքը վկայում են, որ 1944 թ. կեսերից արաբական միություն ստեղծելու շարժումը հիմնականում ընթանում էր ոչ միայն օտարերկրյա տերությունների, մասնավորապես Անգլիայի, կամքին հակառակ, այլ նաև դուրս էր եկել նրանց վերահսկողությունից:

Ալեքսանդրիայի արձանագրությունը ստորագրվեց 1944 թ. հոկտեմբերի 7-ին, խորհրդաժողովի մասնակից յոթ երկրներից միայն հինգի՝ Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Անդրհորդանանի և Լիբանանի կողմից: Սաուդական և եմենյան պատվիրակները Արձանագրությունը չստորագրեցին, քանի որ համապատասխան իրավասություններ չունեին: Սաուդյան Արաբիան և Եմենը Ալեքսանդրիայի արձանագրությունը հաստատեցին համապատասխանաբար 1945 թ. հունվարի 7-ին և փետրվարի 5-ին:

Արաբական ապագա միության հիմնական սկզբունքները Ալեքսանդրիայի խորհրդաժողովում որոշելուց հետո թվում էր, թե արաբական երկրները առանց որևէ ղեկավարության կմշակեն Արաբական լիգայի ստատուսը և արագությամբ այն կյանքի կկոչեն: Սակայն և՛ Արաբական լիգայի պակտի մշակմանը նվիրված քաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանում, որ տեղի ունեցավ Կահիրեում 1945 թ. փետրվարի 14-ից մարտի 3-ը, և՛ զրանից առաջ ու հետո հարկ եղավ հաղթահարել տարբեր բնույթի մի քանի խոչընդոտներ:

Առաջին արգելքը կապված էր արաբական միության հարցում Սաուդյան Արաբիայի դրսևորած նոր մոտեցման հետ: Բանն այն էր, որ 1945 թ. հունվարի սկզբին Ալեքսանդրիայի արձանագրությունը հաստատելու հետ մեկտեղ, Սաուդյան Արաբիան, որքան էլ դա տարօրինակ թվա, առաջ քաշեց արաբական ապագա միությունը արաբական անկախ երկրների միջև կնքվելիք մի դաշինքի միջոցով իրականացնելու գաղափարը: Այդ դաշինքը ունենալու էր ինքնապաշտպանական բնույթ, ուղղված չէր լինելու մի այլ երկրի կամ երկրների խմբի դեմ: Առ-Ռիպոր անհրաժեշտ էր համարում նաև, որ միության բոլոր անդամները ճանաչեին Սիրիայի և Լիբանանի անկախությունն ու նրանց հանրապետական վարչակարգերը: Բացի այդ նախատեսվում էր, որ Սաուդյան Արաբիային

¹³ Քամալ ալ-Ղալի, նշվ. աշխ., էջ 230:

¹⁴ Նույն տեղում,

¹⁵ Ալեքսանդրիայի խորհրդաժողովի ավարտից հետո հրապարակված կոմյունիկեի տեքստը տե՛ս Laissy M., op. cit., pp. 213—214.

¹⁶ Քամալ ալ-Ղալի, նշվ. աշխ., էջ 230—231:

իրավունք վերապահվի շմասնակցել միության շրջանակներում ձեռնարկվող օրենսդրական և լուսավորական այն նախաձեռնումներին, որոնք անհարիր կլինեն իսլամի սկզբունքների հետ¹⁷: Այս բոլորից կարելի է այն հետևությունն անել, որ Առ-Ռիազն ընդհանրապես կողմնակից լինելով արաբական միությանը, ցանկանում էր դա իրականացված տեսնել ոչ թե ռեզիտնալ կազմակերպության, այլ արաբական երկրների միջև կնքված մի դաշինքի ձևով: Սակայն հարցի նկատմամբ այսպիսի մոտեցումը կարող էր հանգեցնել միության գործը գլուխ բերելու ձգձգմանը: Միության սաուդական տարբերակին Լոնդոնի թեկադրանքով ամենայն հավանականությամբ կընդդիմանային հաշիմյանները, քանի որ Անգլիան բացասաբար էր վերաբերում սաուդական նախաձեռնությունը¹⁸: Այն ավելորդ մտավախություն կարող էր առաջացնել լիբանանյան քաղաքական որոշ շրջանակներում: Անհարկի այս բարդություններից կարելի էր խուսափել, եթե սաուդյան առաջարկները պարզորոշ ներկայացվեին ոչ թե որպես Ալեքսանդրիայի արձանագրություններում առաջ քաշված Արաբական լիգայի գաղափարի այլընտրանք, այլ՝ իբրև հենց Արաբական լիգայի շրջանակներում իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ կատարված նկատառումներ: Առ-Ռիազի դիրքորոշման այդպիսի փոփոխման հնարավոր եղավ հասնել Եգիպտոսի թագավոր Ֆարուկի՝ 1945 թ. հունվարի վերջին Սաուդյան Արաբիա կատարած այցելության ընթացքում: Այդ կապակցությամբ անգլիական «Թայմս» թերթը գրեց, որ դա «որոշ շափով նման է Լիգայի վերջնական ստեղծման երաշխիքի»¹⁹:

1945 թ. փետրվարի 14-ին Կահիրեում բացվեց Արաբական լիգայի պակտը մշակող քաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանը: Դրան մասնակցում էին Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Անգրհորդանանի պատվիրակությունները այդ երկրների արտաքին գործերի մինիստրների, ինչպես նաև սաուդական և իրաքյան պատվիրակությունները՝ սաուդական դիվանագետ Նաջր ադ-ճին Զիրբիլի և Իրաքի նախկին վարչապետ Նուրի Սաիդի գլխավորությամբ: Նստաշրջանին չէր մասնակցում Եմենը: Պաղեստինի արաբներին ներկայացնում էր Մուսա ալ-Ալամին: Ենթահանձնաժողովի քննարկմանը ներկայացված էին Արաբական երկրների լիգայի պակտի իրաքյան և լիբանանյան նախագծերը, ինչպես նաև՝ Լիգայի նկատմամբ Սաուդյան Արաբիայի վերոհիշյալ նկատառումները: Նստաշրջանի սկզբում սաուդական պատվիրակը հայտարարեց, որ իր երկրի համար սկզբունքային նշանակություն ունի արաբա-

կան ապագա միությունում Սիրիայի և Լիբանանի անկախության պահպանումը և Լիգայի անդամների կողմից «որևէ արաբական երկրի տարածքի վրա կատարված ցանկացած նախահարձակման դեմ միասնական հանդես գալու վերաբերյալ պարտականության ընդունումը»²⁰:

Արաբական լիգայի պակտի մշակման համար հրավիրված քաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանը հիմնականում հաստատեց այն դրույթները, որոնք արդեն արտահայտվել էին Ալեքսանդրիայի արձանագրությունում, ինչպես նաև ավելացրեց որոշ նոր կետեր: Դրանում մշակված պակտի նախագծի և 1945 թ. մարտի 22-ին համաարաբական կոնգրեսի կողմից հաստատված պակտի միջև կան որոշ տարբերություններ, որոնք հիմնականում կապված են հողավածների քանակի, դրանց հերթականության ու խմբագրման հետ²¹: Միակ էական տարբերության մասին, որ կա դրանց միջև, ստորև առանձին կհիշատակվի:

Քաղաքական ենթահանձնաժողովը հաստատեց Ալեքսանդրիայի արձանագրության այն դրույթը, ըստ որի Լիգան բաղկացած էր լինելու միայն արաբական անկախ երկրներից (Արաբական լիգայի պակտի առաջին հոդված): Որոշ տարածայնություններ առաջացան նույն հոդվածի երկրորդ մասի շուրջ, որը վերաբերում էր ապագայում որևէ անկախ արաբական երկրի Լիգային անդամակցելու պրոցեդուրային հարցերին: Ըստ իրաքյան նախագծի, ցանկացած արաբական անկախ երկիր Լիգայի անդամ կարող էր դառնալ, այդ մասին տեղյակ պահելով Լիգայի Քարտուղարությունը և անդամ երկրներին²²: Լիբանանյան նախագիծը այս բոլորի հետ միասին անհրաժեշտ էր համարում նաև, որ որևէ երկրի Լիգա ընդունվելու հարցի առթիվ կայացվի խորհրդի հատուկ որոշում²³: Նախապատվությունը տրվեց լիբանանյան ձևակերպմանը, որը և դրվեց Լիգայի պակտի առաջին հոդվածի երկրորդ մասի հիմքում²⁴:

Ըստ լիգայի պակտի 2-րդ հոդվածի, Լիգայի նպատակը լինելու էր «ուժեղացնել կապերը անդամ երկրների միջև, կոորդինացնել նրանց քաղաքական ծրագրերը՝ միմյանց միջև համագործակցություն հաստատելու համար, պահպանել նրանց անկախությունն ու սուվերենությունը...»²⁵: Նույն հոդվածով նախատեսված էին նաև այն ասպարեղները, որոնցում

²⁰ Там же, п. 13.

²¹ Համեմատիր «Միակ ջամիաթ ադ-դուալ ալ-արաբիյա» — Փամալ ալ-Ղալի նշվ. աշխ., էջ 232—240 և „Text of the Draft Pact of the League Proposed by the Political Subsidiary Committee“ — Gomaa A., op. cit., pp. 289—293.

²² „Text of the Draft Pact of the League Proposed by the Iraqi Government“ — Gomaa A., op. cit., p. 277.

²³ „Text of the Draft Pact of the League Proposed by the Lebanese Government“ — Gomaa A., op. cit., p. 281.

²⁴ Փամալ ալ-Ղալի, նշվ. աշխ., էջ 234:

²⁵ Նույն տեղում:

¹⁷ „Text of Letter from Sheikh Yusuf Yassin to Ahmed Maher Pasha Signifying His Government Approval of the Alexandria Protocol and Stating Their Views on Arab Co-operation“ — Gomaa A., op. cit. pp. 275—276.

¹⁸ Նույն տեղում, էջ 233:

¹⁹ ИГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 3981, л. 5.

ծավալվելու էր միջարաբական համագործակցությունը: Դրանք էին 1) տնտեսության և ֆինանսների, 2) կոմունիկացիաների, 3) մշակույթի, 4) քաղաքացիական, 5) սոցիալական և 6) կրոնի ոլորտները: Առաջ անցնելով նշենք, որ պակտի 4-րդ հոդվածով նախատեսվում էր վերոհիշյալ յուրաքանչյուր ասպարեզում համագործակցությունը կոորդինացնելու համար հորհրդին կից համապատասխան կոմիտեներ ստեղծել: Հաջվի առնելով Սաուդյան Արաբիայի նկատառումը Իսլամի սկզբունքներին հակասող ձեռնարկումներին շմանակցելու վերաբերյալ, նպատակահարմար համարվեց պակտի 2-րդ հոդվածում նշել, որ «...անդամ երկրների միջև համագործակցությունը ծավալվելու է, նկատի ունենալով յուրաքանչյուր երկրի վարչակարգը և դրանում գոյություն ունեցող պայմանները»²⁶:

Արաբական լիգայի պակտի 3-րդ հոդվածի համաձայն Լիգան ունենալու էր հորհուրդ, որում «յուրաքանչյուր երկիր ունենալու է մեկ ձայն...»: հորհրդի խնդիրն էր լինելու «իրականացնել Լիգայի նպատակները, վերահսկել անդամ երկրների միջև կնքվելիք պայմանագրերի իրականացումը»²⁷: Ըստ պակտի 7-րդ հոդվածի, հորհրդի որոշումները պարտադիր էին լինելու միայն այն երկրների համար, որոնք կողմ են քվեարկել տվյալ որոշմանը: Նույն հոդվածը նախատեսում էր (հորից ելնելով վերոհիշյալ սաուդական նկատառումից), որ «հորհրդի որոշումները յուրաքանչյուր երկրում իրականացվելու են ըստ այդ երկրի ներքին օրենքների»²⁸: հորհուրդը գումարվելու էր տարեկան երկու անգամ՝ մարտ և հոկտեմբեր ամիսներին, իսկ հորհրդի արտահերթ նիստ կարող էր տեղի ունենալ Լիգայի անդամ երկու երկրների պահանջով (հոդված 11): հորհրդի նիստերում ձերթով նախագահելու էին անդամ երկրների ներկայացուցիչները (հոդված 15): Կահիրեն լինելու էր Արաբական լիգայի մշտական նստավայրը, սակայն հորհրդի նստաշրջանները կարող էին տեղի ունենալ նաև այլ երկրներում (հոդված 10):

Արաբական լիգան ունենալու էր գլխավոր քարտուղարություն՝ բաղկացած գլխավոր քարտուղարից, նրա տեղակալներից և այլ պաշտոնյաներից: Գլխավոր քարտուղարն ընտրվելու էր հորհրդի անդամների ձայների երկու-երրորդի մեծամասնությամբ (հոդված 12): Գլխավոր քարտուղարը պատրաստելու էր Լիգայի տարեկան բյուջեի նախագիծը և այն ներկայացնելու էր հորհրդի հաստատմանը (հոդված 13): Գլխավոր քարտուղարության պաշտոնյաներ նշանակելիս, Լիգայի բյուջեն հաստատելիս, հորհրդի, նրա կից կոմիտեների և Գլխավոր քարտուղարության ներքին աշխատակարգը որոշելիս, ինչպես նաև նիստերի հետաձգման

վերաբերյալ հարցերը վճռելիս բավարար էր հորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությունը (հոդված 16):

Եթե որևէ երկիր ցանկանար զուրս գալ Արաբական լիգայից, ապա նա այդ մասին մեկ տարի առաջ պետք է տեղյակ պահեր Լիգայի հորհրդին: Միաժամանակ հորհուրդը իրավասու էր Լիգայից հեռացնել այն երկրին, որը «չէր կատարի պակտից բխող իր պարտականությունները»: Վերջին դեպքում հորհրդի որոշումը պետք է լիներ միաձայն, առանց հաջվի առնելու խնդրո առարկա երկրի ձայնը (հոդված 18)²⁹:

Արաբական լիգայի պակտը փոփոխության ենթարկելու համար պահանջվում էր հորհրդի անդամների ձայների երկու-երրորդի մեծամասնություն (հոդված 19):

Բավականին դժվարություններ առաջացան Լիգայի պակտի 5-րդ հոդվածի ձևակերպման ժամանակ, որը վերաբերում էր Լիգայի անդամ երկրների, ինչպես նաև անդամ երկրներից որևէ մեկի և մի օտար երկրի միջև ծագած տարաձայնությունների կարգավորմանը: Լիգայի պակտի թե՛ իրաքյան, թե՛ լիբանանյան նախագծերում, ինչպես նաև վերոհիշյալ սաուդական հուշագրում վեճերը ուժի միջոցով լուծելը համարվում էր անթույլատրելի: Այս դրույթը առանց որևէ բարդության մտցվեց պակտի 5-րդ հոդվածում: Հիշված երեք փաստաթղթերում էլ նախատեսվում էր, որ տարաձայնությունների կարգավորման հարցում Լիգան կատարի միջնորդի կամ իրավաբարի դեր, սակայն դրանցում տարբեր կերպ էին սահմանվում հորհրդի ունենալիք իրավասության շրջանակները: Սաուդական հուշագրում առաջարկվում էր, որ եթե որևէ երկիր չենթարկվի իրավաբարի որոշմանը, ապա «մյուս արաբական երկրները խորհրդակցելու են և ստիպելու են նրան ընդունել այն, ինչը որ ճիշտ է»:

Քաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանի ընթացքում Իրաքը երկու հուշագիր ներկայացրեց, որոնցում ճշգրտված էր Քաղաքի դիրք-որոշումը այս և այլ վիճելի հարցերի վերաբերյալ³⁰: Իրաքը դեմ էր արտահայտվում Լիգայի միջամտությանը՝ մինչև նրա ստեղծումը կնքված պայմանագրերի հետ կապված հարցերում: Իրաքը գտնում էր նաև, որ որևէ վեճի Լիգան պետք է միջամտի միայն վիճող երկու կողմերի համաձայնությամբ: Վեճերի կարգավորման հարցում Լիգայի հորհրդի իրավասությունները որոշ շահով սահմանափակված էին նաև պակտի լիբանանյան նախագիծում, ըստ որի հորհուրդը իրավաբարի դեր իրավունք չէր ունենալու կատարել այն դեպքերում, երբ տարաձայնությունները վերաբերում էին որևէ անդամ երկրի անկախությանը և տարածքային ամբողջականությանը: Քաղաքական կոմիտեն հաստատեց 5-րդ հոդվա-

²⁶ Նույն տեղում, էջ 235:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, էջ 236:

²⁹ Նույն տեղում, էջ 238:

³⁰ „The Views of the Representative of Iraq on the Article Dealing with the Settlement of Disputes“ — Gomaa A., op. cit., pp. 286. 288.

ծի մի փոխզիջողական տարբերակ, ըստ որի խորհուրդը միջամտելու էր այն տարածայնությունների կարգավորմանը, որոնք լուծելու համար վիճող կողմերը դիմելու էին խորհրդին և որոնք չէին վերաբերում որևէ անդամ երկրի անկախությանը և տարածքային ամբողջականությանը: 1945 թ. մարտի 17-ին և 19-ին տեղի ունեցած Համաարաբական կոնգրեսի հրավերման նախապատրաստական կոմիտեի նիստերի ժամանակ որոշվեց 5-րդ հոդվածում գրույթ ավելացնել այն մասին, որ վեճերի կարգավորման հարցում խորհրդի որոշումներն ընդունվեն ձայների պարզ մեծամասնությամբ: Նախապատրաստական կոմիտեն նպատակահարմար գտավ նաև, որ վիճող կողմերը շմասնակցեն որոշումների ընդունմանը և որոշումներն ունենան պարտադիր բնույթ³¹: Սա միակ էական տարբերությունն էր քաղաքական ենթահանձնաժողովի հաստատած պակտի նախագծի և մարտի 22-ին կնքված պակտի միջև: Լիգայի պակտի 5-րդ հոդվածի համաձայն խորհուրդը կարող էր միջամտել նաև Լիգայի անդամ երկրի և մի օտար երկրի միջև տարածայնությունների կարգավորմանը, եթե վիճող կողմերը այդպիսի խնդրանքով դիմեին խորհրդին:

Արաբական լիգայի պակտի 6-րդ հոդվածով նախատեսվում էր, որ եթե Լիգայի անդամ որևէ երկիր նախահարձակման ենթարկվի, ապա նա իրավունք կունենա պահանջելու, որպեսզի խորհրդի արտակարգ նստաշրջան հրավիրվի, որը և միաձայնորեն որոշելու էր, թե ինչ միջոցներ են ձեռնարկվելու նախահարձակ երկրի դեմ: Եթե նախահարձակ երկիրը Լիգայի անդամ լիներ, ապա նրա ձայնը քվեարկության ժամանակ հաշվի չէր առնվելու:

Լիգայի անդամ յուրաքանչյուր երկիր պարտավորվում էր հարգել Լիգայի անդամ մյուս երկրներում հաստատված վարչակարգերը և հրաժարվելու էր դրանք փոխելու ուղղությամբ որևէ քայլ ձեռնարկելուց (հոդված 8): Լիգայի պակտի այս հոդվածը արտացոլումն էր սաուդական հուշագրի այն կետի, որը պահանջում էր միության անդամների կողմից Սիրիայի ու Լիբանանի անկախության ու դրանց հանրապետական վարչակարգերի անվերապահ ճանաչումը: Հատկանշական է, որ Լիգայի պակտի կնքման նախաշեմին, քաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանում դրա դեմ շառարկելուց հետո, Իրաքը ձգտում էր հասնել այս հոդվածը պակտից հանելուն: Մարտի 11-ի թվակիր մի հուշագրում Իրաքի կառավարությունը տեղեկացնում էր, որ կառավարման ձևի ընտրության հարցը վերաբերում է միայն տվյալ երկրի ժողովրդին և փաստորեն պահանջում էր 8-րդ հոդվածում բավարարվել միայն այս գրույ-

թի շարադրմամբ³²: Սակայն իրաքյան այս քայլը մնաց անհետևանք:

Լիգայի պակտի 9-րդ հոդվածում նշվում էր, որ եթե Լիգայի անդամ երկու երկիր ցանկանան ավելի սերտ հարաբերություններ հաստատել, քան նախատեսված է այս պակտով, ապա կարող են դրա վերաբերյալ լրացուցիչ պայմանագրեր կնքել: Նույն հոդվածում ասվում էր նաև, որ Լիգայի անդամ երկրների երկկողմանի, ինչպես նաև Լիգայի որևէ անդամի և մի օտար երկրի միջև կնքված և կնքվելիք պայմանագրերը չեն վերաբերում Լիգայի մյուս անդամներին: Պակտի 17-րդ հոդվածով նախատեսվում էր, որ անդամ երկրները ապագայում իրենց կնքելիք բոլոր պայմանագրերի օրինակները ներկայացնեն Լիգայի Գլխավոր քարտուղարություն:

Ալեքսանդրիայի արձանագրության միակ գրույթը, որը բացակայում էր Լիգայի պակտում, դա Լիգայի որևէ անդամի կողմից Լիգային և նրա անդամներին վնասող արտաքին քաղաքականություն չվարելու վերաբերյալ դրույթն էր: Քաղաքական ենթահանձնաժողովի քննարկմանը ներկայացված Լիգայի պակտի իրաքյան նախագծում այս դրույթի վերաբերյալ հատուկ հոդված կար: Պետք է ենթադրել, որ այն պակտ չմտցվեց, քանի որ արաբական երկրների միջև համաձայնեցված քաղաքականություն վարելու նպատակով ստեղծված Լիգայի պակտում այդպիսի հատուկ հոդվածի գոյությունը արաբական երկրների կողմից ավելորդ համարվեց:

Բացի վերևում վերլուծված հոդվածներից, Արաբական լիգայի պակտը ուներ նաև երեք հավելված, որոնք վերաբերում էին Պաղեստինին, Լիգայի անդամ չեղող արաբական երկրների հետ համագործակցությանը և Լիգայի գլխավոր քարտուղար նշանակելուն: Պաղեստինին վերաբերող հավելվածում նշվում էր, որ նրա «գոյությունը, ինչպես նաև դե-յուրե նրա ազգային անկախությունը չեն կարող քննարկման առարկա լինել, ինչպես որևէ այլ արաբական երկրի անկախություն³³: Միաժամանակ, Լիգայի խորհրդին հանձնարարվում էր Պաղեստինից մի ներկայացուցիչ ընտրել, որը խորհրդում կներկայացնի Պաղեստինի արաբներին: Անկախություն չնվաճած արաբական երկրներից միայն Պաղեստինի նկատմամբ այսպիսի վերապահություն կատարելով, Լիգայի անդամները կարծես ընդգծում էին այդ երկրի և նրան հուզող հարցերի առանձնահատուկ նշանակությունը արաբական աշխարհի համար: Երկրորդ հավելվածում ասվում էր, որ Արաբական լիգայի խորհուրդը

³² „Note Addressed by the Iraqi Government to the Chairman of the Subsidiary committee of the Preparatory Conference of the Arab Unity, Embodying the Views of the Iraqi Government and Its Reservations. Concerning the Draft Pact of the Arab League “—Khalil M., The Arab States and the Arab League, vol. 11, Beirut, 1962, p. 20.

³³ Քամալ ալ-Լալի, նշվ. աշխ., էջ 239—240:

³¹ Տարբին, նշվ. աշխ., էջ 332—336:

աշակցելու է անկախություն շնվածած արաբական երկրների ձգտումների իրականացմանը և ջանալու է «բարեկամել նրանց ապահովությունն ու ստատուսը, օգտագործելով իր տրամադրություն տակ եղած բոլոր քաղաքական միջոցները»³⁴։ Միաժամանակ իրագլխի հորհրդին հանձնարարվում էր ամեն ինչ անել՝ իրականացնելու համար այդ երկրների մասնակցությունը իրագլխի հորհրդի կոմիտեների աշխատանքներին։

Արաբական լիգայի պակտի այս հավելվածները կարելի է համարել նրա առաջին, ճիշտ է մի փոքր վեհերոտ, բայց այնուամենայնիվ քաղաքական պակտի գերբորոշումը վկայող քայլերը։ Դրանց նշանակությունը ավելի է ծանրակշիռ դառնում, եթե հաշվի առնենք, որ անգլիացիներն ու ֆրանսիացիներն ամեն կերպ աշխատում էին հանել այդ հավելվածները իրագլխի պակտից³⁵։

Լիգայի պակտի երրորդ հավելվածով Արաբական լիգայի առաջին գլխավոր քարտուղար էր նշանակվում Արդառոհման Ազզամը, որը մինչ այդ Եգիպտոսի արտաքին գործերի մինիստրության արաբական երկրների վարչության տնօրենն էր։

Արաբական երկրների լիգայի պակտը ստորագրվեց Կահիրեում, 1945 թ. մարտի 22-ին, Սիրիայի, Անդրհորդանանի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Լիբանանի և Եգիպտոսի ներկայացուցիչների կողմից։ Բացի Սաուդյան Արաբիայից, մնացած արաբական պետությունները ներկայացնում էին այդ երկրների վարչապետները։ Մայիսի 5-ին այն ստորագրեց Եմենը։ Պակտը ուժի մեջ մտավ մայիսի 10-ին։

Արաբական լիգայի կառուցվածքը սկզբնական շրջանում կանխորոշվում էր միայն նրա պակտով։ Սակայն, եթե լիգայի պակտը հետագա տարիներին փոփոխություն չկրեց, ապա նրա կառուցվածքը շատ բանով փոխվեց։ Նախ, լիգայի հորհրդի 1946 թ. նոյեմբերի 30-ի որոշումով ստեղծվեց լիգայի Քաղաքական կոմիտեն, որը դարձավ հորհրդից հետո լիգայի ամենակարևոր մարմինը։ Լիգայի աշխատանքը կարգավորելու համար ընդունվեցին նաև մի շարք օրինագծեր։ 1951 թ. դեկտեմբերին հաստատվեց հորհրդի աշխատակարգի վերաբերյալ օրինագիծը։ 1951 թ. հոկտեմբերին նույնպիսի օրինագիծ ընդունվեց նաև լիգայի կոմիտեների, իսկ 1953 թ. մայիսին՝ Գլխավոր քարտուղարության վերաբերյալ³⁶։ Այս օրինագծերը ղգալիորեն փոխեցին լիգայի կառուցվածքը, ինչպես նաև որոշ լրացումներ մտցրեցին հորհրդի և կոմիտեների աշխատակարգերի ճարգերում։ Այսպես, եթե ըստ լիգայի պակտի 4-րդ հոդ-

վածի նրա կազմում լինելու էր վեց կոմիտե, ապա ըստ հորհրդի աշխատակարգի իրզան ունենալու էր հինգ կոմիտե. 1) քաղաքական, 2) տնտեսական, 3) սոցիալական և մշակութային, 4) ֆինանսական և վարչական, 5) իրավաբանական։ Կոմիտեների նիստում որոշումներն ընդունվելու էին ձայների պարզ մեծամասնությամբ, սակայն դրանք ուժի մեջ էին մտնելու հորհրդի կողմից հաստատվելուց հետո միայն։ Անհրաժեշտության դեպքում կարող էին կազմվել նոր կոմիտեներ։ Լիգայի հորհրդի նիստերը օրինական էին համարվում դրանցում անդամ երկրների մեծամասնության ներկայության դեպքում։ Արաբական լիգայի հովանու ներքո կնքվել են բազմաթիվ տնտեսական, մշակութային, քաղաքական և այլ բնույթի պայմանագրեր։ Լիգայի գործունեության շրջանակներն ընդարձակելու և նրա կառուցվածքը փոփոխման ենթարկելու առումով առանձնահատուկ նշանակություն ունի 1950 թ. ապրիլին կնքված համառեղ պաշտպանության և տնտեսական համագործակցության պայմանագիրը³⁷։ Ըստ այդ պայմանագրի երկրորդ հոդվածի Արաբական լիգայի մեկ կամ ավելի անդամների դեմ կատարված նախահարձակումը համարվում էր նրա բոլոր անդամների դեմ կատարված նախահարձակում։ Նույն հոդվածով լիգայի անդամները պարտավորվում էին դիմել «բոլոր միջոցների, այդ թվում նաև զինված ուժերի օգտագործման, նախահարձակման ենթարկված երկրին կամ երկրներին օգնելու, նախահարձակումը ետ մղելու, խաղաղությունն ու անվտանգությունը վերականգնելու համար»։ Նույն պայմանագրի 6-րդ հոդվածով նախատեսվում է լիգայի հորհրդի վերահսկողության ներքո ստեղծել Համատեղ պաշտպանության խորհուրդ՝ բազկացած անդամ երկրների արտաքին գործերի և ազգային պաշտպանության մինիստրներից։ Այդ հորհրդին կից գործելու էր նաև մշտական ռազմական կոմիտե, որում ներկայացված էին լինելու գլխավոր շտաբների ներկայացուցիչները, և որը կոչված էր լինելու կոորդինացնել անդամ երկրների ռազմական նախագծերը, ինչպես նաև՝ զբաղվել նրանց զինված ուժերի միասնականացմամբ և համանման այլ հարցերով։ Համատեղ պաշտպանության խորհրդում ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունված որոշումները պարտադիր էին լինելու բոլորի համար։ Նախատեսվում էր նաև Տնտեսական խորհուրդ ստեղծել, որին ստորադասվելու էր համանուն կոմիտեն։ Պայմանագրի 10-րդ հոդվածը արգելում էր անդամ երկրներին կնքել որևէ պայմանագիր, որի դրույթները անհամատեղելի կլինեին տվյալ պայմանագրի հետ։

1964 թ. որոշում ընդունվեց Արաբական լիգայի բարձրագույն օրգան

³⁴ Նույն տեղում, էջ 240։

³⁵ Goma A., op. cit., p. 258—264.

³⁶ „Internal Regulations of the Council of the League of Arab States“; „Internal Regulations of the Committees of the League of Arab States“; „Internal Regulations of the Secretariat-General of the League of Arab States“—Khalil M., op. cit., p. 82—90.

³⁷ «Մուհադաթ ադ-դիֆա ալ-մուշթարաբ ուա առ-տասուն ալ-իկտիսադի», Մ. Ղանեմ, Մուհադաթան ան ջամիաթ ադ-դուալ ալ-արաբիյա, ալ-Կահիրե, 1960, էջ 125—130։

Համարել արաբական երկրների ղեկավարների և թագավորների կոնֆե-
րանսները, որոնք գումարվելու էին տարին մեկ անգամ³⁸: 1965 թ. սեպ-
տեմբերին Կասաբլանկայում կայացած արաբական երկրների ղեկավար-
ների և թագավորների կոնֆերանսում ընդունված «Արաբական համե-
րաշխության պակտը» որոշվեց համարել Լիգայի պակտի հավելված: Լի-
գայի գոյության մոտ քառասուն տարիների ընթացքում բազմաթիվ առա-
ջարկներ էր կատարվել այն արաբական ավելի սերտ միությունով
արաբական երկրների ֆեդերացիայով, գործադիր իշխանությամբ, մի
արաբական միությունով և այլն, փոխարինելու վերաբերյալ: Սակայն
արաբական երկրների միջև դեռ 40-ականների սկզբին շոշափելի, իսկ
այսօր արդեն ավելի ցցուն դարձած հակասություններն ու տարբերու-
թյունները, արաբական աշխարհի բոլոր երկրներն ընդգրկող համագոր-
ծակցությունն առաջիմ հնարավոր են դարձնում իրագործել հիմնակա-
նում միջպետական, ռեգիոնալ կազմակերպության՝ Արաբական լիգայի
միջոցով:

КАРАМАНУКЯН Ш. Л.

ПРОГРАММНЫЕ ДОКУМЕНТЫ ЛИГИ АРАБСКИХ
ГОСУДАРСТВ.

Резюме

В статье анализируются программные документы Лиги араб-
ских государств, принятые в основном в 40—50-е годы, однако и по-
сей день определяющие деятельность этой организации. Вопреки же-
ланию империалистических держав, программные документы Лиги
арабских государств носили определенно выраженный политичес-
кий характер. Наряду с этим в них подчеркивается межгосудар-
ственная региональная направленность созданной организации.

Статья также дает определенное представление о структуре Ли-
ги арабских государств.

³⁸ Chali B., La reforme de la Ligue arabe— „Renaissance du monde arabe“
Belgique, 1972, p. 483.

Պ. Չ. ՍԱՐԱԶՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտ

ԼԻԳԱՆԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
1967—1975 ԹԹ.

1967—1975 թթ. Լիբանանում տեղի ունեցած քաղաքական և սո-
ցիալ-տնտեսական տեղաշարժերն ու փոփոխությունները կարևոր նշանա-
կություն ունեցան երկրի հետագա զարգացման հարցում:

1967 թ. իսրայելական ագրեսիան սրեց արաբական երկրների, այդ
թվում նաև Լիբանանի սոցիալ-տնտեսական և քաղաքական տագնապը:
Լիբանանի կառավարող առևտրաբուրժուական և կալվածատիրական
վերնախավը ճիգ ու ջանք շխնայեց մեկուսացնելու երկիրն արաբական
աշխարհից, որպեսզի շմասնակցեր, թեկուզև նվազագույն չափով, ագ-
րեսիայի հետևանքների վերացմանն ուղղված ազատագրական սլաքա-
րին: Ընդհակառակը, նա ավելի ամրապնդեց երկրի տնտեսական և քա-
ղաքական կախվածությունը համաշխարհային կապիտալիստական տըն-
տեսությունից և միջազգային իմպերիալիզմից, գործուն մասնակցություն
ցուցաբերեց իրականացնելու իմպերիալիզմի դավերը՝ հուժկու հարված
հասցնել երկրում ուժեղացող առաջադիմական ու հայրենասիրական
ուժերին և Պաղեստինի դիմադրական շարժմանը:

Լիբանանի սոցիալ-տնտեսական ճգնաժամի պատճառները գալիս
են խոր անցյալից: Այստեղ կապիտալիստական արտադրահարաբերու-
թյունների զարգացումը սկիզբ առավ այն ժամանակ, երբ համաշխար-
հային կապիտալիզմը թեկուզև իմպերիալիզմի փուլը: Այդ ժամանակ
էլ Լիբանանին վերապահվեց յուրատեսակ առևտրական միջնորդի դեր
իմպերիալիստական տերությունների և արաբական երկրների միջև, հան-
գամանք, որով պայմանավորված էր նրա տնտեսության միակողմանի
զարգացումը: Առևտրական միջնորդությունից ստացված մեծ հարստու-
թյունները օրգանապես կապեցին երկիրը արտասահմանյան, հատկա-
պես ֆրանսիական կապիտալի հետ: Այս հանգամանքը ինչ-որ ժամա-
նակ նպաստեց տնտեսության որոշ «ծաղկման», այն էլ մեկ բնագավա-
ռում՝ սպասարկությունների ոլորտում: Սակայն «ծաղկումը» երկար
չշարունակվեց և տնտեսական լիբերալիզմը սկսեց ապրել իրեն հատուկ
ճգնաժամը:

Լիբանանի ֆինանսների և պլանավորման նախկին մինիստր, փառանքավորների տեսաբան, հայազգի տնտեսագետ ժողովի Շաղբը երկրի տնտեսական զարգացման ողջ հեռանկարը տեսնելով «Նեոլիբերալիզմի» մեջ, ստիպված էր խոստովանել, որ «լիբանանյան տնտեսության հիմքերը ամուր չեն, քանզի մեր ազգային եկամտի մեծ մասը գալիս է առևտրից և այլ սպասարկություններից»¹:

Ինչ վերաբերում է սպասարկությունների համակարգին, ապա բուրժուական տնտեսագետները փորձելով հավաստիացնել, որ այն անընդհատ բարգավաճման մեջ է, իբրև ապացույց վկայակոչում էին բանկերում կուտակված ավանդների աճը: Հիրավի, դրանք 1967 թ. կազմում էին 2,621 մլն. լիբանանյան լիրա², իսկ 1974 թ. հասան մինչև 7 միլիարդ լիրա³: Եվ սակայն հարցի էությունն այն էր, որ կապիտալների ներթափանցումը եթե մի կողմից հանդիսանում էր տնտեսական լիբերալիզմի գլխավոր ուժը, ապա մյուս կողմից նրա թուլության հիմնական պատճառն էր: Փաստը մնում է փաստ, որ լիբանանյան տնտեսության հակասությունները միշտ չէ, որ լուծվում էին՝ ճնշվելով կապիտալի շրջանառության վրա, որովհետև դժվար էր մշտապես ապահովել կապիտալների ներհոսքի բարձր տեմպերը: Լիբանանի դրամական շուկան մեկուսացված չէր արտաքին ազդակներից՝ կապիտալիստական աշխարհի տնտեսական ճգնաժամներից, մանավանդ, որ նրա բանկային համակարգը աչքի էր ընկնում իր թուլության և ի վիճակի չէր դիմադրել կապիտալիստական աշխարհի դրամական շուկաների մրցակցությանը: Բացի այդ, կապիտալների մեծ մասը ներդրված լինելով ցպահանջ, այլ խոսքով՝ ավանդատուն իրավունք ունենալով ցանկացած պահին իր կապիտալը ետ վերցնել, անկարելի էր դառնում դրանց օգտագործումը երկարաժամկետ վարկերի համար: Կավազուն դեպքում կապիտալները ներգրվում էին տնտեսության անարտադրողական ճյուղերում:

Լիբանանում տեղի էր ունենում բանկերի համակենտրոնացում: Եթե 1966 թ. սկզբներին գործող բանկերի թիվը հասնում էր 130-ի⁴, ապա 1967 թ.՝ 90-ի⁵, իսկ 1975 թ.՝ 75-ի⁶: Երկրում կային տեղական, արտաբան, խառը և օտարերկրյա բանկեր, որոնցում գերիշխող էր հանդիսանում օտարերկրյա կապիտալը: Բավական է նշել, որ օտարերկրյա, հիմնականում ամերիկյան 11 բանկերում կենտրոնացված էին կապի-

տալների 61,2%-ը⁷: Սա հնարավորություն էր ընձեռում իմպերիալիստական մենաշնորհային կապիտալին հսկողություն սահմանել Լիբանանի տնտեսության, այդ թվում սպասարկությունների և ֆինանսների վրա:

1971 թ. սկսած Լիբանանը սկսեց ապրել կապիտալիստական տնտեսությանը բնորոշ ինֆլացիա, որի տեմպերը 1972, 1973, 1974 թվականներին համապատասխանաբար կազմեցին 14,25 և 18 տոկոս⁸: Դա պատճառ դարձավ լիբանանյան լիրայի արժեքազրկմանը, սպառման առարկաների գների բարձրացմանը և ռեալ աշխատավարձի նվազմանը:

Տնտեսության վիճակն ավելի վատթարացավ, երբ 1972 թ. կառավարության հովանավորությամբ բանկային և հիպոտեկային կապիտալները միացան լիբանանցի էմիրանտների կապիտալին: «Այս երևույթը,—գրել է մարքսիստ տնտեսագետ Քամալ Հանին,—հասցրեց հիպոտեկային այնպիսի մրցակցության, որի նախադեպը չի եղել Լիբանանի պատմության մեջ: Անշուշտ, դրա հետևանքը միանգամայն պարզ է՝ ազգային հարստության համակենտրոնացում մագնատների ձեռքում, ի հաշիվ աշխատավորական զանգվածների, մանր և միջին ունեւորների, որոնք հետզհետե նեոլիբերալիզմի սնանկության անդունդը»⁹:

Տնտեսական լիբերալիզմի ջատագովները, փողհարելով սպասարկությունների դերը, փորձում էին քողարկել արտաքին առևտրի խրոնիկական դիֆիցիտը: Այսպես, 1967 թ. նրա բացասական հաշվեմանցորդը կազմեց 1317 մլն.¹⁰, իսկ 1975 թ.՝ 2,3 մլրդ. լիրա¹¹:

Բուրժուական տնտեսագետները, անգամ ռեֆորմիստները, որոնք մինչև վերջին տարիները գտնում էին, որ Լիբանանի տնտեսության միակողմանի զարգացումն ամենաօրինակելին էր և որոնք երբեք չէին ընդունում այն փաստը, որ Լիբանանում գոյություն ունեւ սոցիալ-տնտեսական ճգնաժամ, սկսեցին արդեն խոսել Լիբանանի «Նեոլիբերալիզացման» և «տնտեսական հավասարակշռություն» ստեղծելու մասին:

Տնտեսության զարգացման հարցը քննելիս, 1974 թ. Լիբանանի կոմկուսը նշեց, որ խոշոր բուրժուազիան բաժանվում է երկու գլխավոր հոսանքի: Առաջինը ներկայացնում են խոշոր առևտրականները, կոմպրադորները և ավանդատուները, որոնք պահաջում էին էլ ավելի ամրապնդել երկրի առևտրատնտեսական և քաղաքական կապերը իմպերիալիստական պետությունների հետ: Երկրորդ հոսանքը ներկայացնում է արդյունաբերական բուրժուազիան, որն առաջարկում է համագործակցության

¹ «Ալ Իկթիսադ ալ Լուրնանի ուալ Արարի» Բեյրութ, № 212, հոկտեմբեր, 1968, էջ 113:

² «Աթ Քարիկ», Բեյրութ, թիվ 3, մարտ, 1971, էջ 68:

³ Նույն տեղում, № 5, մայիս, 1974, էջ 7:

⁴ Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958), Ե., 1967, էջ 34:

⁵ «Աթ Քարիկ», թիվ 3, մարտ, 1971, էջ 68:

⁶ «БСЭ, Ежегодник, 1977», М., с. 307.

⁷ «Ալ Վասիկ ալ Փամիլա լիլ Սուֆամար աւ Սալիս լիլ հիզբ աշ Շիլաի ալ Լուրնանի» («այսուհետև՝ Լիբանանի կոմկուսի (ԼԿԿ) III համագումարի նյութերը», Բեյրութ, 1971, էջ 61,

⁸ «Աթ Քարիկ», թիվ 1—8, հունվար-օգոստոս, 1976, էջ 75:

⁹ «Ալ Արար», Բեյրութ, թիվ 149, 1. 1. 1976, էջ 28:

¹⁰ «Ալ Իկթիսադ ալ Լուրնանի ուալ Արարի», թիվ 260, 1971, էջ 70:

¹¹ «БСЭ, Ежегодник, 1977», с. 307.

նոր ձև՝ առևտրա-արդյունաբերական և հետևապես՝ ֆինանսական միջ-
նորդություն կիրանանի ու կապիտալիստական պետությունների միջև և
պահանջում է հիմնել վերամշակող արդյունաբերական այնպիսի ձեռ-
նարկություններ, որոնք պետք է դառնային կապիտալիստական երկր-
ների, մասնավորապես ԱՄՆ-ի մենաշնորհային բնկերությունների մաս-
նաճյուղերը¹²:

Կիրանանը արդյունաբերական տեսակետից թույլ զարգացած եր-
կիր է: Նրանում համարյա բացակայում է ծանր արդյունաբերությունը:
Առավելապես զարգացած են թեթև և մշակող արդյունաբերական ճյուղե-
րը: Կիրանանում կան տեքստիլ, պատրաստի հագուստեղենի, կոշիկեղենի,
կաշվի, փայտամշակման, ծխախոտի, սննդի, թղթի և ցեմենտի ֆաբրի-
կաներ և գործարաններ: Գոյություն ունեն պողպատածուլման պլաստիկ-
քիմիական, նավթագտիչ և մետաղամշակման գործարաններ:

1973 թ. պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն կի-
բանանում կային 18 հազար արդյունաբերական, այդ թվում՝ 12 հա-
զար արհեստավորական ձեռնարկություններ, որոնցում զբաղված էր 120
հազար բանվոր¹³: Արդյունաբերության ոլորտում տարեցտարի աճում
էին կապիտալ ներդրումները: Արդյունաբերողների միության տվյալնե-
րով 1970 թ. ընդհանուր կապիտալ ներդրումները կազմեցին 1175 մլն.
իսկ 1972 թ.՝ մոտ երկու մլրդ. լիրա¹⁴:

Միաժամանակ ուժեղացել էր օտարերկրյա կապիտալի ներթափան-
ցումը արդյունաբերության մեջ: 1967—1974 թթ. կիրանանի արդյունա-
բերական արտադրանքը շոշափելի բարգավաճում արձանագրեց: Այդ էին
հաստատում արտահանվող տեղական ապրանքների բարձր ցուցանիշնե-
րը, որոնց տարեկան միջին աճը մինչև 1973 թ. կազմում էր 25—30%, իսկ
1974 թ.՝ 120%: 1967 թ. երկրից արտահանվել էր 87 մլն¹⁵, իսկ 1974 թ.
(առաջին 7 ամիսների համար)՝ 475 մլն. լիրայի արժողությամբ արդյու-
նաբերական արտադրանք¹⁶: Բարձրացել էր նաև արդյունաբերության
բաժինը ազգային եկամտի մեջ: Եթե 1965 թ. այն տալիս էր ազգային
եկամտի 13%-ը միայն, ապա 1973 և 1974 թթ. կազմեցին համապա-
տասխանաբար 15 և 16,7%¹⁷:

Արդյունաբերական զարգացման հետ միասին շոշափելի տեղաշարժեր
արձանագրվեցին բանվոր դասակարգի բանակական և որակական կա-
ռուցվածքի մեջ: Կիրանանում աշխատավորության թիվը կազմում էր մոտ
572 հազար մարդ, այսինքն բնակչության 20—25%-ը: Բանվոր դասա-

կարգի թիվը հասնում էր 390139-ի, որոնցից մշտական գործավորներ՝
203265, օրավարձով աշխատողներ՝ 18680, ընտանիքի օժանդակող ան-
դամներ՝ 35670, ուրիշներ՝ 11 584, գործազուրկներ՝ 20 940: Այս թվերին
պետք է ավելացնել 100000 շրջիկ և սեղոնային, շինարարության, երկրա-
գործության և տրանսպորտի աշխատողներ¹⁸:

Արդյունաբերության մեջ աշխատող բանվորները 1970 թ. կազմում
էին երկրի աշխատուժի 17%-ը, 1975 թ.՝ 20%, այսինքն յուրաքանչյուր
հինգ աշխատողներից մեկն աշխատում էր արդյունաբերության մեջ¹⁹:

Պետք է ասել, որ արդյունաբերության զարգացումն ընդհատվեց
երկրում բռնկված քաղաքացիական պատերազմի պատճառով, որի հետե-
վանքով արդյունաբերության կրած նյութական վնասները միայն 1975 թ.
կազմեցին 1,5 մլրդ լիրա, իսկ արտադրանքը կրճատվեց 10%-ով²⁰:

Հարկ է նշել, որ ծանր էին աշխատավորական զանգվածների պայ-
մանները: Նշված ժամանակաշրջանում սովորական երևույթ էին դարձել
բանվորներին քմահաճ ձևով աշխատանքից ազատ արձակելը, հարկադրա-
բար գործից բացակայող աշխատողներին օրավարձից զրկելը, աշխա-
տավարձի նվազագույն չափի վճարումը:

Կիրանանի բուրժուա-կալվածատիրական կարգի բացասական հե-
տևանքներն ավելի ակներև էին գյուղատնտեսության բնագավառում:
Երկրի կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացումը
գաղութատիրության պայմաններում բնավ խնդիր չդրեց ավատատի-
րական վարչակառույցի ոչնչացումը: Դեռ ավելին՝ նախկին խոշոր կալվա-
ծատերերի ստվար մասը հանդիսանում էր նորաստեղծ հողային բուր-
ժուազիայի հիմքը: Ֆեոդալական ու կապիտալիստական արտադրահա-
րաբերությունների միահյուսվածությունը առաջ բերեց գյուղական բնակ-
չության շահագործման առավել դժվար ձևեր:

Գյուղատնտեսության մեջ մինչև 1970 թ. զբաղված էր տնտեսապես
ակտիվ բնակչության 45,3%-ը²¹: Սակայն հետագայում գյուղից քաղաք
կատարվող արտահոսքի պատճառով այդ թիվը նվազեց 19%-ի²²: Տա-
րեցտարի նվազում էր նաև գյուղատնտեսությունից ստացվող ազգային
եկամտի բաժինը. 1948 թ. այն կազմել է 20%, 1954 թ.՝ 18%, 1965 թ.
15%, 1970 թ.՝ 12%²³:

Գյուղատնտեսության զարգացման գլխավոր խոչընդոտներից էր
հողային տարածությունների խիստ կենտրոնացումը մի բուռ խոշոր

¹² Տե՛ս «Կանչ», թիվ 172, 1. 6. 1974:

¹³ Տե՛ս «Ալ Ախբար», թիվ 110, 15.3. 1975, էջ 21—22:

¹⁴ «Աթ Քարեկ», թիվ 5/6, մայիս-հունիս, 1975, էջ 32:

¹⁵ Նույն տեղում, թիվ 5, մայիս, 1974, էջ 5:

¹⁶ «Ալ Ախբար», թիվ 110, 15.3. 1975, էջ 25:

¹⁷ Նույն տեղում, թիվ 147, 13. 12. 1975, էջ 23:

¹⁸ Բոլոր տվյալներն ըստ՝ «Կանչ»-ի թիվ 301, 14. 5. 1977:

¹⁹ «Աթ Քարեկ», թիվ 5/6, մայիս-հունիս, 1975, էջ 34:

²⁰ ВСЭ, Ежегодник, 1977, с. 307.

²¹ «Ալ Իկթիսադ ալ Լուրնանի ուալ Արաբի», թիվ 242, 1970, էջ 27:

²² Ս. Թակիր էդ Դիճ. Աթ Քատար աթ Քարիխի Լի Միշկա ալ Լուրնանիյա 1920—
1970, Բեյրութ, 1977, էջ 123:

²³ «Աթ Քարեկ», թիվ 8, օգոստոս, 1971, էջ 20:

Ֆեոդալ-կալվածատերերի ձեռքում: Երկրում տիրող հողային սեփականությունը վիճակի մասին պատկերացում կարող է տալ հետևյալ աղյուսակը, որը կազմված է լիբանանի գյուղատնտեսության մինիստրության ըստ 1966 թ. վիճակագրական տվյալների:

Աղյուսակ 1²⁶

Հողատիրության շաբլ (դոնումներով)	Հողատերերի թիվը	Հողատերերի թիվը %-ով	Հողատարածությունները դոնումով	Հողատիրության տոկոսը ընդհ. հողատարածության նկատմամբ
1—5	44510	35	113361	3,7
5—10	23600	18,7	158000	5,1
10—20	23708	18,7	324000	10,4
20—30	10598	8,3	256625	8,3
30—40	6706	5,3	223000	7,3
40—50	5949	4,6	261000	8,4
50—100	7277	5,8	491000	15,8
100—200	3017	2,3	368300	12,5
200—500	1304	1	364000	11,8
500—1000	299	0,2	211029	6,8
1000—2500	119	0,09	15902	6,5
2500-ից ավելի	21	0,01	103985	3,4
Ընդամենը	127108	100	2091905	100

Լիբանանի պայմաններում սակավահող գյուղացի էր համարվում 1—10 դոնում (1 դոնումը—0,25 հա), մանր՝ 10—30, միջակ՝ 30—50, հարուստ՝ 50—200, խոշոր կալվածատեր՝ 200—2500-ից ավելի դոնում ունեցողը:

Ամփոփելով աղյուսակի տվյալները, տեսնում ենք, որ 68110 սակավահող և մանր գյուղացիներ, որոնք կազմում էին հողատերերի 80,7%-ը, տիրում էին ընդհանուր մշակելի հողատարածության 27,5%-ին միայն: 12656 միջակ գյուղացիների բաժինը 15,7% էր, 10294 հարուստ հողատերերինը 28,3%, իսկ 1743 խոշոր կալվածատերերը, որոնք կազմում էին բոլոր հողատերերի միայն 1,3%-ը, տիրում էին 28,5%-ին, այսինքն՝ ունեին ավելի շատ հողատարածություն, քան աղքատ և մանր գյուղացիները միասին վերցրած: Իհարկե, աղյուսակից դուրս էին մնացել հողազուրկ գյուղացիները և գյուղատնտեսական բանվորները, որոնք կազմում էին գյուղացիության 44%-ը²⁵:

Լիբանանը «երրորդ աշխարհի» այն հազվագեղ երկրներից է, որտեղ կառավարությունը համարյա ոչ մի միջոցառում չի ձեռնարկել ագրարային հարաբերությունների կարգավորման ասպարեզում: Երկրում գոյություն չունի որևէ օրենք, որ սահմանի շահագործվող գյուղացիու-

թյան և շահագործող ֆեոդալ-կալվածատերերի փոխհարաբերությունները: Հողի վարձակալման կարգը, որը սակայն չի կիրառվում ընդհանրապես, պատկանում է 1930 թ. ֆրանսիական մանդատի ժամանակին, իսկ մուհասասայի կանոնակարգը՝ 1877 թ. օսմանյան հնամաշ օրենքներին, որոնք լիովին ապահովում են վերնախավի շահերը: Երկրում գեռես կիրառվում են վարձակալման այնպիսի ձևեր, ինչպիսիք են մուրաբաա՝ քառորդային, որտեղ գյուղացին ստանում է բերքի 1/4-ը, իսկ հողատերը՝ 3/4-ը և մունասաֆա՝ կիսրարություն, այս դեպքում՝ բերքի կեսը:

1958 թ. սկսած պետությունը ստիպված եղավ որոշ միջամտություն ցուցաբերել խոպան հողերի յուրացման, ռոտզման միջոցների և ֆինանսավորման բնագավառում: Այսպես կոչված «Կանաչ ծրագրի» հինգ տարիների ընթացքում յուրացվեց ընդամենը 15 հազար հեկտար՝ այն էլ կալվածատերերի հողատարածություններում: Նախատեսված 170 հազար հա յուրացվելիք հողատարածության ծախսերը հասնում էին 700 մլն. լիրայի, իսկ դրանց տարեկան շահը՝ 200 մլն լիրայի²⁶:

Լիբանանի կառավարությունը հետևողական չգտնվեց իր իսկ առաջ քաշած խնդիրների կենսագործման մեջ: Գրա ապացույցն է այն փաստը, որ 28 տարվա ընթացքում ռոտզվող հողատարածությունը ավելացել է ընդամենը 16 հազար հա²⁷: Նույն բանը կարելի է ասել գյուղատնտեսության ֆինանսավորման մասին: Գյուղատնտեսության զարգացման համար հատկացվում էր պետական բյուջեի 2,60%-ը միայն, որի 80%-ը կլանում էր գյուղատնտեսական վարչամեքենան: Գյուղացիներին փոխտրվություն տրամադրելու գործում աննշան դեր էր խաղում Լիբանանի գյուղատնտեսական, արդյունաբերական և հիպոտեկային բանկը: Այս ամենը պատճառ հանդիսացավ մեծ թվով աղքատ, մանր և միջակ գյուղացիների տնտեսությունների քայքայման, որոնք պարտքերից ազատվելու համար հաճախ իրենց հողակտորները զիջում էին կալվածատերերին կամ վաճառում վաշխառուներին և դառնում կիսապրոլետարներ:

Մինչև 1971 թ. գյուղատնտեսական արտադրանքը տեղաբաշխի մեջ էր, իսկ դրանից հետո սկսեց նվազել: Այսպես, գյուղատնտեսական արտադրանքը 1971 թ. կազմել է 766 մլն., 1972 թ.՝ 582 մլն., 1973 թ.՝ 562 մլն. լիրա²⁸: Գյուղատնտեսական արտադրանքի նվազումը երբեք արդարացուցիչ փաստ չի կարող ծառայել մի բուռ վաշխառուների և միջնորդների համար, որոնք առավելագույն շահույթ ստանալու նպատակով մենաշնորհ էին մտցնում բնակչության առաջին անհրաժեշտության սննդամթերքների վրա, գները բարձրացնում էին 100%-ով: Այս ամենը խոսում է այն մասին, որ Լիբանանի գյուղատնտեսության առջև լուրջ խնդիրներ էին կանգնած:

²⁴ Նույն տեղում, էջ 30:

²⁵ «ԼԿԿ-ի III համագումարի նյութերը», էջ 638:

²⁶ Նույն տեղում, էջ 632:

²⁷ Նույն տեղում, էջ 633:

²⁸ «Կանչ», թիվ 172, 1. 6. 1974:

1972 թ. տեղի ունեցավ Լիբանանի կոմկուսի III համագումարը, որի ընդունած ազդարարչին ծրագրի մեջ առաջ էր քաշվում հողային հարցը լուծելու վճռական պահանջը: Հողային արմատական բարեփոխությունների իրականացման նպատակով կոմկուսը խնդիր էր դնում.

1. Սահմանել հողատիրություն անավելագույն չափ՝ հաշվի առնելով հողակտորի արգավանդությունը, շահագործման ձևերը, շուկայից մոտիկ կամ հեռու լինելը:

2. Բռնագրավել բոլոր այն հողատարածությունները, որոնք գտնվում են տեղական և օտարերկրյա կապիտալի տնօրինության ներքո և որոնք հափշտակվել էին գյուղացիներից՝ պարտքերի բարձր տոկոսների դիմաց:

3. Սահմանել առաջադիմական հարկ ժամանակակից այն տնտեսությունների նկատմամբ, որոնց սեփականությունը քիչ է գերազանցում սահմանված անավելագույն չափին:

4. Բաժանել բռնագրաված հողատարածությունը հողագուրկի, սակավահող և գյուղատնտեսական բանվորներին՝ անփոխհատուց և սեփականատիրական իրավունքով, նույնպես հաշվի առնելով հողի արդյունավետության հանգամանքները: Հող ստացող գյուղացին ենթարկվում է հարկի, եթե նա առաջին տարին չմշակի այն, իսկ հաջորդ տարին ետ է վերցվում: Ժամանակակից տեխնիկա գործածող խոշոր տնտեսությունները ոչ բաշխվելու են և ոչ էլ մանրաբաժանվելու, այլ օգտագործվելու են որպես պետական կամ կոոպերատիվ տնտեսություններ:

5. Հող ստացող գյուղացիներին տրամադրել վարկ, սերմացու, տեխնիկական և ոռոգման անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու անավել արդյունավետ արտադրանք:

6. Պաշտպանել մանր ու միջակ հողատերերին կապիտալի ներգործությունից և ապահովել անհրաժեշտ օգնություն:

Ծրագրում համապատասխան լուծումներ էին առաջադրվում գյուղացիության համար մեծ նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներին, ինչպիսիք էին՝ գյուղացիների կենսական շահերի պաշտպանությունը, սոցիալական ապահովագրության երաշխավորումը, գյուղատնտեսության տարերային և ինքնագլուխ հետագա զարգացման արգելակումը, խամ ու խոպան հողերի յուրացումը, գյուղատնտեսական արտադրանքի բարձրացումը, ոռոգման սիստեմի ստեղծումը, ժամանակակից տեխնիկայի կիրառումը շուկայում և այլն²⁹:

Լիբանանում տիրող հարկային կարգը միանգամայն հակասում էր ժողովրդական լայն խավերի շահերին: Հարկի հիմնական ձևը անուղղակի հարկն էր, որ դրվում էր սննդամթերքների, ծխախոտի, խմիչքի, շինանյութերի, լայն սպառման ապրանքների և այլնի վրա: Կառավարող

շրջանները բազմաթիվ անուղղակի հարկեր ու մաքսեր, ինչպիսիք են՝ ավտոմեքենաների մաքսը, դրոշմանիշների, անտառային, պետական անվտանգության, գրանցման հարկերը, համարում էին ուղղակի: Իրականում գյուղություն ունեին ուղղակի հարկի երեք ձևեր միայն՝ եկամտահարկ, կալվածների հարկ և կապիտալի շրջանառության տուրք:

1967 թ. Լիբանանում անուղղակի հարկերը կազմում էին 354,3 մլն, իսկ ուղղակի հարկերը՝ 238,6 մլն լիրա³⁰: Այնինչ 1975 թ. բյուջետային հարկերի 1250 մլն լիրայից անուղղակի հարկերը կազմեցին 650 մլն կամ 51%-ը, իսկ ուղղակիները՝ 375 մլն լիրա, այսինքն 29%-ը միայն³¹: Գա միաժամանակ նշանակում էր, որ 1975 թ. անուղղակի հարկերը 1967 թ. համեմատությամբ աճել էին 83%-ով, մինչդեռ ուղղակի հարկերը՝ միայն 57%-ով:

Լիբանանի կոմկուսը և բոլոր առաջադիմական ուժերը միահամուռ հանդես էին գալիս հարկային քաղաքականության դասակարգային կողմնակալության դեմ: Նրանք պահանջում էին երկրում կիրառել մեկ միասնական՝ պրոգրեսիվ հարկի սիստեմը: Պաշտոնական վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ազգային եկամուտը բաշխվում էր հետևյալ ձևով:

Ազգուսակ ³²

Պուժրը	Բնակչության %-ը	Ազգային եկամտի %-ը
Մեծահարուսաներ	4 %	32 %
Հարուստներ	14 %	28 %
Միջակներ	32 %	22 %
Աղքատներ	40 %	18 %
Ընչազուրկներ	9 %	—

Վերը նշված թվերը ցույց են տալիս, որ բնակչության 18%-ը վայելում էր ազգային եկամտի 60%-ը, իսկ մնացած 82%-ին բաժին էր ընկնում միայն 40%-ը: Այս փաստը մերկացնում է կեղծ պնդումը ազգային եկամտի աճի և բարձր կենսամակարդակի մասին: Այն ցույց է տալիս, որ բնակչության ջախջախիչ մեծամասնությունը ամենօրյա զրկվարին պայքար էր մղում իր ապրուստը հայթափելու համար: ՄԱԿ-ի տնտեսագիտական միսիան 1975 թ. ստուգելով Լիբանանի տնտեսությունը, արձանագրում էր կյանքի արժեքի զգալի բարձրացում:

Բանվոր դասակարգի երկարատև անխոնջ պայքարի շնորհիվ Լիբանանում 1946 թվականից գործում էր աշխատանքային օրենքը, որն այնու-

²⁹ Տե՛ս «ԼԿԿ-ի III համագումարի նյութերը», էջ 645—662:

³⁰ «Ալ Իկթիսադ ալ Լուբնանի ուալ Արարի», թիվ 264, էջ 27:

³¹ «Ալ Ախբար», թիվ 130, 9. 8. 1975, էջ 23:

³² Ա. Խակիի էջ Դին, աթ Թատալոր աթ Թարիխի..., էջ 92:

հետև լրացվեց 1971 թ. «առողջապահական ապահովագրության» և 1973 թ.՝ «սոցիալական ապահովագրության» օրենքներով: Ընդ թիվ է նշված օրենքները բավականին թերի կողմեր ունենին, սակայն կիրանանի կոմկուսի և «Բանվորների ու ծառայողների արհմիությունների ազգային միության» մղած երկարատև պայքարը վճռական դեր խաղաց աշխատավորական զանգվածների պահանջների իրագործման ուղղությամբ:

1946 թվականից բանվոր դասակարգը անդու պայքար էր մղում աշխատանքային օրենքի հակաբանվորական 50-րդ հոդվածի դեմ, որը իրավունք էր տալիս ձեռնարկատիրոջը բանվորին, ծառայողին և պաշտոնյային քմահաճորեն ազատ արձակել աշխատանքից: 1974 թ. այդ պայքարը պսակվեց հաղթանակով և փոփոխության ենթարկվեց 50-րդ հոդվածը: Այդ առթիվ «Կանչը» գրում էր. «Այն, ինչ ձեռք ձգվեցավ անցնող շաբաթ՝ կարևոր հաղթանակ մը կը հանդիսանա: Կը մնա զայն պահանջներ, դարգացնել և օգտագործել՝ ի խնդիր նորանոր հաղթանակներում»³³:

«Կիրանանի բանվորների ու ծառայողների արհմիությունների ազգային միությունը» (հիմնադրվել է 1966 թ.) ընդգրկում էր 135 արհեստակցական միություն՝ 50 հազար բանվորով, այսինքն աշխատավորական զանգվածների միայն 13%-ը³⁴: Նշենք, որ աշխատանքային օրենքը արհմիություններ կազմակերպելու իրավունքից զրկում էր աշխատավորության կարևոր հատվածին՝ գյուղատնտեսական բանվորներին, տնային սպասարկողներին, պետական և քաղաքապետարանական հաստատություններում օրավարձով կամ ժամանակավոր կերպով աշխատողներին: Բանվորական շարժման համախմբման ու կազմակերպման գործում խոշոր նշանակություն ունեցան արհմիությունների ազգային միության առաջին (1970 թ.) և երկրորդ (1975 թ.) համագումարները:

Աշխատավորների մեծ նվաճումներից էր 1971 թ. ընդունված օրենքը առողջապահական ապահովագրության մասին, քանզի աշխատավորները զրկված էին այնպիսի իրավունքներից, ինչպիսիք էին հիվանդության ժամանակավոր անաշխատունակության վարձատրությունը, աշխատող հղի կանանց փոխհատուցումները, բժշկվելու և դեղորայք ստանալու հնարավորությունները, իրավունքներ, որոնց ոտնահարում էր աշխատանքային օրենքի սահմանափակ բնույթը³⁵:

Սոցիալական ապահովագրության կարգը 1974 թ. վերջերին ընդգրկում էր մոտ 200 հազար աշխատող: Այս բնագավառում գոյություն

ունեն երեք տեսակ վճարումներ, 1. ծառայության ավարտման կենսաթոշակ, 2. երեխաներ ունեցող ընտանիքներին ցույց տրվող օգնություն և 3. առողջապահական ապահովագրություն: Ծառայության ավարտման ասպարեղում 1967 թ. գրանցվել էին 64860, 1975 թ.՝ 193 հազ. աշխատող: Ընտանեկան փոխհատուցումից օգտվել էին 1966-ին՝ 52 հազ., իսկ 1975 թ.՝ 98 հազ. մարդ: Առողջապահական ապահովագրությունից 1975 թ. օգտվել էր 103 հազ. մարդ: Սակայն պետք է նշել, որ սոցիալական ապահովագրության հատկացումները բավական ցածր էին և կազմում էին ռեալ աշխատավարձի վճարումների 10,7%-ը միայն³⁶:

Վերջը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ կիրանանի վարչակառույցի բազմաթիվ հակասություններից պետք է առանձնացնել հետևյալները.

1. Հակասություն արտադրահարաբերությունների և արտադրողական ուժերի միջև, որը դրսևորում է առևտրաբանկային համակարգի տիրապետությունը՝ տնտեսության բոլոր լծակների վրա: Այդ հանգամանքը խոչընդոտում է արտադրողական ճյուղերի՝ արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը: Սա իր հերթին ծնում է մի կարևոր հակամարտություն՝ արդյունաբերական ու գյուղական բուրժուազիայի և առևտրաբանկային բուրժուազիայի միջև:

2. կիրանանի վարչակառույցի կախվածությունն իմպերիալիզմից սպառնում է նրա տնտեսական և քաղաքական անկախությունը: Այս հակասությունը սրեց սոցիալ-տնտեսական և քաղաքական պայքարը առաջադիմական-հայրենասիրական և հետադիմական ուժերի միջև:

3. Կիսաֆեոդալական և կապիտալիստական արտադրահարաբերությունների միահյուսվածությունը գյուղատնտեսության մեջ առաջ բերեց մի նոր հակասություն գյուղացիության և տիրապետող քաղաքական ֆեոդալիզմի միջև: Դա հանգեցրեց գյուղացիական-դեմոկրատական շարժման աննախադեպ վերելքի:

4. Հակասություն համաշխարհային իմպերիալիզմի գործակալ՝ լիբանանյան առևտրակոմպրադորական բուրժուազիայի և արաբական ազգային-ազատագրական շարժման միջև:

Ինչպես տեսնում ենք առաջին և երրորդ հակասությունների լուծումը ենթադրում է քաղաքական և սոցիալ-տնտեսական արմատական վերափոխություններ: Այնինչ երկրորդ և չորրորդ հակամարտությունների կարգավորումը մնում է ազգային-ազատագրական պայքարի շրջանակներում: Այսպիսով, ազգային-ազատագրական պայքարը միահյուսվում է ազգային-դեմոկրատական պայքարի խնդիրների հետ:

Քննարկվող ժամանակաշրջանում՝ 1967—1975 թթ. կիրանանում դասակարգային ուժերի հարաբերակցությունը փոխվեց հօգուտ առաջա-

³³ «Կանչ», թիվ 164, 6. 4. 1974:

³⁴ Նույն տեղում, թիվ 301, 14. 5. 1977:

³⁵ Ի. Բաուարի, Թարիս ալ Հարակա ալ Ուամիլա ուալ Նիկարիյա Ֆի Լուրնան, 1947—1970», հ. 2, էջ 360:

³⁶ «ԱԹ Թարիկ», թիվ 4/5, ապրիլ-մայիս, 1978, էջ 122—123:

դիմական ու հայրենասիրական ուժերի: Նրանք սկսեցին վճռական դեր խաղալ երկրի ապագայի կանխորոշման գործում: Հետադիմական հարվածային գլխավոր ուժը՝ փաղանգավորների օրգան «ալ Ամալ»-ը ինքնախոստովանության կարգով նշում էր, որ «պաղեստինցիների գոյությունը կիրանանում անհավասարակշռություն ստեղծեց, հատկապես այն ժամանակ, երբ նրան միացան հզորացած ձախ ուժերը»³⁷:

Ֆինանսական օլիգարխիայի վարչակարգը ստիպված եղավ դիմել որոշ զիջումների: 1969 թ. կազմավորվեց նոր կառավարություն, որի կազմում ազգային-հայրենասիրական ուժերի ներկայացուցիչ, Սոցիալիստական առաջադիմական կուսակցության նախագահ Ք. Ճոնբլատը ստանձնեց ներքին գործերի մինիստրի պաշտոնը: Նա վճռական դեր խաղաց կիրանանում ՊԴՇ-ի դիրքերի ամրապնդման և դեմոկրատական ազատությունների ընդլայնման գործում: Երկարատև ու տրնաչան պայքարից հետո, 1970 թ. կիրանանի կոմունիստական կուսակցությունը նվաճեց լեզվա գործունեության իրավունք:

Նշված ժամանակաշրջանում տեղի ունեցավ լիբանանյան կոմկուսի II համագումարը (1968 թ.), որն ընդունեց կուսակցության քաղաքական ծրագիրը, իսկ 1972 թ. գումարվեց III համագումարը, որը հռչակեց քաղաքական թեզիսները: Դրանք հանդիսանում էին գործունեության ծրագիր: Թեզիսներում հռչակվում էր «հանուն ազգային-դեմոկրատական վարչակարգի» լուրջ գործընթացը:

Լիբանանի քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացումը և ծառայած խնդիրները լուծելու կառավարող շրջանների անհաջող փորձերը կրկին անգամ հաստատեցին կոմկուսի ծրագրում նշված ուղիների ճշմարտացիությունը, արմատական վերափոխությունների անխուսափելիությունը: Այս նպատակին հասնելու համար կոմկուսը գլխավոր նախապայման է համարում «ֆինանսական օլիգարխիայի տիրապետության տապալումը և ազգային դեմոկրատիայի պետության ստեղծումը»³⁸:

Կոմունիստական կուսակցությունը իրավացիորեն գտնում է, որ ազգային դեմոկրատիայի պետության խնդիրներն իրենց բնույթով բնավ սոցիալիստական չեն: Նման խնդիրների կենսագործման համար անհրաժեշտ է ստեղծել առաջադիմական ուժերից բաղկացած կոալիցիոն կառավարություն, որը պետք է իրագործի հետևյալ միևնույն ծրագիրը.

ա) լուծարել ենթարկել օտարերկրյա մենաշնորհային ընկերությունները, թուլացնել ֆինանսական օլիգարխիայի տնտեսական դիրքերը, ազգայնացնել բանկային համակարգը և ապահովագրական ընկերությունները, կենտրոնացնել արտաքին առևտուրը պետական հատվածի

ձեռքում, զարգացնել և ընդլայնել ազգային արդյունաբերությունը պետական հատվածի անմիջական ղեկավարությամբ և համախառն մասնավոր ու պետական ձեռնարկությունների ստեղծման միջոցով:

բ) կիրառել հողային բարեփոխություններ, ազգայնացնել խոշոր ֆեոդալ-կալվաժատերերի սեփականությունները, սահմանել հողատիրության առավելագույն չափը, բարձրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը՝ ի շահ հողի մշակների:

գ) բարելավել աշխատավորական զանգվածների կենսամակարդակը, ապահովել նրանց կուլտուրական, կրթական, առողջապահական և սոցիալական ապահովագրության պահանջմունքները.

դ) ապահովել դեմոկրատական ազատությունները՝ աշխատանքի, մամուլի, խղճի, կուսակցություններ ու արհմիություններ կազմակերպելու իրավունքը: Վերափոխել սահմանադրությունը, որպեսզի ապահովվի քաղաքացիների իսկական ազատությունն ու մարդկային արժանապատվությունը: Հրապարակել ընտրական նոր օրենք՝ հավասար և ուղղակի ընտրական իրավունքի, զաղտնի քվեարկությամբ, դրամական ցենզի և այլ արգելքների վերացմամբ.

ե) վարել հակաիմպերիալիստական անկախ արտաքին քաղաքականություն, սերտ համագործակցություն հաստատել արաբական առաջադիմական կարգերի հետ: Բարձրացնել կիրանանի պաշտպանունակությունը՝ հենվելով սոցիալիստական երկրների և ՄՍՀՄ-ի ռազմական օգնության վրա: Օրենք հրապարակել պարտադիր զինծառայության վերաբերյալ և զինել սահմանամերձ գյուղերի բնակչությանը: Ընդլայնել կիրանանի համագործակցությունը սոցիալիստական երկրների և առաջին հերթին՝ ՄՍՀՄ-ի հետ, նպատակ ունենալով ազատագրվել համաշխարհային կապիտալիստական տնտեսության ազդեցությունից³⁹:

Սա հարուստ և գիտականորեն հիմնավորված մարքսիստական մի ծրագիր էր, որով լիբանանյան կոմունիստական կուսակցությունը կարող էր իրավամբ հպարտանալ: Ի տարբերություն երկրի ազգային-առաջադիմական և նույնիսկ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների, կոմունիստական կուսակցությունն այն ժամանակ կիրանանի միակ քաղաքական ուժն էր, որի ծրագրում ձևակերպված էին վերոհիշյալ խնդիրները:

Սակայն դեպքերի հետագա զարգացումը այլ բնույթ ստացավ: 1975 թ. կիրանանի աշակղմյան առավել հետադիմական ուժերը փաղանգավորների գլխավորությամբ սանձազերծեցին զինված բախումներ ազգային-առաջադիմական ուժերի և նրանց զաշնակից ՊԴՇ-ի դեմ: Երկրում սկիզբ առավ քաղաքացիական պատերազմը, որը ծանր հետևանք-

³⁷ Մեջբերումն ըստ՝ «Ալ Ախբար»-ի, թիվ 117, 10. 5. 1975, էջ 7:

³⁸ «Ալ-Կ-ի II համագումարի նյութերը», էջ 188:

³⁹ Տե՛ս «Ալ-Կ-ի II համագումարի նյութերը», մաս I, էջ 97—98, «Ալ-Կ-ի III համագումարի նյութերը», էջ 169—204:

ներ ունեցավ մի քանի տասնյակ հազար զոհվածներ, հարյուր հազարավոր վիրավորներ և հստակի նյութական վնասներ⁴⁰։

Անդրադառնալով քաղաքացիական պատերազմի հանգուցային հարցերին, Ն. Հ. Հովհաննիսյանը «Լիբանանահայությունը ծանր փորձության առջև» հոդվածում նշում է. «Առաջադիմական հայրենասիրական ուժերը հանդես են գալիս Լիբանանի պետական կառուցվածքի մեջ փոփոխություն մտցնելու և իշխանության հարցում մարտնիթ համայնքից մենատիրության վերացման, բուրժուական պառլամենտարիզմի սկզբունքների ընդլայնման, պաղեստինցիներին աջակցություն ցույց տալու, արտաքին քաղաքականության բնագավառում պրոարևտյան կուրսից հրաժարվելու և արաբական երկրների հետ սերտորեն համագործակցելու պահանջներով»⁴¹։

Անընդմեջ շարունակվող զինված բախումների, ներքաղաքական լարվածության և իսրայելական ոտնձգությունների հետևանքով Լիբանանի քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամը ավելի վտանգավոր փուլ թևակոխեց։ Շարունակվում է արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի անկումը, պետական բյուջեի դիֆիցիտի ավելացումը, ինֆլյացիայի աճը և կյանքի արժեքի թանկացումը։

Այժմ Լիբանանի աշխատավորական զանգվածների և բոլոր հայրենասիրական ուժերի առջև կանգնած են իսրայելական ագրեսորներին երկրից դուրս վճռելու, բոլոր օտարերկրյա զորքերը դուրս բերելու և ազգային ձրկխոսության ուղիով լիբանանյան ճգնաժամի կարգավորման բարդ ու դժվարին խնդիրներ, որոնց լուծումը կարող է խաղաղություն բերել Լիբանանին և նպաստավոր պայմաններ ստեղծել նրա սոցիալ-տնտեսական զարգացման համար։

САРАДЖЯН П. А.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ЛИВАНА (1967—1975 гг.)

Резюме

В статье рассматриваются целый ряд вопросов социально-экономического развития Ливана. Отмечается, что со второй половины 60-х годов значительное развитие в Ливане получает национальная легкая промышленность, в стране усилились классовые противоречия, установился тесный союз между прогрессивными силами, в те-

⁴⁰ Լիբանանի վերանորոգման նախագծի ընդհանուր արժեքը կազմում է 62,2 մլրդ լիրա։ Այն կենսագործվելու է 1983—1991 թթ. ժամանակահատվածում։

⁴¹ «Սովետական Հայաստան», 3 նոյեմբերի, 1979։

чение долгих лет борющимися за демократизацию общественной жизни.

На основе данных и материалов 2-го и 3-его съездов Ливанской компартии, ее программных документов и коммунистической печати, освещаются основные вопросы, связанные с социально-экономическим положением трудящихся. Раскрыты роль и значение ЛКП в борьбе за обеспечение и расширение прав трудящихся масс.

С. А. АРУТЮНЯН
Институт востоковедения АН Арм. ССР

СТАТЬЯ А. ТИРОЯНА «ЕГИПЕТ И ЕГИПЕТСКИЙ ВОПРОС»
КАК ЦЕННЫЙ ИСТОЧНИК ПО ИЗУЧЕНИЮ ВОССТАНИЯ
АХМЕДА АРАБИ В ЕГИПТЕ

Восстание Араби-паши сыграло важную роль в становлении национально-освободительного движения в Египте и на всем Арабском Востоке.

События 1881—1882 гг. довольно подробно изучены в работах советских и зарубежных востоковедов. Они нашли отражение и на страницах армянской периодической печати — газет и журналов, издававшихся в Константинополе, Измире, Венеции, Марселе, Тифлисе, Вагаршапате и т. д. На эти материалы, к сожалению, до сих пор не обращено должного внимания.

Материал из армянской периодики о египетском кризисе 1881—1882 гг. по своему характеру можно разделить на две группы.

В первую группу мы включаем оригинальные статьи, в которых дается самостоятельная оценка событиям в Египте, анализируются социально-экономическое и политическое положение в стране, причины зарождения национально-освободительного движения и многое другое. К этой группе относятся ряд сообщений корреспондентов газет «Масис» (Константинополь), «Аршалуйс Араратян» (Измир) и довольно пространная статья под названием «Египет и египетский вопрос» (Венеция).

Ко второй группе относим краткие сообщения, информации и статьи из иностранной прессы.

Сам факт существования столь большого количества материалов о египетском восстании в армянской прессе свидетельствует о том, что еще в XIX веке армянская общественность проявляла большой интерес к событиям, происходившим в Египте. Она не только ограничивалась публикацией фактов и кратких информационных, но и делала попытки подвергнуть их анализу. В этом смысле особенно примечательна вышеуказанная статья «Египет и египетский вопрос». Здесь наиболее глубоко и полно охвачены явления, имевшие место в Египте в 1881—1882 гг. Статья напечатана в журнале «Базмавеп», который издается с 1843 года непрерывно вот уже 140 лет армянской конгрегацией мхитаристов в Венеции на острове св. Лазарь и подписана инициалами О. А. Т. Как удалось выяснить, эти инициалы относятся к отцу Атанасу Тироюну, видному общественному деятелю, редактору журнала «Базмавеп» в 1883—1888 и в 1906 гг.

Надо сказать, что статья «Египет и египетский вопрос» не единственное сообщение о Египте, напечатанное в журнале «Базмавеп». Здесь имели место и публикации об истории и культуре Древнего Египта, в том числе статья «Махди и новый египетский вопрос», являющаяся как бы продолжением исследования А. Тирояна. Статья «Египет и египетский вопрос» представляет собой большую ценность, так как является результатом наблюдений современника этих событий. В ней представлен большой фактический материал, подробнейшее описание всего хода восстания, политической обстановки в стране, англо-египетских столкновений с указанием конкретных дат и численности войск. Значимость статьи А. Тирояна и в том, что она явится новым, дополнительным источником по изучению истории Египта конца XIX века, а также будет способствовать созданию определенного представления об отношении армянской общественности к вышеуказанным событиям.

Ниже приводится сокращенный перевод статьи А. Тирояна «Египет и египетский вопрос».

О. А. Тироян. Египет и египетский вопрос¹.

После Берлинского конгресса страны-участницы, как бы погрузившись в ночной мрак, наблюдали за небосклоном политических событий, выискивая там ту яркую звезду, на которую уповали. И вдруг, невольно позабыв о своей звезде, они были ослеплены появлением нового светила, которому, однако, не суждено было мгновенно исчезнуть, подобно прочертившему небо метеориту.

Египетский вопрос привлек к себе внимание общественности, и всецело предал забвению все другие вопросы. Был ли этот вопрос метеоритом, внезапно вторгшимся в политическую атмосферу, или же он оказался одной из тех постоянных звезд, свет которых в свое время пробился сквозь плотную и мрачную завесу туч Берлинского конгресса? В действительности решение этого вопроса должно определить будущее, хотя и нам не покажется невероятным предположением и то, что египетский вопрос возможно станет одним из устойчивых и предопределяющих факторов на пути разрешения Восточной проблемы в целом.

Египетский вопрос возник в результате столкновения интересов европейских государств и Турции, добывающихся, во-первых, свободного прохода торговых судов по Суэцкому каналу, во-вторых, прибыли от торговли в Египте.

После отречения хедива² Исмаила³ фактически власть в стране перешла в руки представителей Англии и Франции. Местное правительство негодовало в связи с потерей своего влияния в Египте, но силой оружия защитить свои права оно не смело.

¹ Журнал «Базмавеп», Венеция, 1882, т. 40, с. 247—263. (на арм. яз.).

² Хедив—титул наследственных правителей Египта в 1867—1914 гг.

³ Исмаил—правитель Египта в 1863—1879 гг.

На протяжении многих веков египетский феллах оставался в том же положении, в котором находился еще в эпоху фараонов. Предшественник Араби Абдо⁴ путем просвещения народа пытался добиться прогресса и благосостояния Египта. Араби пошел иным путем. Будучи военным министром, он возглавил национальное движение, ввел в состав египетской армии преданных себе людей. Последние, несведующие не только в военном деле, но и не способные отличить свою правую руку от левой, при первом же столкновении с организованным войском, что совершенно естественно, были разбиты в пух и прах.

* * *

Для читателя театральной пьесы необходимо прежде ознакомиться с героями — главными действующими лицами. В развязке египетской проблемы участвовали трое — Араби, Сеймур и Уолслей.

Сейид Ахмед-бей Араби родился в 1836 году⁵ в провинции Шаркия Нижнего Египта и происходил из священного рода пророка Мухаммеда. За короткое время после поступления на службу в египетскую армию Араби был назначен заместителем тысячника. Подвергшись гонениям со стороны турецких чиновников, он снискал любовь местного населения. Был яростным противником управления финансами Египта европейскими державами и, вопреки желанию хедива, возглавил национальные силы страны.

Сэр Фредерик Сеймур, первый адмирал английского флота в Средиземном море, родился в 1821 году. В возрасте 13 лет вступил в военно-морской флот Британии и в 1843 г. удостоился офицерского звания. В 1854 г. воевал против русских на Белом море, в 1860—1861 гг. отличился в Новой Зеландии. С 1862 года Сеймур был избран членом верховного военно-морского совета. В нынешней войне он возглавил английский флот. Бомбардировка Александрии принесла ему еще большую известность.

Главнокомандующий английской армией в Египте, победоносный рыцарь Телль эль-Кебира, сэр Карнет Уильям Уолслей, сын ирландского военачальника — католика, родился близ Дублина 4 июня 1833 г. В 1852 году поступил на службу в английскую армию в качестве знаменосца 80-го полка. В 1855 г. в ходе Крымской войны в боях у стен Севастополя получил множество ранений. С 1855 по 1858 гг. в чине заместителя главнокомандующего находился в Индии, в 1860 г. участвовал в войне в Китае. За заслуги в борьбе против повстанцев Красной реки в Канаде получил почетное звание рыцаря. В 1879 г. сэр К. Уолстей участник англо-зулусской войны, в которой был взят в плен Кетчвайо⁶.

⁴ Мухаммед Абдо — реформатор ислама, глава мусульманского духовенства Египта.

⁵ В литературе об Араби приводятся еще две даты рождения: 1839 и 1841 гг.

⁶ Кетчвайо — вождь восставших зулусских племен.

Имея множество боевых заслуг, Уолслей обладал талантом административного работника. По его инициативе в британских колониях был проведен ряд преобразований.

После возвращения на родину он в 1880 г. назначается помощником главнокомандующего армией. Сэр К. Уолслей приятен внешне и в общении, благонаравен, скромно и добродушен. Он является автором нескольких полезных трудов по военному искусству.

* * *

Как было упомянуто выше в начале прошлого года египетский народ разделился на две противоборствующие силы — национальную и её противников. По этому поводу газета «аль-Ватан» писала следующее:

«Национальные силы Египта составляют:

1. Люди, получившие образование в аль-Азхаре в Каире и других городах Египта. Их число достигает около 16000.
2. Купцы, владельцы лавок, по происхождению арабы.
3. Коренные египтяне, занимающиеся торговлей, умеющие читать и писать.
4. Чиновники и старосты деревень.
5. Копты-христиане, 500000.
6. Египетская армия, за исключением группы черкесских офицеров.

7. Феллахи и старейшины деревень.

8. Арабы провинции Бухейра, находящиеся в тесном контакте с местными бедуинскими племенами.

Противники национальных сил:

1. Род Мухаммеда Али-паши⁷, турки, черкесы.
2. Египтяне, владеющие иностранными языками, шейхи — сторонники хедива.
3. Черкесы мамлюкского происхождения, правившие в Египте в предыдущем столетии. Их число не превышает 15000.
4. Греческая община, около 30000 человек.
5. Ассирийцы-христиане, переселившиеся в Египет в результате походов Ибрагим-паши⁸, многие из которых вот уже 20 лет живут бок о бок с арабами, работают в банках и в посольствах европейских стран.

6. Евронеицы, из которых 14000 итальянцев, 14000 французов, 2500 немцев и др. Всего около 36500 человек. Главные противники национальных сил французы и англичане.

Американцы, мальтийцы, бельгийцы и др., проживающие в Египте, малочислены и в основном поддерживают патриотические силы».

⁷ Мухаммед Али — правитель Египта в 1805—1848 гг.

⁸ Ибрагим-паша — сын Мухаммеда Али. В период первой турецко-египетской войны 1831—1833 гг. завоевал Сирию.

* * *

Национальные силы приступили к осуществлению своих планов 9 сентября 1881 г. 4000 солдат осадили хедивский дворец в Каире и предъявили следующие требования: изменить состав кабинета министров, увеличить численность египетской армии. Восстанием руководили 4 тысячника, возглавляемые Араби-беем. Был распущен совет министров и по требованию повстанцев председателем новоизбранного совета назначен Шериф-паша. Наступившее после смены правительства относительно спокойствие не было длительным.

Европейские державы стали готовить вооруженную интервенцию. В ответ на это Россия заявила, что египетский вопрос является частью Восточного вопроса, и что по этому поводу необходимо созвать конференцию великих держав. В свою очередь Турция, пользуясь правами сюзерена, командировала в Египет двух турецких чиновников Али Фуад-бея и Низам-пашу с целью обследовать текущие дела местного правительства, укрепить власть хедива и восстановить мир в стране. Посылка двух представителей порты вызвала возражения Англии и Франции и через некоторое время к берегам Александрии прибыла англо-французская эскадра. Две союзные державы заявили о предоставлении хедиву военной помощи. Об этом стало известно руководству ватанистов и турецкому султану, который выступил с протестом против поправа Англией и Францией вековых прав Османской империи в Египте.

Протест Турции был заслушан в кабинетах 4 великих держав. Одновременно падение кабинета Гамбетты⁹ в корне изменило политику Франции в египетском вопросе. Новое правительство, возглавляемое Фрейсино¹⁰, не разделяло взглядов своего предшественника. Оно обратилось к остальным великим державам—Англии, России, Германии, Австрии и Италии с предложением принять участие в обсуждении египетского вопроса на вновь созванной конференции.

* * *

Тем временем вспыхнувший в Египте мятеж все больше разрастался. Хедив Тевфик не подписывал приговор правительства Араби о расправе над черкесскими офицерами. С просьбой о поддержке он обратился к султану и европейским консулам. В конце концов приговор был заменен высылкой офицеров без лишения званий. Подобное решение было большим унижением для Араби и его сподвижников и свидетельствовало об ослаблении их влияния в стране. Одновременно в Судане вспыхнуло восстание, возглавляемое мах-

⁹ Гамбетта Леон Мишель—в 1881—1882 гг. министр иностранных дел Франции.

¹⁰ Фрейсино Шарль Луи де Сольс—в 1870—80, 1882, 1885—86 гг. министр иностранных дел Франции.

ди¹¹. Восьмитысячное войско, овладев провинцией Дарфур и городом Сеннар, двигалось по направлению к столице Судана Хартуму. Создавалась угроза южным границам Египта.

Консулы союзных держав, воспользовавшись сложившейся ситуацией, принудили хедива принять следующие требования: немедленно распустить ватанистское правительство, сослать Араби и других главарей национального движения. Вся страна встала на защиту Араби и его единомышленников.

* * *

23 июня 1882 года по предложению Франции в Константинополе открылась конференция по египетскому вопросу с участием 6-и великих держав под председательством графа Курти.

На конференции Франция отказалась от совместных действий с Англией и ввода войск в Египет, ибо в этом случае оставались незащищенными её границы с Германией. В результате разрыва англо-французского союза Австрия и Германия предоставили Англии свободу действий в Египте и предложение Италии о совместной обороне Суэцкого канала было отклонено. Опасаясь последствий восстания Араби, европейские государства подстрекали Англию к войне с Египтом. По их мнению, в случае победы восстания на борьбу против чужеземцев поднялись бы народы Туниса, Алжира и других стран. Фанатичное исламское племя сожгло и разрушило бы часть планеты. Но все эти страхи развеялись к концу Константинопольской конференции. Египетская проблема претерпела большие изменения и грохот английских пушек заглушил голоса участников конференции.

* * *

Класс и группа	мальчики	девочки
1. Рабочий класс в том числе:		
а) квалифицированных	8%	5%
б) неквалифицированных	2%	1%
2. Крестьяне в том числе:		
а) средних и богатых	3%	0%
б) мелких и арендаторов	1%	0%
3. Интеллигенция	94%	81%
4. Помещики	84%	17%
5. Капиталисты	89%	87%

В 1956 году на базе ранее существовавших колледжей был создан Багдадский университет. Из 17 колледжей в состав университета вошли 15¹². Примерно половина всех студентов обучались на двух факультетах—медицинском и юридическом¹³.

В 1956 году был создан университет «Аль-Хикма», принадлежащий ордену иезуитов и содержавшийся на средства американского благотворительного общества¹⁴.

В дореволюционном Ираке правительство заботилось в первую очередь об усилении армии и полиции, всего аппарата насилия, хотя и с каждым годом увеличивались государственные расходы на образование. В 1920—21 году они составляли 130360 динаров, т. е. 2,3% от общего бюджета¹⁵. В 1930—31 году—288000 динаров, в

⁹ Исхят тарби атакрир ассанауп узарату тарбия за таалил. Багдад, 1960—1961, с. 8.

¹⁰ Batatu Hanna. The old social classes and the revolutionary movement of Iraq. New York, 1978, p. 477.

¹¹ Натаджи аттаадат алам лисусан, Багдад лисанати, 1958, с. 94.

¹² Далил джамати. Багдад..., с. 3; Исхят алама лиувара тарбия уа таамин. Багдад, 1958, с. 71.

¹³ Исхят тарби..., с. 93.

¹⁴ Структура систем образования и школа развивающихся стран. М., 1975, с. 49.

¹⁵ Истратеджия джадида лилтаами фи ирак. Багдад, 1973, с. 95.

² Н. А. Foster, The making of modern Iraq. Norman 1935, p. 253.

³ Современный Ирак (справочник). М., 1966, с. 227.

⁴ Н. А. Foster..., p. 254.

⁵ Далилу джамати Багдад, лисанати, 1972—1973, с. 3.

⁶ Statistical Abstract. Baghdad, 1945, p. 62.

⁷ Джафар Хайат. Иракская деревня М., 1953, с. 52.

⁸ Интеллигенция и социальный прогресс в развивающихся странах Азии и Африки. М., 1981, с. 31.

1936—37 году—524000 динаров, в 1940—41—866000 динаров. Но при этом разница с расходами на армию и полицию была громадна, в 1940—41 году она составила почти 30%. На образование отводилось 12,1% расходов, а на полицию и армию 41,2%¹⁶. В канун революции ассигнования на образование были особенно незначительными и составляли 6,4%¹⁷.

Политика правящих кругов и английских империалистов привела к тому, что к революции 1958 года в Ираке образовательный уровень был крайне низким. Если учитывать, что население Ирака в 1957 году составляло 6.333.960 человек, высшее образование имело 17.920 человек (из них 2711 женщины) и 545 человек, получивших образование за рубежом¹⁸.

После завоевания независимости в стране начался новый этап в развитии образования. Задача коренного изменения и улучшения системы народного образования стала одной из важнейших проблем молодого государства.

Процессом образования в Ираке руководит Министерство просвещения и образования¹⁹. Планированием высшего образования в Ираке помимо Министерства просвещения занимается еще специальный, достаточно обширный аппарат, учрежденный в 1963 году, под названием Высший Совет планирования образования, в который вошли эксперты от Багдадского университета, а также Министерства образования и просвещения, Министерства промышленности и Министерства сельского хозяйства²⁰.

Правительство Ирака начало значительно увеличивать расходы на образование. В первый год революции они составили 20,3% от общего бюджета, т. е. 14327604 динара, в 1964—65-уже 24%, т. е. 347500000 динаров, причем 12,7% от этой суммы отводилось Министерством образования и планирования на высшее образование. В 1972—73 году—20,1%, т. е. 78064470 динаров, из них 15,7% выделялось на высшее образование²¹. В 1977—78 году на образование было выделено уже 198903000 динаров. При этом увеличился и расход на высшее образование, он составил 25,3% от этой суммы²².

В 1978 году эти цифры достигли 250048000 динаров, а на высшее образование расходовалось уже 27,0% этой суммы²³.

Таким образом расходы на образование с каждым послереволю-

ционным годом увеличивались. Особенно резко возросли они после 1968 года (примерно в 2,5 раз, хотя и в процентном отношении они сократились, но в абсолютных цифрах увеличились). Увеличение государственных ассигнований на образование, как и на все отрасли, является результатом, в значительной мере, политики национализации, в частности от национализации нефтяной промышленности.

За весь рассматриваемый период в Ираке большая часть ассигнований отводилась Министерством образования на начальное образование. В 1960 году—52,1%, в 1965 году—67,9%, в 1970—61,4%, в 1977—43,5%, в 1978 году—40,6%²⁴. В связи с тем, что именно от общего уровня грамотности в конечном итоге зависит и высшее образование, и общий культурный уровень страны, начальное образование является необходимым условием для получения среднего, профессионального и высшего образования.

В условиях научно-технической революции и перестройки национальной экономики на современной технической базе особенно быстро растет потребность в специалистах высшей квалификации. Проблема эта в Ираке чрезвычайно остра, хотя за последние два десятилетия произошли определенные положительные сдвиги. В докладе Министерства образования подчеркивалось о постоянном увеличении числа высших учебных заведений, студентов, профессоров и выпускников²⁵.

В настоящее время все высшие учебные заведения страны находятся в полном подчинении Министерства просвещения и образования и составляют свои учебные программы в соответствии с планами министерства. В стране, помимо Багдадского университета, который был открыт до революции 1958 года, открыли университет в Басре (1964 год), в Мосуле (1964 год), в Сулеймании (в 1968 году), университет «Аль-Мустансария» (1963 год), который находился в ведении профсоюза учителей, «Аль-Хикма» (ставший государственным в 1968 году), «Аш-Шааб», который управлялся обществом научных и культурных публикаций. На правах факультета при Багдадском университете находился женский колледж «Ат-Техрир» (осн. в 1962 году) с отделениями по искусству, домоводству, кулинарии, физического воспитания²⁶. В Иракской Республике существует институт Изыщных искусств, где на сегодняшний день есть следующие факультеты: живописи, скульптуры, графики, декоративного искусства, сценического искусства, в 1972 году открыли факультет кино²⁷. Иракские студенты получают образование в Институте физики, в Высшем индустриальном институте, в Институте администрации, в технологическом, агрохимическом, иностранных язы-

¹⁶ Statistical digest, 1981, p. 203, Statistical yearbook 1970, p. 506, 1975, p. 410, 1980 p. 710, 1981, p. 14—40.

¹⁷ The revolution in..., p. 36.

¹⁸ World Survey of education, 1968, p. 632.

¹⁹ Информационный сборник. Научно-исследовательский институт теории и истории кино. М., 1979, с. 27.

¹⁶ Statistical handbook of Middle Eastern countries. Jerusalem 1944, p. 95. p. 96. statistical Abstract. 1945, p. 34.

¹⁷ statistical Abstract 1957, p. 63. Revolution in Iraq. Baghdad, 1958, p. 4.

¹⁸ Натандж аттадат..., с. 24.

¹⁹ The Iraqi revolution in its third year Baghdad 1971, p. 388—389.

²⁰ Проблемы образования в зарубежных странах. М., 1968, вып. I, с. 98.

²¹ Истратежда..., с. 97, 99; Аттаамим фил ирак аларкаи, узара, таалим. Багдад. 1976, с. 2.

²² Statistical yearbook. UNESCO, Paris, 1980, d. 711. Statistical digest 1981, p. 203.

²³ Statistical yearbook, 1981, p. 17—40. Statistical digest 1981 p. 204,

ков, педагогических институтах, в Институте по подготовке секретарей, в торговом, индустриальном, в Военном колледже, в колледже искусств, коммерческом, экономических и политических наук²⁸. После революции в стране с каждым годом увеличивается число студентов. За двадцатилетний период число студентов в Ираке увеличилось почти в 16 раз, с 7602 в 1958 году стало 129006 в 1978 году, а на 100000 населения в 1958 году приходилось 120 студентов, уже в 1979 году стало 765 человек²⁹.

Однако, какими бы впечатляющими ни были успехи Ирака в создании систем подготовки квалифицированных кадров, в количественном увеличении студентов, эти системы нельзя считать полностью отвечающими современным требованиям. Сам по себе рост числа подготавливаемых специалистов собственными силами ничего не показывает, если не учитывать его отношение к общей численности населения страны, а также степень обеспечения потребности страны в кадрах специалистов за счет их собственной подготовки.

По относительной численности студентов Ирак, несмотря на указанные выше достижения и сохранившиеся высокие темпы развития высшего образования, продолжает сильно отставать от развитых стран. Так, в начале 70-х годов в США было 2260 студентов на 100000 населения³⁰, в СССР—1240³¹, в Японии—1190, во Франции—960, в Швеции—1400, в Финляндии—1140³².

В развивающихся странах показатели более различные. К примеру, (по убывающей) в Кувейте—1022 студента на 100000 населения, в Египте—880, в Ираке—798, в Турции—746, в Иордании—599, в Индии—499, в Ливии—420, в Марокко—362, в Алжире—344, в Тунисе—220, в Судане—124, в Эфиопии—37³³.

Таким образом, как видно из приведенных данных, Ирак, как и все развивающиеся страны, отстает от развитых стран, но среди бывших колоний и полукolonий занимает одно из первых мест. В Ираке число студентов в середине 70-х гг. было вполне сопоставимо с аналогичными показателями малых стран Западной Европы предыдущего десятилетия³⁴.

В Ираке роль государства в социально-экономическом развитии разносторонняя и целенаправленная, и это положительно сказывается на регулировании профессиональной подготовки и структуры национальных кадров. Система подготовки инженерных и научно-тех-

²⁸ The Middle East and North Africa, 1966—1967, p. 297.

²⁹ Вычислено по численности населения, данной в этих же источниках (в 1958 г. население Ирака составляло 633960 чел., а в 1977 году—11505000)—Statistical yearbook, 1970, p. 367, 1981, p. 111—347.

³⁰ Statistical yearbook 1977, tabl. 5. 4, p. 346—376.

³¹ СССР в цифрах в 1976 г. Краткий статистический сборник. М., 1977, с. 76.

³² Statistical yearbook 1977, tabl. 5. 4, p. 346—376.

³³ Там же, с. 346—376.

³⁴ Интеллигенция и социальный прогресс... с. 80.

нических кадров довольно-таки развита. Число студентов, изучающих инженерное дело, за двадцать лет возросло в 50 раз, изучающих агрономию в 45 раз, естественные науки в 35 раз. Возросло число гуманитариев. Число студентов, изучающих педагогические и гуманитарные науки, увеличилось в 13 раз, искусство в 10 раз, медицину—в 8 раз, юриспруденцию—в 6 раз, социальные науки—в 5 раз³⁵.

Особо следует выделить факт увеличения численности студентов. Проблема обучения женщин в высшей школе была одной из трудных задач для послереволюционного Ирака. В монархическом Ираке женщины, имеющие высшее образование, были единичны. В 1937 году, к примеру, по всему Ираку работала только одна женщина-врач, в 1944 году их число достигло 17, а в 1978 году уже 3032. Число женщин-юристов в 1950 году составляло 20, а в 1978—380³⁶. Если в канун революции инженерное дело изучали только 8 женщин, то в 1978 году их стало 5974³⁷.

Нижеследующая таблица указывает не только на значительное увеличение числа студентов по важнейшим специальностям, необходимым для народного хозяйства, но и снижение доли студентов, изучающих различные специальности, к общему числу³⁸.

Всего студентов	1 9 5 8		1 9 7 8	
	7301 —	100 %	129006 —	100 %
Инженер.	531	7,3	32516	25,2
педагог.	568	7,8	24187	18,7
естест. н.	633	8,7	21940	17,0
литерат.	974	13,3	12617	9,8
агроном.	222	3	11847	9,2
медиц.	1152	15,8	10600	8,4
обш. н.	1716	23,5	8986	7,6
юрисд.	601	8,2	3525	3,0
искусств.	204	2,8	1281	1,1

Таким образом, если в 1958 году большее число студентов Ирака изучали общественные науки, медицину и литературу, то в 1978 году соотношение числа студентов по специальностям резко изменилось. Основная доля студентов изучают инженерное дело, педагогические и естественные науки.

Нижеследующая таблица показывает численность студентов в Ираке за пятилетие с 1974 по 1979 год по основным высшим учебным заведениям³⁹.

³⁵ Statistical yearbook, 1970, p. 367, 1982, p. 111—312.

³⁶ The woman's studies in modern Iraq. Baghdad, 1965, p. 27.

³⁷ Statistical yearbook, 1970, p. 367, 1982, p. 111—312.

³⁸ Там же.

³⁹ Statistical Pocket book, Baghdad, 1978, p. 56. Несовпадение числа студентов 1978/1979 уч. г. с предыдущим числом объясняется тем, что в данную таблицу вошли не все вузы страны.

Университеты	74/75	75/76	76/77	77/78	78/79
Багдадский	26961	26956	31354	30809	32672
Басрийский	7835	8614	9121	9565	10278
Мосульский	7325	8977	9944	10247	11730
Сулейманийский	2289	2858	3647	4167	5112
Мустансария	18903	16856	11861	11021	10664
Технологический	—	5794	9313	12242	13437
Ассоциация технических институтов	4264	4959	5609	6724	7823
Всего*	67577	75014	80849	84875	91716

Иракская молодежь получает высшее образование и в Американском университете в Бейруте, там же во французском университете св. Иосифа, в Американском университете в Каире⁴⁰.

Но с каждым годом число выезжающих для обучения иракцев уменьшается.

Сразу после революции выехали за границу учиться достаточно большое число иракцев⁴¹.

в Ливан	— 93 чел.	США	— 2277	Францию	— 63
Сирию	— 43	СССР	— 1030	Югославию	— 48
Турцию	— 453	Чехословакию	— 231	Румынию	— 34
Пакистан	— 2	Болгарию	— 84	Италию	— 40
Иран	— 5	Польшу	— 67	Австралию	— 2

В середине семидесятых годов иракских студентов, обучающихся за границей стало меньше. К примеру, в высших учебных заведениях США обучались 376 человек (изучали естественные науки), 93 (инженерное дело), 48 человек (гуманитарные науки), 43 (общественные науки), 26 (сельскохозяйственные науки), 22 (образование), 16 (медицину)⁴².

В Советском Союзе в это время было 400 иракских студентов: 46% изучали инженерно-технические специальности, 22% — педагогические, 18% — медицину⁴³. Советский культурный центр в Ираке каждый год устраивал день встречи специалистов, окончивших высшие учебные заведения в СССР⁴⁴.

Как в монархический период, так и в послереволюционный в Ираке была острая проблема с кадрами высшей квалификации, ко-

торые были необходимы и как педагогические кадры, и как деятели науки.

До 1969 года в национальных высших учебных заведениях Ирака присуждалась лишь степень бакалавра наук. Первая аспирантура была открыта в 1960 году при Багдадском университете⁴⁵. Но не все молодые люди, поступившие в аспирантуру, защищали диссертацию⁴⁶.

Годы	Поступили	Защитились
1974/75	1047	545
1975/76	1180	569
1976/77	1640	1029
1977/78	2017	1065

Более высокие степени магистра и доктора философии иракцы получали, как правило, в высших учебных заведениях Англии. В последние годы иракцы, желающие получить такие ученые степени (обычно выходцы из богатых семей) все чаще направлялись в высшие учебные заведения США⁴⁷. Во многих учебных заведениях нет возможности защищать докторские диссертации, так как нет необходимого числа ученых, способных руководить такими работами и оценивать их⁴⁸.

Преподаватели высших учебных заведений, являясь одной из основных групп интеллигенции, по отношению ко всем остальным группам выступают как необходимый фактор их формирования. В силу своей профессиональной специфики преподаватели, соприкасаясь с молодежью, непосредственно влияют на формирование ее общественных взглядов и мировоззрение. За годы независимости в Ираке значительно увеличилось число преподавательских кадров в высших учебных заведениях⁴⁹.

1958 г.	— 557 преп. (из них 92 жен.)
1960 г.	— 1122 (171)
1965 г.	— 1455 (252)
1967 г.	— 1654 (325)
1968 г.	— 1879 (295)
1973 г.	— 2843 (495)
1976 г.	— 3014 (549)
1977 г.	— 3777 (549)
1978 г.	— 5464 (850)

⁴⁵ Современный Ирак (справочник), М., 1966, с. 3.

⁴⁶ Statistical Pocket book..., p. 57.

⁴⁷ Institute..., p. 53. Who is who in Arab world 1978—1979.

⁴⁸ Далл аддирасат лихалид, 1977—1978. Багдад, с. 4.

⁴⁹ World Survey of education 1962, p. 632, Statistical yearbook 1970, p. 632. Statistical yearbook 1970, p. 309. 1975, p. 246. 1978—1979, p. 426. 1980, p. 456. Statistical digest 1981 p. 203. Statistical handbook of the republic of Iraq, for the year 1957—1967, Baghdad 1968, p. 198—201.

⁴⁰ Потребность развивающихся стран в специалистах. М., 1977, с. 59.

⁴¹ The Middle East and North Africa, 1973—1974, p. 201.

⁴² Institute of International education, New York, 1975, p. 53.

⁴³ Ихсаят алама..., с. 15.

⁴⁴ Джебра Ибрагим джебра, алфан ирак. Багдад, 1970, с. 3.

Хотя, как видно из приведенных данных, число преподавателей вузов увеличилось примерно в 10 раз, но и это количество не удовлетворяет потребностей страны. В медицинских высших учебных заведениях в 1976 году не хватало минимум 130 преподавателей, в сельскохозяйственных—100 преподавателей, в инженерно-технических—250⁵⁰. Нехватка преподавательских кадров частично возмещается за счет иностранных специалистов.

Для Ирака, средней по масштабу и уровню развития страны, характерно стремление к частичному и узко направленному индустриальному прогрессу с использованием тех или иных благоприятных условий, прежде всего естественных сырьевых ресурсов. В Ираке создана собственная подготовка квалифицированных кадров, готовятся в настоящее время дипломированные специалисты традиционного типа: врачи, агрономы, педагоги, инженеры-строители и т. п. В то же время принимаются меры по подготовке специалистов для тех отраслей промышленности, которые только начали появляться⁵¹.

60—70-е годы отмечены постоянным и неуклонным возрастанием доли высшего образования внутри системы просвещения. Подготовка квалифицированных кадров рассматривается как одна из первоочередных задач развития, и это нашло отражение в быстром увеличении в национальном бюджете статьи расходов на образование и, в частности, высшее образование.

Соответственно высокими темпами увеличилась численность студентов. Помимо чисто количественных изменений в среде студентов в 60—70-е годы произошли также структурные сдвиги качественного порядка. Косвенным образом на это указывает темп роста численности студентов по основным профессиональным дисциплинам.

Согласно данным, в 60—70-е годы наряду с традиционно высокими темпами возрастания числа студентов—гуманитариев наиболее значительные показатели наблюдаются также в области технических наук, просвещения, медицины и сельскохозяйственных наук. Причем, судя по низким исходным данным 1950-х гг., указанные направления высшего образования являются относительно новыми, связанными главным образом с успехами, достигнутыми на пути экономического прогресса.

ՄԱՐԿՆԱՆ Ս. Մ.

ԻՐԱԿԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԻՐԱՔՈՒՄ

Ամփոփում

Աշխատանքում քննարկվում է բարձրագույն կրթության զարգացման պրոցեսը Իրաքում, անդիական օկուպացման ժամանակաշրջանից մինչև

⁵⁰ Унзарату тарбия уи таалим, каа шиаам ֆи асатиза уа маали ֆи маахиду джамаат алирак ֆи бааб сана тадрися 1975—77. Багдад, с. 12.

⁵¹ Национальные кадры освободившихся стран. М., 1980, с. 82.

անկախության նվաճումից հետո ընկած ժամանակները: Հետհեղափոխական Իրաքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման մեջ էական տեղաշարժերը կանխորոշեցին բարձրագույն կրթության համակարգում կատարված էական փոփոխությունները: Եթե մեր դարասկզբին, բարձրագույն ուսումնական հաստատությունների բացակայության պատճառով միայն սահմանափակ թվով անձինք էին բարձրագույն կրթություն ստանում, այն էլ՝ արտասահմանում, ապա ներկայումս բոլոր խավերի ու դասերի իրաքցի երիտասարդները մասնագիտանում են իրենց երկրում: Իրաքի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում իր ժողովրդի կրթությանը: Տարեցտարի ավելանում են կրթության հատկանիսներ, որոնք համապատասխանում են տնտեսական ու տեխնիկական առաջադիմության պահանջներին: Նախկին գաղութների ու կիսագաղութների մեջ Իրաքը ուսանողների թվով գրավում է առաջին տեղերից մեկը:

ՔՈՒՐՔԱԿԱՆ ԱԳՐԵՍԻՒԱՆ ԻՐԱՆՈՒՄ 1916—1917 թթ.

Թուրքիայի իշխող շրջանները նվաճողական քաղաքականություն էին վարում ինչպես Անդրկովկասի, այնպես էլ հարևան մյուս երկրների, այդ թվում Իրանի նկատմամբ: Այդ քաղաքականությունն իրականացնելու հերթական հնարավորություն ստեղծվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Թուրքիան այդ պատերազմի մեջ մտավ նրա սկսվելուց երեք ամիս հետո: Հետաքրքիր է նշել, որ Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց ընդամենը մի քանի օր առաջ Թուրքական ղեկավարությունը Քեհրանի մամուլում հայտարարություն հրատարակեց այն մասին, որ Թուրքական կառավարությունը ոչ մի ազդեցիկ նպատակ չունի և պատերազմի ժամականաշրջանում խստորեն կպահպանի շեղոթություն: Սակայն Թուրքիայի իշխող շրջանները շտապում էին մտնել պատերազմի մեջ, չնայած տնտեսական և ռազմական տեսակետից բացարձակապես անպատրաստ էին: Նրանք ցանկանում էին եվրոպական պատերազմն օգտագործել՝ իրականացնելու իրենց նվաճողական ծրագրերը հարևան ժողովուրդների նկատմամբ:

Թուրքական բանակների ռազմական գործողությունների, դեպի Կովկաս և Իրան նրանց ներթափանցման պլանները մշակվել էին էնվեր փաշայի և գերմանական զլխավոր շտաբի կողմից՝ դեռևս պատերազմից առաջ: Գերմանիան և Թուրքիան ձգտում էին Իրանը ներքաշել պատերազմի մեջ, ուստի դեմ էին Իրանի շեղոթ քաղաքականությանը և պայքարում էին դրա դեմ¹: Գերմանիայի ռազմաստրատեգիական ընդհանուր պլաններում Թուրքիայի իշխող շրջաններն ունեին նաև սեփական նվաճողական մտադրություններ Անդրկովկասի, Իրանի և մուսուլմանական այլ երկրների նկատմամբ, ուստի նրանք առաջին հերթին ձգտում էին տիրանալ Հյուսիս-արևմտյան Իրանին, որին պետք է հետևեր ամբողջ Ադրբեջանի յուրացումը, այսինքն՝ պանթուրքիստական պլանների առաջին փուլի իրականացումը:

Թուրքական կառավարող շրջաններն իրենց նվաճողական քաղաքականությունն Իրանում փորձում էին արդարացնել ռուսական զորքերի այնտեղ գտնվելու հանգամանքով: 1914 թվականի նոյեմբերին Թուրքական զորքերն անցան իրանական սահմանը և ներխուժեցին նրա տերիտորիան՝ Իրանական Ադրբեջանի և Քրդստանի շրջաններում: Թուրքական զորքերի՝ այս փուլում Իրանում ծավալած գործողությունները մեր թեմայից դուրս են, դրանք մանրամասն ուսումնասիրված են Ե. Սարգսյանի և Ա. Հարությունյանի աշխատություններում²:

Թուրքական զորքերի գործողություններն իրանական տերիտորիայում առաջին շրջանում ավարտվեցին պարտությամբ: Սակայն Թուրքիայի իշխող շրջանները չէին հրաժարվում Իրանի նկատմամբ ունեցած իրենց նվաճողական մտադրությունից: Շուտով Իրան ներթափանցելու նոր հնարավորություններ ստեղծվեցին:

Մինչ այդ Իրանի ներքին կյանքում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ (ժամանակավոր կառավարության ստեղծումը Ղուժում և այլն). ռուսական էքսպեդիցիոն նոր կորպուս ուղարկվեց այնտեղ՝ դեներալ Բարատովի հրամանատարությամբ, որը հետապնդելով ժամանակավոր կառավարության զորքերին և նրանց հովանավորող գերմանացիներին, ռազմական լայն գործողություններ ծավալեց Իրանում. գրավեց Ղոմը, Քաշանը, Համազանը և շարժվեց դեպի ժամանակավոր կառավարության վերջին հենարան Քերմանշահ քաղաքը: Գեներալ Բարատովի զորքերը 1916 թ. փետրվարի 11-ին գրավեցին նաև Քերմանշահը: Պարսկական ուժերը Բաղդադի ուղղությամբ նահանջեցին դեպի Քերինդ³, Ռուսական հրամանատարության տվյալներով, երբ ռուսական զորքերը գրավեցին Քերմանշահը, այստեղ կենտրոնացված էր հակառակորդի մոտ 20.000-անոց բանակը, որի շարքերում կային 2.500 թուրք զինվորներ⁴: Իրանական այս կառավարությունը և քաղաքական մյուս գործիչները Թուրքական զորքերի և գերմանական զինվորների հետ միասին հեռացան օսմանյան տերիտորիա:

Ռուսական զորքերի հաջողությունները մեծ նշանակություն ունեին նաև հենց Իրանի համար: Անգլիացի գեներալ Սայքսը խոստովանում է. «Ոչ մի կասկած չկա, որ ռուսական բանակը Իրանը փրկեց Թուրքական տիրապետությունից»⁵: Ռուսական զլխավոր հրամանատարությունը Անգլիային առաջարկեց պլաններ մշակել Իրանում և Միջագետքում միացյալ ռազմական գործողություններ սկսելու վերաբերյալ: Հասկանալի է, որ

² Ե. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964; Арутюнян А. Кавказский фронт, 1914—1918. Ереван, 1971.

³ ЦГВИА, ф. 2320, оп. 1, д. 65, л. 37.

⁴ Նույն տեղում:

⁵ P. Sykes, A History of Persia, London, 1961, p. 517.

¹ Մովսեսիս օլ Դոն Սեփեհե, Իրան դար շահեբ բողորդ 1914—1918, Քեհրան, 1957, էջ 337 (պարսկ. լեզվով):

Միջազգետրում իրենց ուղղմական հաջողություններից ոգևորված անգլիացիները լսել անգամ չէին ուզում ուսական զորքերի այդ շրջանները գալու մասին, մանավանդ, որ Միջազգետրը համարում էին իրենց ապագա ավարը պատերազմի հաղթական ավարտի դեպքում: Սակայն շուտով նրանք ընկան դժվարին կացության մեջ և իրենք խնդրեցին ուսական հրամանատարությունը՝ շուտափույթ օգնության հասնել Քուլթ էլ-Ամարայում պաշարված անգլիական զորքերին: 1916 թ. ապրիլի 1-ին Բարատովը հրաման ստացավ՝ ինչ գնով էլ լինի, շարժվել դեպի Բաղդադ:

Բարատովը ամենևին էլ համոզված չէր, որ իր փոքրաթիվ ուժերով հասնի Քուլթ էլ-Ամարա: Սակայն նա հուսով էր համեմատաբար արագ մոտենալ Իրաքի սահմաններին, որպեսզի իր կողմը գրավի Քուլթ էլ-Ամարայում գտնվող թուրքական ուժերի մի մասի ուշադրությունը և հնարավորին շափ թեթևացնի անգլիական զորքերի վիճակը Տիգրիսի վրա:

Թուրքերն իրենց գլխավոր ուժերը կենտրոնացրել էին Քուլթ էլ-Ամարայում, որտեղ գտնվում էր նաև ֆոն դեր Գուլցը: Եվ ահա, երբ ապրիլի 28-ին Բարատովի զորքերը մոտեցել էին Քարինդին, Քուլթ էլ-Ամարայում պաշարված անգլիական զորքերի հրամանատար գեներալ Թաունզհեդը, այլևս չգիմանալով, որոշեց հանձնվել: 1916 թ. ապրիլի 29-ին, 147-օրյա պաշարումից հետո անգլիացիները անձնատուր եղան: Թուրքական զորքերը գերի վերցրեցին ավելի քան 19 հազար մարդ: Գերի ընկավ նաև գեներալ Թաունզհեդը⁶:

Քուլթ էլ-Ամարայի մոտ անգլիական զորքերի պարտությունը լայն արձագանք առաջացրեց աշխարհում: Այն մեծ հարված էր Անգլիայի հեղինակությանը և Արևելքի ժողովուրդների մեջ հույսեր արթնացրեց՝ թոթափելու անգլիական գաղութատիրության լուծը: Իզուր անցան նաև ուսական կազմակերպիչների հերոսական ջանքերը՝ Իրանի տերիտորիայով Միջազգետր հասնելու, Քուլթ էլ-Ամարան պաշարումից ազատելու և ամբողջ Իրանի ու Միջազգետրի ուղղությամբ դաշնակիցների ընդհանուր ճակատ ստեղծելու նպատակով:

Ինչ վերաբերում է ուսական զորքերին, ապա նրանք, հաղթահարելով սահմանամերձ լեռնային շրջանը, թուրքերին ետ մղեցին դեպի հանդիմանի ամբողջ և փաստորեն մոտեցան Միջազգետրի սահմաններին՝ Բաղդադից 110 մղոն դեպի հյուսիս-արևելք: Քուլթ էլ-Ամարայում անգլիացիների պարտությունը շուտահաստեցրեց ուսներին: Նրանք ուղղմական գործողություններ ծավալեցին Արևմտյան Իրանի դժվարանց տարբեր շրջաններում, մի շարք վայրերից ետ մղեցին թուրքերին և ավելի լայն ճակատով մոտեցան Միջազգետրի սահմաններին:

Թուրքերի դեմ ճնշում էր գործադրվում Կովկասյան ճակատից,

Իրանից, Պարսից ծոցից, որը, բնականաբար, բավականին դժվարացնում էր նրանց պաշտպանության գործը:

Ռուսական զորքերը շարունակում էին իրենց առաջխաղացումը: Նրանք գրավեցին դժվարանց լեռնային շրջանները, իսկ այնուհետև, 1916 թ. մայիսի 16-ին՝ Ղասրե Շիրինը: Թուրքական հրամանատարությունը Բաղդադից մի դիվիզիա ուղարկեց հանդիման: Սակայն ուսական հրամանատարության ստացած տեղեկությունների համաձայն, այդ դիվիզիան, իբր, կես ճանապարհից վերադարձավ Բաղդադ, քանի որ գերմանացիները հրաժարվեցին Իրան շարժվելու մտադրությունից⁸:

Բայց ահա Միջազգետրում տեղի ունեցան նոր իրադարձություններ: Ապրիլի 19-ին մահացավ գերմանացի մարշալ ֆոն դեր Գուլցը, և վեցերորդ բանակի հրամանատարությունը անցավ Խալիլ փաշային: Գերմանիան ջանում էր ստեղծված իրադրության պայմաններում ինչպես Միջազգետրում, այնպես էլ Իրանում ինքնուրույնություն պահպանել՝ չենթարկվելով թուրքական պլաններին, որոնք ոչ միշտ էին համընկնում Գերմանիայի ստրատեգիական շահերին: Այդ ժամանակ գերմանական և թուրքական հրամանատարությունների միջև վեճ էր տեղի ունենում այն հարցի կապակցությամբ, թե ով պետք է ղեկավարի ուղղմական գործողություններն Իրանում: Գերմանական հրամանատարությունը 1916 թ. ամռանը Միջազգետրում գտնվող գերմանական սպաներից ու զինվորականներից կազմեց մի խումբ, որի մեջ մտան մոտ 80 սպաներ և 300 զինվորներ: Հրամանատար նշանակվեց գեներալ Գրեսմանը: Սակայն նրանք չկարողացան լուրջ գործունեություն ծավալել, քանի որ խումբը փոքրաթիվ էր և շոշափելի ուժ չէր ներկայացնում:

Հասկանալի է, որ Քուլթ էլ-Ամարայի անկումից հետո Արևմտյան Իրանում ուսական զորամասերն այլևս չէին կարող նախկին նպատակները հետապնդել: Այդ պարտությունից հետո անգլիացիների հարձակումը դեպի Բաղդադ գոնե ժամանակավորապես դադարեցվեց, և ուսական հրամանատարությունն այլևս նպատակահարմար չէր գտնում ռիսկի դիմելով այդքան երկարացնել իր հաղորդակցական գծերը: Ընդհակառակը, Համադան-Քերմանշահ ուղղությամբ նա պատրաստվում էր դիմադրել թուրքերի հարվածներին, որոնք սպասվում էին այդ ճակատում⁹:

Անգլիացիների պարտությունը Քուլթ էլ-Ամարայում և Բարատովի զորքերի դժվարին վիճակը Միջազգետրի սահմաններում մեծապես փոխել էր դրությունը: Թուրքերը և իրանական ժամանակավոր կառավարությունը գտնում էին, որ արդեն հասունացել է Իրանը արագ կերպով նվա-

⁶ ЦГВИА, ф. 2320, оп. I, д. 350, л. 3.

⁷ F. Halsey, The Literary Digest, History of the World War, vol. VIII London, 1919, p. 162.

⁸ ЦГВИА, ф. 2320, оп. I, д. 65, л. 69.

⁹ F. Halsey, The Literary Digest, History of the World War, vol. VIII London, 1919, p. 151.

ձեռն խնդիրը: Թուրքական և գերմանական հրամանատարությունների կարծիքով արդեն ժամանակն էր բանակն առաջ շարժել և անգլո-հնդկական զորքերին վերջնականապես դուրս վանդել Միջագետքից¹⁰:

Սակայն կանգ առնենք Միջագետքում գերմանացիների և թուրքերի փոխհարաբերություններում առաջացած փոփոխությունների հարցի վրա:

Գերմանական գլխավոր հրամանատարությունը 1916 թ. գարնանը մեծ ուշադրություն էր դարձնում Իրանում տիրող դրությունը, ձգտելով՝ ինչ գնով էլ լինի, իր ձեռքում պահել ռազմական գործողությունների ղեկավարությունը¹¹: 1916 թ. ապրիլին թուրքական վեցերորդ բանակի շտաբի պետ նշանակվեց գնդապետ Ֆոն Գլեյխը: Վերջինս որպես մարշալ Ֆոն դեր Գուլցի օգնական պետք է ղեկավարեր նաև Իրանում ծավալվող ռազմական գործողությունները: Սակայն 1916 թ. ապրիլին մահացավ մարշալ Ֆոն դեր Գուլցը:

Թուրքիայի և Գերմանիայի միջև մեծ տարածայնություններ առաջացան նոր հրամանատար նշանակելու հարցի շուրջ: Գերմանական գլխավոր հրամանատարությունը ամեն կերպ ձգտում էր, որ վեցերորդ բանակի հրամանատարը նորից գերմանացի լինի: Բայց թուրքական հրամանատարությունը՝ հանձին էնվեր փաշայի, անպայման ուզում էր այդ պաշտոնում նշանակել թուրքական գեներալի: Էնվեր փաշան առաջ քաշեց իր ազգական հալիլ բեյի թեկնածությունը, որը մինչ այդ թուրքական բանակի իրաքյան խմբի հրամանատարն էր: Չնայած գերմանական հրամանատարությունը այս պայքարում հաղթող դուրս չեկավ, այնուամենայնիվ նրան հաջողվեց գլխավոր շտաբի պետ թողնել գնդապետ Ֆոն Գլեյխին: Սակայն եթե վեցերորդ բանակի հրամանատարության հարցն այդպես լուծվեց, ապա Իրանում ռազմական գործողություններ ծավալելու ասպարեզում պայքարը դեռևս շարունակվեց, քանի որ հալիլ բեյը Ֆոն Գլեյխին թույլ չէր տալիս միջամտել իրանական գործերին, պնդելով, որ դա մտնում է թուրքական հրամանատարության իրավասության մեջ:

1916 թ. մայիսին Բաղդադ ժամանեց դուքս Ադոլֆ Ֆրիդրիխ Մեքլենբուրգը՝ 21 զինվորականներից բաղկացած իր շտաբի հետ միասին: Գերմանական գլխավոր հրամանատարության կողմից նրան հանձնարարված էր նոր ռազմական գործողություններ նախաձեռնել Իրանում: Դուքսն, իհարկե, ռազմական ուժեր չունեի և պետք է զորք հավաքագրեր պարսիկ փախստականներից կամ քոչվոր ցեղերից: Սակայն գերմանացիների տրամադրած մարդկային և նյութական ռեսուրսները հուսա-

հատության էին հասցրել պարսիկ քաղաքական գործիչներին, որոնք զգում էին, որ այդպիսի ուժերով ոչնչի հասնել չի կարելի¹²:

Գերմանացիների ցանկությունները շկատարելու և անգլո-ուսական միացյալ ճակատ ստեղծելու փորձերը խափանելու նպատակով հալիլ փաշան անմիջապես Իրանում ռազմական գործողություններ սկսեց: Գերմանական գլխավոր հրամանատարությունը մի փորձ ևս կատարեց իրանական ռազմական գործողություններին միջամտելու ուղղությամբ: 1916 թվականի հուլիսին Բաղդադ ուղարկվեց գեներալ Գրեսմանը, որը պետք է ղեկավարեր վեցերորդ բանակի՝ Իրանում և հարևան երկրներում գործող գերմանական զորամասերը: Բայց այս ծրագիրը նույնպես չիրականացավ, քանի որ հալիլ փաշան Գրեսմանին թույլ չտվեց գործել: Այդ ամենի արդյունքը եղավ այն, որ Գերմանիան, փաստորեն, Իրանում ծավալվող ռազմական գործողությունների ղեկավարությունից դուրս մնաց: 1916 թ. օգոստոսի 19-ին Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքված համաձայնությամբ որոշվեց Իրանում տարվող ռազմական գործողությունները ենթարկել թուրքական գլխավոր հրամանատարությանը:

Թուրքական հրամանատարությունը պարզ կերպով գիտակցում էր, որ Իրաքի հարավում անգլիացիների դեմ տարվող ռազմական գործողությունները ավելի դժվարին կլինեն և պակաս արդյունավետ, քան Իրանի նվաճումը: Ելնելով իր պանթուրքական ծրագրերից՝ էնվեր փաշան որոշեց հարձակվել Իրանի վրա: Այս նպատակը իրականացնելու համար թուրքական վեցերորդ բանակը բաժանվեց երկու՝ 18-րդ և 13-րդ կորպուսների: Իհսան փաշայի գլխավորած 13-րդ կորպուսը հրաման ստացավ՝ ինչ գնով էլ լինի, պարտության մատնել Բարատովի զորքերին և արշավել դեպի Իրան: Էնվեր փաշան հույս ուներ Իրանում տեղացիներից ազգային բանակ կազմել¹³:

Անհրաժեշտ է նշել, որ եթե ուսական զորքերը անգլիացիներին չկարողացան փրկել Քուբ էլ-Ամարայի պաշարման ժամանակ, ապա այժմ Ղասրե Շիրինում Բարատովի զորքերի ներկայությունը մեծապես օգնեց նրանց՝ հաջող գործողություններ ծավալելու Միջագետքում: Երբ էնվեր փաշան վեցերորդ բանակից մեծաթիվ ուժեր ուղարկեց ուսական զորքերի դեմ, ապա դա բավականին թեթևացրեց հարավային Իրաքում գործող անգլիական գեներալ Մոդի վիճակը և անգլիացիներին ճնարավորություն տվեց իրենց ուժերը վերախմբավորել¹⁴:

Մայիսի սկզբներին Բաղդադում կայացավ մի խորհրդակցություն, որին մասնակցում էին էնվեր փաշան, հալիլ փաշան և Ֆոն Լոսովը: Մշակվեց նոր պլան, որի համաձայն արդեն մայիսի վերջերին գորքերը

¹⁰ The Story of the Great War, Caucasus-Mesopotamia, English Blockade, vol. VIII, New York, 1916, p. 2277.

¹¹ Лудшевйт Х. Е. Турция в годы первой мировой войны. М., 1966, с. 85.

¹² Նույն տեղում, էջ 86:

¹³ W. Allen, P. Muratoff, Caucasian Battlefields. Cambridge, 1953, p. 389.

¹⁴ Նույն տեղում:

պատրաստ էին հարձակվելու Իրանի վրա: Հետևակային զորքերը համալրվեցին քրդական համիդիե հեծելազորի մի բրիգադով, անկանոն զորամասերով, այդ թվում և իրանական կամավորական շոկատներով: Գերմանացիները խոստացան հրանոթներ տրամադրել: Չնայած նրանց խոստումները չիրագործվեցին, բայց 25000-անոց մի բանակ արդեն պատրաստ էր հարձակման:

Կանխագուշակելով թուրքական հարձակման պլանները, Բարատովը որոշեց Խանեղինի շրջանում հարված հասցնել թուրքական զորքերին և զրանից հետո միայն սկսել նահանջը¹⁵: Իհսան փաշան նոր արշավանքին ղեկն լրիվ պատրաստ չէր: Հետևաբար, երբ ռուսական զորքերը հարձակվեցին Խանեղինի վրա, նրանք հանդիպեցին թուրքական վեցերորդ դիվիզիային միայն: Սակայն ռուսների հարձակումը հաջողություն չունեցավ, և իշխան Բելոսելսկու զորամասերը նահանջեցին, կորցնելով ավելի քան 500 մարդ: Այս անհաջողությունից հետո Բարատովին մնում էր միայն նահանջել: «Թուրքերի համար անսպասելի էր ռուսական զորքերի արագ նահանջը, — ասված էր մի զեկուցագրում: — Նրանք սպասում էին ուժեղ մարտերի, որոնց ընթացքում հույս ունեին մեծ կորուստներ պատճառել ռուսական փոքրաթիվ բանակին»¹⁶:

Չնայած գերմանական ռազմական ղեկավարությունն առանձնապես շահագրգռվածություն չէր ցուցաբերում Խալիլ փաշայի պլանների իրագործման նկատմամբ, այնուամենայնիվ, նա 13-րդ կորպուսին հրանոթներ, գնդացիներ և ռազիոկապի միջոցներ տրամադրեց, որը մեծապես հեշտացրեց թուրքերի գործը: Արդեն հունիս ամսին թուրքական զորքերը երեք կետից հարձակման անցնելով, կարողացան մուտք գործել Իրանի տերիտորիա: Քուլ էլ-Ամարայի անկումից հետո այնտեղ գտնվող թուրքական զորքերի մի մասը փոխադրվեց իրանական ճակատ: Արդեն 1916 թ. հունիսին նրանք ռուսներին դուրս մղեցին Խանեղինից և Ղասրե Շիրինից, իսկ հուլիսի 1-ին մտան Քերմանշահ¹⁷: Խալիլ փաշան այնուհետև շարժվեց Քերմանշահ-Համադան ուղղությամբ: Այդ պլանի իրականացումը հանձնարարվեց 13-րդ բանակային կորպուսին՝ Ալի Իհսան փաշայի հրամանատարությամբ: Ռուսական ներկայացուցչի հաղորդման համաձայն, Քերմանշահի բնակչությունն սկզբում խանդավառությամբ ընդունեց թուրքական զորքերին: Սակայն, երբ նրանք սկսեցին բռնի կերպով բացել կրպակներն ու խանութները և առանց վճարելու վերցնել այն ամենը, ինչ իրենց պետք էր, մեծ դժգոհություն առաջացրին՝ իրենց դեմ գրգռելով Քերմանշահի բնակչությանը, որը «վարժվել էր ռուսական զորքերի ավելի հումանիտարական վերաբերմունքին»: Քրդական ցեղերը

նույնպես հրաժարվեցին համագործակցել թուրքերի հետ¹⁸: Բարատովի զորքերը ստիպված նահանջեցին դեպի Համադան:

Իհսան փաշան հուլիսի վերջերին հրաման ստացավ Սինայի և Քերմանշահի վրայով առաջ շարժվել դեպի Համադան և Քանդավարից դեպի Քորուչեղ, որտեղ նրան պետք է օգնեին վերակազմավորված պարսկական ազգային ջոկատները: Թուրքական զորքերի առաջխաղացումն սկսվեց օգոստոսին: Բարատովը Ասադաբադի լեռնանցքում ուներ ընդամենը 6000 մարդ և գիտակցում էր, որ Համադանը պաշտպանել չի կարող: Օգոստոսի 9-ի լույս 10-ի գիշերը ռուսական զորքերը Ասադաբադից նահանջեցին, և օգոստոսի 10-ին թուրքական զորքերը գրավեցին Համադանը¹⁹:

Հետագայում Լուդենդորֆն իր հուշերում գրում էր. «Թուրքական զործողություններն Իրանում Համադանի ուղղությամբ ընդամենը էպիզոդ էին և ոչ մի նշանակություն չունեին պատերազմի ընթացքի համար»²⁰:

Օգոստոսի 23-ին Իհսան փաշան Համադանում հրապարակեց մի հայտարարություն հետևյալ բովանդակությամբ. «Ռուսների ճնշումից իր հարևան մուսուլման պետություն Իրանին ազատագրելու, նորին մեծություն Սուլթան Ահմեդ շահին գերությունից ազատելու, Իրանի անկախությունը ապահովելու և Իրանի ժողովրդին օգնելու համար Օսմանյան մուսուլմանական պետությունը իր հրամանատարության տակ գտնվող մուսուլմանական մի բանակ է ուղարկել Իրան: Այս հաղթական բանակը մինչև այժմ անգլիացիներին պաշարել..., հաղթել և ստիպել է անձնատուր լինել: Գերի են ընկել հինգ անգլիական գեներալ, 400 սպա և 13000 զինվորներ:

...Իրանի մուսուլման ժողովուրդ...

Այսօր այն օրն է, երբ իսլամը հաղթանակում է և անհավատների ճնշումից ազատվում: Անհավատները պարտվում են: Մուսուլմանների խալիֆը ջիհադ է հայտարարել, և զրան մասնակցելը յուրաքանչյուր մուսուլմանի համար պարտադիր է: Համագործակցեք այս հաղթական բանակի հետ, որը իմ հրամանատարության տակ հաղթանակից հաղթանակ է գնում, որպեսզի անհավատների մնացած մասին ևս վճռվեն մուսուլմանական երկրներից, Իրանը մաքրենք կեղտոտ ներկայությունից և այս ջիհադով հավիտյան հպարտանանք»²¹: Եվ ապա ստորագրված էր՝ «Իրանի ազատագրման իսլամական ուժերի հրամանատար Ալի Իհսան»: Այս փաստաթուղթը մեկ անգամ ևս վկայում է թուրքական կառավարության պանիսլամական և պանթուրքական մտադրությունները:

¹⁸ ЦГВИА, ф. 2320, оп. 1, д. 65, л. 113.

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Лудинвейт Е. Турция в годы первой мировой войны. М., 1966, с. 89.

²¹ Մովսեսյա ոլ Դոլի Սեփեհե, Իրան գար ջանգե բողոք 1914—1918, Քեհհրան, 1957, էջ 379 (պարսկ. լեզվով):

¹⁵ Նույն տեղում, էջ 430:

¹⁶ ЦГВИА, ф. 2320, оп. 1 д. 65, л. 113.

¹⁷ F. Halsey, ... p. 173.

Իրանում թուրքական զորքերի առաջխաղացումը և նրանց Համադան հասնելը որոշակի խանդավառություն առաջ բերեցին երկրում թուրքերի կողմնակիցների մեջ և միաժամանակ սարսափեցրին քրիստոնյա բնակչությանը:

Անհրաժեշտ է նշել, որ թուրքական զորքերի հետ Քերմանշահ վերագարձավ նաև իրանական ժամանակավոր կառավարությունը՝ նեղամ էս Սալթանեի գլխավորությամբ: Այս փուլում նորից հակասություններ երևան եկան Գերմանիայի և թուրքիայի միջև Իրանում տարվող քաղաքական գծի վերաբերյալ: Թուրքական ռազմական կցորդ Ֆավրի բեյը բաշտեզյակ լինելով իրագրությունը, աշխատում էր փարատել իրանցիների անվստահությունը թուրքիայի նկատմամբ: Նա դավադրություններ էր կազմակերպում Գերմանիայի դեմ և իրանցիներին ներշնչում, որ «միակ պետությունը, որը կարող է Իրանը պաշտպանել գերմանական գաղութարարական քաղաքականությունից՝ Թուրքիան է»²²:

Բարատովի զորքերը Համադանից հեռանալով, նահանջեցին դեպի Ղազվին: Դլխավոր շտաբին գրած զեկուցագրում Բարատովը նշում էր, որ իր տրամադրության տակ ունի ընդամենը 7000 մարդ: Դա, անշուշտ, բավարար ուժ չէր թուրքական արշավանքից Իրանը պաշտպանելու համար: Բայց Իհսան փաշայի բանակը ևս մեծաթիվ չէր: Այն բաղկացած էր ընդամենը 12000 մարդուց: Ուստի Բարատովը գտնում էր, որ թուրքերի համար այդ նույնպես անբավարար է, որպեսզի նրանք գրավեն Իրանը և ճանապարհ բացեն դեպի Աֆղանստան ու Հնդկաստան: Մյուս կողմից, ինչպես արդեն նշել ենք, թուրքերի և գերմանացիների միջև տարաձայնություններ կային, որի հետևանքով թուրքերի առաջխաղացումը դադարեցվեց, և փաստորեն 1916 թ. օգոստոսից մինչև տարվա վերջը այս ճակատում ոչ մի ռազմական գործողություն տեղի չունեցավ: Ռուսական զորքերը պատրաստվում էին հարձակման: Թուրքական 13-րդ կորպուսը կենտրոնացավ Համադանի շրջակայքում, որտեղից փոքր խմբեր էին ուղարկվում դեպի Ղազվին և Թեհրանի ճանապարհները:

Իր տրամադրության տակ եղած զորքերով Իհսան փաշան չէր կարող հարձակվել Թեհրանի վրա, քանի որ ռուսական բանակը, համարվելով Ռեմիայի շրջանում գտնվող ռուսական զորամասերով, կարող էր սպառնալ նրան թիկունքից՝ Բիջարի ուղղությամբ: Միաժամանակ թուրքերը իրանական ջոկատներ էին կազմում, և արդեն զեկտեմբերին ստեղծվեց մոտ 8000 մարդուց բաղկացած մի բանակ, որը կենտրոնացավ Բորուջերդի շրջանում: Բայց այդ զորքերի մարտունակությունը խիստ կասկածելի էր: Դրանց մեջ էին մտնում նախկին ժանդարմները, կամավորները և լորեստանի տարբեր ցեղերի ներկայացուցիչները: Այս բանակը, իհարկե, ռազմական գործողություններին չէր մասնակցում:

1916 թ. աշնանը և ձմռանը փոքր բախումներ էին տեղի ունենում Բիջարի, Դովլաթարդի և Քաշանի շրջաններում, ընդ որում, այդ վայրերը գրավվում էին կամ ռուսների, կամ թուրքերի կողմից: Այսպիսով, 1917 թ. սկզբներին ճակատի գիծը մոտավորապես անցնում էր վերը նշված վայրերով²³:

Բայց ահա այդ ժամանակ մեծ իրադարձություններ տեղի ունեցան Միջագետքում: Երկար նախապատրաստությունից հետո 1917 թ. հունվարին անգլիացիները հարձակում սկսեցին թուրքերի դեմ: Քուֆի ճակատում մարտերն սկսվեցին հունվարին և ընթացան թուրքերի համար աննպաստ պայմաններում: Հունվարի 21-ին 13-րդ կորպուսի հրամանատար Ալի Իհսան փաշան հրաման ստացավ իր տրամադրության տակ գտնվող բոլոր ուժերով օգնության շտապել վեցերորդ բանակի հրամանատար Խալիլ փաշային²⁴: Ալի Իհսան փաշան իր զորքերով սկսեց նահանջել դեպի Բաղդադ: Փետրվարի 20-ին Բարատովի գլխավոր ուժերը նորից շարժվեցին դեպի Համադան: Գարնանը ռուսական զորքերը հարձակման անցան նաև թուրքական ճակատում և արդեն ապրիլ ամսին գրավեցին Սուլեյմանիեն: Սակայն թե՛ Իրանից նահանջող թուրքական զորքերը և թե՛ նրանց հետևող ռուսները չհասցրեցին մասնակցել Բաղդադի համար մղվող մարտերին: Քաղաքի ճակատագիրը որոշվեց մարտի 9—11-ին, երբ գեներալ Մոդի զորքերը մտան Բաղդադ:²⁵

Հենց այդ նույն օրերին ռուսական զորքերը ռազմական հաջող գործողություններ ծավալեցին: Մարտի 2-ին նրանք գրավեցին Համադանը, մի քանի օր հետո՝ Սինան, իսկ մարտի 10-ին մտան Քերմանշահ: Արդեն ապրիլին նրանք հասան Խանեղին և թուրքերի հետ մարտի բռնվեցին Դիալու գետի ափերին: Այնուհետև մի զորամաս ուղարկվեց Կզըլ Ռաբաթ, որտեղից և կապ հաստատվեց անգլիական զորքերի հետ: Սակայն Միջագետքի ճակատում մեծ հաջողությունների հասնելուց հետո անգլիացիները շցանկացան նյութական և ռազմական օգնություն ցույց տալ ռուսներին՝ Խանեղինից այն կողմ թուրքական զորքերին պարտության մատնելու համար:

Նման անփառունակ վախճան ունեցան թուրքական բանակի գործողություններն Իրանում 1916—1917 թվականներին, և ձախողվեցին Թուրքիայի իշխող շրջանների՝ Իրանի հյուսիս-արևմտյան և արևմտյան շրջանները զավթելու ջանքերը:

²³ Зайончковский А. Мировая война 1914—1918. М., 1938, т. I, с. 80

²⁴ W. Allen, P. Muratoff, ..., p. 445.

²⁵ Նույն տեղում:

²² Նույն տեղում, էջ 233:

ТУРЕЦКАЯ АГРЕССИЯ В ИРАНЕ В 1916—1917 гг.

Резюме

В общих военно-стратегических планах Германии турецкие правящие круги имели свои собственные завоевательные цели в отношении Закавказья, Ирана и других мусульманских стран. В ноябре 1914 г. турецкие войска перешли границу Ирана и вторглись на его территорию в районах Азербайджана и Курдистана. Операция турецких войск в Иране на этом этапе закончилась поражением. Однако правящие круги Турции не отказались от своих агрессивных намерений в отношении соседней страны. В 1916—1917 гг. создались новые возможности для вторжения в Иран. Турецкие войска оккупировали Керманшах и дошли до Хамадана. Но иная ситуация сложилась в Месопотамии. Турецкая армия оказалась в тяжелом положении, и командование вынуждено было отозвать свои войска из Ирана. Затем последовало продвижение русских войск.

Таким был бесславный конец операции турецких войск в Иране в 1916—1917 гг.

Վ. Ա. ԲԱՅՐՈՒՐԳՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկ. պետ. մանկավարժական ինստիտուտ

1905—1911 թթ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐԿԻԱՆ

«Ասիայի զարթոնքի» դարաշրջանում Արևելքի մահմեդական երկրներից Իրանը առաջինն էր, որ ընդվզեց միապետական-բռնակալական կարգերի դեմ: Այդ երկրում սոցիալական հարաբերությունների ծայրահեղ սրումը, իմպերիալիստական լծի ուժեղացումը, Ճապոնիայի հետ պատերազմում ցարիզմի պարտությունը և 1905 թ. Ռուսաստանում սկսված հեղափոխությունը անմիջական խթան հանդիսացան հեղափոխական պայթյունի համար:

Անդրկովկասում և Իրանում տեղի ունեցող իրադարձությունները իրենց արձագանքն ունեցան նաև հարևան Թուրքիայում, որտեղ ազգային-ազատագրական և սոցիալական բնույթի բուռն շարժումներ սկսվեցին սուլթան Աբդուլ Համիդ II-ի «զուլումի» վարչակարգի դեմ: Պայքարը հատկապես լայն թափ էր ընդունել երկրի արևելյան շրջաններում՝ Արևմտյան Հայաստանում, Կենտրոնական Անատոլիայում, Թուրք-իրանական սահմանամերձ գոտում և այլն:

Սուլթանական կառավարության համար այդ շարժումները հատկապես սպառնալից բնույթ էին կրում այն պատճառով, որ հաճախ բռնակալության դեմ պայքարը միավորում էր տարբեր ժողովուրդներին: Այսպես, 1905 թ. Դերսիմի բրդերի ապստամբությունը պաշտպանություն գտավ շրջակա հայ բնակչության կողմից: Իրանի սահմանակից շրջանների մի շարք բրդական ցեղեր ձգտում էին մերձենալ հայերի հետ և ոչ միայն արգելք չէին հանդիսանում իրենց տարածքով զինքի տեղափոխմանը «երկիր»՝ Արևմտյան Հայաստան, այլև նպաստում էին այդ գործին¹: Կայսրության արևելյան ու արևմտյան վիլայեթների ժողովուրդների միջև փորձեր էին կատարվում միաժամանակյա ելույթների համար և այլն:

Սարսափահար Աբդուլ Համիդը բանակի, ոստիկանության ու ներքին հակահեղափոխության ուժերի օգնությամբ շտապ միջոցներ էր ձեռնարկում հեղափոխական ցնցումներից խույս տալու համար: Անդրկովկասից ու Իրանից հուժկու թափով Թուրքիա ներթափանցող հեղափոխա-

¹ Центральный государственный военно-исторический архив, ф. 2000, оп. I, д. 7746, л. 558 (Այսուհետև՝ ԸԳՎԻԱ).

կան գաղափարը կասեցնելու նպատակով սուլթանը նույնիսկ հրամայեց փակել սահմանները և հատկապես դաժան դատաստան տեսնել հայերի հետ, որոնք սահմանի այն կողմից զենք ու հեղափոխական գրականություն էին տեղափոխում Օսմանյան կայսրություն: Այս բոլորի հետ միասին Ստամբուլը գործուն միջոցառում էր համարում հակահեղափոխական ներխուժման կազմակերպումը ղեպի իրան և նույնիսկ ղեպի Անդրկովկաս: Դրա հավանականությունը վերաբերյալ 1905 թ. դեկտեմբերին Պետերբուրգի քաղաքական շրջաններում արդեն պտտվում էին շարագուշակ լուրեր: «Նոյեմբերյան վերամյա» թերթը տազնապով նշում էր, որ Կովկասում, որը «համակված էր խռովությունների և երկպառակությունների բոցով», ավելի քան երեք միլիոն մահմեդականների առկայության պայմաններում միայն մարգարեի կանաչ դրոշի հայտնվելը լի է անհամար հետևանքներով: «Կարող է պատահել,—շարունակում էր թերթը,—մենք գտնվում ենք իսլամի նոր գրոհի նախաշեմին և խաղաթղթի վրա է դրված ամենից առաջ Կովկասի ճակատագիրը, Ռուսաստանի այն հողակտորի ճակատագիրը, որը մեր ձեռքերում պահելու համար արյուն ենք թափել և միշտ պարզորոշ կերպով գիտակցել ենք նրա կենսական նշանակությունը մեզ համար»²:

Սակայն Ռուսաստանի հետ պատերազմի սպառնալիքը, ի վերջո, ստիպեց սուլթանին հրաժարվել իր այդ ծրագրից: Որոշվեց հարվածն ուղղել ռազմական տեսակետից թույլ ու անզոր Ղազարական իրանի դեմ: Թուրքական կառավարող շրջանների ենթադրությամբ այդ ձեռնարկը, կապված չլինելով որևէ ռիսկի հետ, օսմանյան գահին կարող էր մեծամեծ օգուտներ բերել: Նախ, կջախջախվեր սահմանադրական շարժումն իրանում, որի նկատմամբ սուլթանը տրամադրված էր «բացառիկ թշնամանքով»³, կբացառվեր նրա վարակիչ օրինակի տարածման վտանգը, կխոչընդոտվեր Ռուսաստանի ազդեցության մեծացումը Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան իրանում, պետության մահմեդական բնակչության ուշադրությունը կշեղվեր իր սոցիալ-տնտեսական ծանր կացությունից և, վերջապես, հնարավորություն կստեղծվեր իրականացնել իրանական Ատրպատականը և Քրդստանը զավթելու, դրանք Օսմանյան կայսրության տիրույթներին կցելու Աբգուլ Համիդի վաղեմի պանիսլամական ծրագրերը: Ստամբուլը հույս ուներ մեկ հարվածով ջախջախել նաև արևմրտյան իրանի՝ Թուրքիայի սահմանամերձ շրջաններում տեղավորված հայկական հեղափոխական շարժման կենտրոնները, որոնք մշտական կապերի մեջ էին Արևմտյան Հայաստանի հետ: Սուլթանը ենթադրում էր, որ այդ կենտրոնների ջախջախումը մահացու հարված կհասցնեք նաև հայ ազգային-ազատագրական շարժմանը:

Իր այդ մտադրությունները իրագործելու ճանապարհին Թուրքիան որևէ դիմադրություն չէր նախատեսում ոչ միայն շահական կառավարության, այլև ռուսական ցարիզմի ու բրիտանական իմպերիալիզմի կողմից: Այս ենթադրությունը հիմնվում էր այն բանի վրա, որ ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունից հետո ռազմականապես թուլացած Ռուսաստանը, որը ծայրեծայր ցնցվում էր հեղափոխության ալիքների մեջ, հնարավորություն չի ունենա լրջորեն զբաղվելու մերձավորարևելյան խնդիրներով⁴: Իսկ Անգլիան, որը խոսքով հանդես էր գալիս որպես իրանական հեղափոխության պաշտպան, գործնականում զեմ չէր լինի, եթե Թուրքիան էս մասնակից դառնար այդ հեղափոխության ճնշմանը և բացի այդ, Իրանի Հյուսիս-արևմտյան շրջաններում հարված հասցնեք իր ախոյանի՝ Ռուսաստանի տնտեսական-քաղաքական զերակշռող դիրքերին: Ինչ վերաբերում է իրանում հայտնված իմպերիալիստական նոր գիշատչին՝ Գերմանիային, ապա վերջինս արդեն մեկ տասնամյակից ավելի հանդես էր գալիս Թուրքիայի պանիսլամիստական ծրագրերը խրախուսողի դերում և նախագծեք ունեք Բաղդադի երկաթուղուց ճյուղեր անցկացնել ղեպի իրան՝ Ուրմիայի ու Լահիջանի, ինչպես նաև Քերմանշահի և Խանկեյի վրայով⁵: Անտարակույս, իր «մեծ բարեկամի»՝ Թուրքիայի ներկայությունը իրանում կհեշտացնեք այդ գործը:

Առաջնորդվելով վերոհիշյալ նկատառումներով՝ սուլթան Աբգուլ Համիդը, զերմանական «Փրանկֆուրտեր ցայտունգ» թերթի տվյալներով, 1905 թ. աշնանը իրանական սահմանների մոտ կենտրոնացրել էր 40 հազարանոց բանակ⁶: Նոյեմբերի 27-ին հեռագրով սուլթանը հրամայեց բանակային շորրորդ կորպուսի հրամանատարին շարժվել ղեպի արևելք: Սկսվեց օսմանյան զորքերի ռազմերթը ղեպի իրան: Բ. Գուր հայտարարեց, որ սահմանակից այսպես կոչված «վիճելի» իրանական տերիտորիաների նկատմամբ Թուրքիան ունի պատմական իրավունքներ: Սուլթանը նույնիսկ հրամայեց պատրաստել նոր քարտեզ, որի մեջ ընդգրկված լինեին այդ «վիճելի» հողերը: Ընդ որում այդ քարտեզների պատճենները ուղարկվեցին Թեհրան, Լոնդոն և Պետերբուրգ⁷:

Իրանի նվաճված տարածքում Թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատարության առաջին քայլերից մեկը հանդիսացավ իրանական ժողովրդի հակաֆեոդալական և հակաիմպերիալիստական շարժումը կերպարանափոխել և տանել պանիսլամիզմի հունով: Ինչպես հայտնի է,

⁴ ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 1020, л. 21 об.

⁵ Архив внешней политики России, ф. «Канцелярия МИД», 1906 г., д. 26, л. 166 об.

⁶ G. M. Bradford, *Եզվ. աշխ.*, էջ 93.

⁷ Նույն տեղում, էջ 96:

² «Новое время», 16 декабря 1905 г., № 10688, с. 3.

³ G. M. Bradford, *German-persian diplomatic relations 1873—1912*, Mouton, S. Gravenhage, 1959, p. 100.

Թուրքական կառավարող շրջաններն աշխատում էին արտաքին քաղաքականության բնագավառում պանիսլամիզմն օգտագործել ծավալապաշտական նպատակներով: Հետադիմական այդ գաղափարախոսությունը միաժամանակ ուղղված էր մահմեդական արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական և դասակարգային պայքարի դեմ: «Թուրքական պանիսլամիստները երազում էին... ոմն իսլամական քաղաքակրթություն» ստեղծելու մասին, որն իր մեջ ընդգրկելու էր Օսմանյան կայսրությունը, Իրանը, Աֆղանստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան և այլն»⁸: Նրանց մտայնության համաձայն, XX դարում Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը անխուսափելիորեն տեղափոխվելու էր դեպի Արևելք, որը պանիսլամիստների կարծիքով երաշխիք կարող էր հանդիսանալ Թուրքական պետականության հետագա ծավալման, բարգավաճման ու կենսունակության համար: Այս տեսակետը սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիներին բարձրացել էր պետական քաղաքականության մակարդակի:

Թեհրանում ռուսական գործերի հավատարմատար Ա. Սոմովը 1906 թ. գարնանը հազորգում էր Պետերբուրգ, որ Իրանի տարբեր նահանգներում և նույնիսկ մայրաքաղաքում զնալով ուժեղանում է Թուրքական պանիսլամիստական քարոզչությունը: «Թուրքական գործակալները,—գրում էր նա,—հայտարարում են խալիֆ սուլթանի գլխավորությամբ միասնական մեծ մահմեդական պետություն ստեղծելու անհրաժեշտության մասին, որի կազմի մեջ պետք է մտնեն Թուրքիան, Պարսկաստանը, Կովկասը և Թուրքեստանը»⁹:

Գերմանական «Համբուրգեր Նախրիխտեն» թերթի Պետերբուրգի թղթակցի տվյալներով, այդ նույն օրերին Թուրքիայի պանիսլամիստական գործակալները Խոանդուն գործունեություն էին ծավալել նաև Կովկասում, նպատակ ունենալով երկրամասի մահմեդական բնակչությանը նախապատրաստել ապստամբության Ռուսաստանի դեմ¹⁰:

Թեհրանում չափազանց ակտիվ գործունեություն էր ծավալել հայտնի պանիսլամիստ, Թուրքական դեսպան Շեմսեդդին Բեյը: Նրան հաջողվել էր կապեր հաստատել պանիսլամիստական տրամադրություններ ունեցող իրանական բարձր հոգևորականության մի շարք ներկայացուցիչների՝ հատկապես ազդեցիկ մուշտեհիդների հետ, որոնք ընդդիմադիր տրամադրություններ էին դրսևորում շահի և նրա կառավարության նկատմամբ, միաժամանակ ունենալով շեշտված հակաիմպերիալիստական կեցվածք: Թուրքական դեսպանի հորդորներով նրանք հեռագրեցին սուլթանին, որ ճանաչում են նրան որպես «մահմեդականների գերագույն

պաշտպանի»¹¹: Թեհրանում Թուրքական դեսպանատանը հաջողվեց նույնիսկ կաշառել մի շարք իրանական թերթերի և նրանց միջոցով պանիսլամիստական գաղափարներ քարոզել: Այդ թերթերը կատաղի հարձակումներ էին գործում Ռուսաստանի և Անգլիայի դեմ, նրանց մեղադրելով «իսլամի լույսը հանգցնելու» մտադրության մեջ և կոչ էին անում Իրանին միանալ Թուրքիայի հետ¹²: Սա մի աննախադեպ երևույթ էր նաև այն առումով, որ դարեր շարունակ ուղղափառ իսլամի՝ սուննիզմի նկատմամբ անհաշտ թշնամանքով տրամադրված շիա աղանդի բարձրագույն հեղինակությունները փաստորեն կոչ էին անում միավորել երկու հակընդդեմ ու թշնամական աղանդները և նրանց հետևորդներին հանուն իսլամի միասնության ու պայքարի քրիստոնյա Եվրոպայի դեմ:

Իրանում հեղափոխական շարժումը թուլացնելու և նրան մահացու հարված հասցնելու նպատակով Թուրքական դավթիչները հրահրում էին նաև մահմեդական հետամնաց ու նախապաշարված բնակչության կրոնական ֆանատիկոսությունը, տարբեր էթնիկական խմբերին տարանջատելու և միմյանց դեմ հանելու համար բորբոքում էին ազգային երկպառակություններ և այլն: Մասնավորապես իրանական հետադեմ մամուլի օգնությամբ Թուրքական էմիսարները քրիստոնյա բնակչության՝ հայերի ու ասորիների դեմ հրահրում էին կրոնական անհանդուրժողականության թույնով վարակված մահմեդականներին, քաղաքային ապադասակարգանացված քրեական տարրերին և դանազան խաժամուժի: Հենց Թուրքերի ներշնչումով իրանական պանիսլամիստական ուղղության մի շարք թերթեր սկսեցին հանդես գալ իրանահայերի մասին ստահոգ և թունավոր հողվածներով, ճգնելով նրանց մեղադրել քաղաքական անբարեհուսության մեջ: Այդ թերթերը գրում էին, որ իբր հայերը Իրանում ունեն անջատվողական ձգտումներ և մասնավորապես ցանկանում են Իրանական Աղբրեջանը միացնել իրենց «ապագա անկախ պետությանը»¹³: Այդ քարոզչության ազդեցության ներքո Ուրմիայի, Սալմաստի և մի շարք այլ շրջաններում սկսվեցին հայերի ու ասորիների ջարդեր: Հալածական գյուղացիությունը զանգվածորեն լքում էր իր բնակավայրերը¹⁴: Ջարդերն առանձնապես լայն չափեր ընդունեցին 1906 թ. գարնանը¹⁵: Միանգամայն ակնհայտ էր, որ Թուրքական իշխանությունների կողմից հրահրված այդ ջարդերը հետապնդում էին այն տարրերի ջախջախման նպատակը, որոնք իրանական հեղափոխության մեջ կարող էին ակտիվ գեր խաղալ:

¹¹ АВПР, Ф. «Перседский стол», 1907 г., л. 51—53.

¹² «Մշակ», 1906, 15 հունիսի, № 129, էջ 3—4:

¹³ «Մշակ», 1906, 21 ապրիլի, № 84, էջ 3:

¹⁴ Центральный государственный исторический архив Ленинграда, ф. 600, оп. 2, д. 1224, л. 23, об. 29. (Այսուհետև՝ ЦГИАЛ).

¹⁵ «Тифлисский вестник», 7 июня, 1906 г.

⁸ Гасанова Э. Идеология буржуазного национализма в Турции, Баку, 1966, с. 33.

⁹ АВПР, Ф. «Перседский стол», 1906, д. 907, л. 173—175.

¹⁰ «Hamburger Nachrichten», April 3, 1906, №236 April, 12, 1906, № 258.

1906 թ. ամռանը հեղափոխական շարժումն Իրանում գնալով ավելի հուժկու թափ էր քնդունում: Օգոստոսի 5-ին շահը ստիպված էր հրամանագիր արձակել սահմանադրություն ընդունելու մասին: Նրանում հայտարարվում էր, որ անհրաժեշտ վերափոխումներ իրականացնելու նպատակով Թեհրանում գումարվելու է օրենսդրական ժողով՝ մեջլիս: Օգոստոսի 19-ին տեղի ունեցավ մեջլիսի հիմնադրման հանդիսավոր արարողությունը:

Թեհրանի իրադարձությունների ազդեցության ներքո հեղափոխական պայքարի մեջ մտավ նաև Թավրիզը: Այստեղ հիմնադրվեց սոցիալ-դեմոկրատական մի ոչ մեծ խումբ, որը կապված էր իրանական սոցիալ-դեմոկրատական «էջթեմայունե Ամիրուն» կազմակերպության հետ: Բացի այդ, Թավրիզում հիմնադրվեց առաջին հեղափոխական էնչումենթ, որը հիմք դրեց ողջ Իրանում նույնատիպ հեղափոխական կազմակերպությունների ստեղծմանը: Ստեղծվեց նաև մուջահիդների (մարտիկների) արդար, հեղափոխական գործի համար) զինված կազմակերպությունը: Այս ամենը դեմոկրատական շարժման խոշոր հաջողությունն էր և ուժգին հարված էր հետադիմական ուժերին¹⁶:

Չնայած թուրքական իշխանությունների ձեռնարկած կանխարգելիչ միջոցառումներին, Իրանում տեղի ունեցող այս լուրերը հեղափոխական գաղափարների հետ միասին հուժկու թափով անցնում էին սահմանը և անմիջական ներգործություն ունենում Թուրքիայի բնակչության վրա, հատկապես Արևմտյան Հայաստանում¹⁷: Երկրամասում ծայր առաջն գյուղացիական բուռն հուզումներ: Թեև կառավարությունը փորձեց այդ շարժումները ներկայացնել որպես հայկական հեղափոխական կազմակերպությունների կողմից հրահրված ապստամբություններ¹⁸ և աշխատեց օգտագործել իր զինանոցի փորձված զենքը՝ հայ-թուրքական թշնամանք բորբոքելու միջոցով մահմեդականների ուշադրությունը քաղաքական պայքարից շեղելու միջոցը, սակայն այս անդամ դրանից, առանձին բացառություններով, ոչինչ դուրս չեկավ¹⁹:

Սուլթանական կառավարությանը հատկապես ահաբեկում էր այն, որ հարևան երկրում սահմանադրության հաղթանակը կարող էր նպաստել Իրանի և Օսմանյան կայսրության հեղափոխական շրջանների միջև կապի հաստատմանը: «Արևելյան Անատոլիայի քաղաքներում հակակառավարական շարժման գարգացման վրա անկասկած ազդեցություն ունեին

հեղափոխական շարժումներն Իրանում,—գրում է սովետական թուրքագետ Յու. Պետրոսյանը:—Սահմանադրական շարժումն Իրանում և իրանական առաջին պառլամենտի գործունեությունը երիտթուրքերի համար հանդիսանում էին պայքարի կարևոր օրինակ ֆեոդալամիապետական վարչակարգի դեմ»²⁰:

«Երկրի ձայնը» 1906 թ. գրում էր, որ «Սահմանադրական շարժումը Թուսաստանում և Պարսկաստանում հույս ու եռանդ է ներշնչել երիտասարդ թուրքերին»²¹: Արդեն 1907 թ. երիտթուրքերի փարիզյան համագումարին նախորդած շրջանից «Իթթիհատ վե թերաբը» կոմիտեն ձգտում էր սուլթանական բռնատիրության դեմ լայն ճակատ կազմակերպել ինչ-պես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս²²: Այդ պատճառով երիտթուրքերը կարևոր նշանակություն էին տալիս նաև իրանական հեղափոխականների հետ շփումներ ունենալու հարցին²³: Մասնավորապես Իթթիհատի Փարիզի կենտրոնը 1907 թ. իր ներկայացուցիչներին ուղարկում էր Իրանական Ազդեբջան, որտեղ նրանք հանդես էին գալիս ճառերով, տարածում էին երիտթուրքական գրականություն, թուրքիկներ և այլն²⁴:

1907 թ. դեկտեմբերին Փարիզում գումարված երիտթուրքական համագումարը Ահմեդ Ռեզա բեյի, իշխան Սարահեզգինի և Խաչատուր Մալումյանի (Ակնունի) համատեղ ստորագրությամբ մի հեռագիր ուղարկեց Իրանի պատգամավորների պալատի անունով, որտեղ նշվում էր, որ «օսմանյան պետության մեջ ևս սահմանադրության հաստատումը կամ-րապնդի երկու հարևան երկրներին միացնող բարեկամությունը և կծառայի Արևելքի քաղաքակրթությանը»²⁵:

Սուլթանական կառավարության արտաքին քաղաքականությունը քննադատելու և առհասարակ Աբդուլ Համիդին վարկաբեկելու նպատակով երիտթուրքական մամուլը («Ենի-ֆիքր», «Շուրայի ումմեթ», «Ստամբուլ» և այլն) լայնորեն սկսեց օգտագործել Իրանի նկատմամբ կիրառվող դավթողական քաղաքականության փաստը, միաժամանակ շեշտելով, որ սուլթանը Իրանում իրագործում է հակահեղափոխական զինված ինտերվենցիա: «Ստամբուլ» թերթում նույնիսկ տպագրվեց մի հոդված, որտեղ ասվում էր, որ դեռևս XIX դարի 90-ական թվականներին, Իրանում տեղի ունեցած հեղափոխական ցնցումների ժամանակ Աբդուլ Համիդը

²⁰ Петросян Ю. Младотурецкое движение. М., 1971, с. 228.

²¹ «Երկրի ձայնը», 1906, № 1, էջ 5:

²² Алиев Г. Турция в период правления младотурок, М., 1972, с. 91.

²³ Yusub Hikmet Bayur, Türk inkilabi tarihi, cilt II, kism IV. Ankara, 1952, s. s. 98—99.

²⁴ A. B. Kuran, Inkilâp tarihimiz ve ittihad ve Teraki. Istanbul, 1948, s. s. 214—216.

²⁵ Yusub Hikmet Bayur, նշվ. աշխ. հ. II, մաս IV, էջ 102:

¹⁶ Иванов М. Иранская революция 1905—1911 гг., М., 1957, с. 83—84.

¹⁷ Шнилькова В. Антиправительственные выступления в Восточной Анатолии накануне младотурецкой революции, «Народы Азии и Африка», 1974, № 3, с. 73.

¹⁸ K. J. Basmadjian, Le mouvement revolutionnaire en Asie Mineure, „Revue du Monde Musulman“, vol. IV, Paris, 1908, p. 819—825.

¹⁹ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, л. 136—136 об.

զավթեց հեղափոխական շարժումներով ընդգրկված մի շարք նոր բնակավայրեր³⁷:

Զավթված տերիտորիաներում թուրքական զորքերը դաժանորեն ճնշում էին տեղական բնակչության կողմից դիմադրության ամեն մի փորձ: Նման դեպքերում նրանք այրում էին գյուղերն ու բնաջնջում նրանց բնակիչներին³⁸: Այսպես, երբ 1907 թ. օգոստոսին Մավանա գյուղի ասորի բնակչությունը անձնազոհ դիմադրություն ցույց տվեց զավթիչներին, վերջիններս հրետանային կրակով գյուղը վերածեցին ավերակների³⁹: «Կավկազ» թերթը գրում էր որ «բազմաթիվ անմեղ գյուղացիներ, այդ թվում նաև կանայք ու երեխաներ, սրի քաշվեցին, բազում մարդիկ թշվեցին գերության, մղկիթները ավերվեցին և նրանց գույքը կողոպտվեց ու ոչնչացվեց»⁴⁰: Առանձնակի դաժանությունը թուրքական հրամանատարությունը պայքարում էր հեղափոխական էջումնների և պարսկական ու հայկական ֆիդայական ջոկատների դեմ, նրանց հետ վարվելով ինչպես «խռովարարների ու ավազակների հետ»⁴¹: Միայն Ուրմիայի շրջանում թուրքերը ավերեցին 35 գյուղ և տեղական բնակչությունից ոչնչացրին 400 մարդ⁴²: Ուրմիայում պարսկերեն լեզվով հրատարակվող «Ֆարյազ» թերթը գրում էր. «Ուրմիայի բնակչության հեռագրերը Քեհրան, թուրքական բռնությունների մասին, դրական արդյունք չտվեցին: Կոտորածը շարունակվում է: Այսօր թուրքական զորքերը էլ ավելի շարժվեցին առաջ: Ամեն օր զավթում են նոր գյուղեր: Կոտորվեցին մի քանի հարյուր երիտասարդներ: Թուրքական զորքերը դաշտերին հասցրին մոտ մեկ միլիոն ուրբու վնաս»⁴³:

Միաժամանակ զավթված շրջանների բնակչության հետադիմական տարրերին, բռնատիրության կողմնակից խաներին ու ֆեոդալներին թուրքերը զրգոում էին սահմանադրականների դեմ, կազմակերպում զանգվածային ձերբակալություններ և այլն⁴⁴: Իսկ Քեհրանում թուրքական դեսպանատունը ազատ ապաստան էր տալիս քաղաքում անկարգությունների ու խռովությունների կազմակերպիչներին և առհասարակ բոլոր հակահեղափոխական տարրերին⁴⁵: «Մեջլիս» թերթը բացահայտ կերպով մեղադրում էր շահին թուրքական ինտերվենցիային ուղղակի աջակցություն ցույց տալու մեջ: Նա բերում էր այն փաստարկը, որ Մոհամեդ-

Ալի շահը ոչ միայն կտրականապես հրաժարվում է մայրաքաղաքից զորքեր տեղափոխել սահման, այլև այնտեղից հանում է զորքերն ու տեղափոխում Քեհրան՝ հեղափոխական ֆիդայիների ու էջումնների դեմ պայքարելու համար⁴⁶: Իսկ պրեմիեր-մինիստր Նասր-օլ-Մոլլը վարելով պարտվողական քաղաքականություն և ցանկանալով պատերազմի խրտվիլակով վախեցնել մեջլիսի առաջադիմական զործիչներին, հայտարարում էր, որ Իրանը ի վիճակի չէ պատերազմելու թուրքերի դեմ⁴⁷: Ավելին, շահական մինիստրներն աշխատում էին թուրքական ներխուժումն առիթ դարձնել մեջլիսին վարկաբեկելու համար: Նրանք հայտարարում էին, որ «կառավարությունը զրկելով դրամից ու բանակից, պառլամենտը իրավունք չունի նրանից պահանջել որևէ վճռական քայլ թուրքերի դեմ»⁴⁸:

Խոսելով այս իրադարձությունների մասին, պարսիկ պատմարան Մեհդի Մալեքզադեն նշում է, որ «Թուրքական զորքերը, որոնք հանդես էին գալիս իրանական հետադիմության կողմից, մեծագույն հարված հասցրին սահմանադրական շարժմանը»⁴⁹: Թուրքական ինտերվենցիան հատկապես բարդացրեց հեղափոխական շարժման զարգացումը Իրանի հյուսիս-արևմտյան շրջաններում: Մինչև 1907 թ. օգոստոսը թուրքական բանակը գրավեց Լահիջանի, Մերգևերի, Դեշտի, Բարաղոսթի, Բեղասուրի, Ուշնուլի և Սոմայի գավառները: Զավթված շրջաններում համընդհանուր խուճապ էր տիրում: Հաղարավոր մարդիկ, մանավանդ ասորիներն ու հայերը, լքելով իրենց բնակավայրերը, հապշտապ հեռանում էին⁵⁰:

1907 թ. օգոստոսի 31-ին կնքվեց անգլո-ռուսական համաձայնագիր Իրանը, Աֆղանստանը և Տիբեթը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ: Ստամբուլը այդ համաձայնագիրը մեկնաբանեց որպես Օսմանյան կայսրության դեմ ուղղված մի քայլ: Թուրքական քաղաքական շրջաններում ենթադրեցին, որ այդ համաձայնագրի նպատակն է Իրանում պատենել ստեղծել իրենց քաղաքական ծրագրերի առջև⁵¹: Բ. Դուրբ բողոք ներկայացրեց Անգլիային և Ռուսաստանին, նրանց մեղադրելով այն բանում, որ իմանալով հանգերձ, որ իրանական հարցում Թուրքիան հանդիսանում է շահագրգռված կողմ, նրանք Ստամբուլին չեն տեղեկացրել, որ նախատեսում են այդ երկրում սահմանել ազդեցության գոտիներ⁵²:

³⁷ ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 1009, л. 5 об.
³⁸ Նույն տեղում, գործ 1003, թ. 266, հ. 267.
³⁹ «Тифлисский листок», 1907, 18 августа.
⁴⁰ «Кавказ», 1907, 8 августа.
⁴¹ «Русские ведомости», 1907, 20 сентября, № 240.
⁴² «Бакинское вхо», 1907, 5 октября, № 31.
⁴³ «Ֆարյազ», 3 սեպտեմբերի 1907 թ., № 22, էջ 2—3:
⁴⁴ Մեդի Մալեքզադե, նշվ. աշխ., հ. 4, էջ 179:
⁴⁵ «Тифлисский листок», 11 июля 1906 г.

⁴⁶ «Մեջլիս», 14 դեկտեմբերի, 1907:
⁴⁷ G. M. Bradford, նշվ. աշխ., էջ 101:
⁴⁸ АВПР, ф. «Персидский стол», 1907 г., д. 914, л. 189.
⁴⁹ Մեդի Մալեքզադե, նշվ. աշխ., հ. 3, էջ 36:
⁵⁰ АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 914, л. 53.
⁵¹ Скиф. Персидский вопрос Англо-русское соглашение, его основные принципы и цели и пятилетние итоги. М., 1912, с. 32.
⁵² G. M. Bradford, նշվ. աշխ., էջ 104.

Անգլո-ուսական այդ համաձայնագիրը իրանական հարցում ստեղծեց գերմանա-թուրքական շահերի միասնություն: Գերմանական դիվանագիտությունը ենթադրում էր, որ նոր ստեղծված պայմաններում Թուրքիան կարող է անգնահատելի ծառայություններ մատուցել Գերմանիային Անտանտի դեմ մղած նրա պայքարում: Այդ առթիվ «Մշակը» գրում էր. «Ներկայումս, երբ կնքվեց անգլո-ուսական համաձայնությունը, որի մի կեսն էլ Պարսկաստանի ամբողջության պահպանությունն է, «հիվանդ մարդը» անգիտակ ձևանալով, կարծեք հենց հեզնելու համար երկու հզոր պետությունների գործը, իր «հիվանդ տեղովը» արշավում է Պարսկաստանի վրա-գրավելով երկրներ համաձայն հմուտ «բժշկության» (Գերմանիայի—Վ. Բ.) ցուցմունքների»⁵³:

Իսկապես, Թուրքիան կրկնապատիկ եռանդով ձեռնամուխ եղավ Իրանում իր զավթողական քաղաքականության իրականացմանը: 1907թ. վերջերին թուրքական զավթումներն արդեն ընդգրկում էին Իրանական Ազրբեջանի ողջ արևմտյան մասը, 36-րդ զուգահեռականից սկսած մինչև 38-րդ զուգահեռականն ընկած շրջանը⁵⁴: Զգալի հաջողություններ ձեռք բերվեցին նաև հարավային (Մուրբի) Քրդստանում, որտեղ օկուպացիոն զորքերը Սուլթուլաղից վանդեցին իրանական նահանգապետին և քաղաքն ամբողջությամբ վերցրին իրենց հսկողության տակ⁵⁵: Օսմանյան կայսրության բարձրագույն զինվորական հանձնաժողովը սկսել էր 4-րդ, 5-րդ և 6-րդ բանակների պահեստայինների զորահավաք⁵⁶: Գերմանիան այդ զորքերին առատորեն մատակարարում էր Կրուպպի նորագույն սիստեմի թնդանոթներ և զենքի այլ տեսակներ⁵⁷: Ամենուրեք խոսակցություններ էին գնում Իրանի դեմ պատերազմ հայտարարելու հնարավորության մասին⁵⁸: Սակայն Օսմանյան կայսրությունում սկսված ներքին քաղաքական սուր ճգնաժամը հնարավորություն չտվեց սուլթանին իրագործելու այդ ծրագիրը: Ինչպես հայտնի է, 1908 թ. հուլիսին տեղի ունեցած վերնախավային հեղաշրջման հետևանքով իշխանության գլուխ անցան երիտթուրքերը: Վերջիններս արտաքին քաղաքականության հարցերում ամբողջապես որդեգրեցին իրենց նախորդի ծրագրերը: Անգլիացի պատմաբան Վ. Գոտլիբը նշում է, որ «Երկու գաղափարախոսությունների»

քաղաքական պանթուրքիզմի և կրոնական պանիսլամիզմի յուրօրինակ բազմազան բնորոշ էր թուրքական խմբերիալիզմի համար»⁵⁹:

Թուրքիայում Արդուլ Համիդի վարչակարգի տապալումը զուգահեռեց Իրանում ծավալված բուռն իրադարձություններին: 1908 թ. հունիսի 23-ին Թեհրանում տեղի էր ունեցել հակահեղափոխական հեղաշրջում: Մուհամեդ-Ալի շահը ցրել էր առաջին մեջլիսը, մայրաքաղաքի հեղափոխական էնջումենները և այլն: Սահմանադրության կողմնակիցները ենթարկվում էին անզուսպ հալածանքների: Նման պայմաններում հարևան երկրում բռնատիրության տապալումը, բնականաբար, մեծ արձագանք էր ունենալու Իրանում, հատկապես հեղափոխական շրջաններում⁶⁰: Իսկապես, իրանական հեղափոխականները ցնծություններով ընդունեցին Թուրքիայում սահմանադրության հռչակման լուրը: 1908 թ. հուլիսի վերջերին ավելի քան 150 հեղափոխականներ բեստ⁶¹ նստեցին Թեհրանում թուրքական դեսպանատան ամառային շենքում, պահանջելով վերականգնել սահմանադրությունը⁶²: Իսկ Թուրքիայում վտարանդության մեջ գտնվող իրանական հեղափոխական կազմակերպությունները հատուկ ուղերձով դիմեցին Ստամբուլի երիտթուրքական կոմիտեին, խնդրելով օգնություն ցուցաբերել իրանական հեղափոխությանը⁶³: Ոգևորությունը հատկապես մեծ էր Իրանական Ազրբեջանում, որտեղ նույնիսկ լուրեր տարածվեցին, թե շուտով երիտթուրքական կառավարության զորքերը օգնության ձեռք կմեկնեն հետադիմության դեմ մարտնչող Թավրիզի հեղափոխականներին⁶⁴:

Իր հերթին իթթիհադի վերաբերմունքը դեպի իրանական հեղափոխությունը պաշտոնապես հայտարարելու նպատակով Ստամբուլի կոմիտեն հրապարակեց հատուկ դիմում, ուղղված իրանական ժողովրդին⁶⁵: Այդ դիմումում, ինչպես նաև նորաբաց մեջլիսի նախագահներ Ահմեդ Ռեզա բեյի և Սայիդ փաշայի հռչակագրերում հայտարարվում էր, որ «Օսմանյան ժողովուրդը համակրանք է տաժում իրանական հեղափոխության նկատմամբ»⁶⁶:

Անտարակույս Իրանի նկատմամբ թուրքական նոր կառավարության վերաբերմունքի լավագույն հայտանիշ կարող էր հանդիսանալ այն՝ մտա-

⁵³ «Մշակ», 1907 թ. 20 հոկտեմբերի, № 136:
⁵⁴ «Турецко-персидская пограничная спорная полоса». Сборник Главного управления Генерального штаба, вып. 58, СПб, 1914, с. 79.
⁵⁵ АВПР, ф. «Канцелярия МИД», 1907 г., д. 124, л. 444—447.
⁵⁶ ЦГВИА, ф. 2000, оп. I, л. 6, 12, 16, 18—19.
⁵⁷ ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 67, л. 96.
⁵⁸ Колос, Готовится ли Турция к войне? «Тифлисский листок», 1903 г., 28 марта.
⁵⁹ Готлиб В. Тайная дипломатия во время первой мировой войны. М., 1960, с. 42.
⁶⁰ Сборник дипломатических документов, касающихся событий в Персия с конца 1906 г. по 31 декабря 1911 г., вып. I, СПб, 1911, с. 244.
⁶¹ Թեսաը Իրանում բողոքի գրեթեման յուրահատուկ ձև էր:
⁶² Сборник дипломатических документов, вып. I, с. 245.
⁶³ Մեհդի Մալեֆադե, նշվ. աշխ., հ. 5, էջ 118:
⁶⁴ Նույն տեղում, էջ 33:
⁶⁵ Երիտասարդ թուրքերը և Պարսկաստանը, «Մշակ», 1908 թ., 15 օգոստոսի, № 178, էջ 2:
⁶⁶ Մեհդի Մալեֆադե, նշվ. աշխ., հ. 5, էջ 119:

դի՞ր է արդյոք այդ կառավարությունը շարունակել Արդու Համիդի զավթողական քաղաքականությունը և հակահեղափոխական ինտերվենցիան, թե՞ ոչ: Այս հարցի պատասխանը երկար սպասել չտվեց: Պարզվեց, որ երիտթուրքերը գնալու են սուլթանի հետքերով: Իթթիհադը աստիճանաբար հող էր նախապատրաստում Իրանի ներքին գործերին միջամտելու համար: 1908 թ. սեպտեմբերի 13-ին տեղի ունեցած արտակարգ նիստում որոշում է ընդունվում հայտարարել իրանական կառավարությանը, որ եթե Թավրիզում հեղափոխական ֆիդայիների և կառավարական զորքերի միջև տեղի ունեցող զինված ընդհարումների հետևանքով թուրքահայտակները վնասներ կրեն, ապա անհապաղ Թավրիզ կուղարկվեն թուրքական զորքերը⁶⁷:

Իրանում նոր ուժգնությունը սկսվեց նաև պանիսլամիզմի քարոզչությունը: Սակայն իթթիհադի այդ քարոզչությունը առավելապես ոչ թե կրոնական, այլ քաղաքական բնույթ էր կրում, մասնավորապես մահմեդականներին զինելու միտում՝ ընդդեմ «խալամի թշնամիների» և առաջին հերթին՝ ընդդեմ Ռուսաստանի⁶⁸: Ստամբուլի ռուսական ղեկավարներից հաղորդում էին, որ «Երիտթուրքական ռազմական հեղաշրջումից հետո սպաներ ուղարկվեցին Աֆղանստան, Պարսկաստան և Մարոկկո՝ մահմեդական գործի բարելավմանը նպաստելու համար⁶⁹: Ընդ որում երիտթուրքերը իրենց փայփայած զավթողական ծրագրերը խնամքով քողարկում էին քրիստոնյա Եվրոպայից մահմեդականների «պաշտպանություն» մասին ամբոխավարական լուրնգով: Զգտելով օգտագործել մահմեդական ժողովրդական զանգվածների պայթույթը եվրոպական գաղութարարների դեմ, երիտթուրքերի պանիսլամիստական գործակալները սկսեցին հայտնվել ամենուրեք, որտեղ մահմեդականների շրջանում սկսվում էին ժողովրդական հուզումներ: Իթթիհադի համար այս ուղղությունը հատկապես բարենպաստ իրադրություն էր ստեղծվել Իրանական Աղբբեջանում: Այստեղ բուրժուական հարաբերությունների վերելքի կապակցությամբ արդեն սկսվել էր աղբբեջանական ժողովրդի՝ ազգի ձեզավորման պրոցեսը, որն իր արտահայտությունը գտավ Իրանական Աղբբեջանի ինքնավարության լողունգի առաջբաշման մեջ⁷⁰: Ըստ այնմ, երիտթուրքերն աշխատում էին Ատրպատականի բնակչության ազգային ինքնագիտակցության արթնացումը օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար:

1908 թ. աշնանը երիտթուրքական գործակալությունը Իրանական

Աղբբեջանում հրահրեց անշատվողական շարժում, որի նպատակն էր նահանգի անջատումը Իրանի կազմից և նրա նկատմամբ թուրքական հովանավորության հաստատումը⁷¹: Զբավարարվելով դրանով, իթթիհադը առաջ քաշեց Իրանական Աղբբեջանը ուղղակի թուրքիային միացնելու նախագիծը, որն իրագործվելու էր զինված ապստամբության միջոցով⁷²: «Զպետք է մոռանալ, — գրում էր երիտթուրքական «Թանին» թերթը, — որ Օսմանյան դրոշակը մի ժամանակ ծածանվում էր Թավրիզի վրա, որ Ատրպատականի միլիոնավոր բնակիչներ նույն թուրքերն են և՛ արյունով, և՛ կրոնով, և՛ լեզվով»⁷³:

Ընդ որում երիտթուրքերն ու նրանց հետ սերտորեն համագործակցող գերմանացիները իրենց այդ հեռուն գնացող մտադրությունները թաքցնում էին հեղափոխական լուրնգների ջողով⁷⁴:

Երբ 1908 թ. աշնանը կառավարական զորքերն ու հետագեմ խաների ավազակախմբերը շրջապատել էին հեղափոխական Թավրիզը և սպանում էին հաշվեհարդար տեսնել նրա պաշտպանների հետ, վերջիններիս մոտ հուսալքության հետևանքով սկսեց արմատավորվել թուրքիային միանալու գաղափարը: Հատկանշական է, որ Բաքվի ազգայնականորեն տրամադրված աղբբեջանական մտավորականությունը ևս գտնում էր, որ նպատակահարմար է «Իրանը միացնել Օսմանյան գահին և մի հզոր իսլամ պետություն հաստատելով՝ պաշտպանվել եվրոպական քրիստոնյա թագավորություններից և նրանց հարստահարություններից փրկել իսլամ ժողովրդին»⁷⁵:

Ստամբուլում գործող «Անջումանե Սաադաթե Իրանիան» կուլած էնջումենը, Թավրիզի շեյխ Ասադուլլա Մամազանիի գլխավորությամբ, ինչպես նաև տեղի իրանական բազմամարդ գաղութը մշտապես կապերի մեջ էին գտնվում երիտթուրքական կոմիտեի անդամների հետ⁷⁶: Ստամբուլում, ռուսական ղեկավարի տվյալներով, այդ էնջումենը երիտթուրքական կոմիտեից ստանում էր հրահանգներ և դրանք հաղորդում Աղբբեջանում իր համախոհներին ի ղեկավարություն⁷⁷: Իսկ Թավրիզում գործող «Պարսկական մտավորական երիտասարդություն» կազմակերպությունը, որը հանդես էր գալիս ցարիզմի գաղութային քաղաքականության

71 «Автономия Азербайджана». «Тифлисский листок», 1908 г., 11 октября.

72 ЦГИАЛ, ф. 560, оп. 28, д. 355, л. 165.

73 «Մշակ», 1910 թ., 26 հոկտեմբերի, № 237:

74 Представители Турции и Германии в Персии в роли защитников персидской конституции. «ИШКВО», № 22, Тифлис, 1908 г., с. 34—35.

75 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ատրպետի արխիվ, գործ 75—76, էջ 100:

76 Թանե Զադե Բեհգադ, Ղեյամ-և Ազերբայջան դար էնդելար-և մաշրուֆիթ-և Իրան, Թեհրան, 1333, էջ 394 (պարսկ. լեզվով):

77 АВПР, ф. «ІІанцелария МИД», 1908 г., д. 37, л. 73—74.

67 «Тифлисский листок», 1908 г., 17 сентября.

68 Jela! Nuri, Ittihad! islam, Istanbul, 1331, s. 11—13.

69 АВПР «Политархив», 1909 г., д. 1035, л. 64.

70 Иванов М. Иранская революция..., с. 303. Н. Белова, Саттархан и другие деятели табризского восстания 1908—1909 гг. «Краткие сообщения Института народов Азии», 1963, № 73, с. 66.

դեմ, ուղղակի կապերի մեջ էր գտնվում Թավրիզում թուրքական հյուպատոսի հետ⁷⁸;

Այսպիսով, երիտթուրքերը մտադիր էին հենց իրենց՝ իրանական հեղափոխականների անմիջական օգնությամբ անկկախության հռչակելու և Ատրպատականը Առաջնորդվելով քաղաքականապես կարճատև մի շարք հեղափոխականների և բուրժուական ազգայնականների մեծագույն մասի այն տեսակետով, որ երիտթուրքերի օգնությունը անհրաժեշտ է իրանական Ադրբեջանում սահմանադրական կարգերի հաղթանակի համար, Ատրպատականի նահանգական էնջումները 1909 թ. ամռանը առաջ քաշեց մի նախագիծ, ըստ որի այդ երկրամասը պետք է վերածվեր Իրանի «արտոնյալ նահանգի», երիտթուրքական կառավարության հովանավորության ներքո⁷⁹;

1909 թ. սեպտեմբերին Իրանում դեսպան նշանակված Խասիբ բեյին հանձնարարված էր սերտ կապեր հաստատել կազմակերպչորեն նոր ձևավորված «Իրանի դեմոկրատական կուսակցության» հետ, որին թվում էր, թե Իրանում Ռուսաստանի և Անգլիայի դեմ պայքարող յուրաքանչյուր պետություն հանդիսանում է իրանական հեղափոխության անկեղծ կողմնակից⁸⁰;

Երիտթուրքական կառավարությունը հիանալի գիտակցում էր, որ իր վերոհիշյալ ծրագրերը հնարավոր կլինեն իրականացնել միայն ռուսներին Իրանական Ադրբեջանից լրիվ դուրս մղելուց հետո: Այդ պատճառով էլ աշխատում էր Թավրիզի հեղափոխականներին շեղել դասակարգային պայքարից և նրանց մաքառումների սլաքն ուղղել բացառապես Ռուսաստանի դեմ: Հենց այդ նպատակով Թավրիզում թուրքական զլխավոր հյուպատոսը հեղափոխականներին առատորեն ղենք ու զինամթերք տրամադրելու հետ միասին նրանց շուշուրեն բաժանում էր շքանշաններ ու պատվո ալ նշաններ: «Խիզախության համար» շքանշանով պարգևատրվեց նաև Թավրիզի հեղափոխականների փառաբանված առաջնորդ Սաթթար խանը⁸¹:

1909 թ. ապրիլին Ռուսաստանը ևս զորքեր ուղարկեց Իրանի հյուսիսային շրջանները՝ այնտեղ հեղափոխական շարժումները ջախջախելու նպատակով: Այդ քայլի մյուս նկատառումն այն էր, որ խափանվեն նահանգի նկատմամբ Թուրքիայի զավթողական նկրտումները: Գլխա-

⁷⁸ Габиров А. Внутривосточное положение Иранского Азербайджана в период первой мировой войны (1914—1918), автореф. канд. диссерт. Баку, 1970, с. 8.

⁷⁹ АВПР, ф. «Персидский стол», 1909 г., д. 540, л. 53.

⁸⁰ Короткова Т. Иран накануне первой мировой войны.—«Доклады в сообщения исторического факультета Московского госуд. университета им. Ломоносова», вып. 8, 1948, с. 12.

⁸¹ ЦГИАЛ, ф. 560, оп. 28, д. 355, л. 165.

պտույտ արագությունը տեղի ունեցած այդ իրադարձությունները մի պահ վարանման մեջ գցեցին երիտթուրքերին: Սակայն շուտով սթափվելով, նրանք սկսեցին ավելի նպատակասլաց կերպով օգտագործել հեղափոխական շրջանների հակառուսական տրամադրությունները Ատրպատականում շարժում հրահրելու համար⁸²:

Նախ Իրանական Ադրբեջան ուղարկվեցին պանիսլամիզմի և պանթուրքիզմի բազմաթիվ քարոզիչներ⁸³, որոնք շեշտում էին, որ Ռուսաստանի կողմից այդ երկրամասի օկուպացիան ունի հակամուսուլմանական նշանակություն, և հետևաբար անհրաժեշտ է Կովկասում ու Իրանում ռուսների դեմ հայտարարել սրբազան պատերազմ՝ «ջիհադ»⁸⁴: Այնուհետև երիտթուրքական կառավարությունը սպառնում էր, որ եթե ռուսները շուտափույթ կերպով իրենց զորքերը դուրս չբերեն Ատրպատականից, իրենք Իրան կուղարկեն մի ամբողջ բանակ⁸⁵: Ստամբուլը հասկացնում էր նաև Պետերբուրգին ու Լոնդոնին, որ Իրանում ինքը պահանջում է նրանց հետ «հավասար իրավունքներ», այլ կերպ ասած՝ հարց էր բարձրացնում Իրանի բաժանման գործում մասնակից դարձնել նաև իրեն⁸⁶:

Հատկանշական է, որ Ատրպատականի բնակչության շրջանում հակառուսական քարոզչություն մղելու գործում ընդգրկվեցին նաև կուլկասի և Ռուսաստանի պանթուրքիստական հայտնի գործիչները՝ Մ. Ռասուլզադեն, Ահմեդ Աղանը, Կարաբեկովը, Իսմայիլ Միրզա Գասպրինսկին, Փարվուսը, Յուսուֆ Ակչուրինը (Ակչուրա օղլի Յուսուֆ) և ուրիշներ⁸⁷: Եռանդուն հակառուսական քարոզչության էին լծվել նաև Նաջաֆի և Քարբալայի մուշտեհիդները, որոնք իրենց ֆեթվաներում կոչ էին անում դաշինք կնքել Թուրքիայի հետ Իրանի «Աղատության և անկախության դեմ Ռուսաստանի և Անգլիայի ոտնձգություններին հակահարված տալու համար»:

Թուրքական գործակալությունը այս շրջանում սկսեց կատարել պայքար մղել նաև «էջթեմայուն-ե ամիյուն» կազմակերպության դեմ, որի անդամներից շատերը սովորել էին Ռուսաստանում և այնտեղ սոցիալիստական գաղափարների և ռուսական հեղափոխության ազդեցության ներքո սկսել էին աստիճանաբար կանգնել մարքսիզմի դիրքերի վրա: Ի դեպ, իրանական հեղափոխության առաջին տարիներին սոցիալիստական գաղափարներին հետևող պարսկական կազմակերպությունները սերտ կապերի մեջ էին գտնվում նաև Իրանում գործող հայկական՝ դաշնակցական և

⁸² АВПР, ф. «Персидский стол», 1909 г., д. 924, л. 113—114, 263

⁸³ Celal Bayar, Ben de yazdim, Milli Mücadellie gidişi, cilt. 1, icincl Baski, Istanbul, 1967, s. 176.

⁸⁴ ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 511, л. 21—23 об.

⁸⁵ АВПР, ф. «Персидский стол», 1909 г., д. 661, л. 148.

⁸⁶ АВПР, ф. «Персидский стол», д. 924, л. 114 об.—115, 266.

⁸⁷ АВПР, ф. «Посольство в Константинополе», 1910 г., д. 1598, л. 5—8

հնչակյան կուսակցությունների հետ⁸⁸։ Այդ պատճառով երիտթուրքերը ամեն կերպ աշխատում էին հայկական կուսակցությունների գործունեությունը տարանջատել Ատրպատականում գործող պարսկական կազմակերպությունների գործունեությունից։

Բացի այդ, թուրքական օկուպացիոն զորքերը առանձնակի նախանձախնդրությամբ սկսեցին կողոպտալ ու հալածանքների ենթարկել Իրանական Ազրբեջանի հայ ազգաբնակչությանը։ Դրա պատճառներից մեկն այն էր, որ հայերը հանդիսանում էին հեղափոխությանը մասնակից ակտիվ տարրերից մեկը։ Ուրմիայում ռուսական փոխհյուպատոս Միլլերը դրա մյուս պատճառը համարում էր այն, որ «Հայերը Պարսկական Ազրբեջանում չեն թաքցնում իրենց ռուսասիրությունը»⁸⁹։

1909 թ. Թալրիզի պատամբության պարտությունից հետո Իրանում հեղափոխական պայքարի կենտրոնը տեղափոխվեց Գիլյանի նահանգը և Սպահան։ Այս վայրերում ևս երիտթուրքերը եռանդուն գործունեություն ծավալեցին։ Մասնավորապես Սալունիկի կենտրոնական կոմիտեի ղեկավարներից Նաջի բեյը ծպտված վիճակում գտնվում էր բախտիարական ցեղի խան Սամսամ-էս-Սալթանի ջոկատում, որը 1909 թ. հունիսին մասնակցում էր Քեհրանի վրա կազմակերպված արշավանքների՝ Մոհամմեդ-Ալի շահին տապալելու համար։ Իսկ երկու այլ սպաներ՝ Սադրը բեյը և Նազիֆ բեյը, գործում էին այլ վայրերում⁹⁰։ Մասնակցելով շահի դեմ ուղղված բախտիարների շարժմանը, երիտթուրքական կառավարությունը նպատակ ուներ ոչ միայն աջակցել Ռուսաստանի կողմնակից Մոհամմեդ-Ալի շահի տապալմանը, այլև ձգտում էր ազդեցություն ձեռք բերել Իրանի հարավում ապրող ցեղերի շրջանում, որոնք ծրագրել էին իրենց անբաժան տիրապետությունը հաստատել ողջ Իրանի նկատմամբ, այսպես կոչված, «քոչվորական միապետություն» («սուլթանաթե աշայերի») ստեղծելու ճանապարհով⁹¹։ Իսկ 1910 թ. գարնանը Իրանական Քրդստան մեկնեցին իթթիհադի մի շարք ականավոր գործիչներ, քրդական ցեղապետներին հորդորելու, որ նրանք ևս իրենց զինված ջոկատներով աջակցեն Իրանում Ստամբուլի «ռազմական ջանքերին»⁹²։

Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ սիրախաղ անելով Իրանական հեղափոխական շարժման հետ, երիտթուրքերը իրականում թշնամանքով էին լցված հեղափոխության նկատմամբ։ Դա բխում էր ոչ միայն նրանց դասակարգային էությունից, այլև հետևանք էր այն բանի-

որ հեղափոխության հաղթանակը կնորացներ ու կուժեղացներ Իրանը, հետևապես կձախողեր նրա առանձին նահանգները կու տալու իթթիհադի ծրագրերը։ Նկատի ունենալով, որ 1909 թ. վերջերից երիտթուրքական կառավարությունը Իրանում սկսել էր վարել զավթումները ընդլայնելու և հակահեղափոխական ինտերվենցիա կազմակերպելու կուրս, «Իրանն նոս» թերթը գրում էր. «Այսպիսով Թուրքիան շարունակում է գահընկեց արված սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականությունը»⁹³։

Բազմաթիվ փաստերով համոզվելով, որ երիտթուրքերը Իրանում իրականացնում են հեղափոխությանը հարված հասցնելու քաղաքականություն և երկրի քաղաքական ճգնաժամը աշխատում են օգտագործել իրենց նվաճողական նպատակների օգտին, հեղափոխական ֆիդայիները սկսեցին զինված դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին։ Հատկապես արյունահեղ բախումներ տեղի ունեցան Գիլմանի, Ուրմիայի և Սալմաստի շրջաններում⁹⁴։ Թուրքական զավթիչների դեմ մղվող մարտերին իրենց մասնակցությունն էին բերում նաև կուլկասից եկած հայ, վրացի, ադրբեջանցի և այլ ազգությունների ֆիդայիները⁹⁵։

Այսպիսով «երիտթուրքական կառավարության զորքերը օկուպացված շրջաններում ջախջախեցին ամեն մի հեղափոխական շարժում»⁹⁶։

1911 թ. կեսերից Իրանում թուրքական քաղաքականությունը առավելապես բնակչության դիմադրության պատճառով ընկավ փակուղու մեջ։ Իրանական մամուլը («Թավրիզ», «Շեմս» և այլն) պահանջում էին վերջ տալ զավթումների քաղաքականությանը և հայտարարում էին, որ «պարսիկ ժողովուրդը այլևս ի վիճակի չէ հանդուրժել արտաքին միջամտությունն ու օկուպացիան»⁹⁷։ Ավելի հաճախակի դարձան ահաբեկչական ակտերը՝ թուրքական օկուպացիոն վարչության և զինվորականության ներկայացուցիչների դեմ։

Ինչպես հայտնի է, 1911 թ. նոյեմբերին ցարական կառավարությունը Իրանական Ազրբեջան, Գիլյան և Խորասան ուղարկեց խոշոր զորամիավորումներ, որոնք ձեռնեցին հեղափոխությունը երկրի հյուսիսում։ Միաժամանակ անգլիական զորքերը օկուպացրին երկրի ողջ հարավը։ Իսկ մինչ այդ, ինչպես նշվեց, թուրքական զորքերը արդեն ջախջախել էին հեղափոխական շարժումը Իրանական Ազրբեջանի հյուսիս-արևմտյան շրջաններում։

Այսպիսով արտաքին հակահեղափոխության և իրանական ներքին

⁸⁸ Տե՛ս Ervand Abrahamian, Iran between two Revolutions, Princeton, New Jersey, 1982, p. 105.

⁸⁹ АВПР, ф. «Персидский стол», 1909 г., д. 611, л. 12.

⁹⁰ АВПР, «Политархив», 1909 г., д. 1035, л. 64.

⁹¹ Иванов М. Иранская революция..., с. 379.

⁹² ЦГИА Груз. ССР, ф. 71, д. 58, л. 60—64, 66—66 об.

⁹³ «Իրանն նոս», 1909 թ., 27 հոկտեմբերի, № 15:

⁹⁴ ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 501, л. 116.

⁹⁵ ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 7716, л. 121 об.

⁹⁶ История дипломатии, т. II. Москва, 1963, с. 693.

⁹⁷ АВПР, ф. «Канцелярия МИД», 1911 г., д. 31, л. 173—173. об.

Հետադիմության համատեղ ուժերով 1905—1911 թթ. իրանական հեղափոխությունը ճնշվեց:

Սովետական պատմագրության մեջ անտեսվում է այն փաստը, որ Թուրքիան ևս ամենակտիվ կերպով մասնակցել է իրանական հեղափոխության ջախջախմանը: Ընդ որում, եթե Անգլիան ու Ռուսաստանը ռազմական ինտերվենցիայի դիմեցին միայն 1909 թ., ապա Թուրքիան այդ քայլին ձեռնամուխ էր եղել նրանցից նշանակալիորեն ավելի վաղ, իրանական հեղափոխության հենց սկզբից: Այնուհետև, Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերը քննելիս հաճախ հաշվի չի առնվում նաև այդ պետության «երկվության» հանգամանքը, այսինքն այն, որ նա մի կողմից հանդիսանում էր գաղութային շահագործման օբյեկտ, իսկ մյուս կողմից գաղութային պետություն: Անդրադառնալով այս հարցին, սովետահայ անվանի պատմաբան Ջ. Կիրակոսյանը նշում է, որ իմպերիալիստական պետությունների հետ համեմատած թուրքական «իմպերիալիզմը» բնականաբար թույլ էր: Սակայն ռազմատենչ ձգտումներն ու տակտիկան, որ դրսևորում էր այդ «իմպերիալիզմը», մահացու սպառնալիք էին հարևան երկրների համար⁹⁸:

БАЙБУРТЯН В. А.

ИРАНСКАЯ РЕВОЛЮЦИЯ 1905—1911 гг. И ТУРЦИЯ.

Резюме

В статье рассматривается политика султана Абдул Гаида II и младотурок в отношении иранской революции 1905—1911 гг. В частности показывается, что эта революция была разгромлена не только совместными усилиями империалистической Англии, царской России и внутренней иранской реакции, но и в результате осуществленной турками правящими кругами военной контрреволюционной интервенции—обстоятельство, которое до сих пор игнорировалось как советской, так и зарубежной историографией.

В статье прослеживаются также основные моменты военно-политической и дипломатической деятельности Османской империи в Иране, освещаются масштабы и динамика этой деятельности, в частности великодержавные претензии турецкой реакции в отношении Иранского Азербайджана.

Одной из задач данного исследования является также освещение освободительного движения иранских народов против турецких захватчиков в годы иранской революции, оккупировавших значительную часть северо-западного Ирана.

⁹⁸ Киракосян Дж. Западная Армения в годы первой мировой войны. Ереван, 1971, с. 219.

Վ. Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԷԶԵՐ ԻՐԱՆԻ «ԹՈՒԴԵ» ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1983 թ. փետրվար ամսին իրանի իսլամական հանրապետության կառավարությունը օրենքից դուրս հայտարարեց իրանի «Թուդե» կուսակցությունը: Ջերբակալվեցին կուսակցության ղեկավարները և նրա հաղարավոր ակտիվիստները: Նրանց նկատմամբ հարուցվեցին ժանր մեղադրանքներ, ընդհուպ մինչև հայրենիքի դավաճանություն: Գեկտեմբերի 6-ին սկսվեց կուսակցության ղեկավարների դատավարությունը:

Պատմական փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատերազմի և հետպատերազմյան ժամանակաշրջանում իրանի քաղաքական կյանքում միակ կուսակցությունը, որ արմատապես պայքարում էր իմպերիալիզմի և շահական բռնապետության դեմ հանուն երկրի անկախության և սոցիալ-տնտեսական արդար փոփոխությունների, «Թուդե» կուսակցությունն էր:

Հայտնի է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին ֆաշիստական Գերմանիային հաջողվել էր լայնորեն թափանցել իրան և վտանգ ստեղծել Սովետական Միության համար: Սովետական կառավարությունը 1941 թ. հունիսի 26-ին, հուլիսի 19-ին և օգոստոսի 16-ին պաշտոնապես նախագզուղացրեց իրանի կառավարությանը, որ ֆաշիստական Գերմանիայի գործակալների գործունեությունը իրանում ուղղակիորեն հակասում է 1921 թ. կնքված սովետա-իրանական պայմանագրի բովանդակությանը: 1921 թ. պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն Սովետական Միությունը հարկադրված 1941 թ. օգոստոսի 25-ին ժամանակավորապես իր զորքերը մտցրեց իրան: Անգլիական զորքերն իրենց հերթին մտան իրանի հարավային շրջանները: Ռեզա շահ Փահլավին ստիպված եղավ հրաժարական տալ ի օգուտ որդու՝ Մոհամադ Ռեզա Փահլավիի և հեռացավ երկրից: Ռեզա շահի բռնակալությունը տապալվեց, և երկրում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առաջադիմական ու հեղափոխական ուժերի գործունեության համար:

Սովետական բանակի մուտքը իրան խոր ազդեցություն ունեցավ երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Մասսաների բողոքի և

Ճնշման ներքո բանտից ազատվեցին քաղաքական բոլոր բանտարկյալ-ները, այդ թվում՝ կոմունիստներից կազմված խումբը, որը հայտնի էր «էրանիի խմբակ» անվամբ: 1941 թ. հոկտեմբերի 2-ին բանտից ազատված կոմունիստները կուսակցություն ստեղծելու նպատակով Թեհրանում սահմանադիր ժողով հրավիրեցին, որտեղ 15 անձից բաղկացած ժամանակավոր կոմիտե ընտրվեց: Սահմանադիր ժողովն իր հայտարարության մեջ դիմելով ժողովրդին, նշում էր. «Միջազգային և ներքին կարևոր իրադարձությունների ժամանակաընթացքում Իրանի «Թուրք» ժողովրդական կուսակցությունը քաղաքական ասպարեզ է ոտք դնում երկրում դեմոկրատական կարգեր հաստատելու, անկախությունը և անվտանգությունը ապահովելու և անհապաղ մի շարք սոցիալական վերափոխություններ կատարելու համար»¹: Չնայած իշխանության և մեջլիսի կողմից հրապարակվել էր դեմոկրատական ազատությունների վերաբերյալ հայտարարությունը, և մի շարք կուսակցություններ օգտվում էին այդ հանգամանքից, երկրի հետադիմական ուժերը և իմպերիալիստների համախոհները «Թուրք» ժողովրդական կուսակցության ապագայի վտանգն իրենց հանդեպ զգալով, ամեն կերպ հետաձգում էին կուսակցությանը լեզալ բնույթի արտոնություն տալը: Ստեղծված բոլոր խոչընդոտները հաղթահարվեցին, և 1941 թ. վերջին հրատարակվեց կուսակցության կենտրոնական օրգան «Միասաթ» թերթը: «Թուրք» կուսակցությունն իր գործունեության կարճ ժամանակաընթացքում կարողացավ համախմբել երկրի բանվոր դասակարգի ուժերը և ստեղծել բանվորական արհմիություններ: Հիմնադրվեց բանվորների ու ծառայողների արհմիությունների միացյալ կենտրոնական խորհուրդ: Կուսակցության կողմից երկրում առաջին անգամ առաջ քաշվեց մեծահարուստ հողատերերի և ֆեոդալների հողերը գյուղացիների միջև բաժանելու հարցը, որից հետո կուսակցությունը հնարավորություն ստացավ գյուղացիներին համախմբել գյուղական արհմիություններում²:

1943 թ. հոկտեմբերի 10-ին Թեհրանում հրավիրվեց կուսակցության անդրանիկ մարզային համաժողովը, որին մասնակցում էին 120 ներկայացուցիչներ, ընդ որում 33-ը՝ տարբեր նահանգներից: Այստեղ որոշում ընդունվեց կուսակցության ծրագրում ավելացնել կանանց քաղաքական իրավահավասարության կետը: Համաժողովի կարևոր կոչերից էր. «Բանվորներ, գյուղացիներ, մտավորականներ և արհեստավորներ, համախմբվեք երկրի գաղութացման դեմ, բոլորս պայքարի ելնենք»³: Համաժողովը ժամանակավորապես, մինչև անդրանիկ համագումարի հրա-

¹ Ա. Փամբախ, «Նազարի բե թարիխե հեզբ», Դոնիա, 1966, էջ 50 (պարսկ. լեզվով):

² Տե՛ս նույն տեղում, էջ 50:

³ Խալաբբարի, «Հեզբե թուրե վա ջոնբեշե դեհլանի», Դոնիա, 1963, էջ 68 (պարսկ. լեզվով):

վիրումը, ընտրեց 15 անձից բաղկացած շրջանային կոմիտե և նրա անդամներին վրա դրեց կուսակցության կենտրոնական կոմիտեի պարտականությունները: Շրջանային կոմիտեն որոշում ընդունեց «Միասաթ» թերթի փոխարեն հրատարակել «Ռահբար» թերթը: Կուսակցության օրգանը իր մեկ տարվա գոյության ընթացքում երկրի քաղաքատիրած թերթերի շարքում առաջատար տեղ էր գրավում և արժանացել էր ժողովրդի լայն ընդունելությանը: Չնայած «Թուրք» կուսակցության գործունեությունը կառավարության կողմից դեռ պաշտոնապես չէր ճանաչվել, և կուսակցության անդրանիկ շրջանային համաժողովը տեղի ունեցավ անլեզալ պայմաններում, այնուամենայնիվ, որպես քաղաքական նոր, ճշոր ուժ երկրի հետադիմական շրջաններին ստիպեց հաշվի նստել իր հետ: Սոհեյլի և Ղավամի կառավարությունները նույնիսկ ցանկություն հայտնեցին «Թուրքի» ներկայացուցիչներին մասնակից դարձնել իրենց կառավարությունների կաբինետների աշխատանքին: Կուսակցության ութ թեկնածուներ երկրի հյուսիսային շրջանների կողմից ընտրվեցին մեջլիսի 14-րդ նստաշրջանի դեպուտատներ: Նրանք կազմեցին «Թուրք» կուսակցության պառլամենտական ֆրակցիան և խոշոր դեր խաղացին կուսակցության անդրանիկ համագումարի որոշումներն իրականացնելու գործում:

Երկրի ժողովրդական լայն զանգվածները հուսով էին, որ ֆաշիստներին վտարելուց և բռնապետական կարգերի տապալելուց հետո երկրում վերափոխություններ տեղի կունենան, բռնապետական կարգերի մնացորդներն արմատախիլ կարվեն և կապահովվեն տարրական դեմոկրատական ազատությունները: Սակայն «Թուրք» կուսակցության և երկրի լայն զանգվածների արդարացի պահանջները բախվում էին ռեակցիայի կատաղի դիմադրությանը: Հետադիմական ուժերը, զգալով դեմոկրատական շարժումների վտանգը, իրենց միակ փրկությունը տեսնում էին իմպերիալիստների, մասնավորապես ԱՄՆ-ի հովանավորության մեջ:

Իմպերիալիզմի գաղութատիրական էությունը բացահայտելու և ժողովրդին պայքարի հանելու գործը երկարատև պրոպագանդիստական աշխատանք էր պահանջում: «Թուրք» այդ ուղղությամբ ջանք չէր խնայում: Որպես ապացույց բավական է թեկուզ նշել, որ «Այդ շրջանում կուսակցության կողմից հրապարակված հասարակական, քաղաքական և հակաիմպերիալիստական գրականության ծավալը գերակշռում էր երկրում գոյություն ունեցող բոլոր կուսակցությունների կողմից հրատարակվող գրականության քանակին՝ միասին վերցրած»⁴:

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները հետադիմական ուժերի օգ-

⁴ Ա. Փամբախ, «Հեզբե թուրե Իրան», Դոնիա, 1964, Շոմարե, 3, էջ 8 (պարսկ. լեզվով):

նությամբ դիմում էին բոլոր միջոցներին՝ երկրում բնական հարստությունների մենաշնորհը իրենց ձեռքում պահելու համար: Այդ նպատակով անգլիացիները 1943 թ. Պաղեստինից Իրան վերադարձրին իրենց գործակալ Սեյիդ Զիա էդ-Դինին, որը նրանց ուղղակի միջամտությամբ դարձավ մեջլիսի անդամ⁵: 1943 թ. Իրանի տնտեսական և քաղաքական հորիզոնի վրա կրկին ճայնվեց ամերիկացի Արթուր Միլսպոն⁶, իր բազմաթիվ «խորհրդատուներով», որոնք իրենց հսկողության տակ վերցրին երկրի տնտեսությունը և այլ բնագավառներ: Անգլո-ամերիկյան իմպերիալիստների «խորհրդականներն» օժանդակելով պետական շրջանների հետադիմական տարրերին, աշխատում էին բոլոր միջոցներով խանգարել սովետա-իրանական բարեփոխական հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը: Անգլո-ամերիկյան «խորհրդատու» գործակալների քայքայիչ գործունեությունը չէր կարող վրիպել «Թուրք» կուսակցության և առաջագեմ ուժերի ուշադրությունից և շտապեցնել բուռն բողոքի ցույցեր ընդդեմ գաղութարարների: Սեյիդ Զիայի և նրա օտարերկրյա հովանավորողների հետադիմական քաղաքականությունը մերկացնելու նպատակով «Թուրք» կուսակցությունը 1943 թ. հոկտեմբերի 19-ին Թեհրանում կազմակերպեց բողոքի ցույց, որին մասնակցում էին 40 հազարից ավելի մարդ: Այն իր ազդեցությունը թողեց երկրի քաղաքական կյանքի վրա: Խոշոր քաղաքներում տեղի ունեցան համանման բողոքի ցույցեր: Կուսակցության կոչով և նախաձեռնությամբ երկրի առաջագեմ խմբերի ներկայացուցիչները՝ գրողները, կենտրոնական և շրջանային պարրիերական մամուլի աշխատակիցները համախմբվեցին և միասնական պայքարի ճակատ ստեղծեցին: 1945 թ. սկզբին երկրի պարբերական մամուլի աշխատակիցների կեսից ավելին «Միասնական ճակատի» անդամ էին: Իրանի ազատագրական պայքարի պատմության ընթացքում սա առաջին դեպքն էր, երբ երկրի քաղաքական և տնտեսական անկախության համար տարբեր հայացքների ու գաղափարների մարդիկ համախմբվում էին ընդհանուր պայքարի ներքո: «Թուրք» կուսակցության ջանքերի շնորհիվ բանվորական և գյուղացիական միացյալ խորհուրդները համախմբվեցին ու հանդես եկան Իրանի բանվոր դասակարգի արհմիութենական կազմակերպության անվան տակ: «Թուրքեն» դարձավ երկրի քաղաքական ազդեցիկ կուսակցությունը: Այդ փաստը ստիպված էին խոստովանել նույնիսկ բուրժուական հեղինակները⁷:

1944 թ. օգոստոսին տեղի ունեցավ կուսակցության առաջին համա-

գումարը, որին մասնակցում էին 169 ներկայացուցիչներ: Կուսակցության անդամների թիվը անցնում էր 25 հազարից, որի 75 տոկոսը բանվորներ էին, 2 տոկոսը՝ գյուղացիներ և 23 տոկոսը մտավորականներ⁸: Համագումարում հաստատվեց կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը: Հետագայում կանոնադրության մեջ ուղղում մտցվեց և նշվեց, որ «Թուրք» կուսակցության աշխարհայացքը հիմնված է մարքս-լենինյան գաղափարախոսության վրա և սնվում է նրանից⁹:

Հետզհետե վայելելով երկրի ավելի լայն զանգվածների համակրանքը, կուսակցությունն ստեղծեց կանանց երիտասարդական միություններ, բանակի սպաների հատուկ կազմակերպություն, բոլոր նահանգներում հիմնադրեց իր մասնաճյուղերը: Երկրով մեկ ընդարձակ պրոպագանդա տարվեց դեմոկրատական կարգերի հաստատման, անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գաղութատիրության և իշխանությունների կամակատարների դեմ:

Սովետական Միության, նրա հերոսական բանակի պատմական հաղթանակը ֆաշիստական Գերմանիայի ու Ճապոնիայի նկատմամբ փոխեց աշխարհում գոյություն ունեցող ուժերի հավասարակշռությունը հօգուտ ազատության, դեմոկրատիայի և փլուզեց միջազգային ունակցիոն ուժերի հենակետերը: Իրանում սկսված դեմոկրատական շարժումը ծավալվեց գլխավորապես Ատրպատականի նահանգում: Այստեղ, ինչպես նաև Քրդստանի նահանգներում աշխատավորական մասսաները գտնվում էին ավելի ծանր վիճակում. դասակարգային շահագործման ավելանում էր նաև ազգային ճնշումը: Ատրպատականի և Քրդստանի բնակչության թիվը կազմում էր երկրի բնակչության 35 տոկոսը, իսկ անգրագիտությունը սովյալ նահանգներում կազմում էր 94,2 տոկոս, և գոյություն չունեին մեկ ազգային դպրոց¹⁰:

1945 թ. գարնանը հիմնադրվեց Ատրպատականի դեմոկրատական կուսակցությունը, որին շուտով միացավ Ատրպատականի «Թուրք» կուսակցության մասնաճյուղը¹¹: Նույն թվականի նոյեմբերի 21-ին Թավրիզում 744 պատգամավորների մասնակցությամբ բացվեց Իրանական Ատրպատականի համաժողովրդական համագումարը, որն իրեն հայտարարեց սահմանադիր ժողով և հատուկ հայտարարությամբ դիմեց Իրանի շահին, վարչապետին և մեջլիսի նախագահին¹²: Սահմանադիր ժողովը իր ղեկավարացիայով կենտրոնական իշխանությունից պահանջում

⁵ Մ. Սպենի, «Ջոնրեշյան ազգի բախշ», Դոնիա, 1966, Ծոմարե, 1, էջ 52, (պարսկ. լեզվով):
⁶ Ա. Միլսպոն ԱՄՆ-ի արտաքին գործերի մինիստրության ֆինանսների նախկին խորհրդականն էր: 1922 թ. գլխավորելով ԱՄՆ-ի նավթահետազոտման պատվիրակությունը՝ նա ժամանում է Իրան և մինչև 1927 թ. մնում է այնտեղ:
⁷ L. Eiwel, sutton, Perstan oil, London, 1952, p. 28.

⁸ История Ирана, М., 1977, с. 349:
⁹ Նոգուլի, «Սոխանի շանդ բա դուսթանե Զեփեմելի», Դոնիա 1951, շոմարե 1, էջ 37 (պարսկ. լեզվով):
¹⁰ Նեհզաթե 21 ազար, էնթեշարաթե ֆերդե դեմոկրաթ, 1973, էջ 16 (պարսկ. լեզվով):
¹¹ Նույն տեղում, էջ 22:
¹² Նույն տեղում, էջ 36:

էր. ա) Իրանական պետութեան շրջանակներում Ատրպատականի նահանգին տալ ազգային ինքնավարութիւն, բ) ստեղծել Ատրպատականի ազգային կառավարութիւն և ազգային մեջլիս, գ) Ատրպատականի պաշտոնական լեզուն ընդունել ազրբեջաներենը և այլն¹³: Ազգային-դեմոկրատական կարգեր հաստատվեցին նաև Քրդստան նահանգում՝ Քրդստանի դեմոկրատական կուսակցութեան ուղղակի ղեկավարութեամբ:

Գեմոկրատական այս վերափոխութիւններն Իրանի հյուսիս-արևմուտքյան նահանգում անհանգստացրեցին իմպերիալիստական տերութիւններին, նրանք վախենում էին, որ ընդհարապես կզրկվեն Իրանի նկատմամբ իրենց առաջ քաշած պլանների իրագործումից: Այդ էր պատճառը, որ իրենց համախոհների միջոցով փորձեցին Ատրպատականի և Քրդստանի դեմոկրատական շարժումների հարցը հանել միջազգային ասպարեզ, իսկ Հաքիմիի ղեկավարութեանը ստիպեցին Ատրպատականի հարցը զարձնել ՄԱԿ-ի բնարկման նյութ, որպեսզի միջազգային հասարակայնութեան ուշադրութիւնը լշեղեն իրենց կողմից Հունաստանի և Ինդոնեզիայի ներքին գործերին ուղղակի միջամտելու փաստից: Իմպերիալիստների այդ մտահոգացումները չիրագործվեցին, և Հաքիմիի կառավարութիւնը ստիպված եղավ հրաժարական տալ:

Երկրի նոր վարչապետ նշանակվեց ղեկավար գործիչ Կավամ ալ Սալթանն, որը հին կապեր ուներ անգլիական, ինչպես նաև ամերիկյան իմպերիալիստների հետ և հասարակական կարծիքը փոխելու նպատակով նախապես հանդես է գալիս երկրի կառավարութեան քաղաքականութիւնը «արմատապես» վերափոխելու և ՍՍՀՄ-ի հետ բարիդրացիական հարաբերութիւններ հաստատելու ծրագրով: Այդ նպատակով նա «հրաժարվում է» դեմոկրատական կազմակերպութիւնների դեմ ղեկավարվող միջոցներ գործադրելուց: Ժամանակավորապես «վերանայում է» դեմոկրատական կազմակերպութիւնների նկատմամբ կիրառված որոշ սահմանափակումները, նույնիսկ կառավարութեան կազմի մեջ մտցնում է «Թուրք» կուսակցութեան երեք անդամներին¹⁴: Սակայն նավթային մոնոպոլիստների նախաձեռնութեամբ հիմնադրում է իր սեփական նոր «Գեմոկրատ» կուսակցութիւնը, որի ծրագիրը իբր թէ հետապնդում էր Իրանի անկախութեան ու տերիտորիալ ամբողջութեան պահպանումը և արմատական «ռեֆորմների» անցկացումը: «Գեմոկրատ» կուսակցութիւնը հետագայում դարձավ այն միջուկը, որի շուրջ համախմբվեցին հետադիմական ուժերը: Նրանք այնուհետև սկսեցին դաժան պայքար մղել

«Թուրք» կուսակցութեան, բանվորական արհմիութիւնների և դեմոկրատական կազմակերպութիւնների դեմ:

Երկրի բանվոր դասակարգը, որը «Թուրք» կուսակցութեան ղեկավարութեամբ հեղափոխութեան ղեկավար էր կատարում ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժման մեջ, լավատեղյակ էր իմպերիալիստների կամակատար «Գեմոկրատ» կուսակցութեան ծրագրին: Ահա թէ ինչու «Թուրք» կուսակցութիւնը 1946 թ. հունիսի 14-ին Խուզիստան նահանգի բանվոր դասակարգին կող արեց համընդհանուր գործադուլ կազմակերպելու: Գործադուլը քաղաքական բնույթ ուներ և ուղղված էր ինչպես իմպերիալիստների, այնպես էլ ներքին հետադիմական իշխանութեան դեմ: Գործադուլին մասնակցում էին 100 հազարից ավելի բանվորներ¹⁵: Նավթային մոնոպոլիստները դրածո նահանգապետի և ոստիկանութեան օգնութեամբ զինված հարձակում կազմակերպեցին Աբադան քաղաքի գործադուլավորների դեմ, որի հետևանքով զոհվեցին 46 և վիրավորվեցին 170 մարդ: Կառավարութիւնը գործադուլը համարեց անօրինական և Խուզիստան նահանգում ռազմական դրութիւն հայտարարեց: Ձերբակալվեցին բանվորական արհմիութիւնների ղեկավարները, սկսվեց «Թուրք» կուսակցութեան անդամների հետապնդումը: Վարչապետ Կավամը, օգտագործելով առիթը, իր կառավարութեան կազմի մեջ վերափոխութիւններ կատարեց՝ նրա շարքերից հեռացնելով «Թուրք» կուսակցութեան երեք անդամներին:

Կավամի կառավարութեան վարած ներքին քաղաքականութիւնը հետզհետե ավելի հետադիմական բնույթ ստացավ: Նա բացահայտորեն գործիք էր դարձել ամերիկյան իմպերիալիզմի ձեռքին: Այդ ճանգամանքն անդրադառնում էր նաև արտաքին քաղաքականութեան վրա, որի ղեկավարումն էր բնույթն առաջին հերթին դրսևտրվեց ՍՍՀՄ-ի հետ տեղի ունեցած բանակցութիւնների ժամանակ, երբ բնարկվում էր Իրանի հյուսիսային շրջանների նավթի շահագործման համար խառը բաժնետիրական ընկերութիւն ստեղծելու խնդիրը: Կանխամտածված կերպով կնքվեց մի պայմանագիր, որը հետագայում հենց Կավամի ղեկավարած մեջլիսի կողմից մերժվեց:

